

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

Հայ-վրացական հարաբերություններ

Գիրք Դ

Հայկական սկզբնադրյուրները
Վրաստանի մասին

(ԺԱ-ԺԳ դդ.)

Քաղեց և ծանոթագրեց
Ռուլաննա Հարությունյանը

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը:

Մատենաշարի իմբազրական խորհուրդ՝

Ա. Սիմոնյան (նախագահ),

Հ. Բայրամյան, Կ. Գրիգորյան,

Է. Մինասյան, Գ. Տեր - Վարդանյան

*Մատենաշարի հիմնադիր՝ ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական
հարաբերությունների բաժին*

Խմբագիր՝ ք. գ. թ., դոցենտ Հ. Բայրամյան

Գրախոս ավագ դասախոս Գ. Բաղդյան

Հ 240 Մատենաշար «Հայ-վրացական հարաբերություններ», գիրք
Դ. Հայկական սկզբնաղբյուրները Վրաստանի մասին (ԺԱ-
ԺԳ դդ.)/ քաղեց և ծանոթագրեց Ռուսականա Հարությունյանը:
-Եր., ԵՊՀ հրատ., 2019, 320 էջ:

«Հայ-վրացական հարաբերություններ» մատենաշարի Դ գիրքը շարու-
նակությունն է «Հայկական սկզբնաղբյուրները Վրաստանի մասին (Ե-Ժ դա-
րեր)» (ԵՊՀ հրատ., 2016) Գ հատորի: Նոյնանուն հերթական ժողովածուն
ընդգրկում է ԺԱ-ԺԳ դարերի հայ պատմիչների արժեքավոր, երբեմն բացա-
ռիկ տեղեկությունները Վրաստանի պատմության, ռազմաքաղաքական,
հոգևոր լյանքի, ինչպես նաև հայ-վրացական բազմակողմ հարաբերություն-
ների մասին: Քաղվածքների ընտրանին հասեեագրված է պատմաբաննե-
րին, հայագետներին, վրացագետներին, կովկասագետներին և ընթերցող
լայն շրջաններին:

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց դասական՝ հին և միջնադարյան պատմական երկերի կարևորագույն առանձնահատկություններից է Հայաստանի հարակից երկրների, հատկապես Վրաստանի մասին դրանցում տեղ գտած հարուստ տեղեկությունների առկայությունը: Հայոց պատմության սկզբնաղբյուրներից քաղել և սույն ժողովածուում ժամանակագրական հերթականությամբ գետեղել ենք մատենագրական հետաքրքիր և արժեքավոր բազմաբնույթ վկայություններ ու վավերագրեր:

Դեռևս տարիներ առաջ՝ 2016 թ., լնդերցողի դատին ենք հանձնել «Հայ-Վրացական հարաբերություններ» մատենաշարի՝ «Հայկական սկզբնաղբյուրները Վրաստանի մասին (Ե-Ծ դարեր)» ժողովածուն: Սա մատենաշարի չորրորդ գիրքն է, որն ամփոփում է XI-XIII դարերն ընդգրկող նյութերը:

Հայ և վրացական բարիդրացիական հարաբերություններն սկիզբ են առնում վաղ ժամանակներից՝ ընդգրկելով կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, պատմամշակութային, կրոնական և այլն: Հայ մատենագիրները բազմաթիվ հիշտակություններ ունեն իրենց ապրած և նկարագրած ժամանակների հայ-Վրացական բազմաբնույթ հարաբերությունների մասին:

XI-XIII դարերի տեղեկությունները քաղել և ամփոփել ենք քրեստոմատիական բնույթ կրող այս ժողովածուում: Նյութերը հիմնականում ընտրել ենք հայ պատմիչների երկերի աշխարհաբար թարգմանություններից, որպեսզի դրանք մատչելի լինեն ընթերցող լայն շրջանների համար: Սակայն որոշ երկերի աշխարհաբար տարբերակը չունենք, ուստի աշխատանքը լիարժեք դարձնելու համար կիրառել ենք դրանց գրաբար բնօրինակները:

Վրաստանի մասին գրքում զետեղված ԺԱ-ԺԳ դարերի նյութերը խիստ բազմաբնույթ են թե՝ պատմական թատերաբեմում գործող սուբյեկտների և թե՝ գործընթացների առումով:

Հայաստանում Բագրատունյաց արքայատոհմի անկումից սկսած՝ Հարավային Կովկասում տեղի են ունեցել պատմաքաղաքական նոր դրսնորումներ: Եթե մինչ այդ Հայաստանն է միավորել տարածաշրջանի ժողովուրդների ուժերը և զիսավորել նրանց պայքարն օտարների ունձագությունների ու տիրապետության դեմ, ապա նշված ժամանակահատվածում իր վրա է վերցրել Վրաստանը, որը և զիսավորել է հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարը թուրք սելջուկների և մոնղոլների դեմ:

Հայ-վրացական ռազմաքաղաքական համագործակցությունն իր արտացոլումն է գտել պատմության մեջ, որը զարգացման նոր փուլ է ապրել XI-XIII դարերում: Տվյալ ժամանակահատվածի իրադարձություններն անտես չեն մնացել պատմիչների ուշադրությունից: Կարևոր և արժանահավատ են նրանց տեղեկությունները, քանի որ հեղինակներն իրենց նկարագրած պատմական դեպքերի ականատեսներն են:

Պատմիչների երկերից պետք է հիշատակել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմություն տիեզերական» երկը, որտեղ Վրաստանի մասին տեղեկություններն սկսվում են վաղ ժամանակներից: Առաջին և երկրորդ զլուխներում Վրաստանի մասին վկայությունները վերցված են Մովսես Խորենացուց, Սեբեսից, Ղևոնդից, իսկ երրորդ զլուխը հանգամանորեն նշվում է Բագրատունիների օրոք հայ-վրաց-աֆխազական կապերի, հայ-բյուզանդական-վրացական ռազմական համագործակցության, նաև Վասիլ Բ կայսեր օրոք վրաց առնչությունների մասին, հատկապես կարևորվում է անդրադարձը Ատրպատականի ամիրաների դեմ մղվող հայ-վրացական համատեղ պայքարին:

ХI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցու «Պատմությունը» լույս է սփռում ժամանակի վրաց-աֆխազա-բյուզանդական հարաբերություններին, վրաց-բյուզանդական ընդհարումներին, հայ-վրացական կապերին: Պատմիչը տեղեկություններ է հաղորդել նաև սեղուկյան ասպատակությունների մասին: Նրանք հյուսիսից հասել են «մինչև Ափխազաց բերդը, մինչև Պարիսար լեռն ու Կովկասի ստորոտը»:

Վրաց պատմության, հայ-վրացական և վրաց-բյուզանդական հարաբերությունների քննության համար կարևոր սկզբնաբյուր է նաև Մատթեոս Ուտիհայեցու «Ժամանակագրությունը», որը հարուստ է պատմաաշխարհագրական բնույթի տեղեկություններով: Պատմիչը հիշատակում է հայ-վրաց-ափխազական ռազմական համագործակցության և թուրք սեղուկների ասպատակությունների մասին՝ անդրադառնալով Դավիթ Դ Շինարարի՝ Գանձակի ամիրայության դեմ պայքարին, նրա հայանպաստ քաղաքականությանը: Ընդգծվում է վրաց թագավորների կողմից Անին ազատագրելու և Դիվինը գրավելու իրողությունը: «Ժամանակագրությունում» Վրաստանի մասին տեղեկությունները հասցվում են մինչև 1162 թվականը:

Հայ-վրացական հարաբերությունների, Անիի գրավման պատմության և սեղուկների դեմ պայքարի մասին տեղեկություններ է հաղորդել նաև XII դարի պատմիչ Սամվել Անեցին, որը, հիշատակելով Դավիթ Շինարարի հաջորդներին (Դեմետրե, Դավիթ, Գեորգի), փաստել է նրանց ձեռքբերումներն ու պայքարը Խորասանի սուլթանի դեմ:

Վրաց թագավորների կողմից Անիի գրավման պատմությունն առավել հանգամանալից նկարագրել է Միփթար Անեցին՝ ներկայացնելով նաև Զաքարյանների տոհմի ծագումը, Իվանե և Զաքարե Զաքարյանների՝ Թամար թագուհու կողմից շնորհների

արժանանալու իրողությունը: Մխիթար Անեցին տեղեկություն-ներ է հաղորդել նաև մոնղոլների կողմից Հայաստանի ու Վրաս-տանի գրավման և Ռուսուդան թագուհու մասին:

XIII դարը հայ և վրաց ժողովուրդների համար ծամա-նակաշրջան էր, քանի որ հայտնվեց նոր նվաճող՝ ի դեմս մոնղոլ-թաթարների, որոնք, նվաճելով Հարավային Կովկասը, իրենց գե-րիշխանությունն ու բարքերը պարտադրեցին բնիկներին, և պատմիչները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդել այդ ան-նկարագրելի պայմանների մասին:

Մասնավորապես կարևոր է Կիրակոս Գանձակեցու «Պատ-մություն Հայոց» երկը, որը տեղեկություններ է հաղորդել Հայաս-տանում, Վրաստանում և Աղվանքում մոնղոլների նվաճումների, ավերածությունների, կոտորածների, հարկային ու ռազմական ծանր քաղաքականության մասին, ինչը հանգեցրել է բնակչու-թյան և նրանց վերնախավի դժոխությանը: Կիրակոս Գանձակե-ցին նկարագրել է վրաց-մոնղոլական քաղաքական ու ռազմա-կան հարաբերությունները, ներկայացրել վրաց արքունիքում տի-րող իրավիճակը, փորձել է բացատրել պատճառները: Նա հատ-կապես անդրադարձում է վրաց Գեորգի Լաշայի, Ռուսուդանի և նրանց որդիների՝ Դավիթ Ուլու և Դավիթ Նարին թագավորների պատմությանը, ինչպես նաև վրաց արքունիքի նշանավոր դեմքեր Զաքարյան իշխանների գործունեությանը: Կիրակոս Գանձակե-ցու նկարագրությունները գրառվել են կամ իբրև ականատեսի տեղեկություններ, կամ այլ անձանցից ստացված լուրերի հիման վրա:

XIII դարի հաջորդ հեղինակը Մխիթար Այրիվանեցին է, որի «Պատմութիւն Հայոց» երկը ժամանակագրություն է և աչքի է ընկ-նում սեղմ շարադրանքով: Հեղինակը շարադրանքը բաժանել 3 մասի. նախ բերել է վրաց թագավորների, եպիսկոպոսների ցու-

ցակները, ապա Ք. ա. տեղի ունեցած իրադարձությունները նշել է «Ամք աշխարհի», իսկ Քրիստոսի ծնունդից հետո եղած դեպքերը՝ «Ամք տեառն» անվամբ արտահայտությունների ներքո: Չնայած շարադրանքի հակիմությանը՝ հեղինակը հիշատակել է Վրաստանի պատմության կարևոր իրադարձությունները, ինչպես՝ քրիստոնեության ընդունումը, Տփխիսի կառուցումը Վախթանգ Գորգասալի օրոք, Հայոց միաբանությունից Վիրքի դուրս գալը, հայ Բագրատունիների հաստատումը Վիրքում, հայ-վրացական համագործակցությունը և համատեղ պայքարը օտար նվաճողների դեմ Գեորգի, Թամար, Գեորգի Լաշա, Ռուսուդան և Դավիթ թագավորների ու թագուհիների օրոք:

Միսիթար Այրիվանեցու երկը կարևոր է նկարագրված դեպքերի տարեթվերի տեսանկյունից, թեև երեմն անձշություններ են նկատվում:

Հաջորդ հեղինակը, որն իր «Տիեզերական պատմությունում» անդրադարձել է հայ-վրացական հարաբերություններին և Վրաստանի պատմությանը, Վարդան Արևելցին է: Վերջինս, շարադրանքը սկսելով արարչագործությունից, իրադարձությունների նկարագրությունը հասցել է մինչև իր օրերը: Վաղ շրջանի պատմության շարադրման ժամանակ նա արծարծել է հայ-վրացական հարաբերությունների առանցքային հարցերը, ինչպիսիք են գրերի գյուտը, հայ-վրացական հակապարսկական դաշինքը Վահան Մամիկոնյանի և Վախթանգ Գորգասալի միջև՝ ընդդեմ Պարսկաստանի, վրաց եկեղեցու անջատումը Հայոց միաբանությունից, հայ Բագրատունիների հիմնավորումը Վրաստանում:

Վարդան Արևելցին շատ դեպքերում գրուցի ձևով լրացրել է հայ-վրացական կապերին առնչվող նախորդ հեղինակների տեղեկությունները:

Վարդան Արևելցու հաջորդ գործը «Աշխարհացույցն» է, որտեղ հեղինակը, տալով ժամանակի աշխարհագրական և վարչա-

քաղաքական նկարագիրը, կանգ է առել նաև Վիրքի նկարագրությանը:

Կարևոր սկզբնաղբյուր է նաև Գրիգոր Ակներցու «Պատմություն նետաձիգների ազգի մասին» երկը: Հեղինակը, նկարագրելով մոնղոլների նվաճումներն ու քաղաքականությունը, գրել է հայ-վրացական համատեղ զինակցության և մոնղոլական գորակազմում նրանց գտնվելու ու ռազմական արշավանքներին մասնակցելու, հայ-վրացական իշխանական վերնախավի հեղինակության մասին: Գրիգոր Ակներցին խոսել է նաև հակամոնղոլական պայքարի և ընդվզումների մասին, որոնք տեղի են ունեցել վրաց թագավորներ Գեորգի Լաշայի, Ռուսութանի և Դավիթ Է-ի օրոք:

Միքատ Սպարապետի «Տարեգիրքը», որը մենք մեջբերել ենք գրաբար բնօրինակով աշխարհաբար թարգմանության բացակայության պատճառով, նույնպես տեղեկություններ է պարունակում Վրաստանի մասին: Թեև դեպքերի զգալի մասը վերցված է նախորդ հեղինակների երկերից, սակայն կան նաև այնպիսի լրացումներ, որոնք ուշագրավ են և մեր քննության տեսանկյունից արժևորում են «Տարեգրքի» դերը:

Հաջորդ սկզբնաղբյուրը Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» մեծածավալ աշխատությունն է, որի հեղինակը Վրաստանի պատմությունը շարադրելիս օգտագործել է ոչ միայն վաղ շրջանի պատմիչների երկերը, այլև եկեղեցական այլ գրականություն, որը մեզ չի հասել և դրանով լրացնում է պատմիչների տեղեկությունները: Առավել արժեքավոր են այն հիշատակությունները, որոնք վերաբերում են Օրբելյան տոհմի պատմությանը: Հեղինակը մանրամասն նկարագրել է Դեմետրէ Ա-ի որդի Դավթի կտակը, Գեորգի Գ-ի թագադրվելու հանգամանքները, Գեորգի Գ-ի դեմ բարձրացված ապստամբության ընթացքն ու

պարտության պատճառները: Պատմիչը շարադրանքը հասցրել է մինչև 1299 թվականը՝ Դեմետրէ Բ-ի որդի Դավթի թագավորության, նրանց նախորդող Թամարի, Գեորգի Լաշայի, Ռուսուղանի, Գեորգի Լաշայի որդի Դավթի գահակալության տարիները:

Ստեփանոս Օքելյանի «Ժամանակագրութիւնը» արժնորվում է նրանով, որ այն հաղորդում է 961-1290 թթ. ընկած ժամանակահատվածում վրաց թագավորների ծննդյան, մահվան, թագադրության կամ նվաճումների տարեթվերը՝ լրացնելով իր «Պատմության» բացթողումները: Հեղինակը տարեթվերը ներկայացրել է ըստ քրիստոնեական տումարի և ըստ Հայոց թվականության: Երբեմն հիշատակել է նաև ամիսն ու ամսաթիվը:

Այսպիսով՝ XI-XIII դարերի հայ պատմիչների տեղեկությունները Վրաստանի և վրաց իրականության մասին արժնորվում են իրենց հավաստիությամբ, ճշգրտությամբ, քանի որ պատվիրված արքունական պատմիչներ չինելով՝ նրանք իրենց պատմությունները շարադրել են ոչ միայն հավաստի գրական աղբյուրների, այլև ականատեսների և դեպքերի մասնակիցների հաղորդած տեղեկությունների հիման վրա, որով աղբյուրի հիշատակությունները դառնում են անմիջական և զերծ միտումնավորությունից: Այս ժամանակահատվածի պատմության շարադրանքը վկայում է հայոց և վրաց արքունիքների, ինչպես նաև նախարարական տների և ռազմական ուժերի սերտ հարաբերությունների և կապերի մասին, որոնք ուղղված են եղել ընդհանուր թշնամու դեմ: Հայ գինված ուժերն ու նրանց հրամանատարները ծառայել են վրաց արքունիքում և փոխարենք արժանացել են աթաքեկի, ամիրսպասալարի և այլ բարձր պաշտոնների ու պատիվների, նաև եղել են իրենց գրաված կամ ազատազրած հայկական հողերի հայրենատերերը:

«Հայկական սկզբնադրյուրները Վրաստանի մասին» նյութերի նման ժողովածուն, բնականաբար, չի կարող ամփոփել այն ամենը, ինչ պարունակում է XI-XVIII դարերի հայոց հարուստ և բազմաբովանդակ մատենագրությունը, անշուշտ, կարող են նկատվել թերացումներ, ինչի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը:

Գրքի վերջում տրված է անձնանունների և տեղանունների ցանկ:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ ՏԱՐՈՆԵՑԻ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ¹

Իսկ Կովկաս լեռան դեմ հյուսիսային կողմնակալ է հաստատում (1) մեծ և հզոր ազգը և նահապետության անունը կարգում (իմա՝ դնում) Բղեշի Գուգարացոց, որոնք ծագում ին Դարեհ նախարարի Միհրդատի զավակներից. սրանց թողնում է իշխան Իվերացիների ազգից գերվածների վրա, որոնց բերեց Նաբուգոնոսուրը: Որովհետև Նաբուգոնոսուրն ավելի հզոր էր, քան Հերակլեսը, մեծ զորք հավաքելով՝ Լիբիացիների (և) Իվերացիների աշխարհները իր ձեռքի տակ է նվաճում, ապա նրանց մի մասին տանում բնակեցնում է Պոնտական ծովի աջափնյա կողմում:

Իվերիային (իմա՝ իվերացիներին) անց է կացնում աշխարհի արևմտյան եզրը՝ Բասենի մեծ հովտում, և հաստատում է Որդունիներ կոչված նախարարությունը, որոնք Հայկի սերունդներից ին (2):

(Ասողիկ, Ա-Ե)²

Իսկ Հայատանում թագավորում է Տիգրանի որդի Արտավագը (3): Սա իր եղբայրներին ու քույրերին բնակեցնում ու ժառանգություն է տալիս Աղիովիտի և Առերանի զավառները (4), ինչպես մյուս Արշակունիներին՝ Հաշտեանքի զավառն (5) ու ձորը: Իսկ ինքը դուրս բերելով Աստրապատականի նահանգի բյուրավորներին և Կովկաս լեռան բնակիչներին, Աղվանքի և Վիրքի հետ միասին, գնում իշնում է Միջազգետը և այնտեղից հալածում Հռոմեական զորքերին (6):

(Ասողիկ, Ա-Ե)

¹ Ատեփանոս Ասողիկ Տարոնեցու տեղեկությունների աշխարհաբար տարբերակը տէ ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Եր., 2000:

² Ատեփանոս Ասողիկ Տարոնեցու տեղեկությունների գրաբար բնագիրը տէ ս Մատենագիրը Հայոց հ. ԺԵ, Անդիլիաս, 2011, էջ 639-829:

Երբ մեծանում է Արտաշեսը (7), Սմբատը Պարսից արքայից օգնական զորք է խնդրում, որպեսզի զա և Արտաշեսին թագավորեցնի Հայոց վրա: Այդ բանը լսելով՝ Երվանդն իր մոտ է կուտակում Հայոց և Վրաց զորքերը և պատերազմի են բռնվում այնտեղ, որին Սարաց մարզ են ասում, Ախուրյան գետի վրա, որը գտնվում է Երվանդի քաղաքից (յ) երեք հարյուր ասպարեզ հեռավորության վրա:

(Ասողիկ Ա-Ե)

Բայց Տրդատը (8) այնտեղից մեծ ավարով վերադառնում է, ապա ամբողջ հյուսիսը միաբանելով՝ դիմում է դեպի պարսից աշխարհը՝ Արտաշիրի որդի Շապուհի վրա: Նա յուրայիններից չորսին կարգում է զորավար. Միհրանին, հանուն քրիստոնեական հավատքի, նշանակում է Վրացիների առաջնորդ, որովհետև հենց այդ ժամանակ էր, որ Վրաստանցիք հավատացին կենդանի աստծուն, իրենց Միհրանի առաջնորդությամբ, սուրբ Հոփսիսմեհ ընկերակիցներից մեկի՝ Նունեի ձեռքով, և Բագարատ ասպետին և Ռշտունյաց նահապետ Մանաձիրին:

(Ասողիկ, Բ-Ա)

Եվ Հայոց դպրության սկզբնավորումը եղավ սկիզբը մեծ զիտության ու անժխտելի խնդրության բազմաթիվ երկրների համար: Քանզի ոչ միայն Հայոց, այլև Վրաց ու Աղվանից, Աստծո խնամակալությամբ, զրեր տվեց երանելի Մեսրոպ վարդապետի ձեռքով:

(Ասողիկ, Բ-Ա)

Այս Մովսեսն էր (9), որ սուրբ Կաթուղիկէ վանքի երեց Կյուրինինին ձեռնադրեց Վրաց կաթողիկոս, սակայն Կյուրինը Մով-

սեսի վախճանվելուց քիչ ժամանակ առաջ բաժանվեց ուղղափառ հավատից և ընդունեց Քաղկեդոնական դավանանքը:

Իսկ Տեր Մովսեսը բազմաթիվ անգամներ աստվածային խրատներով կշտամբում էր նրան, բայց ոչինչ չօգնեց, և ինքը վախճանվում է:

(Ասողիկ, Բ-Բ)

Եվ Աբրահամ հայրապետն (10) էլ բազում ջանքերով հոգ էր տանում Վրաց աշխարհի համար, սակայն չկարողացավ հետ դարձնել նրանց իրենց [խոտոր] ուղուց, ուստի աստվածային սրով հատեց և ամենայն Հայոց միաբանությամբ նգովեց [նրանց]:

(Ասողիկ, Բ-Բ)

Իսկ նրանց, որ Քաղկեդոնինն էին [դավանում]՝ Իբերիային, Աղվանքի կաթողիկոսին, որը Փայտակարանում էր՝ արքունի դռանը, և շատ ուրիշ քաղաքների եպիսկոպոսներին ու քահանաներին՝ Հունաստանի կողմերից եկած, և այն իշխաններին, որոնք եկել էին Պարսից թագավորին ծառայելու համար, նույնիսկ չփառը հրամայեց տալ (11):

(Ասողիկ, Բ-Բ)

Թեոդորոս Ռշտունու (12) իշխանության այս նույն օրերում, (ձզ) ութսունվեց թվականին տաճիկներն առաջին անգամ երևացին Հայոց աշխարհում, Օմար ամիր-ալ-մումիայի հրամանով, որը երկրորդն էր Մահմեդից հետո, իսկ (դե) իննսունինգ թվականին դարձյալ բազմաթիվ զորքերով եկան տաճիկները, գրավեցին Դվին քաղաքը, գերեցին (լեռ) երեսունինգ հազար մարդ, և այնուհետև տիրեցին Հայոց, Վրաց և Աղվանից երկրներին:

(Ասողիկ, Բ-Բ)

Ապա (ձլե) հարյուր երեսունինգ թվականին Աշոտ Բագրատունին (13) Հայոց իշխան եկավ երեք տարի: Այս ժամանակներում սաստիկ ավերմունք և հալածանք հասան մեր Հայոց աշխարհին, որովհետև (ձլդ) հարյուր երեսունչորս թվականին հյուսիսային զորքերը տիրեցին Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհներին, որոնք Խազիրք են կոչվում, և պատերազմում սպանվում են Հայոց և Վրաց իշխանները:

(Ասողիկ, Բ-Բ)

Սակայն չորրորդ տարվա սկզբներին ինքը՝ Հուստինիանոսը (14), մեծ բանակով շարժվում զալիս է Հայաստանի վրա՝ Արարտակ կոչվող լեռան կողմից և իր զորքերը երեք մասի բաժանելով՝ ուղարկում է դեպի Հայաստան, Վրաստան և Աղվանք, ապա կանչում է իր մոտ այդ երկրների բոլոր իշխաններին, և նրանք ոչ թե իրենց կամքով, այլ հարկադրաբար գնում են նրա մոտ: Իսկ նա, իշխաններից ումանց իր հետ վերցնելով, մի քանիսի որդիներին էլ իրեն պատահ առնելով, որոնց թվում նաև Հայոց կաթողիկոս Սահակին՝ իինգ եպիսկոպոսներով հանդերձ, պահում է իր մոտ. մնացած իշխաններից ումանց արքունաշուր պատարագով պատվում և հաստատում է այդ երկրներին կուսակալ...

(Ասողիկ, Բ-Բ)

Մրա օրերում (15), (մղ) երկու հարյուր իննսուն թվականին Խալք իրն Եզիսոր Հայաստանի ամիրա եկավ և բազմությամբ անցավ Վրաստան, բայց մահացավ Զավախքում, Խոզաբիր կոչվող գյուղում:

(Ասողիկ, Բ-Բ)

Եվ նույն ժամանակ շարժվում գնում է (16) Տփղիսի վրա և Իս-
մայիլի որդի Սահակին հանում է խաչափայտին (17):

(Ասողիկ, Բ-Բ)

Իսկ Որմիզդի որդի Խոսրովը (18) նրա երեսից (19)
փախստական նամակով դիմում է Հունաց Մորիկ կայսերը (20),
խնդրում, որ կայսրն իրեն օգնական գորք տա՝ իր թշնամիներին
հարվածելու և կրկին իր հոր զահին նստելու համար, ուստի խոս-
տանում է կայսերը տալ Ասորիքի (21)կողմերն ու ամբողջ Ար-
վաստանը (22), մինչև Մծբին քաղաքը, որոշ մասեր Հայոց աշ-
խարից, մինչև Այրարատ (23) ու Դվին քաղաքը և Վրաց երկրի
մեծ մասը (24):

(Ասողիկ, Բ-Գ)

Մուավիան (25) Գրիգորին (26) Հայոց և Վրաց իշխան է հաս-
տառում, և ինքը մահանում է:

(Ասողիկ, Բ-Դ)

Իսկ իշխանների այրվելուց հետո (27) Սմբատ կյուրապա-
ղատն ու նրա հետ եղած նախարարները ազատվելով գնում են
Եգերացիների կողմերը: Հունաց թագավորը նրանց է տալիս
բնակվելու Փույթ քաղաքը, ուր մտնելով՝ հետազյում թալանում
են քաղաքն ու եկեղեցու սպասքները և այնտեղից վերադառնում:
Ուստի կայսրը արքեպիսկոպոսներին ու մետրոպոլիտներին
հրամայում է նզովքի ենթարկել նրանց և այն ընթերցել Զատկի
տոնին, երբ այդ ապիրատությունը գործեցին:

(Ասողիկ, Բ-Դ)

Մուսեն (28), մեկ տարի տիրելով իշխանությանը, սատկում է, և նրանից հետո զայիս է նրա եղբայր Ահարոնը (29): Սա Ատրպատականն ու Հայաստանը՝ Վրաստանով ու Աղվանքով հանդերձ, հանձնում է իր եղբայր Օքեթլային:

(Ասողիկ, Բ-Դ)

Կոստանդնի որդիի Հուստի(նի)անոսը (30) թագավորում է (Է) յոթը տարի. սրա առաջին տարում Հայաստանին, Վրաստանին և Աղվանքին տիրեցին հյուսիսային ազգերը (իմա՝ ցեղերը), որոնց Խազիրներ են ասում:

(Ասողիկ, Բ-Զ)

Սա (31) նախքան թագավորության (Վերականգնումը) երեսնամյա ժամանակով իշխան և իշխանաց իշխան կոչվեց Հայոց և Վրաց, շրջակայի բոլոր ազգերին էլ հաղթող ճանաչվեց, պայծառացրեց սուրբ Եկեղեցու միաբանությունները, զարդարեց Հայաստանի Եկեղեցիները...

(Ասողիկ, Գ-Ա)

Իսկ Սմբատը (32), թագավոր դառնալով, տիրում է իր հայրենիքի բոլոր սահմաններին՝ Հայաստանի և Վրաստանի, իր ժառանգությունը դարձնելով հակառակորդների քաղաքները:

(Ասողիկ, Գ-Բ)

Այդ ժամանակ մեռնում է Ափշինը (33), և նրա փոխարեն Պարսկաստանի ու Ատրպատականի ամիրա է զայիս նրա եղբայր Յուսուֆը: Սակայն Սմբատը (34) չի կամենում հնազանդվել նրան, ուստի ընծաներով մի խնդրագիր է ուղարկում Բաբելոնի ամիրապետին՝ ազատելու իրեն Սաճի անօրեն որդուց, որը և

անմիջապես կատարում է: Այս բանը լսելով՝ Յուսուֆը ելնում գալիս է Պարտավ (35), այնտեղից էլ զաղտնածածուկ անցնում է Տփդիս և գալիս Տաշիրք (36): Այդ իմանալով՝ Սմբատը մեծ զորքով պահում է նրա ձանապարհը: Բայց նա գողաբար, բարձր լեռների վրայով գնում անցնում է Շիրակ (37) և այնտեղից էլ չվում է դեպի Դվին, իսկ Սմբատը սաստիկ զորությամբ հասնում է նրա հետևից: Յուսուֆը սարսափահար հաշտություն է խնդրում, բազմաթիվ ընծաներով, զարդերով նորից է պսակում Սմբատին և թողնում է գնում Պարսկաստան:

Սմբատը կալանավորում է Եգերացիների (38) Կոստանդին (39) թագավորին և պահում իր ձեռքի տակ նվաճված: Դրա վրա զայրացած Վրաց Ատրներսէի թագավորը անջատվում է նրանից և նրա նկատմամբ չարիքներ է խորհում: Իսկ անօրեն Սաձը ըմբոստանում է ամիրապետի դեմ և շարունակ անգոսնում է նրան: Եվ ամիրապետը հրաման է արձակում իր տերության բոլոր կողմերում՝ նրանից վրեժ լուծելու: Սմբատին նույնպես գրում է՝ զորք գումարել նրա դեմ: Իսկ Սմբատն ակամա մեծաքանակ զորք է ուղարկում՝ հայտնելով Յուսուֆին, թե քեզ օգնելու եմ ուղարկել: Սակայն Յուսուֆը հնազանդվում է ամիրապետին և զորքերի հսկայական բազմություն գումարելով՝ գալիս է Սմբատի վրա և ամբոխասաստ զորությամբ գալիս հասնում է մեր Հայոց աշխարհը (յծq) երեք հարյուր հիսունվեց թվականին:

Նրա մոտ են գնում Վրաստանի Ատրներսէի թագավորը, Վասպուրականի (40) Գագիկ իշխանը (41), որը Սմբատի քեռորդին էր և Սմբատի եղբայր Շապուհի որդի Աշոտը, իրենց բոլոր զորքերով միանում են նրան (իմա՝ Յուսուֆին՝ Սմբատ թագավորին թողնելով միայնակ, չար նախանձից նենգազործում են Հայոց աշխարհի շենության պատճառով:

Սմբատ թագավորը երբ լսեց նրանց նենգավոր մտադրության մասին, Հայոց տանուտերերով և բոլոր զորքերով միասին ելավ գնաց Տաշիրք զավառի Օձուն գյուղը (42) և այնտեղից էլ անցավ Ավիսազիա: Յուսուփը հետապնդում է նրան մինչև (Կուա) ամրոցը, Կուել բերդի (43) մոտ մարտի է բռնվում և զրավում ամբոցը: Եվ դրանից հետո անցնում է Տիգիս: Իսկ թագավորը այնտեղից վերադառնում է Շիրակ:

(Ասողիկ, Գ-Դ)

Սմբատից (44) մնում են երկու որդիները՝ Աշոտն (45) ու Արասը (46): Աշոտը փախստական եղած գնում է Կոստանդնուպոլիս, հունաց Լևոն կայսեր (47) դուռը: Իսկ Արասը գնում է Վրաց աշխարհը, փեսայանում նրանց և իր եղբայր Աշոտի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո ինքն էլ է վերադառնում մեր աշխարհը:

(Ասողիկ, Գ-Զ)

Այս Արասը (48) յուր քաղցրաբարոն վարքի և քաջակորով զորության պատճառով մեր Հայոց աշխարհի խաղաղության ու բարգավաճման հիմքը դրեց և շրջակայքում բոլորին հաղթող հանդիսացավ: Վրացիների ու սարմատացիների (49) ասպատակությունները դադարեցրեց Հայոց աշխարհից, որոնք մի օր բազմախուժն բանակներով և բյուրավոր զորքերով, ամբարտավանությամբ Բելի օրինակով, Ավիսազիայի իշխան Բերը Սամարացիների աշխարհից, որը Կովկասյան լեռներից էլ այն կողմ է, որուս գալով շարժվում գալիս է անթիվ բազմությամբ, հասնում Կուր կոչվող գետի ափը՝ ցանկանալով անապատացնել մեր Հայոց աշխարհը:

Դեսպան է ուղարկում Հայոց թագավորի մոտ՝ պահանջելով չօծել եկեղեցին ըստ Գրիգորի ուղղադավան հավատի, այլ ասում է, թե ինքը կզատարի այդ քաղկեդոնական օրենքներով...

Աբաս թագավորը, եթե լսում է նրա այդ պահանջը, Հայոց այրուձից մի գումարտակ է կազմում, (արագորեն) հասնում է Կուր գետի ափին ու բանակ դնում Բերի բանակի դեմ: Իսկ երկու կողմերի զինվորները, ամեն օր հարձակվելով, ասպատակ էին սփռում գետի այս և այն ափերում:

Եվ օրերից մեկում ափխազաց ասպատակները անցնում են Կուր գետն ու հասնում Հայոց բանակի մոտերքը. շիփորքության աղաղակները հասնում են թագավորին: Նա հրամայում է շուտափույթ երիվարը իր մոտ բերել, ասպազենն ու զենքերը անձամբ ինքն է հազնում, երկսայրի սուսերը ձեռքն է առնում և հարձակվում ասպատակների վրա. նրանց հետևից հասնում է գետի մեջտեղը, քաջի հզոր ձեռքով հարվածներ հասցնում, երիվարներից կիսախեղդ ցած է զցում, որոնց համար հուղարկավոր ջուրն է դառնում: Իսկ ինքը ափ դուրս գալով, ահեղ ձայնով Աստծուն օգնական է կանչում և իր անունն է տուլիս. դրանից ահաբեկված հյուսիսային ազգը փախուստի է դիմում: Հայոց զորքերը քաջապինդ զորությամբ հետապնդելով՝ նրանց բոլորին սրո ճարակ են դարձնում ու ամբողջ բանակը ավարի առնում. նաև ամբարտավան Բերին ձերբակալում և բերում հասցնում են Կարին (50) քաղաքը: Թագավորը ասում է նրան. «Լավ նայի՞ր այդ գեղեցկաշեն եկեղեցուն, քանի որ այլս չես տեսնելու», և հրամայում է փորել նրա աչքերը: Նրա խավարած պատկերը յուր ազգի մարդիկ արծաթով զնեցին, Հայաստանի հետ երդմամբ խաղաղության դաշինք հաստատեցին, որ այլս նրանց միջև պատերազմ չլինի:

Այս ժամանակներում Հայոց հայրապետական աթոռին տիրում էր Տեր Անանիան՝ գերապատիվ ամենաերջանիկ սրբու-

թյամբ, բարեշնորի իր վիճակավորների հանդեպ: Այդ նույն ժամանակ ծաղկում ու պայծառանում է կրոնավորական դասը մեր Հայոց աշխարհում: Եվ բազմաթիվ տեղերում կառուցվում են եղբայրանոցներ, հավաքվում են միաբնակյացներ Քրիստոսի սիրով:

Նախ և առաջ Կամրջաձորի մեծահոչակ միաբնությունը Արշարունյաց գավառում (51), որի առաջնորդն էր հայր Հովհաննեսը. սա Արևմտյան աշխարհից, եզերացիների գավառի քաղկեդոնական մարդադավան աղանդից հալածական եկավ և իր հետ բերեց հրազեն (իմա՝ հրաշագեն) նշանը տերունական:

(Ասողիկ, Գ-Է)

Այս Կյուռ-Ժանը (52) մանկությունից ի վեր արիության բազմաթիվ գործեր էր կատարել ու շատ շատերին զարմացրել, այնպես որ թագավոր դառնալուց հետո հարավային կողմից Տաճկաց (53) ազգը, հյուսիսային կողմից Սարմատացցց ազգը և արևելյան կողմից Վրաց ազգը ինքնակամ հարկատվությամբ հնագանդվեցին նրա իշխանությանը:

(Ասողիկ, Գ-Ը)

Մրա օրերում (54) էին գործում նաև վարդապետներ Հովհաննեսը՝ խաչակիրք Քրիստոսի, որը տկար խոսքով, բայց մեծ իմաստությամբ բացահայտում էր սուրբ Գրքերի ուսմունքը: Նա մոլեռանդ վրաց ազգի սրով մահացավ և թաղվեց Ակսիդոմս կոչված վանքում, Բասենի գավառում (55), Ծիրանյաց լեռան ստորոտում և այժմ սուրբ Հովհան է կոչվում:

(Ասողիկ, Գ-Թ)

Եվ խաղաղություն ու շենություն էր տիրում մեր Հայոց աշխարհում: Ապա նա (56) սկսեց հոխորտալ իր հորեղբայր Մուշեղի դեմ, որը Կարսում էր (57), և գրավեց Շատիկ կոչված բերդը, որը Ճակատում էր: Այդ է պատճառ դառնում, որ Տայոց Դավիթ կյուրապաղատը Վրաց ամբողջ զորաբանակով շարժվի զա Սմբատի վրա. զայսի իջնում է Շիրակի Բավաց ձոր կոչված գյուղում, նրա հետ՝ նաև Մուշեղը, որը նրան օգնության էր կանչել: Իսկ Սմբատը բերդը նորից նրանց նրանց է հանձնում ու խաղաղություն հաստատում. և հանցավոր ոչինչ չեն անում Սմբատի երկրում, որովհետև խաղաղասեր ու արդարամիտ էր կյուրապաղատը:

(Ասողիկ, Գ-ԺԱ)

Սա (58) առաքեց կանչեց Դելմաստանի պարսիկ ամիրա Սալատինի թոռ Արլիածին. նա թեպետ նրանց հետ չեկավ, բայց հետագայում եկավ, այրեց Հոռոմոսի վանքը և ճոպանով ցած զցեց սուրբ Շողակարի վրա կանգնեցված փրկական Նշանը (նլա) չորս հարյուր երեսունմեկ թվականին. սակայն նրա վրա շարժվեց Աստծո զայրույթը, և նա դիվահար եղավ: Պատերազմի մեջ մտավ Գողթնի (59) ամիրա Արուտլուփի դեմ, պարտվեց նրանից. սա գրավեց նրանից Դվինն ու մյուս բոլոր քաղաքները, նրան էլ ձերբակալեց: Եվ նա ամբողջ ընտանիքով թափառական շրջում էր Հայոց երկրում ու Վրաստանում և ամենուրեք պատմում, թե քանի որ թշնամացա Քրիստոսի սուրբ Խաչին, դրա համար նա վտարեց ինձ իմ հայրենիքից:

(Ասողիկ, Գ-ԺԲ)

Այնուհետև, այս բոլոր իրադարձություններն անցնելուց հետո, Հունաց Վասիլ թագավորը (60) Թոռնիկ զորավարին, որն ազգությամբ վրացի էր և սուրբ լեռան արեղա, հանում ուղարկում է

Տայոց Դավիթ կյուրապաղատի մոտ, խոստանում է տալ նրան Խաղողիառիձր (61)՝ Կղեսուրի հետ միասին, Չորմայրին ու Կարինը, Բասենն ու Սևուկ բերդակը, որ Մարդաղին (62) (իմա՝ զավառը) են, Հարքն ու Ապահունիքը) (63), (որոնք հենց տվեց ել, որպեսզի իրեն օգնական գորք ուղարկեն:

Դավիթ կյուրապաղատը գումարում է Վրաց ամբողջ գորքը և իշխանաց իշխան Զոջիկին դնում է Թոռնիկի հետ և ուղարկում պատերազմելու բռնակալ Վարդի դեմ: Նրանք, սկսելով Տայոց աշխարհից, քանդում և ավերում են Հունաց ամբողջ երկիրը, որը բռնակալի ձեռքի տակ էր: Վարդ թագավորին, որը նաև Փոկաս էր կոչվում, նույնպես ազատում են բանտից, որին Կյուռ-Ժանն էր բանտարկել կղզում, տալիս է նրա ձեռքը Հունաց արևմտյան ամբողջ զորաբանակը, վրացական գորքերի հետ միասին, և երկու բանակներն ուղարկում բռնակալ Վարդի դեմ:

Իսկ բռնակալը, միայն մեկ բանակի դեմ պատերազմելով, քիչ էր մնացել, որ փախուստի մատներ. և ահա վրա է հասնում երկրորդ բանակը, հիմնավորապես կարգավորում ճակատամարտը: Դրանից հանկարծակի գալով՝ բռնակալ Վարդը փախուստի է մատնվում:

(Ասողիկ, Գ-ԺԵ)

*ՓոկասՎարդի դուրս գալը, Վարդ թագավորին ձերբակալելն ու
իր թագավոր նստելը*

Իսկ Վարդը, որ նույն ինքը Փոկասն է, Վասիլի (64) հրամանով, Հունաց և Վրաց զորքերով դուրս է գալիս նրա դեմ պատերազմի: Ապա իր սուրհանդակների ձեռքով ստապատիր խոսքերով զիր է ուղարկում նրան, ուր ասում է. «Եկ խաղաղություն կնքենք միմյանց հետ, մեր մեջ բաժանենք Հունաց աշխարհը և վերացնենք Վասիլի թագավորությունը»: Դրան հավատալով՝ Վարդ

թագավորը իր մոտից ազատ է արձակում տաճկական զորքերին, և երբ հանդիպում են միմյանց, Վարդ-Փոկասն ուրանում է իր տված երդումը, յոթն օր հետո կալանավորում է սիկլառոս Վարդին և հրամայում է զինվորների հսկողությամբ տանել Ժեռավ(ս) բերդը: Իսկ տաճկական այն զորքերը, որ արձակված կին սիկլառոսի կողմից, զնացին իրենց բնակության վայրերը, բայց երբ լսեցին սիկլառոսի Ժեռավում բանտարկվելու լուրը, հարավային կողմից հարձակվեցին ու գերեցին մինչև Ապահունիք:

Ապա նույն Փոկաս-Վարդը, որ խիստ բռնակալ թագավոր եղավ (նլէ), չորս հարյուր երեսունհինգ թվականին Հունաց և Վրաց բոլոր զորքերով միասին երկու տարի շարունակ ձակատամարտ է տալիս արքայանիստ Կոստանդնուպոլիս քաղաքի դեմ: Նա թագավորական քաղաքի դիմաց ամրոց է կառուցել տալիս և Տլփինաս մագիստրոսին զորականներով հանդերձ պահապան է կանգնեցնում, որպեսզի ոչ մեկը քաղաքից դուրս չգա կամ դրսից ներս մտնի: Սակայն նավահանգստի պաշտպանները, խաղաղության դաշինք հաստատելով Վասիլ թագավորի հետ, քաղաքում եղած ամբողջ զորքը, և նրանք էլ, որ արևմտյան կողմում էին, մի գիշերվա մեջ այս կողմն են անցկացնում. սրանք անցնում են ամրոցի թիկունքը և այնտեղ ծածկվելով՝ թաքնվում են: Իսկ վաղ առավոտյան պատերազմական նավերը, քաղաքի կողմից մոմեններով կազմված-պատրաստված, շարժվում են ամրոցին ընդդեմ. ամրոցում գտնվողները, տեսնելով նրանց, դուրս են գալիս նրանց դեմ պատերազմի: Իսկ թաքնված զորքերը թիկունքի կողմից հարձակվում են նրանց վրա, սրախողիսող և ծովընկեց են անում Տլփինասի ամբողջ զորքին, զորքերի գլխավոր Տլփինասին էլ ձերբակալում են և տանում ներկայացնում Վասիլ թագավորին, և նա դատապարտվեց խաչափայտից կախվելու: Դա տեղի ունեցավ (նլէ) չորս հարյուր երեսունյոթը թվականին:

(Ասողիկ, Գ-ԻԵ)

Իսկ Փոկաս-Վարդը ազատ է արձակում իր մոտ եղած վրացական գորքին, և ինքը հունական բոլոր գորքերով շարժվում է դեպի ծովի ափը (65):

(Ասողիկ, Գ-ԻԶ)

*Թևտասին Ափիազիայի թագավորությունից հեռացնելու և
Գուրգենի որդի Բագարատին թագավորեցնելու մասին*

Բայց այդ իրադարձություններից (66) քիչ տարիներ առաջ աշխարհի մեծամեծները կուրացրին Ափիազիայի Թևտաս թագավորին և վերցրին նրանից թագավորությունը: Ապա Տայոց կյուրապաղատ Դավիթն ու Հայոց արքա Սմբատը (67) Ափիազիայի վրա թագավոր կարգեցին Գուրգենի որդի Սմբատին՝ Վրաց Բագարատ թագավորի թոռանը: Սակայն մահանում է նրա (իմա՝ Սմբատի) տատը, և նրա պապ Բագարատը ուրիշ կին է առնում, որը Գուրգենի որդի Բագարատին հալածում է իր հայրենի երկրից: Այս իսկ պատճառով Գուրգենի որդին՝ Ափիազիայի թագավորը, անհամար գորքով Սամատական երկրից շարժվում գալիս է Դավիթ կյուրապաղատին յուր պապ Բագարատի վրա և Կովկասյան լեռներից այս կողմն անցնելով՝ գալիս բանակ է դնում Կուր կոչված գետի ափին: Սակայն Դավիթ կյուրապաղատն ու Վրաց Բագարատ թագավորը (սուրհանդակ) են ուղարկում Հայոց Սմբատ թագավորի մոտ և նրան իրենց օգնության են կանչում: Վերջինս առնում է Հայոց ամբողջ գորքը, իր եղբայր Գագիկի հետ միասին գնում են նրանց մոտ և բանակ դնում Զավախը գավառի (68) Դիլիջեկ գյուղի մոտ: Իրենց հետ տանում են նաև Վարինի թագավոր մանուկ Աբասին իր կարմրազգեստ գնդով հանդերձ: Եվ Վրաստանի ու Վասպուրականի բոլոր գորքերը, Սյունյաց և Աղվանքի իշխանները միազումար հավաքվում են

ընդեմ ափխազական գորքերի: Նրանք վախենալով խաղաղություն են առաջարկում և բարեկամություն են հաստատում միմյանց միջև: Դավիթ կյուրապաղատը Ափխազիայի թագավորից խնդրում է Սակուրեթի բերդը և վերցնելով այն՝ տալիս է Հայոց թագավոր Սմբատին՝ իբրև հատուցում նրա տված օգնության համար, սակայն Սմբատի մահվանից հետո Սակուրեթի բերդը հետ են վերցնում: Բայց այդ ժամանակ միմյանց հետ խաղաղություն հաստատելով՝ յուրաքանչյուրը վերադառնում է իր երկիրը: Դա տեղի ունեցավ (նլէ) չորս հարյուր երեսունյոթ թվականին:

(Ասողիկ, Գ-ԻԸ)

Իսկ նրանց՝ Սմբատի (69) և Գագիկի (70) եղբոր՝ Գուրգենի որդի Դավիթը (71), յուր եղբայր Սմբատի հետ միասին, գրավում է Տաշիրքի և Վրաց դաշտի շրջակայքը, Շամշուլտի մեծ քաղաքանիստ դրյակը դարձնում է իր համար արքայանիստ, արագորեն տիրում է Դմանյաց քաղաքին (72), նաև իրեն է ենթարկում Տփխիսի ամիրային՝ մայրաքաղաքով հանդերձ... Սակայն Գանձակի ամիրա Փալտունը շտապեց պատերազմի դուրս գալ նրա դեմ, որպեսզի մինչև ավելի հզորանալը նրան խեղացնի: Բայց Դավիթը արիաբար պատերազմեց նրա դեմ, պարտության մատնեց և նրա ամբողջ գորքին սրախողիսոյ ու գետավեծ արեց: Միայն ինքը մազապուրծ փախավ ազատվեց: Այդ նույն ժամանակ մարզպան Դեմետրը, որ Գագ բերդի և նրա սահմանների իշխանն էր, կասկածամտությամբ վախենալով նրանից՝ թողնում է հայկական հայրենի հավատը և իրեն օգնական-թիկունք ունենալով Վրաստանը՝ նրանց օրինակով ջուրը կրկնամեռ է լվանում և իր որդուն Տաշիրքի Հյունեվանքում մամփուղ (կամ մամփայ) (73) է հաստատում:

(Ասողիկ, Գ-Լ)

Այդուհետև Վասիլ թագավորը սուրհանդակ է ուղարկում Արևելք, կանչում է Չորտուանելին (74) սպանող Ժան պատրիկին, մազիստրոս կարգում և ուղարկում Մակեդոնիա՝ բուլղարների դեմ:

(Ասողիկ, Գ-ԼԴ)

Հունաց արքայի հրամանով նրանց (75) դեմ է դուրա գալիս Դալասանոս մազիստրը, պատերազմում և պարտության մատնելով՝ փախուստի դարձնում: Նրանց բանակի ամբողջ ունեցվածքը Հունաց գորքին ավար մնաց: Սակայն տաճկական գորքերը կրունկները հետ են դարձնում նրանց դեմ քաջաձիգ աղեղներով և կորովատեզ նիզակներով սուսերահար անում Հունաց ամբողջ գորքին: Սպանվում է նաև Դալասանոս մազիստրը եղբոր և որդու հետ միասին, իսկ նրա ամբողջ բանակը փախուստի են դիմում:

Նրանցից շատերին ձերբակալում և գերի են տանում. այլոց հետ տանում են նաև Թոռնիկ արեղայի եղբորորդի Չորտուանել պատրիկին:

(Ասողիկ, Գ-ԼԵ)

Իսկ Բատի (76) մեռնելուց հետո Հայոց կյուրապաղատ Դավիթը (77) պաշարում է Մանազկերտ քաղաքը և սրով ու սովով նեղելով նրան՝ գրավում, այնտեղից դուրս է բերում բոլոր տաճկաստանցիներին ու երկրից վտարում և իր իշխանության ներք առնելով քաղաքը՝ այն լցնում է հայ և վրացի բնակիչներով: Այս իսկ պատճառով չարանախանձ բարկությամբ դրդված բոլոր պարսիկներն ու տաճիկները միացած՝ պատվիրակ են ուղարկում Դավիթ կյուրապաղատի մոտ և պահանջում իրենց վերադարձնել գրաված քաղաքը, հակառակ դեպքում սպառնում են պատերազմի դուրս գալ նրա դեմ:

Իրենց պահանջի մերժման պատասխանը լսելով՝ Ատրպատականի Մամլան ամիրան զորքի մեծ բազմություն է հավաքում և գալիս է բանակ դնում Շաղկոտն զավառի (78) Կուտյանք կոչված զյուղում: Այնժամ Դավիթ կյուրապաղատը, Հայոց Գագիկ արքան (79), նրա հետ նաև Արասն (80) ու Վրաստանի թագավոր Բագրատը (81) գալիս են նրանց դեմ Բագրևանդ զավառը (82)և մեծ բանակով շրջապատում են Վահարշակերտ քաղաքը (83): Բայց Պարսից զորքերը վախենալով բաց դաշտում պատերազմի դուրս գալ՝ ցայզալույսին գունդ-գունդ հատված հեռանում են, շահերով ու դամապարներով (իմա՝ կանթեղ, կրակարան) կրակ տալիս այրում Բագրևանդի ամբողջ շրջակայքը և բազմաթիվ շենքր արևելյան կողմից և հեռանում գնում իրենց երկիրը:

(Ասողիկ, Գ-ԼԸ)

Վրացական զորքերի կոտորվելը Խլաքում

Այս նույն ժամանակաշրջանում (84) այս բաները լսելով՝ Դավիթ կյուրապաղատը վրացական մի մեծ բանակ է ուղարկում՝ պաշարելու Խլաք քաղաքը (85): Նրանք գալիս են, երբ օրերը ձմեռային էին, (նխզ) չորս հարյուր քառասունվեց թվականին, սրով և սովոր խիստ ներում են քաղաքն ու հայոց եկեղեցին, որը քաղաքի պարիսպներից դուրս էր, Սուրբ Խաչն ու Սուրբ Գամանիելը, որոնք եպիսկոպոսարան և ուխտատեղի էին եղել հայերի համար՝ հիմնադրման օրերից ի վեր, բայց վրացական զորքերի համար դարձան անասնազո՞մ ու իջևանատուն: Ուստի տաճիկները պարիսպների վրայից աղաղակում էին, թե «միթե դուք քրիստոնյա եք, երբ քրիստոնեական սրբարանների հետ այդպես եք վարվում»: Եվ վրացիները պատասխանում են, թե «մենք Հայոց եկեղեցիներն ու ձեր մզկիթները հավասար ենք համարում», որի համար էլ Աստծո զայրույթը շարժվեց նրանց վրա:

Մրգանի որդու փոխարեն նրանց վրա ամիրա է զալիս նրա եղբայրը, որը նույնպես Բատի քեռորդին էր և տիրելով Ամիթին՝ փոքրաքանակ զորք է վերցնում և զալիս Վրաստանի վրա. նրանք պաշարում են Խլաթը (Նիսէ) չորս հարյուր քառասունյոթ թվականին, Մեծ Զատկի օրը: Եվ պատերազմը բռբքոքվում է նրանց մեջ, որտեղ Տայոց քաջակորով աղեղնավորները նրանցից շատ-շատերին խցոտում սատկացնում են և այնտեղից վերադառնալով՝ հանգիստ են առնում: Այդ նույն գիշերը՝ Զատկից հետո, Աստծո ցասումը հասավ Վրացական զորքերի վրա և իրենք իրենց, առանց պատերազմելու, փախստական եղած՝ հեռանում են: Այդ բանը տեսնելով՝ տաճիկների զորքն ու ժողովուրդը հետապնդում են նրանց, սաստկագոյն հարվածներով հալածում և սրի բերանն առած՝ կոտորում: Այդ փախտուսի ժամանակ սպանվում է նաև Թոռնիկ արեղայի որդի Բագարատ մազիստրոսը. գերի են վերցնում նաև իշխանաց իշխան Բակուրանին և նրա հետ էլ ուրիշ շատ-շատերի:

(Ասողիկ, Գ-Խ)

Այս նույն տարում և հենց նույն օրերին՝ (Նիսէ) չորս հարյուր քառասունյոթ թվականին, Ատրպատականի Ռովդա ամիրայի թոռ, Արլիածի որդի Մամլանը դարձյալ զորահավաք է անում Դավիթ կյուրապաղատի դեմ պատերազմի դուրս զալու համար: Իր մոտ է համախմբում Պարսկաստանի և Մարաստանի բոլոր զորքերի բազմությունը. Խորասանի ամիրայի և այլ խուժադուժ ցեղերի օգնությամբ մտածում է տիրել Հայաստանին ու Վրաստանին, վերակառուցել Կարին քաղաքը, ավարի ենթարկել Տայոց աշխարհը՝ Մանազկերտի փոխարեն, որի աղոթատները կործանեցին քրիստոնյաները: Եվ ծանրածանք ամբոխով դուրս զալով Հեր զավառի (86) սահմաններից, իր Թավրիզ քաղաքից՝ ընդար-

ձակածավալ բանակով անցնում է Վասպուրական աշխարհը և գալիս իջևանում է Ապահունյաց զավառում:

Իսկ Դավիթ կյուրապաղատը ոչ թե ինքն է գնում նրանց դեմ պատերազմելու, քանզի արդեն ծերացած էր, և իր օրերն էլ հաշված էին, այլ բանքեր է ուղարկում Հայոց արքա Գագիկի, Վրաց թագավոր Գուրգենի մոտ, որովհետև նրա հայր Բագարատն արդեն մահացած էր և յուր հոր փոխարեն թագավորում էր Գուրգենը, և նրանցից օգնական գորք է խնդրում: Ուստի Գագիկը Հայոց գորքից առանձնացնում է (զո) վեց հազար ամենաընտիր և զինավառ մի գունդ, հանձնում Մարմաշենն ու Բրգները կառուցող Գրիգոր Պահլավունու որդի իշխանաց իշխան Վահրամի և նրա որդի Սմբատ մազհստրոսի ձեռքը, ապա նաև Աշոտ մարզպանի և Վանանդի թագավոր Աքասի զորքն էլ (գումարում): Վրաց թագավոր Գուրգենը նույնպես իր այրուժից (զո) վեց հազար ընտրյալներ տալիս է Զողիկի որդի, իշխանաց իշխան Փերսիի ձեռքը և Դավիթ կյուրապաղատի զորքերի այդ ամբողջ բազմությունը գումարվում է Շշոպնտի որդի Գաբրիելի ձեռքում: Նրանք առաջ են շարժվում, անցնում Սուվազ լեռն ու Աղրի ձորի բերանով կտրում պարսից բանակի դեմք՝ կարծելով թե առաջին հերթին Բագրևանդ են մտնելու: Այստեղ նրանց հասնում են Հայոց և Վրաց ընդհանուր զորքերը և միասին շարժվում են դեպի Ապահունյաց զավառը. բանակ են դնում մի ամրակուտ և բարձրավանդակ տեղ՝ Ծմբո գյուղի մոտակայքում, Մամլանի բանակին դեմ հանդիման, և բազմաթիվ օրեր նույն տեղում հանգիստ են առնում: Որովհետև պարսկական սպայի բազմաքանակությունից զարհուրած էին և չեին համարձակվում անձուկ տեղերից բանակը բաց դաշտ դուրս բերել, այլ միայն իրենց պաղատագին աղոթքներն էին առ Աստված վեր առաքում: Նույն ձևով էլ բոլոր քրիստոնյաները (իմա՝ ժողովուրդը) աղերսախառն աղոթքներով և արտասուրով

սփովում էին Աստծո առջև՝ նրա ահարկու անունն իրենց անձանց և զորքերին օգնական կանչելով:

Իսկ թագավորները առատաձեռնությամբ աղքատներին ողորմություն էին բաշխում և հայրապետի հետ միասին լուսաբացից սաղմոսանվագ երգերով պաշտամունքի սրբազն ուխտն էին կատարում:

Բայց պարսկական զորքը երբ հասկացավ, որ նրանք չեն ցանկանում առաջինը իջնել իրենց մոտ և սկսել պատերազմը, մանավանդ որ տեսնում էին նրանց սակավաթիվ լինելն իրենց բազմաքանակության համեմատ, այդ ժամանակ՝ Արեգի ամսի հենց ամսամուտին, երեքշաբթի օրը, վաղ լուսաբացին ճակատամարտի են պատրաստվում բազմաշերտ հորինվածքով, դելմատանյան վահանափակողներով կարգավորում-հարմարեցնում են ամբողջ դաշտի երեսով մեկ՝ լայնածավալ հարձակման անցնելու համար գալիս մոտենում են Հայոց և Վրաց բանակատեղի բլրալանջին: Նրանց բազմաքանակության տեսքն անգամ ահ ու սարսափ էր ազդում նայողին. ինչպես վկայել են, թե պարսկական հետևակի և այրուձիի թիվը միասին (Ճ՛՛) հարյուր հազարից ավելի էր: Ապա ձայն են տալիս (իմա՝ Հայոց և Վրաց բանակին) ճակատամարտի պատրաստվել, առաջ անցնել և մոտենալ կռվի ասպարեզին ու հանդիսարանին: Բայց Հայոց և Վրաց զորքերը հանկարծակի գալով՝ հայտնում են, թե «Ոչ անպայման այսօր, այլ մեկ ուրիշ օր պատերազմենք»: Իսկ պարսիկներն իրենց բազմաքանակությանը վստահ՝ նրանց մոտ դեսպան են ուղարկում և պարծենում. «Ուզենաք, թե ոչ այսօր պետք է պատերազմն սկսենք»: Սակայն նրանք հանձն չառան և ոչ էլ երիվարները հեծան, այլ մնացին իրենց տեղը բանակած, միայն սակավաթիվ մարտիկներ իջնում էին այնտեղ նրանց հետ մենամարտելու: Դրա հետևանքով վրացի զինվորներից հինգը սպանվեցին: Այն-

Ժամ պարսկաստանցիները թողնում են ճակատամարտի պատրաստվածությունը, պատերազմի կարգավորությունն ու ռազմական կառուցվածքը լրում, և յուրաքանչյուր ոք, ձիու գլուխը բաց թողած, դիմում են թալանի ու հափշտակության, որպես մեռելոց դիակների կամ փախուստի մատնվածների կողոպտիչներ, բոլոր կողմերից հարձակվում են քրիստոնյաների բանակի վրա:

Իսկ Հայոց և Վրաց զորքերը, քանի որ ոչ մեկն էլ թագավոր չունեին, ամենեցու թագավոր, գլուխ և օգնական Քրիստոսին ունենալով՝ միաբերան նրան են ուղղում իրենց աղաշանքը և իրենք անձամբ զինավառ եղած ասպանդակում են իրենց երիվարներին: Բայց ոչ թե պատերազմական օրենքներով էին ճակատամարտ տալիս, այլ յուրաքանչյուրն ըստ իր տոհմական գնդերի ավագության էին առաջ անցնում և առյուծաբար մընչալով հարձակվում պարսկական բանակի անտառախիտ բազմության վրա: Այնտեղ Հայոց զորքերը կայծակնային արագությամբ շահատակում էին աջ ձեռքով (ամենայն հավանականությամբ աջ ու ձախ), խուռներամ մեծ խմբով հասնում էին, բուռն ու խորը խոցոտում. դաժանորեն սուսերահար անում և խուժաբրւժ դարձնելով՝ ծանրորեն հարվածում: Իսկ վրացական զորքերի մեջ իրենց հսկայական ուժով փառաբանված Մեսիունի Կամրակելանք եղբայրները կռվի ամենաթեժ տեղը միքրձվելով՝ վիթխարի ուժով հարվածում էին և հեծյալներին ու երիվարներին երկու կես արած գետին տապալում: Նրանց ահից սարսափած (պարսիկները) ցիրուցան դես ու դեն էին փախչում, սակայն Տայոց քաջամարտիկները ամենուրեք, ուր պատահում էին այդ փախստականներին, բոլորին դիաբավալ, ոտնակոխ էին անում. այս ամենը ձևով հար և նման էր ինչպես հրդեհը անտառում բորբոքվելուն, կամ որպես ահեղապալաց արծիվը թռչունների երամը խուճապահար անելուն: Այլի պետք էր այնտեղ լինել տեսնելու համար արյան վտակները առվակներ

ու հորդահոս գետեր դարձած, դիակները թափալված, մեռածներն ու կիսամեռները միմյանց վրա թափված կուտակված: Այնժամ պապանձված և սարսափահար Մամլանն ու մնացած պարսիկները շտապում են փախչել, հեռանալ: Բայց նրանց հետապնդող Հայոց և Վրաց մարտիկները հասնելով սաստիկ կերպով հարվածում էին, սրի և սուսերի բերանն առած կոտորում էին մինչև արևամուտ ու հալածում մինչև Արձեշ (87) քաղաքի դրները, իսկ այնտեղից հետ դառնալով՝ ավարի են առնում նրանց բանակի ամբողջ ունեցվածքը՝ լցված գանձերի բազմաքանակությամբ, երիվարների ու պատվական հանդերձանքների առատությամբ: Եվ առավել ուրախալին այն էր, որ նախկին մենամարտի ժամանակ սպանված վրացի այն հինգ մարտիկներից բացի, այլևս ոչ ոք սրի հարված չստացավ և ոչ էլ սպանված գտնվեց Հայոց ու Վրաց ամբողջ բազմությունից: Ուստի ուրախալից ցնծությամբ յուրաքանչյուրը դարձավ իր երկիրը՝ փառք տալով Աստծուն:

(Ասողիկ, Գ-ԽԱ)

Բայց որովհետև նա հեզ ու հանդարտարար տղամարդ էր (88), առավել քան մեր այս ժամանակներում եղած բոլոր թագավորները, ուստի և նա պատճառ հանդիսացավ խաղաղության և շենության ամենայն արևելյան (աշխարհի), մանավանդ Հայաստանի և Վրաստանի: Եվ քանի որ բոլոր կողմերից դադարեցրեց ահեղ պատերազմները, հաղթող գտնվեց շրջակայքի բոլոր ազգություններին, որով և թագավորներն ինքնակամ ամենքն էլ հնազանդվում էին նրան: Նա, իր օրերը լիուլի ապրելով, խորին ծերության հասակում վախճանվեց փրկչական Մեծ Զատկի օրը (նիսթ) չորս հարյուր քառասունինը թվականին: Բայց քանի որ ինքը չուներ ոչ որդի և ոչ էլ եղբայր, որ ժառանգեր նրա թագավորա-

կան աթոռը, ուստի յուր ամբողջ ազատագունդն ու աշխարհը կտակել էր Հունաց Վասիլ թագավորին:

Սա՝ Վասիլ թագավորը, Կիլիկիայի Տարսոն քաղաքում, երբ լսում է նրա մահվան գույժը ամեն ինչ թողնում և շուտափույթ գալիս է մեր երկիրը... Այստեղ (89) նրան ընդառաջ են ելնում Ափիխագիայի թագավոր Բագարատը և նրա հայր, Վրաստանի թագավոր Գուրգենը. նրանց առանձնահատուկ մեծարանքով է ընդունում նա (իմա՝ Վասիլ թագավորը), կյուրապաղատության պաշտոնը տալիս է Ափիխագաց թագավորին, իսկ նրա հորը մագիստր կարգելով՝ ազատ է արձակում գնալու իրենց երկրները:

Իսկ նրա գնալու հենց նույն օրը մի շատ աննշան պատճառով սաստիկ կոփվ բռնկվեց Հունաց բանակում. բանն այն է, որ Դավիթ կյուրապաղատի իշխաններն ու ազատանին եկել և բանակ էին դրել հունական զորքերի մերձավորությամբ: Ռուզաց (իմա՝ ռուսաց) հետևակագնդից մեկը ելնում և խոտ է վերցնում, որպեսզի տանի իր ձիու համար, բայց վրացիներից մեկը ցանկանում է խլել խոտը, բայց նա աղաղակ է բարձրացնում և յուրայիններից մեկը գալիս է իրեն օգնության. նույնպես և վրացին է ձայն տալիս յուրայիններին, որոնք գալիս և սպանում են առաջին ռուզին: Դրա համար ռուզաց ամբողջ ազգը՝ այնտեղ գտնվող զինվորները, շարժվում են նրանց դեմ կովելու (քանզի այնտեղ կային վեց հազար հետևակային մարտիկներ, նիզակներով ու ասպարներով զինված, որոնց Վասիլ թագավորն էր խնդրել ռուսական թագավորից, երբ որ յուր քրոջը նրան կնության էր տվել, և դա նույն ժամանակ էր, երբ որ նրանք Քրիստոսի հավատն ընդունեցին): Այնժամ Տայոց բոլոր իշխաններն ու ազատանին դուրս են գալիս նրանց դեմ, և նրանցից պարտություն կրելով՝ սպանվում է այնտեղ մեծ իշխանը, որին Պատրիարք էին կոչում, նաև Շոպնտրի երկու որդիներ Գաբրիելն ու Հովհաննեսը, Ապուհարպի թոռ Չոր-

տուանելն ու բազմաթիվ ուրիշները, որովհետև Աստծո ցասումն էր շարժվել նրանց վրա իրենց մեծամտության պատճառով:

(Ասողիկ, Գ-ԽԳ)

Գուրգենի Տայոց երկիր, իսկ Հունաց զորքերի՝

Բասենի զավառ զալու մասին

Բայց Վրաստանի թագավոր Գուրգենը, յուր համար խիստ անպատճառ համարելով մազիստրոսության աստիճանը, որ իրեն էր շնորհել Վասիլ թագավորը, և ի ծնե խելապատակից (զլխուղեղի թաղանթից, իմա՝ խելքից) թեթև լինելով, արհամարհեց նրան և մեծ զորաբանակով եկավ տիրեց Տայոց աշխարհին: Հարձակվեց Ուկրայաց փոքր բերդի վրա, կրիվ տվեց, բայց չկարողացավ հաղթել (աստ՝ ստնանել) և ոչ ել ուրիշ որևէ բերդի, ուստի հավաքեց իր զորքերի բազմությունն ու գնաց բանակ դրեց Մամրուանի ձորաբերանին: Վասիլ թագավորը, երբ լսեց այդ բանը, հրամայեց իր մազիստրներից մեկին, որին Կանիկլ էին կոչում, Հունաց ամբողջ բանակով դուրս գալ նրա դեմ, և ինքը՝ թագավորն էլ, իսկույն ևեթ ճանապարհ ընկավ, եկավ բանակ դրեց Բասենի զավառում Հայոց (նծ) չորս հարյուր հիսուն թվականին, բայց ամբողջ տարին երկու բանակներն էլ մինչև ձմեռ մնացին նույն տեղում կանգնած: Այնուհետև Կանիկլը խաղաղության առաջարկ է անում Գուրգենին և թագավորի անունից խոստանում կատարել նրա ցանկությունը: Այս Գուրգենն ու մազիստրը գալիս հանդիպում են միմյանց Մեծոփաց մայրաբուսակ (իմա՝ այնտեղ մայրի շատ ծառեր են աճում) լեռան մոտ, Սուրբ Աստվածածին գյուղում, որը այդպես է կոչվել այնտեղ եղած եկեղեցու անունով. հանդիպելով իրար հետ՝ խաղաղության դաշն են կնքում, և յուրաքանչյուրը վերադառնում է իր տեղը:

(Ասողիկ, Գ-ԽԴ)

*Թե ինչպես Գագիկը ավերածության ենթարկեց
Տաշիրքն ու Վրացական դաշտը*

Իսկ Գագիկի (90) եղբորորդի Դավիթը (91), որին վերևում հիշատակեցինք, փոքր-ինչ մեծամտանում է և անհնազանդություն ցուցաբերում իր հորեղբայր Գագիկի նկատմամբ: Ուստի և Գագիկը զայրացած մեծ զորքով գնում է Տաշիրք, շուրջանակի պատում Շամշուլտն ու Վրաց դաշտը, քանդում և ավերում ամբողջությամբ, որովհետև երեք ամիս շարունակ այնտեղ մնաց, ամբողջ ձմեռվա ընթացքում (նծ) չորս հարյուր հիսուն թվականին, ապա Գագ բերդն անցնելով՝ դուրս է գալիս Աղստեղի գավառը (92):

(Ասողիկ, Գ-ԽԵ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստեփանոս Տարոնեցին այս հատվածը գրելիս օգտվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկից: Այստեղ խոսքը վերաբերում է Վաղարշակ Արշակունու բարենորոշական գործունեությանը:

2. Ասողիկի հիշատակած այս հատվածում կա աղավաղություն, որը նկատել են և Մ. Էմինը, և Վ. Վարդանյանը (տե՛ս ծանոթ. 47): Բանն այն է, որ նման շարադրանքից ստացվում է, որ Բասենի հովիտը աշխարհի արևմտյան եզրն է, մինչդեռ ըստ պատմական աղբյուրների՝ Բասենը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի արևմտյան գավառն էր, որտեղ հաստատվել էին Որդունիները:

3. Նկատի ունի Տիգրան Մեծի (Ք.ա. 95-55 թթ.) որդի Արտավագդ Բ-ին (Ք.ա. 55-34 թթ.):

4. Աղիովիտն ու Առբերանին Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից են: Աղիովիտ գավառը գտնվում էր

Բգնունյաց (Վանա) ծովի հյուսիսում և սահմանակից էր Այրարատ աշխարհի Կողովիտ գավառին, իսկ Սորերանին՝ Բգնունյաց ծովից արևելք, ուր գտնվում էին Չքատան ու Լիմ կղզիները, Ամնիկ թերակղզին և Առեստ ավանը:

5. Հաշտեանքը Մեծ Հայքի Չորրորդ Հայք նահանգի գավառներից է: Ըստ «Աշխարհացույցի»՝ այստեղ էին բխում Տիգրիս գետի ակունքի աղբյուրները:

6. Ասողիկն այս տեղեկությունը վերցրել է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկից (Բ-ԻՌ):

7. Խոսքը վերաբերում է Արտաշիայան արքայատոհի հիմնադիր Արտաշես Ա-ին (Ք.ա. 189-160 թթ.): Այս տեղեկությունը ևս վերցված է Խորենացու աշխատությունից (Բ-ԽԶ):

8. Խոսքը Հայոց Տրդատ Մեծ (293-330 թթ.) թագավորի մասին է, որը վերադարձնում էր բասիլների դեմ տարած հաղթանակից:

9. Խոսքը հայոց կաթողիկոս Մովսես Բ Եղիվարդեցու մասին է (574-604 թթ.):

10. Խոսքը Աբրահամ Ա Աղբաթանեցի (607-613 թթ.) հայոց հայրապետի մասին է, որի օրոք՝ 608 թ., վրաց Եկեղեցին վերջնականապես անջատվեց Հայոց միաբանությունից:

11. Տեղեկությունը վերաբերում է պարսից արքա Խոսրով Բ Փարվեզի (591-628 թթ.) հրավիրած դավանաբանական ժողովին, որտեղ Խոսրովը ոչ միայն պաշտպանել է Նիկիայի, Կոստանդնուպոլիսի և Եփեսոսի ժողովների որոշումները, այև ընդունել է քաղկեդոնականությունը և նրանց հարողներին հրամայել է տալ նույնիսկ չփաքարն, որը ուսումնասիրողների կողմից թարգմանվում է որպես «պաշար, ճանապարհի ոռձիկ» (տե՛ս ծանոթ. 78):

12. Թեոդորոս Շշտունու իշխանապետության տարիներն են 639-654 թվականները:

13. Աշոտ Բագրատունու իշխանապետության տարիներն են 685-689 թվականները:

14. Խոսքը Հուստինիանոս Բ կայսեր մասին է, որը 695 թ. իր հակառակորդների կողմից ձերբակալվեց և աքսորվեց Քերտոն:

15. Խոսքը Հարուն ալ-Խաչիդի (785-809 թթ.) մասին է:

16. Խոսքը ազգությամբ թուրք Բուղա զորավարի մասին է, որը 852-855 թթ. Հայաստանի ոստիկանն էր:

17. Այս մասին ավելի մանրամասն պատմում է Թովմա Արծրունին (Գ-Թ):

18. Խոսքը պարսից արքա Խոսրով Բ Փարվեզի (590-628 թթ.) մասին է:

19. Այստեղ հեղինակը նկատի ունի Պարսից զորավար Վահրամին, որն ապստամբել էր Խոսրովի դեմ, գրավել արքունի տունն ու գանձերը և փախստական դարձրել Խոսրովին:

20. Մորիկը նույն Մավրիկիոս կայսրն է, որն իշխել է 582-602 թվականներին:

21. Ասորիքը պարսից իշխանությանը ենթակա երկիր էր, որը տարածվում էր Միջագետքից արևմտուք և նրանից բաժանվում էր Եփրատ գետով:

22. Արվաստանը գտնվում էր Հայոց Միջագետքի հարավարևելյան մասում՝ Ծավդեքից հարավ: Նրա կենտրոնն էր Մծբին քաղաքը:

23. Այս ժամանակ Այրարատը Մարզպանական Հայաստանի ներքին չորս վարչական բաժանումներից մեկն էր և ընդգրկում էր «Աշխարհացույցի» Այրարատ նահանգի արևելյան զավառները:

24. Պարսկա-բյուզանդական այս դաշինքի մասին առավել մանրամասն խոսում է Սեբեոսը (ԺՄ; ԺԲ), որից էլ օգտվել է Ասոնիկը:

25. Մոավիան խալիֆա էր 661-680 թվականներին:

26. Խոսքը Գրիգոր Մամիկոնյանի մասին է, որը հայոց իշխան էր 661-685 թվականներին:

27. Խոսքը 703 թ. արաբների՝ Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում մեծ թվով հայ նախարարներին այրելու մասին է:

28. Սուսե խալիֆան իշխել է 785-786 թվականներին:

29. Ահարոն կամ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան իշխել է 786-809 թվականներին:

30. Խոսքը Հուստինիանոս Բ կայեր մասին է:

31. Խոսքը Բագրատունյաց արքայատոհմի հիմնադիր Աշոտ Ա Բագրատունու (885-890 թթ.) մասին է, որը 885 թ. ստացավ «քաղաքոր Հայոց և Վրաց» տիտղոսը:

32. Խոսքը Աշոտ Ա Բագրատունու որդի Սմբատ Ա Բագրատունու (890-914 թթ.) մասին է:

33. Ափշինը Ատրպատականի ամիրա դարձավ 889 կամ 890 թվականին:

34. Խոսքը հայոց արքա Սմբատ Ա Բագրատունու (890-914 թթ.) մասին է:

35. Պարտավը, ըստ «Աշխարհացույցի», գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգի Ուտի Առանձնակ գավառում: Պատմական այս ժամանակահատվածում Պարտավը գտնվում էր Աղվանքում:

36. Տաշիրքը Մեծ Հայքի Գուգարք նահանգի հարավային գավառն էր: Պատմական այս ժամանակաշրջանում գտնվում էր Բագրատունիների իշխանության ներքո:

37. Շիրակը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից էր, գտնվում էր Կամսարական նախարարական տոհմի իրավասության ներքո: Կամսարականների՝ պատմական թատերաբեմը թողնելուց հետո Շիրակը դարձավ Բագրատունիների սեփականությունը:

38. Եզերը, ըստ «Աշխարհացույցի», նույն Կողքիսն է, որը գտնվում էր Պոնտոսի ծովի հարավարևելյան ափին և հարավից սահմանակից էր Մեծ Հայքին, իսկ արևելքից՝ Վիրքին:

39. Ըստ Վ. Առաքելյանի՝ այս Կոստանդին թագավորը (894-929 թթ.) և կարծեցյալ Շապուհ Բագրատունու հիշատակած Դատոսը նույն անձնավորությունն են (տե՛ս Անանուն Զրուցագիր (կարծեցյալ Շապուհ Բագրատունի), Պատմություն, Եր., 2011, ծանոթ. 233):

40. Վասպուրականը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն է: Պատմական այս ժամանակաշրջանում Արծրունիները, տիրելով ամրող Վասպուրականին, մեծացրին նաև նրա սահմանները:

41. Վասպուրականի Գագիկ իշխանը նույն Գագիկ Ա Արծրունին է, որին Յուսուֆը 908 թ. թագ շնորհեց և ճանաչեց «Ամենայն հայոց թագավոր»:

42. Օծուն գյուղը պահպանվել է առ այսօր և Լոռու մարզի ամենախոշոր գյուղն է: Գտնվում է Ալավերդի քաղաքի մոտ, բարձր լեռան վրա:

43. Կուա և Կուել տեղանուններն առաջին անգամ հիշատակում է Ասողիկը: Որոշակի տեղադրությունն անհայտ է, սակայն, ինչպես նշում է Վ Վարդանյանը (տե՛ս ծանոթ. 75), այս ամրությունները կարող են գտնվել Վիրահայոց կամ Վրաստանի արևմտյան տարածքում:

44. Խոսքը Հայոց արքա Սմբատ Ա Բագրատունու (890-914 թթ.) մասին է:

45. Խոսքը հայոց արքա Աշոտ Բ Երկարի (914-929 թթ.) մասին է:

46. Խոսքը հայոց արքա Աբաս Բագրատունու (929-953 թթ.) մասին է:

47. Հեղինակը նկատի ունի Բյուզանդիայի Լեռն Զ Իմաստասեր կայսերը (866-912 թթ.):

48. Խոսքը հայոց արքա Աբաս Բագրատունու (929-953 թթ.) մասին է:

49. Սարմատները Դանուիից մինչև Տոբոլ գետն ընկած տափաստաններում ապրող ցեղախմբեր էին, որոնք հյուսիսային Կովկասից բազմից հարավ էին շարժվում Դերբենդի կիրճով ասպատակությունների նպատակով:

50. Կարինը Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Կարին գավառի կենտրոնն էր, ներկայիս Էրզրում քաղաքը Թուրքիայում:

51. Արշարունյաց գավառը կամ Արշարունիքը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից էր: Տարածվում էր Արաքսի երկու ափերին գետի միջին հոսանքում. այստեղից էլ՝ նրա Երասխաձոր անվանումը: Երասխաձորը Արշակունիների արքունական կալվածքն էր, սակայն Կամսարականների՝ Հայաստան զալուց հետո գավառը տրվեց Արշավիր Կամսարականին, որից հետո գավառը կոչվեց Արշարունիք: Կամսարականների՝ պատմական թատերաբեմը թողնելուց հետո գավառն անցավ Բագրատունիների ենթակայության ներքո:

52. Կյուու-Ժանը Բյուզանդիայի հայազգի կայսր Հովհան Ա Զմշկիկն էր, որը, սպանելով Նիկիփոր կայսերը, հաջորդել է նրան և թագավորել վեց տարի: Ծնվել է Ծոփաց նահանգի Խողաթ գավառի Հերապոլիս բնակավայրում, որը հետագայում կոչվեց Զմշկածագ:

53. Հեղինակը նկատի ունի արաբներին, որոնք հայ պատմիչների երկերում հիշատակվում են նաև սառակինոսներ, հազարացիներ, իսմայելացիներ:

54. Խոսքը Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (973-992 թթ.) մասին է:

55. Բասենը Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան գավառն էր, գտնվում էր Մուրց և Արաք գետերի ջրկիցում տարածվող Բասենի դաշտում:

56. Խոսքը հայոց արքա Սմբատ Բ Բագրատունու (977-990 թթ.) մասին է:

57. Կարսում այս ժամանակ գոյություն ուներ Կարսի (Վանանդի) թագավորությունը (963-1065 թթ.): Այնտեղ իշխում էր Բագրատունիների մի ճյուղը:

58. Խոսքը Կարսի (Վանանդի) թագավոր Մուշեղ Բագրատունու մասին է:

59. Գողթնը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի զավառներից էր, գտնվում էր Արաքսի ձախ ափին՝ Նախճավան գավառի հարևանությամբ: Պատմական այս ժամանակահատվածում Գողթնը գտնվում էր արաք ամիրաների տիրապետության ներքո:

60. Խոսքը Բյուզանդիայի կայսր Վասիլ (Բարսեղ) Բ Բուլղարասպանի մասին է, որը թագավորել է 976-1025 թվականներին:

61. Խաղողիառից բնակավայր էր Արտաշատ-Սատաղ ձանապարհի վրա: Գտնվում էր Կարին քաղաքից արևմուտք:

62. Մարդարին Մեծ Հայքի Տուրուբերան (Տարոն) նահանգի հյուսիսարևմտյան գավառն է, սահմանակից էր Կարին գավառին:

63. Հարքն ու Ապահովիքը նույնպես Տուրուբերան նահանգի գավառներից են: Պատմական այս ժամանակահատվածում Տարոնը հիշատակված գավառներով հանդերձ գտնվում էր Բյուզանդիայի ենթակայության ներքո: Տարոնը Բյուզանդիային միացվեց 966 թվականին:

64. Օգտվելով Վասիլ Բ-ի (976-1025 թթ.) անշափահասությունից՝ Բյուզանդիայում 976 թ. բռնկվեց նահանգային ավագանու ապստամբություն, որը ձնշվեց 979 թ., սակայն 987 թ. նույն խավի ապստամբությունը կրկնվեց, ինչի մասին էլ խոսվում է այս գլխում:

65. Սա նախորդ գլխի անմիջական շարունակությունն է:

66. Խոսքը 987 թ. Բյուզանդիայում բռնկված ապստամբության և Վասիլ Բ կայսեր կողմից դրա ճնշման մասին է, որը նկարագրված է նախորդ գլուխներում:

67. Խոսքը հայոց արքա Սմբատ Բ Բագրատունու (977-990 թթ.) մասին է:

68. Զավախը Մեծ Հայքի Գուգարք նահանգի զավառներից էր: Պատմական այս ժամանակաշրջանում գտնվում էր Վրաց Բագրատունիների իշխանության ներքո:

69. Սա հայոց արքա Սմբատ Բ Բագրատունին է (977-990 թթ.):

70. Սա Սմբատ Բ-ի եղբայր, հայոց արքա Գագիկ Ա Բագրատունին է (990-1020 թթ.):

71. Այս Դավիթը Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Անհողինն է (մոտ. 996-1048/1049 թթ.):

72. Տաշիրը, Վրաց դաշտը, Շամշուլտին, Դմանյաց քաղաքը (Դմանիսը) գտնվում էին Տաշիր-Չորագետի թագավորությունում, որն արևմուտքից սահմանակից էր Շիրակին, հարավից՝ Նիգ զավառին և Ծաղկունյաց լեռներին: Արևելյան սահմաններն էին Կայան զավառը և Կանգարքը՝ Գագ ամրոցով:

73. Մամփուղ կամ Մամփայլ բառը, ըստ Բրոսսեի, վրացական Մէմֆէ (արքա) բառի նվազականն է (տե՛ս՝ ծանոթ. 139):

74. Չորտուանելը ազգությամբ վրացի Թոռնիկ արեղայի եղբորորդին էր:

75. Խոսքը Ասորիք ներխուժած Եզիպտոսի արաբների մասին է:

76. Բատը Ապահունիքի և Նիբրկերտի ամիրան էր:

77. Տայքի Դավիթ կյուրապաղատը իշխել է 960-1000 թվականներին:

78. Ծաղկուտնը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից է: Գտնվում էր Կողովիտ և Բագրևանդ գավառների միջև, միաժամանակ սահմանակից էր Տուրուբերան և Վասպուրական նահանգներին:

79. Խոսքը հայոց արքա Գագիկ Ա Բագրատունու (990-1020) մասին է:

80. Արար Կարսի (Վանանդի) թագավորն էր (984-1029 թթ.):

81. Խոսքը վրաց Բագրատ Գ (975-1014) թագավորի մասին է:

82. Բագրևանդը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից էր: Տարածվում էր Արածանի գետի վերին հոսանքում: Հարավ-արևմուտքից սահմանակից էր Տուրուբերան նահանգին:

83. Վաղարշակերտը գտնվում էր Այրարատ նահանգի Բագրևանդ գավառում: Ներկայիս Ալաշկերտ քաղաքն է Թուրքիայում:

84. Խլաթի վրա հարձակումը տեղի է ունեցել 997 թ. ձմռանը:

85. Խլաթը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառում գտնվող քաղաք էր: Ներկայիս Ախլաթ բնակավայրն է Թուրքիայում (Վանա լճից հյուսիս):

86. Հերքը Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի գավառներից էր: Գտնվում էր Կապուտան ծովից (Ուրմիո լիճ) հյուսիս: Հերով էր անցնում Պարսկաստանը Մեծ Հայքին կապող գլխավոր ճանապարհը:

87. Արձեշը գտնվում էր Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառում՝ Վանա լճի հյուսիսային ափին: Այն Գնունիների նախարարական կալվածքն էր, իսկ 1000 թվականից պատկանում էր Արծրունիներին: Վանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով պատմական Արձեշ քաղաքը մնացել է ջրի տակ:

88. Խոսքը Տայքի թագավոր Դավիթ կյուրապաղատի (960-1000 թթ.) մասին է:

89. Այսինքն՝ Տայքում:

90. Խոսքը հայոց Գագիկ Ա Բագրատունու (990-1020 թթ.) թագավոր մասին է:

91. Խոսքը Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Անհողինի (մոտ. 996-1048/1049 թթ.) մասին է:

92. Աղստևի գավառն առաջին անգամ հիշատակվում է այս-
տեղ՝ թերևս նկատի ունենալով այն տարածքը, որտեղով հոսում է
Աղստև գետը: Հավանաբար հեղինակը նկատի ունի Մեծ Հայքի
Գուգարք նահանգի Չորոփոր գավառը, որը տարածվում էր գետի
ձախ ափին:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ³

Այդտեղ գալիս (1) Հոռոմոց թագավորին են հանդիպում Ափխազաց թագավոր Բագարատը և նրա հայր Գուրգենը (2): Ինքնակալը մեծապես պատվում է նրանց. Բագարատին տալիս է կյուրապաղատության պատիվ, իսկ նրա հորը՝ մազիստրոսության և խաղաղությամբ ձանապարհ դնում... (3):

Մեր չորս հարյուր վաթունչորս թվականին Ափխազաց Բագարատ թագավորը մեռավ և թագավորեց նրա որդի Գեորգը: Վասիլ ինքնակալ թագավորը նրան գրեց այսպիսի հրովարտակ. «Ինչ որ Կյուրապաղատի բաժնից պարզն տվի քո հորը, թո՛ ն և իշխի՛ր միայն քո հայրենիքի վրա»: Իսկ նա հանձն չառավ, այլ իր մանկական հասակով հպարտացած՝ հակառակ պատասխան տվեց, թե «ինչ որ իմ հայրը իշխանությամբ ունեցել է, նրանից մի տուն անգամ չեմ տա մեկին»: Այս լսելով՝ ինքնակալը զորք ուղարկեց երկիրը բռնությամբ տիրելու համար: Ուխտյաց մեծ ավանի մոտ նրանց դեմ դուրս եկան Տայքի քաջերը և հոռոմոց գորքը փախուստի մատնեցին, բայց քաղաքին և մյուս շինանիստ տեղերին ոչ մի վնաս չհասցրին: Այս եղավ Տայոց աշխարհի կործանման սկիզբը:

(Լաստիվ., Գլ. Ա)⁴

Իսկ Գագիկ (4) թագավորը, երկար ժամանակ վարելով թագավորությունը և բարի հիշատակի արժանանալով, խոր ծերության հասած՝ վախճանվեց: Իշխանությունը ժառանգեցին նրա

³ Արիստակես Լաստիվերցու տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս և Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Եր., 1971:

⁴ Արիստակես Լաստիվերցու տեղեկությունների գրաքար բնօրինակը տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. ԺԶ, Եր., 2012, էջ 493-655:

որդիները՝ Սմբատը (5), որին Հովհաննես էին կոչում և նրա հարազատ եղբայր Աշոտը (6): Սմբատը հաղթանամ էր ու շատ գեր, բայց իմաստությամբ, ասում են, շատերից բարձր էր, իսկ Աշոտը վայելչակազմ էր, քաջասիրտ ու պատերազմասեր: Մրանք, երկիրը բաժանելու համար իրար դեմ թշնամանալով, ընդհարվեցին ու կարիք ունեցան արդար միջնորդի: Ափխազաց Գեորգ թագավորը գալով՝ համոզելով հաշտեցրեց նրանց և երկանուն Սմբատին անդրանիկության պատճառով, բաժին տվեց Անի ամրոցն իր շրջակա գավառներով, իսկ Աշոտին երկրի ներքին մասը, որը սահմանակից է Պարսկաստանին ու Վրաստանին: Սմբատը համաձայնելով՝ վերադարձավ իր քաղաքը, բայց ճանապարհին մարմնի ծանրության պատճառով իջևանելով՝ անհոգաբար քնեց: Աշոտի կողմի իշխաններից մեկը, Գեորգի առաջ կանգնելով, բողոքում և ասում է. «Շատիկը (7) իմ սեփական հողն է, որը Սմբատը անիրավաբար խլեց ինձանից»: Գեորգը, այդ լսելով, սաստիկ ցասմամբ բարկացած, զորք ուղարկեց Սմբատի ետևից, որոնք գալով՝ հանկարծ հարձակվեցին նրա վրա: Սմբատը մարմնի ծանրության պատճառով չկարողացավ երիվար նստել: Իսկ նրա հետ եղած իշխաններն արագորեն փախուստի դիմեցին: Հետապնդողները նրանց շատ դիմույտեր փոեցին ճանապարհին մինչև Անիի դուռը, իսկ այնտեղից դառնալով՝ կաթողիկոսարանի եկեղեցիները զարդերից կողոպտեցին և խաչի բևեռները հանելով՝ նախատինքով ասում էին. «Տանում ենք ձիերին, պայտեր շինենք»: Բայց արդարադատ Աստված պատեհ ժամին հոռոմների ձեռքով հատուցեց նրանց, որը իր տեղում կպատմենք: Իսկ Սմբատին բռնելով՝ տարան Գեորգի մոտ, որը հրամայեց նրան պահել հսկողության տակ, բայց հետո երեք բերդ առնելով՝ արձակեց:

(Լաստիվ, Գլ., Բ)

Չորս հարյուր յոթանասուն թվականին ինքնակալ թագավորը (8) դարձյալ շարժվում է մեծ զորքով, զալիս է դեպի արևելք և իջևանում է Կարնո ընդարձակ դաշտում: Դեսպաններ է ուղարկում Վրաստանի թագավոր Գեորգի մոտ, որ հնագանդվի իրեն: Ազգությամբ վրացի մի եպիսկոպոս, որ նստում էր Վաղարշակերտ քաղաքում (9), թագավորին դիմավորելով հավատագրեց, թե «Երբ Եկեղյաց (10) կամ Կարին հասնես, նա քեզ ընդառաջ կզա»: Եվ նա հավատալով այս խոսքերին ու հույս դնելով սրա վրա, օթևանից օթևաններ փոխադրվելով՝ սպասում էր Գեորգի գալուն: Բայց նա հանձն չառավ գալ թագավորի մոտ, որովհետև յուրայիններից շատերը ահարեկում էին նրան, թե քեզ տեսնելուն պես կա՝ մ կսպանի, կա՝ մ կրանտարկի ու քո պատվին չես հասնի: Իսկ թագավորը զնալով Բասեն (11)` երկու- երեք պատգամավոր ուղարկեց, որովհետև շատ էր ցանկանում իր ճանապարհորդությունը խաղաղությամբ ավարտել ու աշխարհը շեն թողնել: Ապա, երբ պատգամավորությունն ապարդյուն անցավ, թագավորը բարկանալով՝ հրաման տվեց հրով, սրով ու գերությամբ ավերել Օկոմի կոչված մեծ ավանն ու նրան շրջապատող այդ մասի գյուղերն ու ազարակները, հրամայեց այստեղից վերցրած գերիններին տանել Խաղույաց գավառը (12), իսկ ինքը, Բասենից անցնելով, զնաց, հասավ Վանանդ գավառը (13), Կարմիր Փորակ: Իսկ Գեորգը հարմար ժամանակ գտնելով, հասավ Ուխտյաց քաղաքը (14) և զորքին հրամայեց հրկիզել նրա գեղեցիկ դաստակերտները, կողոպտել ունեցվածքը, բայց մարդկանց ամեննին չվնասել: Երբ թագավորն այս լսեց, ավելի ու ավելի բարկանալով՝ զնաց նրա վրա: Զորքերը հանդիպելով Պաղակացիս (15) կոչված ծովակի մոտ՝ սարսափելի դղրդյունով իրար բախվեցին: Սուսերների շողալու և սաղավարտների փայլելու ժամանակ հրաշող փայլակները լեռների վրա էին տարածվում և սրերի հարվածներից դուրս

ցայտած կրակի կայծերը գետին էին ընկնում: Նայելով սրան՝ նույնիսկ ինքը՝ թագավորը, զարմանում էր կովողների քաջության վրա, որովհետև գետերի՝ ժայռերին խփվող հորձանքների նման Հոռոմոց գորքերը նրանց բախվելով՝ ետ էին ընկրկում: Այդտեղ մեռավ մեծ իշխան Ըռատը, որի ձին ճահճի պատահելով՝ չկարողացավ անցնել, և վրա հասնելով՝ սրահար սպանեցին գովելի մարդուն, որը մեծ սուզ պատճառեց Տայոց աշխարհին:

Գեռզն իր գորքով գնաց ամրացավ Ափխազաց բերդում, իսկ թագավորը գորքեր ուղարկեց երկրի տարբեր կողմերը, ասպատակներ տարածեց՝ խստագրված հրամանով պատվիրելով շխնայել ո՛չ ծերին, ո՛չ երիտասարդին, ո՛չ մանկան, ո՛չ չափահասին, ո՛չ տղամարդուն, ո՛չ կնոջը և ո՛չ մի հասակի, և այս ձևով քանդեց, ավերեց տասներկու գավառ: Ինչպիսի՞ ողբալի և անսպաս արտասուրների արժանի տեսարան էր երևում այստեղ, քանզի արքայաշեն բարձրաբերձ պալատներն ու ապարանքները, որոնք մեծամեծ ծախսերով ու ճարտարապետների հնարազիտությամբ կառուցվել էին որպես սքանչելիք՝ տեսնողների և ուրախություն ու վայելք՝ բնակվողների, իրաճարակ փլվեցին ու կործանվեցին, իսկ նրանց տերերը հենց նրանց կողքին սրակուոր եղան...

Արդ ե՛կ ու թվի՛ ինձ այն ժամանակ կատարվածների օրինակները, պատվական ու հարգարժան ծերերի արյունաթաթախ ալիքները, սրակուոր երիտասարդներին, անթիվ ու անհամար կույրերին, որոնց աչքերը հանեցին: Կարծում եմ այս բոլորը տեղին պատահեցին նրանց, որովհետև աստվածադրոշ նշանի բնեղները հանելով՝ կաթողիկեի դրանք անարգանքով ասում էին «Ճիերին պայտեր կշինենք»: Այս և սրանից ել ավելի սարսափելի աղեւներն արդարությամբ պատահեցին նրանց: Ազնվական կանայք, իրապարակներ դուրս եկած, քողը գլխներից վերառած,

արևի դեմ անպատկառ կերպով խայտառակվում էին. նրանք, որ ուսքով հազիվ էին գնում հիվանդներին տեսության կամ ուխտատեղի, այժմ բաց գլխով ու բոկոտն, զարդերից մերկացած, պատվից ընկած, բյուր անարզանքների ենթարկված, գերողների առջևից էին գնում: Իսկ կաթնասուն երեխաների մի մասին մայրերի գրկերից առնելով՝ քարերին էին խփում, ուրիշներին գրկերի մեջ աշտեներով խցոտելով՝ արյունը մայրերի կաթին էին խառնում, իսկ մյուսներին ճանապարհների խաշմերուկներում ձգելով՝ ձիերի սմբակների տակ բոլորին էլ սպանում էին...

(Լաստիվ., Գլ., Բ)

*Թե ինչպես թագավորը (16) երկրորդ անգամ արշավեց Swinging
աշխարհի վրա, որի ժամանակ պարտվեցին վրաց զորքերը:*

...Բայց չգիտեմ, թե աստվածային օրենք է այդ, որ ծառաները տերերի վրա չպետք է հարձակվեն, թե թագավորն այն ժամանակ առանձին քարեշնորհություն ուներ, միայն այս հավաստի գիտեմ և իմ աշխով էլ տեսա, որ նրանք, ովքեր գնացին նրա վրա, ծիծանելի մահով մեռան, ինչպես եղավ առաջին անգամ, իր թագավորության սկզբում, երբ նրա դեմ ապստամբեց Վարդը (17), որ կոչվում է Սիկլառոս նիհամարյա բոլոր Հոռոմներին տարավ իր հետ, այնպես որ թագավորը օգնության համար զորք իննդրեց վրաց Կյուրապաղատից և նրանցով հաղթելով բռնակալին՝ փախցրեց երկրից, իսկ սա գնաց ընկավ Բաբելոն՝ քաղղեացիների քաղաքը (18):

(Լաստիվ., Գլ. Գ)

Մրանից հետո թագավորը (19) իջավ Բասենի ընդարձակ դաշտը և հեթանոս զորքից հեծյալներ ուղարկեց ապստամբ Փեր-

սին (20) կալանավորելու համար, իսկ ինքը շարժվելով՝ հասավ Բասենի սահմանագլուխը, այն տեղը, որ Սալքորա է կոչվում, և բանակի շուրջը խոր փոսով պատնեշելով՝ դադար առավ մեկ ամբողջ ամիս կամ ավելի:

Իսկ թագավորից ուղարկվածները բռնելով Փերսին և նրա փեսա Անդրոնիկին, որ նրա համախոհն էր, բերին մինչև Կարնո սահմանագլխում գտնվող Խաղսո Առհա կոչված բերդը և հասնելով ամրոցի դիմաց գտնվող ազարակը՝ իշխանեցին:

Փերսին ու Անդրոնիկոսին առաջ բերելով՝ գլուխները կտրեցին: Այդպես էր պատվիրել նրանց թագավորը, քանի որ նրանք իրենց ապստամբելու ժամանակ դաշնակից եղան ափիսագներին և խոստացան մինչ այդ տեղը տալ նրանց բաժին, որովհետև առաջ այդ մասին տիրում էր Դավիթ Կյուրապաղատը, բայց ոչ որպես իր հայրենի ժառանգություն, այլ իբրև թագավորից ստացած պարզեց՝ իր հավատարիմ ժառայության համար: Բայց որ նա խոստացել էր իր մահվանից հետո այդ գավառը հանձնել թագավորին, նրանք այդ չեն մտարերում, այլ առատաձեռն պարզեներ էին բաշխում, որ իրենցը չէր: Այդ պատճառով էլ թագավորը հրամայեց այնտեղ գլխատել նրանց:

(Լաստիվ., Գլ., Գ)

Թագավորը (21) այն օրերին, որ Սալքորայում մնաց, որովհետև Գեորգից պահանջում էր այն երեք բերդերը իրենց դաստակերտներով, որոնք Գուրգենն էր անիրավաբար խլել Կյուրապաղատի բաժնից, դեսպաններ ուղարկեց նրա մոտ և քաղցր խոսքերով գրեց նրան, թե «ինչ որ քո հայրենի ժառանգությունը չէ, թո՞ղ և ապրիք խաղաղությամբ քո բաժնում և իմ՝ Պարսկաստան գնալու ճանապարհին արգելք մի՛ եղիր»: Բայց նա հանձն չառավ, հետո ուղարկեց Վաղարշակերտի եպիսկոպոս Զաքարիային,

որին փոքր-ինչ առաջ հիշեցինք. սա գնում, համոզիչ խոսքերով խարում է Գեղրդին, որը և հանձն է առնում ու գրում թագավորին, թե տալիս է այն, ինչ որ նա պահանջում է, եպիսկոպոսը գրությունն առնելով՝ ուրախությամբ վերադառնում է:

Բայց մի օրվա ձանապարհ գալուց հետո այն իշխանում, ուր օթևանելու էր, սուրբանդակները փութանակի հասան նրա ետևից՝ գրությունը պահանջելու, քանի որ անմիտը գղջացել էր, և վերցնելով կրկին ետ դարձան: Իսկ եպիսկոպոսը գնալով ներկայացավ թագավորին ու պատմեց կատարվածը, ապա թագավորը հարցրեց նրանց գորքերի ու պատերազմական պատրաստության մասին: Զաքարիան պատասխանելով ասում է, թե «ամենքից շատ զորք ունի, զորությամբ հզոր է ու պատրաստ պատերազմելու»: Այս լսելով թագավորը բարկացած ասում է. «Դու ել ապստամբների կողմից ես եկել, որ ահարեկես ինձ»: Եվ հրամայում է տանել նրան Կոստանդնուպոլիս, ասելով. «Գնա հանգստացի՛ այնտեղ, մինչև որ ես փախստական գամ քեզ մոտ»: Իսկ տանողներին հրամայում է կտրել նրա լեզուն: Նա գնալով՝ այլս չվերադարձավ իր տեղը, այլ մնաց այնտեղ մինչև իր մահվան օրը:

Մրանից հետո թագավորը թողնելով Սալբորա իշխանի բանակատեղը, զորքով առաջ գնաց դեպի Շղփա կոչված վայրը: Ափխազն (22) այս իմանալով, քանի դեռ նրանք բանակ չէին դրել ու պատնեշով ամրացել, դիմում է այսպիսի խորամանկության. իր գլխավոր եպիսկոպոսներից մեկին դեսպան է ուղարկում, իսկ ինքը զորքով գնում է դեսպանի ետևից, որպեսզի, իբր թե, անսպասելի վրա հասնելով՝ ահարեկելով նրանց փախուստի մատնի: Եվ այսպես, նրանք աշխույժ ձիերով անկանոն առաջ էին գնում ոչ թե պատերազմական կարգով, այլ իբր թե ավարառության: Բայց ինչպես հնում, Հովքամի օրերում, Սովորացիները Խրայելի վրա

հարձակվելով՝ իրենք դաժանորեն սրակոտոր եղան, նույնպես էլ սրանց հետ պատահեց: Զիերին նստած՝ նրանք հանդգնաբար վրա հասան, բայց որովհետև երկաթակուռ ծանր զենքերի և արագ անցած երկար ճանապարհի պատճառով ուժից ընկել էին, ուստի Հռոմոց գորքերը, իսկույն առանց դժվարության նրանց շրջապատելով, կոտորեցին անքիվ բազմություն: Իսկ մնացածներն իրենց թագավորի հետ փախչելով՝ ընկան Ափիսազաց բերդը. Հռոմոց գորքերը նրանց հետապնդելով՝ կոտորեցին մինչև արևամուտ: Ապա թագավորը հրամայեց սպանվածների գլուխները հավաքել մի տեղ և ամեն մի գլխի համար բերողներին խոստացավ տալ մեկական դահեկան. նրանք ամենուրեք որոնելով՝ սպանվածների գլուխները բերեցին թագավորի առաջ և հավաքեցին մի տեղ. սա հրամայեց ճանապարհի վրա կույտ-կույտ դնել՝ որպես սարսափ և երկյուղ տեսնողների:

Սրանից հետո, եթիվ Գեորգը տեսավ, որ կտրվել են բոլոր հովաները, թագավորին աղաչեց գալ հաշտության: Սա այդ լսելով՝ խղճաց նրան և գրեց այսպիսի հրովարտակ. «Մի՛ կարծիր, – ասում է, – թե քեզ հաղթելով՝ ավելի մի քան կպահանջեմ քեզանից, քան առաջ, տո՞ւր իմ հայրենի երկիրը, որը Կյուրապաղատն էր ինձ տվել և տո՞ւր որդուդ պատանդ, և իմ ու քո միջև խաղաղություն կլինի»: Գեորգը, սրան համաձայնելով, հանձն է առնում: Թագավորը զավառի վրա վերակացուներ նշանակեց, որոնք զավառը բաժանեցին տուն առ տուն, գյուղ առ գյուղ, ազարակ առ ազարակ, ինչպես նախկինում էր եղել: Վասիլ թագավորը, պատանդները վերցնելով, խոստացավ երեք տարուց հետո վերադարձնել...

...Իսկ թագավորը, ավարառուների կողմից նախատվելով, հայտնապես հասկացավ, որ տիրոջ ձեռքն էր վրացիներին մատնել իր ձեռքը... Ապա թագավորը, իր զորքերով շարժվելով, շատ

օթևաններով անցնելով, գնաց հասավ իր քաղաքը՝ Կոստանդնուպոլիս: Երեք տարի մնալուց հետո քազմաթիվ պարզններով նա արձակեց Ափխազի որդուն, իսկ ինքը մահվան ցավով հիվանդացավ:

(Լաստիվ., Գլ., Դ)

...Կոմիանոս անունով մեկը, որ քաջ և պատերազմասեր մարդ էր, որին Վասիլը տեր էր նշանակել Վասպուրական (23) գավառին, մեծամեծ քաջագործություններ ցույց տվեց Պարսկական արքունիքում և անվանի դարձավ ամբողջ Արևելքում. սա թագավորի մեռնելու ժամանակ վատ մտադրությամբ դաշնակցեց Գեորգի հետ՝ Արևելքում թագավորելու համար: Կապադովկիացի գորքերն այդ մտադրությունն իմանալով՝ միաբանված հանկարծակի հարձակվեցին, վրանի լարերը կտրելով՝ վրան զցեցին և նրան ու նրա խորհրդակիցներին բռնելով՝ մի բերդում բանտարկեցին ու հայտնեցին թագավորին (24):

...Երկրորդ տարվա սկզբում թագավորը երկրի արևելյան կողմի վերակացու ուղարկեց Նիկիտ անունով մի ներքինու, որը գալով՝ անցավ Վրաց գավառը և երկրի ազնվականներից շատերին խարեւությամբ հայրենիքից հանելով՝ ուղարկեց թագավորի մոտ: Սա նրանց տեսնելով՝ ուրախացավ, մեծամեծ պարզներով ու իշխանությամբ պատվեց նրանց և ամեն մեկին ըստ իր արժանիքի տվեց գյուղեր ու ավաններ, որպես հավիտենական ժառանգություն, գրությամբ և կնիքով հաստատելով այդ:

Իսկ երրորդ տարվա սկզբում քազմաթիվ զորքով դեպի արևելք շարժվեց Սիմովն ներքինին, որն ուներ կես թագավորական իշխանություն, և որին հունարեն լեզվով պառեկիմանու են անվանում. սուրալով անցավ Վրաց աշխարհը, բայց չհասցրեց որևէ գործ կատարել, որովհետև իսկույն եկավ թագավորի մահ-

վան բոթը, երբ նա այդ լսեց, առանց հապաղելու զորքով վերադարձ ու գնաց Կոստանդնուպոլիս:

(Լաստիվ., Գլ., Ե)

Այժմ թագավորը պատվից ընկած՝ (25) իբրև գերի կալանավոր նստած է հեռավոր աշխարհում, այդպես էլ հայրապետական աթոռը զրկված աթոռակալից (26), այրի մնացած նորահարսի պես դեմքով տիտուր է երևում: Հեծելազորը շրջում է անտեր, որը Պարսկաստանում, որը Հունաստանում, որը Վրաստանում...

...իսկ քաղաքացի գլխավորները, որ Անիում էին նստում, տեսնելով, որ Գագիկն արգելափակվեց Հունաստանում, երբեմն մտածեցին քաղաքը հանձնել Դավթին, երբեմն՝ Դվնեցուն, որովհետև սրա քույրը Դավթի կինն էր, իսկ երբեմն էլ՝ Ավխազաց Բագրատ թագավորին (27):

(Լաստիվ., Գլ. Ժ)

Այդ պատճառով (28) էլ շփոթության մեջ ընկած՝ մեկմեկի խոսքին չին համաձայնում, որովհետև Աստված իրեն չխնդրելու պատճառով վերացրեց իմաստությունը նրանց մտքերից, և այս պարզ երևում է նրանից, որ Լիպարիտին (29) խնդրեցին գալ օգնության...:

Շատ աղաչանքներից հետո, առատ պարզեներ ստանալով, Լիպարիտը եկավ, բայց նրանով էլ ոչինչ գլուխ չեկավ, որովհետև հենց իրենք միմյանց հետ միաբան չին: Ուստի պատերազմն սկսելիս Բուլղարի որդին յուրայիններով փախուստի դիմեց՝ որոնք, բարձրածայն աղաղակելով, միմյանց քաջալերելով, Լիպարիտին իր քաջ մարդկանցով շրջապատելով՝ ոմանց սպանեցին, իսկ իրեն, երիվարի ջերը սուսերով կտրելով, գերի վերցրին: Մյուս զորքերը, այս տեսնելով փախան...

Հաղթական պատերազմից հետո նրանք (30), առնելով կողոպուտն ու գերիներին, մեկնեցին իրենց աշխարհը և անչափ ավարով լիացրին ամբողջ երկիրը, իսկ Վրաց իշխանին տարան տվին խալիֆային, իբրև մի մեծ զանձ, որ բոլոր գերիներից հաճելի էր նրա համար. սա շնորհակալությամբ ընդունելով նրան՝ մեծ պարզեցներով ճանապարհ դրեց խաղաղությամբ դեպի իր աշխարհը:

(Լաստիվ., Գլ. ԺԳ)

Այս պատմության հաջորդ տարվա (մեր հինգ հարյուր երեք թվականին) նույն ամսվա նույն օրն էր (31), երբ մեր չքնաղ աշխարհը գերի տարան. Արձն և մյուս քաղաքներն ու ավանները այրեցին. մեզ վրա շարժվեց մահաշունչ ու արյունաբբու զազանը՝ մարդախոշոշ Սուլթանը (32), անհամար զորքերով ու փղերով, կառքերով ու երիվարներով, կանանցով ու երեխաներով և ամենամեծ պատրաստությամբ: Շրջանցելով Արձեշն ու Բերկրին՝ եկավ բանակ դրեց Ապահովաց գավառի Մանազկերտ կոչված քաղաքի շուրջը՝ բռնելով ամբողջ ընդարձակ դաշտավայրերը: Ասպատակներ ուղարկեց աշխարհի երեք կողմերը. դեպի հյուսիս՝ մինչև Ափիազաց բերդը, մինչև Պարիսը (33) կոչված լեռն ու Կովկասի ստորոտը, դեպի արևմուտք՝ մինչև Ճանեթի անտառները (34), իսկ դեպի հարավ՝ մինչև Սիմ (35) կոչված լեռը. այսպէս բռնեցին ամբողջ աշխարհը արտ ու ազարակ հնձողների պես:

(Լաստիվ., Գլ. ԺԶ)

Հոռոմոց պատերազմի ժամանակ Լիպարիտի որդի Իվանեն (36), որին որպես պարզե բնակության տեղ էին տվել Հաշտենից (37) գավառի Երիզա մեծ ավանը իր շրջակա դաստակերտներով,

երբ լսեց, որ Հունաց թագավորությունը երկուսի է բաժանվել, գնաց և խաբեռթյամբ առավ Եղանց բերդ (38) կոչված ամրոցը և այն իր ձեռքի տակ առնելուց հետո նորից վերադարձավ Աղորի գավառը և այն ամրոցը, որ Հավաճիշ է կոչվում: Քաղաքը նրան բարեկամաբար դիմավորեց: Երբ Իվանեն տեսավ այն իշխանին, որ արևելյան կողմի կարավարիչն էր և այն ժամանակ այնտեղ էր գտնվում, հրամայեց անմիջապես բռնել. նրանից վերցրեց անշափ գանձ, ձիեր, ջորիներ և այն բռլորը, ինչ որ նա հավաքել էր արևելքից. իրեն էլ բանտարկեց Եղնուտում, իսկ ինքը շտապ գնաց Կարին ամուր քաղաքի վրա: Որոշ ժամանակ խաբեռթյամբ աշխատեց քաղաքն առնել, ստելով, թե «թագավորից հրաման ունեմ, այդ քաղաքն իմն է, դռները բացե՛ք, որ ներս մտնեմ»: Երբ այդ միջոցով չկարողացավ հնազանդեցնել, կոխվ սկսելով՝ պատերազմով էր ուզում տիրել քաղաքին, իսկ քաղաքի իշխանը շուտափույթ հայտնեց Անիում նստող իշխանին, որը մազիստրոսության պատիվ ուներ: Երբ սա լսեց այդ, գլխավորներից մեկին զորքով ուղարկեց Իվանեի վրա: Իվանեն երբ այդ իմացավ, երկիրն ասպատակելով՝ վերադարձավ իր տեղը և մարդ ուղարկեց Պարսկաստան՝ օգնության համար զորքեր բերելու: Այս եղավ սկիզբն այն անհնարին աղետների, որ եկան մեզ վրա:

Անօրենները երբ լսեցին այս հրավերը, իրար ձայն տալով՝ խսկույն մի տեղ հավաքվեցին և փութով հասան նրա մոտ, իսկ նա երբ տեսավ զորքի բազմությունը, սարսափեց, որովհետև ոչ ոք չկար նրանց դիմադրող, քանի որ այն իշխանը, որի պատճառով նրանք եկել էին, երբ լսեց նրանց գալու աղմուկը, մտնելով մեծ բերդը՝ ամրացավ: Այն ժամանակ եկած զորքերն ասացին. «Մեզ ավարի ճանապարհ ցո՛ւց տուր և դատարկ մի՛ վերադարձու»: Իսկ նա ճարահատված իր մարդկանցից նրանց առաջնորդ տվեց, և նրանք գիշերն անցնելով անապատ տեղերով՝ հարձակվեցին

Խաղտյաց գավառի վրա և բնակչության անհոգ գտնելով՝ ում որ հանդիպեցին, բոլոր տղամարդկանց սրակուտոր արին, մինչև Ճանեթի Խրթի կոչված անտառը. անշափ ավար ու գերի առնելով՝ մեծ հաղթությամբ վերադարձան ու գալով այդ չարիքների առաջնորդի մոտ՝ մեծամեծ պարզեցներով շնորհակալություն մատուցեցին նրան՝ այն մեծ հաջողության համար, որ իրենց հանդիպեց, ապա գնացին իրենց աշխարհը:

(Լաստիվ., Գլ. ԺՀ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը Տայքի մասին է, ուր շարժվում է Բյուզանդիայի Վասիլ Բ (976-1025 թթ.) կայսրը՝ լսելով Դավիթ կյուրապաղատի (960-1000 թթ.) մահվան մասին, քանի որ վերջինս իր թագավորությունը կտակել էր Բյուզանդիային:

2. Խոսքը միացյալ վրաց պետության հիմնադիր, արխազաց թագավոր Բագարատ Գ-ի (978-1014 թթ.) և նրա հայր, վրաց թագավոր Գուրգենի (994-1008 թթ.) մասին է:

3. Այս մասին հիշատակում է նաև Ասողիկը:

4. Հայոց Գագիկ Ա (990-1020 թթ.) թագավորն է:

5. Հայոց արքա Հովհաննես-Սմբատն է (1020-1040 թթ.):

6. Աշոտը թագավորել է իր եղբայր Հովհաննես Սմբատի հետ միաժամանակ (1020-1041 թթ.):

7. Շատիկ թերդն ուսումնասիրողները տեղադրում են Այրարատ նահանգի Ճակատք գավառում: Այն վիճահարույց ամրություն է եղել նաև Սմբատ Բ-ի (977-990 թթ.) և նրա հորեղբայր, Կարսի թագավոր Մուշեղի (962-984 թթ.) միջև:

8. Խոսքը Բյուզանդիայի Վասիլ Բ (976-1025 թթ.) կայսեր մասին է:

9. Վաղարշակերտը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բագրևանդ գավառում: Այն ներկայիս Ալաշկերտ քաղաքն է Թուրքիայում:

10. Եկեղյաց և Կարին գավառները գտնվում էին Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում: Եկեղյացը հնում կոչվել է Անահտական գավառ: Կարինում էր գտնվում նույնանուն քաղաքը, որը ներկայիս Էրզրում քաղաքն է Թուրքիայում:

11. Բասենը Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան գավառն էր և սահմանակից էր Բարձր Հայք նահանգի Կարին գավառին:

12. Խաղտիքը գտնվում էր Պոնտոսի (Սև) ծովի հարավարևելյան կողմում՝ Պարխար լեռներից հյուսիս-արևմուտք: Ըստ «Աշխարհացույցի»՝ Խաղտիքը Եզեր կամ Կողքիս աշխարհի չորս մասերից մեկն է:

13. Վանանդը Այրարատ նահանգի գավառներից է: Տարածվում էր Բասենից հյուսիս-արևելք, կոչվում էր նաև Վերին կամ Անփայտ Բասեն: Այստեղ էր գտնվում նաև Կարմիր Փորակը:

14. Ուխտյաց քաղաքը կամ Ուխտիքը ներկայիս Օլթի քաղաքն է, որը գտնվում է Ճորոխ գետի աջակողմյան վտակ Օլթի գետի ափին:

15. Պաղակացիս (Ծովակ Հյուսիսառ) լիճը գտնվում է Վանանդ գավառի հյուսիսում և ներկայիս Չղդըր լիճն է Թուրքիայում:

16. Խոսքը Բյուզանդիայի Վասիլ Բ (976-1025 թթ.) կայսեր մասին է:

17. Վարդը հայազգի գորավար էր, որի քույրը Բյուզանդիայի կայսր Հովհաննես Ա Զմշկիկի կինն էր: Նա, 976 թ. Մալաթիայում իրեն հայտարարելով կայսր, երեք տարի շարունակ սարսափի մեջ էր պահում կայսրությունը:

18. Խոսքը Բաղդադի մասին է, որը 762 թ. Տիգրիսի երկու ափերին հիմնել է Զաֆար ալ-Մանսուր (754-775 թթ.) խալիֆան:
19. Խոսքը Բյուզանդիայի Վասիլ Բ կայսեր մասին է:
20. Ասողիկի վկայությամբ Փերս զորավարը վրաց իշխանաց իշխան Զոջիկի որդիին էր:
21. Խոսքը Բյուզանդիայի Վասիլ Բ կայսեր մասին է:
22. Խոսքը վերաբերում է արխագ-վրացական թագավոր Գեորգի Ա-ին (1014-1027 թթ.):
23. Վասպուրականը Մեծ Հայքի 15 նահանգներից ամենամեծն էր: Պատմական այս ժամանակահատվածում գտնվում էր Բյուզանդիայի ենթակայության ներքո որպես նրա տարածք:
24. Խոսքը Վասիլ Բ-ի եղբայր Կոստանդինի մասին է, որը թագավորեց Վասիլի մահից անմիջապես հետո՝ 1025-1028 թվականներին:
25. Խոսքը հայոց Գագիկ Բ թագավորի մասին է, որը 1045 թ. գերվեց Բյուզանդիայի արքունիքում:
26. Խոսքը Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մասին: Նա նույնպես տարվել էր Կոստանդինոպոլիս:
27. Ինչպես նշում է Վ. Գևորգյանը, վրաց և արխագաց թագավոր Բագարատ Դ-ն (1027-1072 թթ.) ծագումով Բագրատունի էր, իսկ նրա մայրը՝ Մարիամ թագուհին, Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու դուստրն էր՝ Հովհաննես-Մբատի և Աշոտի քրոջ աղջկեր: Ըստ «Քարթլիս Ցխովրեբայի»՝ Անիի մեծամեծները ի վերջո քաղաքը հանձնում են Մարիամ թագուհուն (տե՛ս ծանոթ. 102):
28. Խոսքը Բասենի ճակատամարտից առաջ բյուզանդա-հայկական բանակում տիրող տարածայնությունների մասին է, որտեղ հրամանատարներ էին Հայոց աշխարհին իշխող Կամենասը,

Բուլղարի որդի Ահարնը, որն իշխում էր Վասպուրականում, և հայ իշխան Գրիգոր Մազհատրոսը, որը Միջազգետքի դուքսն էր:

29. Հստ Ս. Երեմյանի՝ նա Լիպարիտ Օրբելյանը չէ: Այս զորավարը ծագում է Արդվեթի և Թրիալեթի տեր Բաղուաշի Լիպարիտյան ֆեոդալական տոհմից (տե՛ս ծանոթ. 125):

30. Այսինքն՝ սելջուկները:

31. Խոսքը 1054 թվականի մասին է:

32. Թուրք-սելջուկյան սուլթան Տուրբիլն է (1038-1063 թթ.), որի անունը Լաստիվերցին չի հիշատակում:

33. Հստ «Աշխարհացույցի»՝ Պարիսարը գտնվում է Տայքից արևմուտք: Այստեղից հոսում է Վոհ գետը (Ճորոխ), որը, մի շաբք վտակներ ստանալով, թափվում է Պոնտոսի (Սև) ծովը: Պարիսարը ներկայիս Բարիսալ դադն է Թուրքիայում:

34. Այսինքն՝ Խաղստիքի անտառները:

35. Միմ լեռը նույնացվում է Հայկական Տավրոսի հետ:

36. Խոսքը վրաց զորավար Լիպարիտ Լիպարիտյանի որդու մասին է, որին հոր գերվելուց հետո Բագարատ Դ-ն ձանաչեց հայրենի կալվածքների տեր:

37. Հաշտեանքը Մեծ Հայքի Ծոփաց նահանգի գավառներից է, իսկ Երիզան գտնվում էր Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում և համապատասխանում է ներկայիս Երզնկային Թուրքիայում:

38. Հստ Վ. Գևորգյանի՝ Եղանց բերդը նույն Եղնուտն է և գտնվում էր Տուրութերան նահանգի Տարոն գավառում (տե՛ս ծանոթ. 178):

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ⁵

Այս ամենի համբավը (1) հասնելով հարևան բոլոր երկրները, բոլոր ժողովուրդների թագավորները՝ ավիսազների և հույների, բարելացիների և պարսիկների, ի պատիվ հայոց թագավորության ուղարկեցին նվերներ և բարեկամության հավաստիացումներ թանկագին ընծաներով:

(Մատթ. Ուրիայ., մաս Ա, էջ 9-11)⁶

Այն ժամանակ (2) Վրաց թագավորի (3) զինվորականներից մի իշխան դեսպանությամբ եկել էր Հռվիաննես արքայի (4) մոտ. Հռվիաննեսի և Աշոտի մայրը՝ Կատրամիդե թագուհին, Վրաց թագավոր Գիորգիի դուստրն էր: Վրաց իշխանը Հռվիաննես թագավորին ասաց. «Ո՞վ, արքա Հռվիաննես, իրամայի՛ր ինձ ցույց տան Աշոտին, և ես նրան կձերբակալեմ ու շղթայակապ քեզ կրերեմ»: [Նա այդպես էր ասում], որովհետև քաջ մարդ էր և պատերազմում անպարտելի: Հռվիաննես թագավորը պատասխանեց նրան. «Աշոտը ուժեղ մարդ է, դու ինչպես կարող ես նրան ինձ բերել»: Ասաց Վրաց իշխանը. «Ես նրան ձիու վրայից ողջ-ողջ կառնեմ»: Հռվիաննեսը պատասխանեց նրան, թե «Առյուծի ձագին չտեսած մի՛ արհամարհիր»: Երբ ճակատ առ ճակատ բախվեցին միմյանց, ավիսազաց իշխանը, արծվի նման սլանալով, բարձրաձայն Աշոտին էր կանչում, ասելով. «Ով է Աշոտը, թող առաջ գա»: Աշոտը, լսելով դա, հռվազի նման կատաղեց: Մեկը մյուսի վրա գազազած՝ նրանք շարժվեցին միմյանց վրա: Վրաց իշխանը նիզակն ուղղեց

⁵ Մատթեոս Ուրիայեցու տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Մատթեոս Ուրիայեցի, Ժամանակագրություն, Եր., 1991:

⁶ Մատթեոս Ուրիայեցու տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս Մատթեոս Ուրիայեցի, Ժամանակագրություն, Եր., 1991:

Աշոտի վրա, բայց Աշոտը, կայծակի արագությամբ նրա տակից անցնելով, թրով հարվածեց սաղավարտին և նրա զրահապատ մարմինը մինչև ստինքը երկուսի բաժանեց, թափեց փորոտիքը և գետին տապալեց:

(Մատթ. Ուոհայ., մաս Ա, Էջ 15)

Նա (5) այդպիսի հսկայական զորքով եկավ հասավ Ապահով նիք գավառը (6), վրաց իշխան Դավիթ կուրապաղատի երկիրը...

Մի քանի տարի անց շարամիտ իշխանները, նմանվելով Կայենին և այլ մարդասպանների, շարաննենգորեն ծրագրեցին Դավիթ սուրբ և արդար իշխանի սպանությունը: Նրանք իրենց նենq ծրագրին մասնակից դարձրին Վրաստանի արքեպիսկոպոս Իլարիոնին, և այս Իլարիոնը աստծուն երկրորդ անգամ խաչեց, քանզի Քրիստոսի կենարար մարմնի և արյան մեջ մահարեր թույն խառնելով՝ կենարերը դարձրեց մահարեր: Իր ոճրագործ պատարագից հետո՝ մահարեր թույնով շաղախված հաղորդության հացը եկեղեցու մեջ աստծուն դեմ հանդիման, նա դրեց սուրբ իշխանի բերանը: Աստվածասեր Դավիթ իշխանը՝ այդ մասին տեղյակ, բան չասաց ու բուժիչ դեղեր ընդունելով՝ ամոքեց իր մարմնական ցավերը: Անօրեն Իլարիոն եպիսկոպոսի սիրտը նորից բորբոքվեց նենգությամբ. մտնելով բարեպաշտ Դավթի ննջասենյակը, երբ վերջինս խաղաղ քուն էր մտել, նրա սնարից քաշեց բարձր, դրեց Դավթի բերանի վրա և ամբողջ ուժով ընկնելով նրա վրա՝ շարաշար խեղդամահ արեց աստվածասեր Դավիթ կուրապաղատին: Մի քանի տարի անց Վասիլ կայսրը (7) անօրեն Իլարիոն եպիսկոպոսին ձերբակալեց, նրա վզից մի քար կապեց ու նրան զործակցած մյուս ազատների հետ ծովը գցեց, և այնտեղ սատակեցին (ժողովրդի) անեծքներին արժանացածները:

(Մատթ. Ուոհայ., մաս Ա, Էջ 41; 45)

Հայոց 470 թվականին (16 մարտ 1021-15 մարտ 1022) Վասիլն անթիվ, անհամար զորքով գնաց արևելք և հայոց թագավորից պահանջեց Անին ու Կարսը... Վասիլը, վերադառնալով իր երկիրը, նամակ գրեց վրաց թագավոր Գորգիին (8)` առաջարկելով իրեն հպատակություն հայտնել, մի բան, որը (Գորգին) մերժեց: Դրա վրա Վասիլը պատերազմ հայտարարեց և շարժվեց նրա դեմ. վրաց զորքը, Լիպարիտի քաջ եղբայրներ Ռատն ու Զոյատը գնացին նրա դեմ և Վասիլի զինվորներին ծանր հարված հասցրին: Երբ Ռատն սպանվեց (Վերջինիս ձին խրվեց տղմոտ մի վայրում և (Ռատն) այնտեղ սպանվեց), վրաց զինվորները դիմեցին փախուստի, իսկ Վասիլի զինվորները կոտորելով հարվածում էին նրանց: Վասիլն այնտեղ մնաց երեք ամիս, մինչև որ հնազանդեցրեց նրանց և ապա գնաց ձմեռեց Տրապիզոնում:

(Մատթ. Ուռիայ, մաս II, էջ 57)

Հայոց 471 թվականին (16 մարտ 1022 թ.-15 մարտ 1023 թ.)... հունաց երկրից մի մեծ իշխան, որի անունը Նիկեփոր Ծովիկ էր, ապստամբեց Վասիլի դեմ ու իրեն դաշնակցելու կոչ արեց վրաց թագավոր Գորգիին և Գագիկի որդիներին (9): [Նիկեփորի] վախից դրդված՝ Դավիթը (10) հայոց զորքով միացավնրան: Վասիլն ընկավ մեծ սարսափի մեջ. նա թախանձագին դիմեց Դավիթին, որպեսզի նա կազմակերպի [Նիկեփորի] սպանությունը: Ծովիզը շատ էր սիրում Դավիթին և խոստանում էր նրան հայոց թագավորության գահին նստեցնել, բայց Դավիթը չուզեց խախտել Վասիլի հետ կնքած դաշինքը: Մի օր Դավիթը խոռված, թողեց գնաց իր տունը: Նիկեփորը մենակ գնաց [Դավիթի] մոտ և խնդրեց վերադառնալ: Դավիթի ազդանշանով վերջինիս մարդիկ իսկույն սպանեցին Ծովիզին, իսկ նրա զորքը ցրվեց և փախուստի դիմեց: Վասիլը, լսելով այդ մասին, շատ ուրախացավ և Դավիթին, որպես

պարզեց, տվեց Կեսարիան, Ծամնդավը (11) և Խավատանեքը (12)` իրենց գավառներով հանդերձ: Վասիլը սաստիկ զայրացած մեծաթիվ զորքով եկավ վրաց թագավոր Գորգիի վրա: Զինք բերդի առաջ մեծ ճակատամարտ տվեցին. Գորգին, փախուստի դիմելով, ապաստանեց ամուր բերդում: Նա նամակ գրեց Վասիլին՝ հպատակություն խոստանալով, և իր որդուն պատանդ տվեց:

(Մատթ. Ուռիայ., մաս U, էջ 59)

Այդ տարին վախճանվեց նաև վրաց թագավոր Գորգին (13) և իր գահին նստեցրին որդուն՝ Բագրատին՝ թագավորելու վրաց համայն երկրի վրա:

(Մատթ. Ուռիայ., մաս U, էջ 65)

Այդ ժամանակ իր (14) զինվորականներից մի իշխան, որ Ապուրապ էր կոչվում (նա անցյալում վրաց Դավիթ կուրապաղատի վրանապահն էր եղել), կայսեր տեղյակ պահեց զորքերի դավադրության մասին:

(Մատթ. Ուռիայ., մաս U, էջ 67)

Այս ժամանակ պարսից մեծ ամիրա Ապուտուարը (15) շուրջ հարյուր հիսուն հազար անհավատների զորահավաք արեց և մեծ զայրույթով հարձակվեց քրիստոնյանների վրա: Նա ավերիչ կատաղությամբ մտավ Աղվանից երկիրը, Դավիթ Անհողինի (16) գավառը և մեծ փորձանք բերեց հավատացյալների զլիսին: Դավիթը, այլազգիների հսկայական զորքից սարսափած, խուսափեց պատերազմից: Անհավատ Ապուտուարը գրավեց բազմաթիվ զավառներ և չորս հարյուր թեմաբերդ: Մի տարի մնալով այնտեղ՝ երկրի մեծ մասն իրեն ենթարկեց, ապա որոշեց հարձակվել Դավիթի վրա: Դավիթը ճարահատյալ դիմեց Հովհաննես թագավորին,

որ Անիում էր նստում, և ասաց. «Ապուտուարը, գրավելով հայոց երկրի բոլոր զավառները, ինձ վրա է զալիս: Արդ, եթե ինձ օգնության չհասնեք, ես կգնամ հպատակություն կհայտնեմ նրան, կդառնամ նրա առաջնորդը և քո Շիրակ գավառը կիսավարեցնեմ»: Հովհաննեսը, լսելով այդ, Դավթին չորս հազար հոգի ուղարկեց, ապա միջնորդեց Կապանի թագավորին, որը նույնպես նրան (օգնություն) ուղարկեց երկու հազար հոգի: Դավթը նույն ձևով սպառնաց և ափխազների թագավորին (17), որը ևս օգնություն ուղարկեց չորս հազար հոգի:

(Մատթ. Ուռհայ., մաս Ա, էջ 89-91)

Հովհաննեսի (18) մահվանից հետո հայոց երկրի իշխաններից մի նենq մարդ, անունը՝ ազատ Սարգիս Հայկազն, իմացրեց հոռոմներին, որպես նվեր նրանց տվեց հայոց երկիրը, հայոց առաջին թագավորների գանձարանն էլ հափշտակելով՝ տարավ Ափխազիա, իսկ ինքն էլ ապաստանեց բերդում:

(Մատթ. Ուռհայ., մաս Ա, էջ 95)

Հունաց զորքը Կամենի, Առոնի և Վասակի որդի Գրիգորի գլխավորությամբ հասավ Արևելք. վերջիններս իրենց մոտ կանչեցին վրաց իշխան Լիպարիտին, ապա գնացին Կապուտուու բերդը (19), Արջովիտ կոչվող տեղը: Թուրք զորքերը լսելով այդ մասին՝ դիմեցին այնտեղ: Հոռոմոց զորքը բանակեց Արջովտում: Այն ժամանակ այլազգիների զորքը եկավ քաջ Լիպարիտի վրա: Նա զիշերով հեռացրել էր պահակներին՝ իր քեռորդի Չորտվանելին, հզոր և պատերազմող մարդուն: Սիա այն ժամանակ՝ զիշերով այլազգիների զորքը մարտ տվեց: Մարտի տեղից Լիպարիտին ձայն հասավ, թե «Հասի՛ր, այլազգիների զորքը շրջապատել է մեզ»: Լիպարիտն ասաց. «Շաբաթ է, վրացիների համար ընդունված չէ

շաբաթ օր պատերազմել»: Դրա վրա Չորտվանելը գիշեր ժամանակ առյուծի պես ճակատեց այլազգիների դեմ: Նրանց փախուստի մատնելու պահին նրա բերանը մի նետ միրճվեց և ծոծրակից դուրս եկավ: Ահա այսպես մեռավ Չորտվանելը, մի քաջ ու հզոր մարդ: Լսելով Չորտվանելի սպանության մասին՝ Լիպարիտը կատաղած գազանի նման դուրս եկավ պատերազմի և բոլոր այլազգիներին դաշտի երեսով մեկ ցրիվ տվեց և սրի քաշեց: Երբ հոռոմոց գորքը տեսավ Լիպարիտի քաջությունը, դավաճանեց նրան և լրելով այլ ազգիների մեջ՝ փախուստի դիմեց, որպեսզի Լիպարիտը քաջ մարդու համբավին չարժանանա: Անհավատների գորքը, տեսնելով այդ բանը, մի մարդու պես մարտի բռնվեց վրաց գորքի հետ: Մարտը թեժացավ. անհավատների շրջապատման մեջ գտնվող Լիպարիտը առյուծի նման էր մռնչում: Այդ պահին վրաց զինվորներից մեկը, որ ետ էր մնացել, թրով կտրեց Լիպարիտի ձիու երկու շլերը: Լիպարիտը իմանալով այդ՝ փութանակի շուր եկավ և սատկացրեց նրան: Ինքը՝ Լիպարիտը, ցած իջնելով, նստեց գետնին՝ փահանի վրա, և ձայն տալով ասաց. «Ես եմ Լիպարիտը»: Այլազգիներն այն ժամանակ վրաց զինվորներից շատերին կոտորեցին, մնացածներին էլ փախուստի մատնեցին, իսկ Լիպարիտին էլ գերի վերցնելով՝ տարան Խորասան, Տուղրիլ սուլթանին. վերջինիս վաղուց էր հասել Լիպարիտի համբավը. տեղյակ էր նրա բոլոր սխրագործություններին: Նա սուլթանի մոտ մնաց երկու տարի և այլսայլ վայրերում սխրանքներ գործեց: Այլազգիները սուլթանի առջև հանեցին մի հզոր և քաջ խափշիկի՝ Լիպարիտի հետ մենամարտելու: Լիպարիտը հաղթեց և սատկացրեց այլազգի խափշիկին: Դրա վրա սուլթանն ազատ արձակեց Լիպարիտին և մեծ նվերներով հոռոմոց երկիրն ուղարկեց: Լիպարիտը եկավ Կոստանդնուպոլիս: Մոնոմախ կայսրը, տեսնելով նրան, շատ ուրախացավ և մեծամեծ նվերներ տալով՝ ձամ-

փեց տուն՝ կնոջ և որդիների մոտ: Այս Լիպարիտը Ռատի և Զոյա-
տի եղբայրն էր, ազգությամբ վրացի (20), անվանի ընտանիքից:

(Մատթ. Ուռհայ., մաս Ա, էջ 117-119)

Սուլթանը (21), իր հսկայական զորքով այստեղից (22) հեռա-
նալով, մտավ վրաց երկիրը և զազազած սրի քաշեց ու գերեվարեց
նրանց: Առաջանալով նա բանակեց Զավալիս (23) կոչվող զավա-
ռում և կատաղի մարտ տալով՝ պաշարեց Ախալ քաղաքը, որը և
գրոհով գրավեց: Նա անզթորեն սրի քաշեց ողջ քաղաքը՝ տղա-
մարդկանց ու կանանց, բոլոր քահանաներին, վանականներին ու
իշխաններին: Ամբողջ քաղաքն արյամբ ողողվեց: Անհամար
տղաների ու աղջկների գերի քշեցին Պարսկաստան, ավար
վերցրին ոսկու և արծաթի, թանկազին քարերի և մարզարիտների
անթիվ զանձեր:

(Մատթ. Ուռհայ., մաս Բ, էջ 159)

Կայսրությին նրա (24) սուրբ Վարքազծի համար, որ իր հետ
ամուսնական հարաբերության մեջ չեր մտնում, հետը թշնամա-
ցավ, սիրային կապեր հաստատեց հոռոմոց մի իշխանի հետ, ո-
րին Վոտանիատ կին ասում, և նրան դրդեց Միքայելի դեմ: Մի-
քայել կայսրը տեսնելով, որ Վոտանիատը ողջ Կոստանդնուպո-
լիս քաղաքն իր դեմ է հանել, չդիմադրեց, այլ բացեիբաց անիծելով
ամենապիշտ թագուհուն՝ հրաժարվեց գահից և գնաց վանք...

Հայոց 525 թվականին (2 մարտ 1076 թ. -1 մարտ 1077թ.) հոռո-
մոց վրա թագավորեց Վոտանիատը (25): Նա ամուսնացավ Մի-
քայելի կնոջ հետ, որ վրաց թագավոր Գուրգենի դուստրն էր:
Պիղծ խառնակության համար նրանք ամուսնացան միմյանց հետ:

(Մատթ. Ուռհայ., մաս Բ, էջ 229)

Հայոց 550 թվականին (24 փետրվար 1101 թ. - 23 փետրվար 1102 թ.) Երուսաղեմ սուրբ քաղաքում սարսափելի և զարմանալի նշան եղավ... Բոլոր քրիստոնյաներն ապշել էին: Դա տեղի ունեցավ այն պատճառով, որ ֆրանկներն ընթացան խոտոր, ձախակողմյան ճանապարհով, թողեցին ճշմարիտ աշակողմյան ճանապարհը և ըմպեցին դառնության մրուրով լի մեղքերի բաժակը, նաև (այն պատճառով), որ սուրբ Էկեղեցու սպասավորներն անհագուրդ կեղտի մեջ թափալվեցին և չին խորշում այսպիսի մեղսագործ վարքից: Այդ բոլորի վրա նրանք կանանց էին կարգում աստծոն սուրբ Գերեզմանի և Երուսաղեմի բոլոր վանքերի սպասավոր: Այդ բոլորը սարսափելի մեղքեր էին աստծոն նկատմամբ: Բոլոր վանքերից նրանք հեռացրին հայերին, հոռոմներին, ասորիներին և վրացիներին: Բայց երբ ֆրանկներն ականատես եղան իրենց պախարակող այդ սարսափելի նշանին, Երուսաղեմի վանքերի սպասավորությունից հեռացրին կանանց և յուրաքանչյուր ազգի թույլ տվեցին իր վանքում սպասավորել: Հավատացյալների հինգ ազգ ահա սկսեց աղոթել և աստված ականջ դրեց նրանց առողջներին:

(Մատթ. Ուրիհայ., մաս II, էջ 297-299)

Հայոց 570 թվականին (19 փետրվար 1121 թ. - 18 փետրվար 1122 թ.) տեղի ունեցավ հետևյալը: Գանձակ գավառից ուն ամիրա, անունը Խազի, արյունաբրու, անպատկառ ու թալանող մի մարդ, որ, լինելով Վրաստանի հարևան, հոժար կամքով ենթարկվում էր վրաց Դավիթ թագավորին (26), մի վատ միտք հղացավ. Երեսուն հազար թուրք զինվորների գլուխն անցած՝ նա մտավ Վրաստան, նրա բնակչության մի մասին գերեվարեց և Վրաստանից տեղահան անելով՝ վերադարձավ ու բանակեց իր տեղը: Վրաց Դավիթ թագավորը, լսելով այդ մասին, (նրա դեմ) ուղար-

կեց Վրաստանի գորքերին, որոնք, տեղ հասնելով, անսպասելիութեն հարձակվեցին թուրք զինվորների վրա, նրանցից երեսուն հազար զինվոր սպանեցին, նրանց բոլոր կանանց ու երեխաներին Վրաստան գերեվարեցին, նրանց ոչխարների անհամար հոտերը քշեցին տարան, ձեռք բերեցին հսկայական ու անհամար քանակությամբ ավար: Նախաճիրից ազատված թուրք զինվորները պատառութեցին իրենց հագուստները, իրենց գլուխը հողեցին և, սևեր հազար, զիլարբաց զնացին բոթը հասցրին Գանձակ քաղաք, իրենց սուլթան Մելեքին (27), Տափարի որդուն, ողբազին զանգատվեցին իրենց գլխին եկած փորձանքի համար: Նրանց մի մասն էլ զնաց հասավ արաքների զավառ՝ Կարմիան շրջանը, Արդուխի որդի Խազի ամիրայի մոտ և աղյողորմ նրան պատմեց իրենց գլխին եկածը: [Խազին], իր հզորությամբ ամբարտավանացած, հրամայեց իր մեծաթիվ զորքերի՝ բոլոր թուրքերի զորահավաք կատարել՝ հունաց երկրից սկսած մինչև արևելք՝ համայն Կարմիանը: Նա հարյուր հիսուն հազարանց զորք գումարեց: Ազա դիմեց հարավ՝ արաքների երկիրը, և արաքների թագավորին, այն է՝ Տուպայիսի որդուն, որի անունը Սաղա էր, կոչ արեց իրեն միանալ: Վերջինս տաս հազարանց [զորքով], եկավ նրա մոտ: Սա քաջ և կռվող մարդ էր, գերեվարել էր Բաղդադ քաղաքի [բնակչությանը] և երեք անգամ պատերազմել պարսից սուլթան Տափարի դեմ, հաղթել նրան ու պարտվել նրանից: Ծագումով նա Ռավայան էր, Մահմեդի և մահմեդականության անարգող: Սա վրաններ էր խփել և բանակել Եթովպիայի ու Հնդկաստանի միջև ընկած շրջանում: Այս ժամանակներում էր, որ նա զնացել փեսայցել էր պարսից ամիրա Խազին: Ահա այդ տարին Խազին բազում զորքերով շարժվեց հասավ Գանձակի շրջանը և զնաց դեպի Վրաստան:

Այն ժամանակ Գանձակի սուլթան Մելեքը չորս հարյուր հազար քաջ հեծյալներից բաղկացած հսկա զորքով մտավ Վրաստան, Տփխիս քաղաքի ուղղությամբ՝ դեպի Դեկոր կոչվող լեռը: Վրաց Դավիթ թագավորը՝ Գորգեի որդի Բագրատի որդին, լսելով այդ մասին, քառասուն հազար քաշարի, լավ կրվող զինվորներով պատերազմի դուրս եկավ թուրք զինվորների դեմ: Նա ուներ դիշաղների թագավորից ստացած տասնինս հազար քաջ և ընտիր զինվորներ ևս, հինգ հարյուր ալան և հարյուր ֆրանկ (28): Օգոստոս ամսի 13-ին՝ Աստվածածնի պատերի հինգշաբթի օրը, երկու լեռների միջև կատաղի պատերազմ տեղի ունեցավ. լեռները թնդում էին զորքերի բարձրացրած սարսափելի ժխորից: Աստված Վրաց զորքերին նեցուկ կանգնեց, և նրանք մարտում ողջ թուրք զորքը փախուստի մատնեցին: Այդ օրը տեղի ունեցավ թուրք զորքերի մեծ, սարսափելի ջարդ, կոտորվեց չորս հարյուր հազար զինվոր, գերի ընկան երեսուն հազար հոգի: Գետերն ու ձորերը, բոլոր լեռնալանջերը դիակներով ծածկվեցին, բովանդակ դաշտերը երիվարների [դիակներով] և թափված գենքերով պատվեցին: Ղիշաղ և վրաց զինվորները ութ օր մինչև Անի քաղաքի սահմանները [թուրքերին] հալածական արեցին: Պարսից սուլթան Մելեքը և Խազին մազապուրծ փախուստով ամոթահար վերադարձան իրենց երկիրը. հազարից հարյուրն անգամ կենդանի չմնաց:

Այդ տարին վրաց Դավիթ թագավորը պարսիկների ձեռքից գրավեց Տփխիս քաղաքը, այնտեղ մեծ ջարդ կազմակերպեց, հինգ հարյուր հոգու էլ ցից հանելով տանջամահ արեց:

(Մատթ. Ուոհայ., մաս Գ, էջ 381-383)

Այդ տարին (29) վրաց Դավիթ թագավորը վաթսուն հազար պարսիկ կոտորեց: Գանձակի սուլթանը բազմաթիվ զորքերով ե-

կել էր և՝ Կուր գետի վրա նավերից կամուրջ կապելով վաթսուն՝ հազար հոգի ափխազների երկիրն էր անցկացրել: Վրաց թագավորը, իմանալով այդ մասին, զորքեր ուղարկեց, քանդեց կամուրջը և մյուս ափն անցած բոլոր զինվորներին իսպառ կոտորեց: Սուլթանը փախավ Պարսկաստան և մտավ Ավզկան քաղաքը՝ իր հորեղբոր մոտ:

Դավիթ թագավորը պարսիկների դեմ մղվող պատերազմներում մեծ քաջություն և կորով էր հանդես բերում: Նա բազմիցս պարտության էր մատնել այլազգի զորքերին, կոտրել նրանց հզորությունը, զենքի ուժով նա պարսիկների ձեռքից բազմաթիվ և նշանավոր գավառներ էր գրավել: Նա գրավեց Տփխիս և Դմանիս քաղաքները, Շիրվանը. Շաքին և Շամբորը, նվաճեց բազում այլ գավառներ: Դավիթ թագավորը սուրբ և առաքինի մարդ էր, շատ աստվածապաշտ ու արդար: Նա հայ ժողովրդի պաշտպանն ու բարեկամը դարձավ: [Հենց] նրա մոտ հավաքվեցին հայոց զորքի բեկորները: [Դավիթը] Վրաստանում հայերի համար քաղաք կառուցեց, որտեղ բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր հիմնադրեց: Այդ քաղաքը նա Գոռա (30) կոչեց: Նա ողջ հայ ժողովրդին մեծ ուրախություն և խնդրություն պարզեց: Դավիթ թագավորը հայ կնոջից մի որդի ուներ, անունը՝ Դեմետրե: Թագավորի եղբոր անունն էր Թուտորե:

(Մատթ. Ուոհայ., մաս Գ, էջ 389-391)

Այդ թվականին (31) վրաց թագավոր Դավիթը նորից մեծ ջարդ տվեց պարսից զորքերին՝ կոտորելով շուրջ քսան հազար հոգի: Նա գրավեց հայոց թագավորանիստ Անի քաղաքը, իսկ Մանուչեի որդիներին հանելով Անիից՝ տարավ Տփխիս: Վաթսունամյա ստրկությունից ազատվեց Անի թագավորանիստ քաղաքը: [Դավիթը] Անիի Սուրբ Կաթողիկե հրաշափառ և մեծ եկեղեցում,

որ մզկիթի էր վերածվել, հավաքեց հայոց աշխարհի եպիսկոպոս-ներին, քահանաներին ու վանականներին և մեծ հանդիսավորությամբ օրինեց Սուրբ Կաթողիկեն: Համայն հայությունը ցնծության մեջ էր, քանզի Սուրբ Կաթողիկեն ստրկությունից ազատված տեսավ:

(Մատթ. Ուռիայ., մաս Գ, էջ 393)

Այդ տարին (32) պարսից գորահրամանատարը՝ արևելից ամիրան, որ Աբրայիմ՝ որդի Սուլիմանի է կոչվում, ապա Անձիտի (33) ամիրան, որ Տավութ՝ որդի Սուլիմանի՝ որդի Արդրուսի է կոչվում, և այլ բազմաթիվ ամիրաներ, հսկայական գորահավաք անելով, շարժվեցին գնացին Վրաստան: Նրանց վրա հարձակվեց վրաց թագավորը և մեծ ջարդ տալով՝ փախուստի մատնեց: Նա նախորդ անգամից ավելի [թուրք] կոտորեց, իինզ օր հալածելով նրանց, արյամբ ողողեց դաշտերն ու լեռները: Դիակների գարշահոտությունը բռնել էր ողջ Երկիրը:

Այդ տարին վախճանվեց Վրաստանի բարեպաշտ և սուրբ թագավոր Դավիթը: Նրա զահին նստեցրին իր որդուն՝ Դեմետրեին (34), քաջ և աստվածասեր մի մարդու, որն իր հոր նման բարեգործ էր: [Դեմետրեն], Մանուչեի որդիներից ցմահ հպատակության մասին բազում երդումներ առնելով, թույլ տվեց նրանց վերադառնալ Անի՝ քաղաքը նրանց հանձնելով: Անին Դավիթի մահից հետո պարսից գորբերից բազում նեղություններ էր կրել: Հայ կնոջից ծնված վրաց թագավոր Դեմետրեի վրա պատերազմական հոգսերից բացի ծանրացան նաև գավառների [կառավարման] հոգսերը: Մանուչեի որդիները սարսափելի երդում տվեցին, որ Անիի Սուրբ Կաթողիկեն առհավետ հայերին է պատկանելու, որ այնտեղ մուտք չի գործելու և ոչ մի տաճիկ կամ մուսուլման:

(Մատթ. Ուռիայ., մաս Գ, էջ 399-401)

Այդ տարին (35) վախճանվեց պարսից սուլթանը, որը կոչվում էր Մահմուտ որդի Տափարի. իր գահին նստեց Եղբայրը, որ Մելեք էր կոչվում, նա, ով նախկինում Գանձակի վրա էր տիրում և վրաց թագավոր Դավթից ջարդ ստանալով՝ փախուստի էր դիմել Պարսկաստան:

(Սատթ. Ուռիայ., մաս Գ, էջ 403)

Նույն թվականի (36) հոկտեմբեր ամսին Միրան (37) անունով մի ամիրա՝ Սուքմանի որդի Աբրեհիմի որդին, որ բազում քաղաքների և զավառների՝ Խաչի, Արճեշի, Սուշի, Տողատափի և Մանազկերտի տերն էր, բազմաթիվ զորքերով Վրաստան ուղարկեց իր աներոջը, որի անունը Աստրատին էր: Վրաց թագավոր Գորգիի (38) զորքն իր հերթին ուզում էր զնալ ասպատակել թուրքերի երկիրը: Նրանք միմյանց հանդիպեցին Օխթիս (39) կոչվող զավառում և կատաղի մարտ տվեցին: Հաղթեցին վրացիները և նրանց փախուստի մատնեցին, շատերին կոտորեցին և թուրք մեծամեծներից երեք հարյուր հոգի գերեցին: Իսկ [թուրքերն] էլ նետով խոցեցին վրաց հեծելազորի հրամանատարի ձեռքը. նաձիուց ցած իջավ, իսկ իր [զինվորները] վերքին դեղ էին դնում: Թուրք զորքից ետ էին մնում Մրվանի որդիները, ովքեր Վրաստանից էին և թուրքերի մոտ էին եկել վրաց ուրացող Վասակի ետևից. նրանք թուրքական զորքի առաջնորդները դարձան: Անակնկալ կերպով հանդիպելով [ձիուց] ցած իջած վրաց հեծելազորի հրամանատարին, նրանք ձերբակալեցին նրան և տարան Շահի Արմեն (40) կոչվող ամիրայի մոտ: Սա միակ գերված [վրացին] էր, վրաց հրամանատարը, որին Կադ էին անվանում:

Հայոց 610 թվականին (9 փետրվար 1161 թ. - 8 փետրվար 1162 թ) վրաց թագավոր Գորգին՝ Դավթի որդի Դեմետրեի որդին, ամառ ժամանակ, երկուշաբթի օր եկավ թագավորանիստ Անի մեծ

քաղաքի վրա, գիշերեց, իսկ հաջորդ առավոտյան գրոհով վերցրեց այն, կոտորեց հազար հոգի քրիստոնյա և այլազգի: Երկու հազար հոգուց բաղկացած ընտիր կայազոր հաստատելով՝ ինքը, փայլուն հաղթանակ տարած, վերադարձավ իր տիրապետությունը: Խլարի տերը, որին Շահի Արմեն էն անվանում ութսուն հազար զինվոր հավաքելով, եկավ պաշարեց Անի քաղաքը: Վրաց թագավորը, լսելով այդ մասին, ելավ նրանց դեմ և կոտորեց ու փախուստի մատնեց. այդ օրը նա սպանեց յոթ հազար հոգի, գերի վերցրեց երկու հազար հինգ հարյուր հոգի, այդ թվում հարյուր հիսուն հոգի նրանց երեւելիներից՝ մեծամեծ ամիրաների: Նա ավար վերցրեց անթիվ անհամար քանակությամբ ձի և զորի, վրան և զրահ և այլ զենքեր, այնքան շատ, որ ընտիր զրահը վաճառում էին երկու դանգով: Նա քշեց տարավ նաև բազմաթիվ ոչխարներ: Անի քաղաքը ողողվեց ամեն տեսակի բարիքներով, [նրա բնակիչները] ձեռք բերեցին կրկնապատիկը, քան կորցրել էին [քաղաքը] վրացիների կողմից գրավվելու ժամանակ: Դրանից դեռ շատ օրեր անց Անիի բնակիչները գնում էին ձակատամարտի վայրը, խոտերի մեջ գտնում բազմաթիվ զրահներ ու բերում: Թագավորը Անի քաղաքին արեց հետևյալ լավությունը. քաղաքը գրավելուց հետո նա քառասուն հազար դահեկան տվեց և հեծելազորից գնեց Անիում գերվածներին՝ քրիստոնյա թե այլազգի: Դա տեղի ունեցավ սուրբ Գրիգորի պատերին՝ ամռան աղուհացից պատերի մեջտեղում, եթե Անին գրավվեց, իսկ Սիրան ամիրային, որ Շահի Արմեն էր, ջարդեցին օգոստոս ամսին:

(Գրիգոր Երեցի շարունակութ., էջ 475-477)

Այդ տարին 41) վրաց թագավոր Գորգին, այլազգիների փախուստի դիմող գորքի ետևից ներխուժելով հռչակավոր Դվին քաղաքը, գրավեց այն: Այլազգիները քաղաքից դուրս էին եկել նրա

դեմ պատերազմելու, իսկ նա փախուստի մատնեց և կոտորեց նրանց: Կենդանի մնացածները փախան դեպի քաղաք: [Վրացիները], քաղաքի դռնով մեկ մարդու պես ներս խուժելով, բոլորին անխնա կոտորեցին, գերեցին և, նրանց բնակարանները հրո ձարակ դարձնելով, մեծ ավարով ու գերիներով վերադարձան իրենց երկիրը:

(Գրիգոր Երեցի շարունակութ., Էջ 479)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը վերաբերում է հայոց արքա Գաղիկ Ա-ի (990-1020 թթ.) թագադրման և օծման տոնակատարություններին ու հանդիսավորություններին:
2. Այսինքն՝ Գաղիկ Ա-ի մահից հետո նրա որդիներ Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև ծագած անհամաձայնության ժամանակ:
3. Խոսքը արիազաց և վրաց թագավոր Գեորգի Ա-ի (1014-1027 թթ.) մասին է:
4. Հայոց արքա Հովհաննես-Սմբատը թագավորել է 1020-1042 թվականներին: Կա կարծիք, թե նա թագավորել է մինչև 1040 թվականը:
5. Խոսքը Ատրպատականի ամիրա Մամլանի մասին է:
6. Ապահովնիքը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից է: Այստեղ էին գտնվում Մանավազակերտ կամ Մանազկերտ քաղաքը, Շումք բերդը, Թոնդուրակ բնակավայրը, որից իր անունն է ստացել 9-11 դարերում Հայաստանում լայն տարածում գտած թռնղրակյան աղանդավորական շարժումը:
7. Խոսքը Բյուզանդիայի Վասիլ Բ (976-1025 թթ.) կայսեր մասին է:

8. Խոսքը վրաց Գեղրգի Ա (1014-1027 թթ.) թագավորի մասին է:

9. Խոսքը Գագիկ Ա-ի (990-1020 թթ.) որդիներ Հովհաննես-Սմբատի և Աշոտի մասին է:

10. Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդի Դավիթ Արծրունին է:

11. Ծամնդավը Փոքր Հայքի նույնանուն գավառի կենտրոնն էր: Միջին դարերում հսկում էր Կեսարիայից Մելիտենե տանող մայրուղին: XI դարում Ծամնդավը մտնում էր Վասպուրականի թագավոր Սենեքերիմի որդի Դավիթ Արծրունու (1025-1035 թթ.) տիրույթների մեջ:

12. Խավատանեքը կամ Խավարտանեքը քաղաք էր Կապադովկիայի հարավարևմտյան մասում, ճանապարհների հանգույցում՝ Ներկայիս Դնելու շրջկենտրոնից 3 կմ հարավ-արևելք:

13. Վրաց Գեղրգի Ա (1014-1027 թթ.) թագավորն է, որի որդին էր Բագրատ Դ-ն:

14. Խոսքը Ռումանու Գ (1028-1034 թթ.) կայսեր մասին է:

15. Ապուտարը (Արու-լ-Ասվար Դվինի ամիրան էր Շարդադյանների տոհմից, որը տիրացել էր Դվինին դեռ 1020-ական թվականներին: Մահացել է 1067 թվականին:

16. Կյուրիկյան թագավոր Դավիթ Անհողինն է (989-1048 թթ.), որը կառուցել է Լոռե բերդը:

17. Խոսքը արխազաց թագավոր Բագրատ Դ-ի (1027-1072 թթ.) մասին է:

18. Խոսքը Անիի թագավոր Հովհաննես-Սմբատի (1020-1042 թթ.) մասին է:

19. Կապուտոռ բերդը գտնվում էր Բասեն գավառում:

20. Հատ Ս. Երեմյանի՝ նա Լիպարիտ Օրբելյանը չէ: Այս զորավարը ծագում է Արդվեթի և Թրիալեթի տեր Բաղուաշի Լիպա-

բիտյան ֆեոդալական տոհմից (տե՛ս Լաստիվերցի ծանոթ. 29): Հստ Հ. Բարթիկյանի՝ Լիպարիտը վրացաղավան հայ է, քանի որ «վրացի ազգաւ» դարձվածքը նկատի ունի ոչ թե նրա ազգային պատկանելիությունը, այլ դավանանքը (տե՛ս ծանոթ. 177):

21. Խոսքը Ալի Արալանի մասին է, որը Տուղրիլի մահից հետո՝ 1063 թ., հաջորդեց նրան:

22. Այսինքն՝ Հայոց Արևելից կողմանքից (Աղվանքից), ուրիշխում էր Լոռեկի հայոց թագավոր Կյորիկե Ա-ն (1048-1089 թթ.):

23. Սա Զավախք զավառն է՝ Գուգարքի զավառներից մեկը:

24. Այսինքն՝ Միքայել Է Դուկաս (1071-1078 թթ.) կայսեր:

25. Խոսքը Նիկեփոր Գ Բոտանիատեսի (1078-1081 թթ.) մասին է:

26. Վրաց Բագրատունիների արքայատոհմից վրաց թագավոր Դավիթ Դ Շինարարն է (1089-1125 թթ.):

27. Գանձակի սուլթան Մելեքի անունը տալիս է Իբն ալ-Աթիք՝ կոչելով նրան Տողրուլ: «Մելիք» հենց նշանակում է «թագավոր»:

28. Վրաց թագավոր Դավիթ Շինարարի բանակում կովող այս «Փրանկները», Ս. Երեմյանի կարծիքով, «վռանգներն են», այսինքն՝ վայրագները:

29. Ուռհայեցու տեղեկությամբ դա հայոց 572 թվականն է (1123 թ. փետրվարի 19 - 1124 թ. փետրվարի 18):

30. Սա ներկայիս Գորի քաղաքն է:

31. Հստ Ուռհայեցու՝ դա հայոց 573 թվականն էր (1124 թ. փետրվարի 19 - 1125 թ. փետրվարի 18):

32. Խոսքը հայոց 574 թվականի (1125 թ. փետրվարի 18 - 1126 թ. փետրվարի 17) մասին է:

33. Անձիտը Մեծ Հայքի Ծոփաց աշխարհի զավառներից էր: Այստեղ էին գտնվում Հոռե և Անձիտ բերդերը, Ծովք լիճը:

34. Դեմետրէ Ա-ն թագավորել է 1125-1156 թվականներին:
35. Խոսքը հայոց 577 թվականի (1128 թ. փետրվարի 18 - 1129 թ. փետրվարի 17) մասին է:
36. Խոսքը 1160 թվականի մասին է:
37. Միքանը (նաև Սուրման F) իշխել է 1128-1185 թվականներին: Նա ստացավ Շահի Արմեն տիտղոսը: Նրա իշխանանիստ քաղաքն էր Մանազկերտը:
38. Գեորգի Գ-ն (1156-1184 թթ.) Դավիթ Դ Շինարարի թոռն էր՝ Դեմետրէ Ա-ի որդին:
39. Օլյախը ներկայիս Օլժին է:
40. Շահի Արմենը անուն չէ, այլ տիտղոս:
41. Դա հայոց 611 թվականն էր (1162 թ. փետրվարի 9 - 1163 թ. փետրվարի 8):

ՄԱՍՈՒԷԼ ԱՆԵՑԻ, ՀԱԻԱՔՍՈՒՌՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՅ՝

Եւ որդիք Գամերա՝ Ասքանազ, եւ ի նմանէ Սարմատը. եւ Ծիփաթ, եւ ի նմանէ Սորոմատը. եւ Թորգոն, եւ ի նմանէ Հայք: Եւ որդիք Յաւանա՝ Եղիսա, եւ ի նմանէ Սիկիլացիք. եւ Թարսիս, եւ ի նմանէ Վիրք եւ Տիլրենացիք...

(Սամ. Անեցի, էջ 34)

Կացուցանէ (1) եւ պահապանս արքունի զիին զարմից թագաւորացն, որ բուն ոստանն անուանի, որպէս եւ Վիրք այժմ Սեփեծուլն կոչեն:

(Սամ. Անեցի, էջ 60)

Եւ Գուշարայ, որ յորդուցն Շարայի, Ժառանգեցուցանէ զԿանգարս, զՋաւախս, զտերութիւնն Տաշրայ (2) եւ Աշոցաց (3): Եւ ընդդէմ Կովկասու կարգէ զիզաւր ազգն ի զաւակէ Սիհրդատայ Դարեկի նախարարի, եւ կոչէ բդեաշխ Գարզարացւց (4):

(Սամ. Անեցի, էջ 60)

Աստ է զրեալ զՎրաց թաժանումն – ՇԾԷ. (Ի Քրիստոսէ), ԻԵ. (Կոստանդն., Յուստիանոս), ԻԲ. (Պարսից Խոսրով), ԺԴ. (Հայոց մարզպան Մժեծ), Է. (Կաթողիկոս Տէր Մովսէս), Դ. (Թուսկան Հայոց) (5):

(Սամ. Անեցի, էջ 94)

⁷ Սամվել Անեցու տեղեկությունների գրաքար բնօրինակը տե՛ս Սամուելի քահանայի Անեցոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Եր., 2011:

Աստանաւր ի բաց կացին Վիրք ի միաբանութենէ Հայոց հաւանեալը աղանդոյն Քաղկեդոնի ի ձեռն Կիրիոնի Վրաց առաջնորդի առ որ բազում թուղթս մաղթանաց Հայրապետն Հայոց Արքահամ (6): – ՈՒԷ. (Ի Քրիստոսէ), ԺԲ. (Կոստանդն. Փոկաս), ԼԲ. (Պարսից Խոսրով), ԺԵ. (Հայոց Սարգսանք Տաճիկը), ԻԴ. (Կաթ. Տէր Յոհան), ՀԴ. (Թուական) (7):

(Սամ. Անեցի, էջ 97)

Ցետ մահուան Տեառն Անանիայի կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի Տէր Վահան ի Բաղաց (8): Սա դաշնադիր եղեւ ընդ Վիրս միաբան դաւանութեամբ, վասն որոյ ժողովեալ յամուրն Անի, ի թագաւորութեանն Աշոտոյ (9) որդոյ Արքասայ, բազում եպիսկոպոսաց եւ խաչակրան Վանականաց, որք ծանուցեալ հաւաստեալ զիերձուած կորստական մտաց նորա, զի ետ բերել պատկերս վասն նորոգման աղանդոյն Քաղկեդոնի եւ որոշեալ զնա՝ հալածական արարին. եւ միաբանեալ նստուցանեն յաթոռ սրբոյ Լուսաւորչին զՄտեփանոս, հարազատ արեան սրբոյ առնն Աստուծոյ Մաշդոցի, որ ի Սեւան: Եւ էր սա հետեւեալ վարուց նորա, որ եկաց յաթոռ հայրապետութեանն ամս Բ.: Իսկ վասն զի Վահանիկն կենդանի էր ի Վասպուրական (10) հաւանեցոյց զոմանս ի պարզամտաց սուտ զնմանէ կարծել զհամբաւ հերձուածոյն: Եւ վասն այնորիկ զմիջոց Հայաստան աշխարհիս լցին նզովիւք: Իսկ ի հրամանէ Աստուծոյ ի միում ամի մեռան էրկորին եւ ամ մի անվերակացու լեալ: Ապա հրամանաւ թագաւորին Աշոտոյ, որ Ողորմածն կոչիւր, ժողով լեալ ընտրելոց արանց եւ եպիսկոպոսաց սրբոց կացուցանեն յաստիճան հայրապետական զերանելի այրն Աստուծոյ զուէր Խաչիկ՝ զիարազատ տեառն Անանիայի (11) մեծի հայրապետին, որ բանիւ վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց սրբասէր եւ քրիստոսասէր զոլով: –ԶԿԹ. (Ի

Քրիստոսէ), Ե. (Կոստանդն. Նիկիփոր), ԺԵ. (Հայոց թագաւոր Աշոտ), Ա. (Կաթողիկոս Տէր Վահան), ՆԺԶ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 119)

Դաւիթ թագաւորն (12) Վրաց եհար զԵլիսազի եւ զՄլքն: – ՈՃԻԲ. (Ի Քրիստոսէ), Բ. (Կոստանդն. Կալաժանն), Է. (Կաթ. Տէր Գրիգորիս ամս ԾԳ.), ՇԿԹ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 130)

Դաւիթ թագաւորն եառ զՏիկիս: – ՈՃԻԴ. (Ի Քրիստոսէ), Դ. (Կոստանդն. Կալաժանն), Թ. (Կաթ. Տէր Գրիգորիս, ամս ԾԳ.), ՇՀԱ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 130)

Ի բազում հինահարութեանց եւ ի սպառ սպուռ ջնջելոյ ասպատակ արձակել յաշխարհ մեր, երբեմն ի Վրաց, երբեմն ի Սկիւթականաց, անհնարին նեղութեամբ տարակուսեալ, տառապեալ բնավիշք քաղաքիս Անոյ եւ Շիրակ գաւառի (13) խորհեցան ելս գտանել մըրրկին՝ ձեռս տալոյ յարքայն Վրաց ի Դաւիթ, նենզեցին ամիրային Ապլսուարայ որդույ Մանուչի, որ տիրէր քաղաքին յետ հաւրն մահու առնլով զթագաւորն ի ներքս՝ բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն եղեւ վնաս արեան եւ ոչ միոյ շնչոյ: Բայց կալեալ զԱպլսուար որդուվքն, ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց. ի մահարար տեղուց բնակեցուցեալ զնոսա, ուր երկուս յորդուցն հանդերձ հարբն վճարեցին զկենցաղս: Նոյնպես եւ քաջն Դաւիթ մեռանի անդին եւ թագաւորէ աշխարհին Վրաց որդի նորա Դեմետրէ (14) գովեալ յամենայն մանկական արութիւնս: Խսկ Փատլրւն՝ անդրանիկն Ապլսուարայ, զնացեալ յառաջազոյն ամամ առ ամիրապետն ի Խորասան, յոր-

Ժամ լուաւ զայսպիսի լուր զհաւրէն եւ գտեղեացս, փութացաւ զալ յերկիրս մեր, եւ շուրջ քաղաքաս եւ զիշխողս իւրաքանչիւր տեղեաց ի բանի արարեալ՝ պաշարեաց զսա: Վասն որոյեւ զամն զայն ողջոյն աւր ըստ աւրէ սաստկացան հարուած սովոյն: Եւ բնակիչք սորա ի կողմունս կողմունս ելս առնելով զիշերի, յորց վերայ անկեալ դարանեալքն զարս կոտորէին, որոց արեամբ եւ ոսկերաւք ծածկեցաւ երկիրս, եւ զկանայս եւ զմանկունս վաճառակուր առնէին եւ թէպէտ եւ տեղակալք զային յաշխարհէն Վրաց, երբեք երբեք արք ընտիրք, որպէս եւ անուանին քաջազաւտիս Իւանէ՝ որոյ Ապուլեֆի, որ բազում արութիւնս ցուցեալ՝ զասպատակս կոտորէր: Եւ ի զաւրաժողով լինել ի վերայ քաղաքիս Փատլնոյ բազում հեծելովք, առ ոչինչ համարեալ զեկեալս ի պարտութիւն. այլ սակաւ արեամբք պատճառ եղեւ փրկութեան քաղաքիս մարտակցութեամբ բնակչաց սորա եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, առնացի ստացեալ սիրտ, հալածականս առներ քարամբք զմարտուցեալսն յելանել ընդ պատուարն, առ ոչինչ համարեալ զիսցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուատ. եւ էր անուն նորա ըստ արժանի արագութեան նորա Այծեամն կոչեցեալ:

Սակայն վասն զի թագաւորութիւնն Վրաց չէր հաստատեալ բովանդակ, եւ սովն եւ մարդախանձութիւնն յոլովացաւ, ապա հարկեցան տալ անդրէն առ Փատլուն զսա, դաշինս երդմանց պահանջեալ ի նմանէ յառնուլ վրէժս ի նենզչաց հաւր նորա եւ եղբարց, զոր թէպէտ եւ յանձն առնոյր, այլ յետ զպարապ առնոյ, իւիք իւիք հնարիս առ վրէժս հասուցեալ նոցա զհատուցումն, յորոյ իշխանակալութեանն թէպէտ եւ խաղաղանայր զաւաս ի սովորական հինից, այլ յաղազ վերագրեալ նեղութեանց եւ վասն հարկապահանց յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն եւ տառապանք անհնարինք, որ յառաջազոյն

Ժամանակամ ունէր զաշխարհս Հայոց: Եւ աստանաւր յաւելաւ յաճախապէս մի զիետ միոյ՝ մինչեւ յատուրս յայսովիկ յորում եմքս: Բայց սրբազն հայրապէտն եւ առաջնորդն հաւատոյ տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար վասն իւր սեպհական աթոռոյս՝ զալ այսրէն նորա հաւժար կամակցութեամբ, յորժամ լրուաւ զիամբաւս զայս, առաւել զայրացաւ տրտմազին ցասմամբ առ գործողս իրին: Եւ այս ամենայն լինի յետո ընդդէմ եւ անուղայ իմացուածք ի յառաւելութենէ մեղաց, զի իբրեւ տուն դառնացողաց արարաք զանձինս մեր եւ իբրեւ զմոռացաւքըն Յակովս յաւելաք մեղս յանաւրէնութիւնս, կաշառաւք մարզարեանամբ, եւ պակասեցան յունայնութեան աւուրք մեր, զի թողաք զայն որ ծնաւ զմեզ, եւ նա ետես, սրտմտեցաւ, նախանձեցաւ եւ դարձոյց զերեսս իւր սպառնացեալ զկծեցուցանել զմեզ անպիտան եւ անմիտ ազգաւ, եւ արբուցանել զբաժակ բարկութեան, եւ պահել զմրուրն, դարձեալ արբուցանել, եթէ մնայցեմք ի նմին անզղութեան: – ՌՃՇԶ. (Ի Քրիստոսէ), Զ. (Կոստանդն. Կալաժանն), ԺԱ. (Կաթ. Տէր Գրիգորիս ամս ԾԳ.), ՇՀԳ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 131-132)

Հարին զՄալդուին Վիրք ի դուռնն Անւոյ եւ կալան զինքն եւս: – ՌՃԾԶ. (Ի Քրիստոսէ), ԻԳ. (Կոստանդն. Մանիլ), ԽԱ. (Կաթ. Տէր Գրիգորիս), ՈԳ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 133)

Վախճանի Դեմետրէ Վրաց թագաւոր, եւ թագաւորէ որդի նորա Դաւիթ. եւ յետ Բ. ամի եւ նա վախճանեալ, առնու զիշխանութիւնն եղբայր նորին Գտրզի (15):- ՌՃԾԸ. (Ի Քրիստոսէ), ԻԵ. (Կոստանդն. Մանիլ), ԽԳ. (Կաթ. Տէր Գրիգորիս), ՈԵ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 133)

Յայս ամս թագաւորն Վրաց Գլուխի առ զԱնի յունիս ի ԺԳ.: Եւ ապա յաւզոստոս ամսամտին կոտորէ զՇահի Արմէնն եւթն հազարաւ ԶՈ. եւ այսորիկ ականատես եղեաք մեք: Ի ԳՈ. զրով այն էր, որ գերեաց, թող զանկեալ դիակունսն, որ ծածկէր զանդաստանս մեք:

Ապա ի միւս ամին յաւզոստոս Ա. առ զԴւին քաղաք եւ ԿՈ. գերեաց եւ քանդեաց զսուտ աղաւթանոցս նոցա: – ՌՃԿԳ. (Ի Քրիստոսէ), Լ. (Կոստանդն. Մանիլ), ԽԸ. (Կաթ. Տէր Գրիգորիս), ՈԺ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 134)

Ապա զաւրաժողով լեալ սուլտանն Խորասանա, եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրեյցոյց զբնակիչք սորա, յետ Է. աւուր զնաց զաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գլուխի եւ զաւար նորա էառ եւ դարձաւ ի տեղի իւր: – ՌՃԿԵ. (Ի Քրիստոսէ), ԼԲ. (Կոստանդն. Մանիլ), Ծ. (Կաթ. Տէր Գրիգորիս), ՈԺԲ. (Թուական):

(Սամ. Անեցի, Էջ 134)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը վերաբերում է հայոց Վաղարշակ թագավորի բարենորդչական գործունեությանը:

2. Կանգարքը, Զավախքը և Տաշիրը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի զավառներից են:

3. Աշոցքը, ըստ «Աշխարհացույցի» համառոտ խմբագրության, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի հյուսիսային զավառներից է և սահմանակից է Զավախքին:

4. Մովսես Խորենացուց վերցրած այս տեղեկությունը մեկ անգամ ևս վկայում է, որ հայոց Վաղարշակ թագավորի օրոք Մեծ Հայքի հյուսիսային սահմանը հասել է մինչև Կովկաս՝ այդ ամբողջ տարածքն ընդգրկելով Գուգարաց բդեշխության մեջ: Տեղեկության մեջ հիշատակվող «Գարգարացոց» տերմինը, կարծում ենք, առաջացել է «Գուգարացոց» բարից՝ որպես արտազրությունների հետևանք, մանավանդ, որ այլ ձեռագրերում տերմինը հիշատակվում է «զագարացոց» և «զագարացոց» գրաձևերով:

5. Այստեղից Սամվել Անեցու շարադրանքը տրված է աղյուսակով, որը մենք ներկայացնում ենք բացված տեսքով: Մեծատառերով պատկերված են թվերը, որոնք տարիներ են նշանակում, իսկ փակագծերում բացատրվում են, թե ինչին կամ ում է առնչվում այդ թիվը:

6. Խոսքը Աբրահամ Ա. Աղբարանեցի հայոց կաթողիկոսի (607-613 թթ.) մասին է, որի օրոք՝ 608 թ., վրաց եկեղեցին Կյուրոնի գլխավորությամբ դուրս եկավ Հայոց միաբանությունից:

7. «Կաթ.» նշանակում է կաթողիկոս, իսկ «Թուական» ասելով նկատի ունի Հայոց թվականը:

8. Բաղը Մեծ Հայքի Սյունյաց աշխարհի հարավային գավառներից էր, հյուսիսից սահմանակից էր Հարանդ, հարավից՝ Կովկասն, արևմուտքից՝ Զորք, իսկ արևելքից՝ Արցախ աշխարհի Սիսականի Կոտակ գավառներին:

9. Խոսքը Աբաս թագավորի (929-953 թթ.) հաջորդի՝ հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածի (953-977 թթ.) մասին է:

10. Վասպուրականը Մեծ Հայքի 15 աշխարհներից մեկն էր: Պատմական այս ժամանակահատվածում Վասպուրականն առանձին թագավորություն էր (908-1021 թթ.), որն ավելի մեծ տարածք էր ընդգրկում, քան բուն Վասպուրական աշխարհը:

11. Խոսքը Անանիա Ա Մոկացի հայոց կաթողիկոսի մասին է, որը հայրապետել է 946-968 թվականներին:

12. Խոսքը վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125 թթ.) թագավորի մասին է:

13. Շիրակը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի զավառներից էր: Այն զբաղեցնում էր Ախուրյան գետի վերին և միջին հոսանքի ավազանը: Պատմական Շիրակ զավարի քաղաքներից են Շիրակավանը, Երազզավորսը, Անին: Վերջինս 961-1045 թթ. Բագրատունիների թագավորության մայրաքաղաքն էր:

14. Խոսքը վրաց Դեմետրե Ա (1125-1156 թթ.) թագավորի մասին է:

15. Խոսքը վրաց Գեորգի Գ (1156-1184 թթ.) թագավորի մասին է:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, ՀԱՆԴԻՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՎԵՊ ՄԱՏՅԱՆ⁸

Իսկ սա (1) զորք ուղարկեց և Մուշեղ Մամիկոնյանին (2), սպանեց Վահրամին և դրա փոխարեն Խոսրովից (3) ստացավ Հայոց երկիրը մինչև Կողովիտ (4) և մինչև Հուրազդան (5) գետը, մինչև Վրաց երկիրը, մինչև Տիֆլիս (6):

(Մխիթ. Անեցի, Ճառ 17)⁹

Քանզի մեռած էր Անիի (7) Մանուչե ամիրան (8), և նրա որդի Ապուլուարն էր տիրում անարի և կնամարդի մի մարդ, որ կամեցավ Կարսի (9) ամիրային վաճառել Անին 60000 դահեկանի: Եվ Խլաթից (10) բերել տվեց խիստ ծանր ու բարձր մի նալ և դրեց կաթուղիկեի գլխին, որի համար զայրացած քրիստոնյաները կանչում են Դավթին (11) և տալիս են Անի քաղաքը, զցում են նալը և կանգնեցնում խաչը կաթուղիկեի գլխին, այն խաչը, որ 60 տարի գցել էին պարսիկները, և ժամհար կարգեցին խաչի առաջ, ուրախ եղան:

Եվ թե ինչպես գրավվեց Անին այլազգիներից, այժմ կզրենք բարերար Աստծո շնորհով: Մինչև զորացավ վրաց թագավոր Դեմետրի որդի Դավթի որդին Հայոց 610 թվին, որն ամուան օրերին եկավ թագավորաբնակ Անի քաղաքի վրա: Նաև աստվածաբնակ եմ ասում և չեմ ամաչում: Եվ մի օր պաշարելով քաղաքը՝ մյուս օրը գրավեց բռնությամբ, այնտեղ կոտորելով 1000 մարդ քրիստոնյա և այլազգի՝ այնտեղ 2000 մարդ պահապաններ դրեց և դար-

⁸ Մխիթար Անեցու տեղեկությունների աշխարհաբար տարբերակը տե՛ս Մխիթար Անեցի, Հանդիսարանների աշխարհավեպ մատյան, թարգմ. Վ. Ա. Եղիազարյանի, Եր., 2001:

⁹ Մխիթար Անեցու տեղեկությունների գրաբար տարբերակը տե՛ս Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավեպ հանդիսարանաց, Եր., 1983:

ձավ իր տունն ու թագավորությունը: Իսկ Շահի Արմենը՝ Խլաթի տերը, երբ լսեց, եկավ ու պաշարեց Անին 80000 հեծյալով: Եվ Վրաց Գորգունէ (12) թագավորին լուր տվեցին, որը եկավ նրանց վրա և կոտորեց նրանց, իսկ մնացածներին փախստական արավ: Նրանցից մեռավ 7000 մարդ, և նրանց զլիսավորներից առան 2700 գերիներ, ձիեր, ջորիներ, զենք ու զրահ, ասպար և աղեղ, անհամար ոսկի և արծաթ, նաև ոչխարներ և պախրաներ: Եվ լցվեց Անի քաղաքը լիուլի ավարով, որն սկզբում կորցրել էր Վրաց և այլոց հարձակումներից, այժմ լցվեց հարստությամբ, այնպէս որ օրեր շարունակ քաղաքից դուրս էին գնում և շրջելով դաշտով՝ գտնում էին զրահներ, թրեր և այլ իրեր և հագուրդ էին առնում: Եվ թագավորը 40000 ոսկի տվեց Անիի քաղաքացիներին, որոնք պարսիկներից ազատեցին գերյալներին:

(Միսիթ. Անեցի, Հավելվա)

Ապա մեծ նախարարներից մեկը Հասան անունով, իր կողմը դարձրեց տասնհինգ մարդկանց, նաև Վրաց թագավորին (13)՝ սպանելու Սմբատ թագավորին (14), իսկ երբ գաղտագործ ուղարկում են Սմբատ թագավորին սպանելու, հայտնի են դառնում իրողությունները: Եվ իսկույն Ատրներսեհը և Հասանը բազում զորքով հասնում են Անի և ինչ որ կար արքայի պահեստում, բոլորն ավար առնելով, գնում են: իսկ Սմբատը, առնելով զորքերը, դիմում է նրանց վրա, և արքան թույլ չի տալիս մեղանչել ումանց, այլ հակառակն է պահանջում, որ Ատրներսեհն ինքը գա արքայի մոտ և մյուս վնասարարներին ևս բռնելով՝ նրանց աշքերը կուրացնում է և Ատրներսեհի որդուն պատանդ է տանում իր հետ և Ատրներսեհին հաշտ համբույրով արձակում է, և այսպէս Աստծո նախախնամությամբ հաստատում է Սմբատն իր թագավորությունը...

...Բայ Սմբատի մյուս որդի Աշոտը (15) բազում ընթացություններ և քաջություններ էր կատարում և պահում էր իր հոր տերության բոլոր ամրոցները Գուրգեն իշխանի ձեռնատվությամբ, նաև Վրաց թագավորի (16) և Գագիկ Վանեցի (17) թագավորի:

(Միսիք. Անեցի, Հավելված)

Հունաց Լևոն թագավորը (18) հույժ պատվում է Սմբատին (19), նաև Տաճկաց իշխանը, Բաբելոնի խալիֆան, բայց շփոթ աղմուկ է ընկնում Սմբատ թագավորի և Եգիպտոսի թագավորի մեջ Կոստանդնի (20) համար և հետո Ներսեհ իշխանի միջնորդությամբ հաշտվում են: Կոստանդնին բռնելուց և կապելուց հետո Սմբատ թագավորը Կոստանդնին թագակապելով ուղարկում է իր աշխարհը, բայց Վրաց թագավորը (21) հավետ չարացավ Կոստանդնի արձակման պատճառով:

(Միսիք. Անեցի, Հավելված)

Զաքարիա անունով մի մարդ, Մարաց աշխարհի (22) իշխան կարգված, վշտանալով նրանցից, գտնելով դիպուկ ժամ, ելում է աշխարհից տանով և որդիներով, ծառաներով և աղախիններով, ամրող ինչքով բաժանվելով Բաբելական ցեղից, ընկնում է Պարսից տերության մեջ և այնտեղից Վրաց երկիրը և պատիվ գտնելով Վրաց թագավորից, հույժ մեծանում է: Եվ նրա հետ նրա որդի Վահրամը, և Վահրամից հետո նրա որդի մեծազոր իշխան Սարգիսը սրան ունեցավ Բ (2) որդի՝ առաջինը Զաքարե և երկրորդը Իվանե: Եվ հույժ սիրվեցին Վրաց Թամարա թագուհուց՝ Դեմետրի որդի քաջ Գևորգի դուստրից, որը և Իվանեին դարձրեց փոխարքան (23), իսկ Զաքարեին Հայոց և Վրաց զորավար (24): Որը շատ քաղաքներ առավ տաճիկներից և պարսիկներից և տիրեց

նրանց մինչև Բաղեշ (25) և Արտավիլ (26), և մնաց Վրաց իշխանության ներքո: Նաև Կարնո (27) սուլթանին հարկի տակ դրեց և որ աշխարհին որ տիրեց, լցրեց այն Քրիստոսի Եկեղեցիներով, նաև Արագածի լանջին Օհանավանքը (28), Հառիճի վանքը (29), Տեղեր վանքը, Յուշի վանքը (30), Սաղմոսավանքը և այլ շատ Եկեղեցիներ գյուղերում: Եվ վախճանվելով բարի մահով՝ թաղվեց Սանահնում (31)և նրա տեղը ժառանգեց նրա որդի Շահնշահը...

...Այս օրերում զորացավ նետողաց ազգը և տիրեց Հայոց և Վրաց, և քրիստոնյաների իշխանությունը թուլացավ: Իսկ Վրաց թագավորությունը մի կտոշ ձեռքում էր, որը կոչվում էր Ըուսպութան (32)` Թամարի (33) դուստրը, որին վերևում հիշեցինք, Լաշայի (34) եղբոր և Գորգուն (35) թագավորի թոռը: Նա հանձնում է աշխարհը Շահնշահին, և ինքը փախչում է Ավխազիա, և Շահնշահը հաճոյանում է նետողաց հանձարով և աստուծով և տիրում է մեր աշխարհին:

(Մխիթ. Անեցի, Հավելված)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսի (582-602 թթ.) մասին է, որը հայկական աղբյուրներում հայտնի է նաև Մորիկ անվամբ: Այստեղ հիշատակվում է 591 թ. պարսկա-բյուզանդական դաշնագրի մասին, որի համաձայն՝ Մորիկ կայսրը պետք է պարսից թագաժառանգ Խոսրովին օգներ պայքարելու ապստամբած Վահրամ Չուբինի դեմ և ժառանգելու Պարսից թագավորությունը, իսկ դրա փոխարեն Խոսրովը խոստանում էր տարածքային զիջումներ անել հօգուտ Բյուզանդիայի:

2. Մուշեղ Մամիկոնյանը Վահրամ Չուբինի դեմ պայքարում հայոց զորքի հրամանատարն էր, որին Վահրամը խնդրեց հեռու

մնալ իր դեմ պայքարից՝ խոստանալով վերականգնել հայոց թագավորությունը: Վահրամի նամակների և Մուշեղ Մամիկոնյանի պատասխանի շարադրանքը մանրամասն հիշատակվում է Սեբեռոսի «Պատմություն»-ում:

3. Պարսից արքա Խոսրով Բ Փարվեզն է, որը գահ բարձրացավ 591 թ. պարսկա-բյուզանդական դաշինքի արդյունքում և թագավորեց մինչև 628 թվականը:

4. Կողովիտը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից է: Տարածվում էր Այրարատյան լեռներից հարավ՝ ընդգրկելով Գայլատու լիճը: Ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, որի համար հայոց Արշակ Բ (350-368 թթ.) թագավորն այստեղ կառուցեց իր Արշակավան քաղաքը: Այստեղ էր գտնվում նաև Դարույնք անառիկ ամրոցը: Ռազմավարական կարևոր նշանակությունն էր պատճառը, որ Կողովիտով էր անցնում 591 թ. պարսկա-բյուզանդական սահմանագծի որոշակի հատվածը, եթե երկրորդ անգամ Մեծ Հայքը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:

5. Հուրագրանով էր անցնում պարսկա-բյուզանդական սահմանագծի մի հատվածը: Այս գետը ներկայիս Հրազդանն է, որը սկիզբ է առնում Սևանա լճից (Գեղամա ծով) և թափվում Արաքս (Երասխ) գետը:

6. 591 թ. համաձայնագրով Բյուզանդիայի և Պարսկաստանի սահմանագիծը բաժանում էր նաև Վիրքը:

7. Հայոց Բագրատունյաց արքայատոհմի մայրաքաղաք Անին է (961-1045 թթ.), որը գտնվում էր Շիրակ գավառում: Պատմական այս ժամանակահատվածում Անին գտնվում էր սելջուկների տիրապետության ներքո:

8. Շաղաղյանների տոհմից Մանուչե ամիրան Անիում իշխել է 1072 թվականից, եթե Մանուչեի պապ, Գանձակի ամիրա

Փատլունը գնեց Անին սելջուկների Ալփ-Արսլան սուլթանից և հանձնեց մանկահասակ Մանուչեհն, որն իշխեց այստեղ մինչև իր մահը՝ 1110 թվականը:

9. Կարսը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ գավառում, որը սահմանակից էր Շիրակին: Քաղաքը եղել է Կարսի թագավորության (963-1065 թթ.) մայրաքաղաքը:

10. Խլաթը քաղաք էր Վանա լճի հյուսիսարևմտյան ափին: Այն գտնվում էր Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Բզնունիք գավառում, իսկ այնուհետև Ենթարկվել է Վասպուրականի թագավորությանը (908-1021 թթ.), ապա՝ Շահարմենների պետությանը: Ներկայիս Ախլաթ բնակավայրն է Թուրքիայում:

11. Վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125 թթ.) թագավորն է:

12. Վրաց Գեորգի Գ (1156-1184 թթ.) թագավորն է:

13. Խոսքը վրաց Ատրներսեհ Դ (888-923 թթ.) իշխանի մասին է, որին հայոց Սմբատ Ա թագավորը (890-914 թթ.) ճանաչեց որպես վրաց թագավոր: Սմբատ Ա-ի և Ատրներսեհի միջև եղած հարաբերությունների մասին մանրամասն տեղեկացնում է Հովհաննես Դրասխանակերտցին:

14. Հայոց Սմբատ Ա (890-914 թթ.) թագավորն է:

15. Հայոց Աշոտ Բ Երկար (914-929 թթ.) թագավորն է: Այստեղ խոսքը Սմբատ թագավորի սպանվելուց հետո երկրում ստեղծված իրավիճակի մասին է:

16. Խոսքը վրաց Ատրներսեհ Դ (888-923 թթ.) թագավորի մասին է:

17. Վասպուրականի թագավոր Գաղիկ Ա Արծրունին է (908-943 թթ.):

18. Բյուզանդիայի Լուն Զ Իմաստուն (886-908 թթ.) կայսրն է:

19. Հայոց Սմբատ Ա թագավորն է:

20. Խոսքը Եգերի (աբիսազաց) Կոստանդին Գ (893-922 թթ.) թագավորի մասին է:
21. Խոսքը Վրաց թագավոր Ատրներսեհի մասին է:
22. Մարաց աշխարհը տեղադրվում է Ատրպատականից հարավ:
23. Բնագրում գրված է աթապակ, այսինքն՝ աթաբեկ:
24. Բնագրում գրված է սպասալար:
25. Բաղեցը գտնվում էր Վանա լճից 18 կմ հարավ-արևմուտք՝ Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Սալնաձոր գավառում: Ներկայիս Բիթլիս քաղաքն է Թուրքիայում:
26. Արտավիլը (Արտավետ) գտնվում էր Ատրպատականի հյուսիս-արևելքում: Ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության Արդարիլ վարչական միավորի կենտրոնն է:
27. Կարինը Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Կարին գավառի կենտրոնն էր: Կոչվել է նաև Թեոդոսուպոլիս: Ներկայիս Էրզրում քաղաքն է Թուրքիայում:
28. Օհանավանքը, Տեղեր վանքն ու Սաղմոսավանքը գտնվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օհանավան, Տեղեր և Սաղմոսավան գյուղերում:
29. Հառիճի վանքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի հարավում:
30. Յուշի վանքը չի պահպանվել: Կարծում ենք, որ այն պետք է կառուցված լիներ ներկայիս ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի գյուղում:
31. Սանահնի վանքը գտնվում է նույնանուն գյուղում, իսկ վերջինս ՀՀ Լոռու մարզի գյուղերից է և գտնվում է Ալավերդի քաղաքի մոտակայքում:
32. Վրաց Թամար թագուհու և Դավիթ Սոսլանի դուստր Ռուստակ Արքան (1223-1245 թթ.) թագուհին է:

33. Վրաց Թամար թագուհին թագավորել է 1184-1213 թվականներին:

34. Թամար թագուհու որդի և հաջորդ Գեորգի Դ Լաշա (1213-1223 թթ.) թագավորն է՝ Ռուսուղանի եղբայրը:

35. Խոսքը Թամար թագուհու հոր՝ վրաց Գեորգի Գ (1156-1184 թթ.) թագավորի մասին է:

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ¹⁰

Եվ Արծրունյաց տան պատմազիր Թովմա վարդապետը (1), Շապուհ Բագրատունին (2), Տեր Հովհաննես հայոց կաթողիկոսը (3), Աղվանից աշխարհի պատմազիր Մովսես Կաղանկատվացին (4), Ուրիհայի (5) Ուխտանես Եպիսկոպոսը, որ գրեց Կյուրիոնի (6) միջոցով հայերից վրացիների բաժանվելու մասին:¹¹

(Կիր. Գանձ., Նախաշալին)

Եվ [Գրիգորը] (7) կենդանության ժամանակ իր սուրբ որդի Արիստակեսին (8) ձեռնադրեց հայոց, վրաց ու աղվանից Եպիսկոպոսապետ, իսկ ինքն անցավ ճգնակեցության, որպեսզի ամեն բանով փառավորվի...

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

Իսկ երբ սուրբ վարդապետ Մեսրոպը (9) Հայաստանը լիացրեց ուսումով ու թարգմանություններով, ամեն բան հանձնեց Սահակ կաթողիկոսին (10), իսկ ինքը գնաց Աղվանք ու նրանց համար նշանագրեր ստեղծեց, ապա ուսուցիչներ թողնելով նրանց համար՝ գնաց Վրաստան: Եվ ըստ վերուստ նրան տրված շնորհքի ստեղծեց նաև նրանց համար նշանագրեր: Եվ այդպես ամբողջ երկիրը ուրախացրեց անսահման ինդությամբ:

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

¹⁰ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների աշխարհաբար տարբերակը տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982:

¹¹ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների գրաբար բնօրինակը տե՛ս Կիրակոս Վարդապետի Գանձակեցույց համառոտ պատմություն, Վենետիկ, 1865:

Մարզպան ՄԺԵԺից (11) հետո պարսիկները հայերին տիրում են երեսունվեց տարի: Այս ժամանակներում վախճանվում է վրաց եպիսկոպոսը. եկան Տեր Սովուեսի (12) մոտ, որպեսզի նրանց եպիսկոպոս տա: Նա ձեռնադրեց իր եկեղեցու փակակալ Կյուրիխն (13) անունով մեկին և հանձնարարեց նրանց՝ վստահած լինելով նրան, թե կպահպանի սերն ու միաբանությունը սուրբ Գրիգորի աթոռի նկատմամբ, որովհետև մինչև այդ ժամանակ վրացիները հայերից էին ընդունում ձեռնադրությունը:

Սովուեսի վախճանվելուց հետո այս Կյուրիխոնը պառակտվեց Քրիստոսի ուղղափառ եկեղեցու դավանությունից, որովհետև մանկությունից խմորված էր այդ աղանդով՝ գտնված լինելով Բյուզանդիայում, և շարությունը ծածուկ էր պահում իր մեջ, ինչպես կրակը, որ թաքնված է լինում հարդի տակ, բայց չէր հանդգնում երևան զալ Սովուեսի կենդանության օրոք:

Տեր Սովուեսը երեսուն տարի կառավարելով հայրապետությունը՝ վախճանվում է, իսկ աթոռի տեղապահությունը տալիս է Վրթանես Քերթողին (14): Երբ Ցուրտավի (15) Սովուես եպիսկոպոսը տեսնում է Կյուրիխնի շեղումը, հայտնում է Վրթանեսին, որպեսզի թերևս կարողանա Կյուրիխնի մոլորված մտքերը փոխել, որին շատ անգամ աղաշանքներով գրեց՝ հեռու մնալ անմիտ աղանդից: Իսկ նա ոչ միայն չհամաձայնվեց գրածներին, այլև հալածեց Սովուես եպիսկոպոսին: Երբ Սովուեսից հետո հայոց կաթողիկոսությունը ստանձնեց տեր Աբրահամը (16), նույնպես և նա երկու-երեք անգամ թուղթ գրեց՝ հիշեցնելով նրան այն թյուրությունը: Իսկ Կյուրիխոնը պատճառաբանում էր, թե այլ կերպ չի մտածում, քան նրանք են խորհում, և Սովուեսին իր գրպարտիչն էր համարում: Իսկ երբ ասվեց, թե քննության ժողով պետք է լինի, որ այդ մասին իմանան, Կյուրիխոնը բացարձակ ընդունեց Քաղկեդոնի դավանությունը:

Երբ Աբրահամը տեսավ, թե ոչ մի օգուտ չեղավ, այլ ավելի անամորացավ, այդ ժամանակ շրջաբերական բուղթ գրեց իր վիճակներին, որպեսզի վրացիների հետ բոլորովին շհաղորդակցվէն ո՛չ եկեղեցով, ո՛չ ուխտով, կա՛մ ամուսնությամբ, կա՛մ թե որևէ հոգևոր գործով, բացի որևէ վաճառքից, ինչպես հեթանոսների հետ, որպեսզի մարմնավոր ծանոթությամբ հոգևոր մեղքի մեջ չթաղվեն:

Եվ այնուհետև վերացավ վրաց եպիսկոպոսների ձեռնադրությունը, որ կատարվում էր հայերի միջոցով, որովհետև նրանք սկսեցին ենթարկվել հովներին:

Այս ամենը հեշտությամբ քեզ կսովորեցնի Ուխտանես (17) եպիսկոպոսը, որովհետև նա բոլորը կատարելապես նկարագրել է՝ թղթերն ու պատասխանները, Պետրոս եպիսկոպոսի համարձակախոսությունը, որ տեր Աբրահամի պատգամավորն էր՝ հղված Կյուրիփոնի մոտ: Վրացիները իր համարձակության համար նրան (Պետրոսին) Գայլ կոչեցին:

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

Այս խաքանին (18) ծաղրեցին Տիփիս քաղաքի բնակիչները. առնելով մի դդում՝ վրան նկարեցին խաքանի կույր պատկերը, իբր թե նրանց աչքերը նեղ են ու փոքր. դդումը դրեցին նրանց դիմաց պարսպի վրա ու սկսեցին նետաձգությունը: Իսկ նա այս տեսնելով՝ խիստ բարկացավ, բայց որովհետև ձմեռ էր, փոխիհատուցել չկարողացավ: Բայց երբ գարունը եկավ, պաշարեց ու գրավեց քաղաքը, հրամայեց կոտորել տղամարդկանց, կանանց ու մանուկներին. ավերեց քաղաքը, խլեց նրանց ինչքը, գնաց իր քաղաքը:

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

Տեր Անանիայի (19) մահից հետո նրա աթոռը մի տարի նստեց տեր Վահանը՝ Բաղաց (20) աշխարհից: Սա Վրաստանի հետ միասնական հավատի դաշինք կնքեց: Այդ պատճառով Արասի որդի Աշոտի (21) թագավորության ժամանակ Անի ամրոցում հավաքվեցին շատ եպիսկոպոսներ ու խտակրոն վանականներ, որոնք հավաստի կերպով ձանաշել էին նրա մտքի կորստաքեր հերձվածը, որովհետև նա պատկերներ բերել տվեց Քաղկեդոնի աղանդի վերականգնման համար: Եվ նրան հեռացնելով հալածական դարձրին:

(Կիր. Գանձ., Գլ. II)

Երբ Դերենիկի որդու Դավթի որդի Բագրատունյաց տոհմի Կյուրիկէ արքան (22), որ հիմնադրեց Հաղպատ ու Սանահին (23) հոչակավոր վանքերը, տեսավ, թէ տեր Գրիգորիսը թողեց իր աթոռը ու գնաց Հռոմ, իր մոտ կանչեց Աղվանքի կաթողիկոս տեր Հովսեփին ու հայոց կաթողիկոս ձեռնադրել տվեց տեր Բարսեղին: Իսկ Կյուրիկէի պալատական քահանա ուն Սարգսի ձեռնադրում են Հաղպատի եպիսկոպոս: Դրանից հետո այն դարձավ եպիսկոպոսական աթոռանիստը: Սարգսից հետո եպիսկոպոս եղավ Գևորգը, սրանից հետո՝ Բարսեղը: Սա տեսքով գեղեցիկ մարդ էր: Վրաց թագուհի Թամարը, սրան տեսնելով, նրա վայելուց գեղեցկության համար չափազանց մեծարեց նրան, մանավանդ որ նրա եղբայրներն էլ արքունի տան վերակացուներ էին:

Բարսեղից հետո եպիսկոպոս եղավ սուրբ Գրիգորիսը: Սա Զաքարէ ու Իվանէ իշխանների ազգականն էր, և մեր օրերում եղավ: Սրանից հետո [եպիսկոպոս դարձավ] Հովհաննեսը՝ Խաչենի (24) իշխանների ազգականն էր և մի հեզ ու առաքինի մարդ: Սա Հաղպատի կաթողիկէի դրան փոքրիկ գավիթը քանդեց և կա-

ոռուցեց մի մեծ ու գեղեցիկ շինվածք, որ տեսնողներին հիացմունքից ապշեցնում է:

Սրանից հետո [եպիսկոպոս է դառնում] Զաքարէ և Իվանէ իշխանների քեռորդի ու առաջին Հովհաննեսի եղբորորդի մյուս Հովհաննեսը: Սա շինեց շատ ամուր պարիսպներով մի բերդ Հաղպատի և Սանահնի միջև: Այդ պատճառով երկու խոշոր վանքերի միջև զժողություն առաջացավ, որպես թե Սանահնի հողից է վերցված: Եվ Զաքարէի որդի Շահնշահ իշխանը վրեժինդիր եղավ Սանահնի համար, որովհետև իր հայրն այնտեղ էր թաղված, և դա իրենց սեփականությունն էին համարում, քանի որ Հաղպատը վրաց թագավորների կողմից այն ժամանակ վիճարկվում էր: Երբ Հովհաննես եպիսկոպոսը մեռավ, թաթարների հրամանով բերդի պարիսպը քանդեցին:

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

Սրան (25) շատ էր սիրում Դեմետրիոսի հայրը՝ Դավթի ու Գեորգեոսի պապ, վրաց Դավիթ (26) թագավորը: Այնքան էր սիրում, որ երբ լսում էր նրա զալուստի մասին, ուսո՞ի էր կանգնում, ընդառաջ էր գնում նրան և զլուխը խոնարհելով՝ օրինություն էր հայցում նրանից: Նա ձեռքը դնում էր նրա զլխին և ասում էր հետևյալ սաղմոսը. «Գտա իմ ծառա Դավթին և իմ սուրբ յուղով օծեցի նրան: Իմ ձեռքը թող օգնական լինի նրան ու իմ բազուկը զորացնի նրան» (27): Եվ սրա պատճառով թագավորը սիրում էր մեր հայոց ազգին:

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

Հինգ հարյուր ութսունութ թվականին (1139) սաստիկ երկրաշարժ եղավ, և կործանվեց Գանձակ քաղաքը. սրա մեջ գտնված շենքերը փլվեցին իրենց բնակիչների վրա: Դավթի ու Գիորգիի

հայր վրաց Դեմետրէ (28) թագավորը եկավ ու քաղաքի դռները տարավ իր երկիրը: Երկրաշարժից փլվեց Ալիարակ լեռը ու փակեց իր միջով անցնող ձորակը, գոյացավ ծովակ, որ կա մինչև այսօր:

(Կիր. Գանձ., Գլ. Ա)

Իսկ Կյուրիկե Բագրատունին (29), որ Լոռէ քաղաքում էր, իր ամբողջ կյանքի ընթացքում կանգնեց վրացիների դեմ ու հաստատուն պահեց իր հայրենիքը: Նրա մահից հետո իր որդիները՝ Դավիթն ու Աբասը, գրավելով վրացիներից, ելան իրենց տանից, զնացին պարսիկների մոտ, [վրացիները] սրանցից ստանում են իբրև ժառանգություն Տավուշը (30), Մածնաբերդը (31) ու այլ տեղեր: Ապա միատժամանակ հետո պարսիկները դարձյալ նրանցից ետ են առնում Տավուշը, իսկ նրանք բնակվում են Մածնաբերդում: Դավիթն ու Աբասը մահվամբ փոխադրվում են այս աշխարհից:

(Կիր. Գանձ., Գլ. Բ)

Հայոց արքա Լևոնի (32) թագավորության ժամանակ արևելքում էին գտնվում երկու եղբայրներ, որոնք Զաքարիայի որդի Վահրամի որդու՝ բարեպաշտ Սարգիս իշխանի զավակներն էին: Սրանք բաժանվեցին քրդերի բարիրական ցեղից: Առաջինի անունը Զաքարէ էր, իսկ երկրորդինը՝ Իվանէ, որոնք քաջ ու իշխանությամբ զորեղ մարդիկ էին՝ հարզված վրաց Թամար (33) կոչված թագուհու կողմից, որ Դեմետրէի որդի քաջ Գիորգիի դուստրն էր: Զաքարէն վրաց և հայ զորքերի զորավարն էր, որոնք [զորքերը] ենթարկվում էին Վրաց թագավորին, իսկ Իվանեն ուներ աթաքելության տիտղոս: Սրանք բազմաթիվ հերոսական մարտեր մղեցին, որովհետև պարսիկների ու արաբների կողմից գրավված

հայոց շատ երկրամասեր խլեցին նրանցից իրենց համար. [գրավեցին] Գեղաքունյաց ծովի շուրջ գտնվող զավառները՝ Տաշիրը, Այրարատը, Բջնի քաղաքը, Դվինը, Ամբերդը, Անի քաղաքը, Կարսը, Վայոց ձորը, Սյունյաց աշխարհը ու նրա շուրջ գտնվող բերդերը, քաղաքներն ու զավառները: Հարկատու դարձրին նաև Կարին քաղաքի սուլթանին, ավերեցին պարսից ու Ատրպատականի շատ զավառներ, ամեն կողմից ընդարձակեցին իրենց սահմանները: Այսպես էլ Զաքարե անունով մյուս իշխանը, սրա եղբայր Սարգիսը, մյուս Սարգիսը՝ Շալվեի ու Իվանեի հայրը, մեծ իշխանների ազգականները նրանց օժանդակությամբ գրավեցին ևս պարսից բազմաթիվ զավառներ ու ամուր բերդեր՝ Գարդմանը, Քարհերձը, Երգեվանքը, Տավուշը, Կածարեթը, Տերունականը, Գագը, իսկ Շամբոր քաղաքը պաշարեց և հետո գրավեց նրա որդի Վահրամը՝ Աղբուղի հայրը՝ Վահրամի, Զաքարեի և Իվանեի պապը:

...Եվ երբ այսպես հաջողվեց նրանց [ձեռք բերել] իշխանությունը, շարդեցին նաև Շահ-Արմեն (34) կոչված սուլթանին:

Ապա կամեցան գրավել Բգնունյաց հոյակապ Խլաթ քաղաքը (35). զորք հավաքելով՝ պաշարեցին այն և մոտ էին գրավելու, երբ զորավարի եղբայր Իվանե իշխանը պարիսպը զննելու համար զրուանքի դուրս եկավ, աննպատակ շրջելիս երիվարի ոտքը սայթաքեց խորխորատը, որ թաքնված էր, և գետին գցեց նրան: Քաղաքի մարդիկ տեսնելով հարձակվեցին վրան՝ ձերբակալելով նրան տարան քաղաք: Քաղաքը չափազանց ուրախացավ, և իսկույն իմացրին սուլթանին նրա բրնվելու մասին, որի համար նա շատ ու շատ ուրախացած՝ հրամայեց իր մոտ բերել:

Զաքարե զորավարը լսելով՝ քաղաքացիներին սպառնալից խոսքեր ուղարկեց՝ ասելով. «Եթե իմ եղբորը այդ քաղաքից հանեք և կամ կորցնեք, ձեր երկրի հողը տանել կտամ վրաց կողմերը

ու կբնաջնջեմ ձեզ»: Նրանք երկյուղելով շտվին տանել Դամասկոսի ու Եզիդուսի կողմերը գտնվող Կուզ, Մելիք Քեմլ և Երուսաղեմը գրաված Սալահադնի տոհմից Աշրափի անունով սուլթանների մոտ:

Ապա հաշտություն կնքելով միմյանց հետ՝ Իվանեի դուստրը կնության ուզեցին: Կատարվեց, ինչպես որ պահանջեցին, պատանդներ առան ու ազատեցին Իվանեին: Նա գնաց իր տունը, ուղարկեց դստերը, որ դարձավ Կուզի ու նրանից հետո Աշրափի կինը:

Շատ օգուտ եղավ այդ կնոջ սուլթանների տունը գալով, որովհետև անդրբություն տվին իրենց ենթակա քրիստոնյաներին, առավել ևս Տարոնին (36), որի վանքերը հարկատու էին, թեթևացրին հարկի չափը, իսկ մի մասին էլ բոլորովին զիջեցին:

Եվ հրամայեցին իրենց ենթակա մարդկանց՝ չզրկել, չնեղել այն ուղևորներին, որոնք աղոթքի համար Երուսաղեմ էին գնում: Ավելի ևս ազատ դարձրին վրաց ազգին, որովհետև Իվանեն խոտորվեց դեպի քաղկեդոննական աղանդը, որով վրացիները կործանվել էին. որովհետև նա [Իվանեն] մարդկային կյանքն ավելի սիրեց, քան աստծուն՝ հրապուրվելով Թամար թագուհուց՝ Գիորգիի դուստրից: Իսկ Զաքարեն մնաց հայերի դավանած ուղղափառության մեջ: Դրա համար ավելի էին մեծարում վրացիներին, որովհետև նրանք հարկատու չէին նրանց բոլոր քաղաքներում, նաև Երուսաղեմում: Եվ կնոջ անունը Թամրա էր [Իվանեի դուստրը՝ Աշրափի կինը]:

Այսպես սեր և միաբանություն ստեղծվեց Վրաց թագավորության ու սուլթանների իշխանության միջև:

(Կիր. Գանձ., Գլ. Դ)

Դրանից հետո, երբ խաղաղացրին իրենց իշխանության ենթակա երկրները բոլոր ավագակներից, ու բազմացան վանքերը, պայծառացան եկեղեցու արարողությունները, որ մի բան մտածեց Զաքարէ իշխանը: Որովհետև տեսնում էր իր թագավորի հետ եղած վրաց զորքերից յուրաքանչյուրը իր հետ ուներ քահանաներ և ամենուր պատարագներ էին մատուցում, իսկ ինքը ձանապարհին եկեղեցի չուներ, որովհետև այն բանից հետո, երբ հայոց մեծամեծ իշխանները պարսից ու արարական բռնությունների հետևանքով վերացան, հայերը երկար ժամանակ սովորություն չունեին [Ճանապարհին եկեղեցական պաշտամունք կատարելու]: Եվ վրացիները հայերին նախատում էին ճանապարհին եկեղեցի չունենալու, անհաղորդ մնալու և աստծու նահատակների տոները յուրաքանչյուր օրվա վերջում չտոնելու համար: Այս պատճառով նա չափազանց վշտանում էր:

(Կիր. Գանձ., Գլ. Ե)

Իսկ քորեափիսկոպոսը գնաց պատմեց կաթողիկոսին (37) ամիրայի իրամանի (38) մասին: Նա շատ ուրախացավ, որովհետև կաթողիկոս կամ նշանավոր մեկը երեք չէր հանդգնում հայտնապես քաղաք մտնել կամ այնտեղ շրջել, քանի որ պարսիկները՝ քրիստոնյաների արյան ծարավ այդ մարդիկ, գրավել էին քաղաքը: Որովհետև սրանք բազմաթիվ տառապանքներ էին կրել Խաչենի (39) բնակիչների կողմից, որոնք ավագակային կյանք վարելով պարսիկներից շատերին սպանում էին, իրենց ձեռքի տակ գտնված քրիստոնյաներին կողոպտում: նույնպես էլ վրաց թագավորը ու նրա զորքը [պարսիկներին կոտորում էին] այս պատճառով [պարսիկները] թշնամի էին բոլոր քրիստոնյաներին:

(Կիր. Գանձ., Գլ. Է)

Սա (40) իր աթոռը հաստատեց Չարեքի (41) սահմանների այն քարայրում, որը վերևում հիշատակեցինք: Սա, այլազգիներից նեղվելով, դիմեց եկավ մեր Հայաստան աշխարհը մեծամեծ իշխաններ Զաքարեի ու նրա եղբայր Իվանեի մոտ: Սրանք մեծ պատվով ընդունեցին նրան: Իվանեն սրան բնակեցրեց Միափոր գավառում՝ Խամշի կոչված վանքում (42): Սա սկսեց այնտեղ շինել մի մեծ ու հրաշալի եկեղեցի: Դեռևս չափարտած՝ խափանվեց, որովհետև Խորասանի Զալալաղին կոչված սուլթանը եկավ ու շախչախեց վրաց թագավորությունը և սպառնաց, թե այլազգի գորքերը կգան ու մեկմեկի հետևից կավերեն Հայոց, Աղվանից ու Վրաց աշխարհները:

(Կիր. Գանձ., Գլ. Զ)

Իսկ ինքը (43) վերադարձավ իր երկիրը, ճանապարհին հիվանդացավ, քանի որ անբուժելի վերքեր դուրս եկան նրա մարմնի վրա: Մեկի առողջանալով՝ մեկ ուրիշն էր դուրս գալիս: Եվ այսպես [հիվանդությունը] տանջելով նրան՝ քիչ օրեր անց վախճանվեց: Բոլոր քրիստոնյաները սպացին: Նրան տարան թաղեցին Սանահինում՝ մեծ եկեղեցում, դռան առաջ խորանի տակ ձախ կողմից: Մեծ սուզ կապեցին վրաց Գիորգի Լաշա (44) մականունով թագավորը՝ Սոսլանի ու Թամարի որդին, մեծ թագավոր Գիորգիի թոռը և իր եղբայր Իվանեն վրաց ամբողջ գորքով: Զաքարեին Շահնշահ անունով մի որդի մնաց, որ հասակով մանուկ էր: Սրան խնամեց Իվանեն իր որդի Սարգսի հետ, որին Ավագ Էին անվանում, մինչև արբունքի հասավ և տիրեց հայրենի իշխանությանը:

(Կիր. Գանձ., Գլ. Ը)

Սրա (45) օրոք երանելի Մեսրոպը զիր ստեղծեց հայերի, վրացիների ու աղվանների համար:

(Կիր. Գանձ., Գլ. Ժ)

Տեր Վիրոն (46) (աթոռակալեց) երեսուներեք տարի: Սա երկար տարիներ պարսից արքա Խոսրովի (47) պալատում կալանքի տակ էր, իսկ նրա մահից հետո ազատվեց, եկավ իր երկիրը: Սա ազատեց Հայաստանի, Վիրքի ու Աղվանքի գերիներին Զեբու խաքանի որդի Շար խազրից, որ ստրկացրեց մեր երկիրը:

(Կիր. Գանձ., Գլ. Ժ)

Տեր Միքայելը (48) [աթոռակալեց] երեսունինգ տարի: Սա կանչեց Մաքենացիների (49) վանահայր Սողոմոնին ու անիծեց աղվանից այն տերերին, որոնք ամուսնացել էին երրորդ պորտի ազգակիցների հետ. դրանք մեջտեղից վերացան ընդհանրապես. նզովեցին նաև վրաց Թալիլե կաթողիկոսին, որովհետև նա էր անօրէն ամուսնության հրաման տալիս:

(Կիր. Գանձ., Գլ. Ժ)

Այն օրերում հանկարծակի մեզ ու մառախուղ եղավ և պատեց առհասարակ լեռ ու դաշտ. մեծ երկրաշարժ եղավ ու կործանվեց Գանձակ մայրաքաղաքը: Աստծու շնորհով ազատվեց նորը ընծա կաթողիկոսը (50), բայց երկրաշարժից անթիվ տղամարդկանց, կանանց ու մանուկների բազմության հետ մեռավ Գրիգոր վարդապետը, սրանք սպանվեցին շենքերի փլատակների տակ մնալով:

Եկավ վրաց թագավոր Դեմետրեն (51), ավարեց ամեն ունեցվածք, իր երկիրը տարավ նաև քաղաքի դոները:

(Կիր. Գանձ., Գլ. Ժ)

*Թարթարական գորքի (Դերբենդից)
Եղնելու և վրաց թագավորին փախստական դարձնելու մասին*

Հայոց վեց հարյուր վաթունինը թվականին (1220 թ.), երբ վրացիները հպարտացած էին իրենց հաղթությունով, այսինքն, որ հաղթեցին մահմեդականներին, Հայաստանի բազմաթիվ զավառներ խլեցին նրանցից՝ իրենցը դարձնելով, հանկարծակի անսպասելի ժամի ծանր գորքի բազմաթիվ գնդերով ու ամբողջ կազմությամբ ուժգին հարձակումով ելան Դերբենդի դրոնից ու եկան Աղվանք՝ անցնելու Հայաստան ու Վրաստան. և ինչ որ ճանապարհին գտնում էին, ամեն ինչ սրի ճարակ էին դարձնում՝ մարդ, անասուն, մինչև իսկ շներն անզամ: Բացի ձիուց՝ թանկազին հագուստներով ու այլ հարստությամբ չեին հետաքրքրվում: Շտապով գնացին մինչև Թիֆլիս քաղաքը և կրկին վերադարձան իշան Աղվանից աշխարհը՝ Շամքոր քաղաքի սահմանները... Եվ այսպես շատերին անհոգ գտնելով՝ կոտորեցին ու ավերեցին բազմաթիվ տեղեր: Իսկ իրենք իրենց քոչերը ամրացրին մի ճահճոտ ու տղմոտ վայրում, որ գտնվում է երկու քաղաքների՝ Պարտավի (52) ու Բելուկանի (53) միջև Բեղամեջ կոչված մի շատ ամուր տեղում, իսկ իրենք հանդուզն հարձակումներով ավերում էին բազմաթիվ զավառներ:

Ապա զորահավաք են անում վրաց թագավոր Լաշան ու մեծ հազարապետ Իվանեն՝ պատերազմով նրանց դիմագրավելու համար: Եվ իջնում են Խունան (54) կոչված մի դաշտավայր տեղ, որովհետև այնտեղ էր գտնվում թշնամու գորքը: Ճակատամարտ տալով միմյանց դեմ՝ սկզբում փախուստի մատնեցին թշնամիներին: Բայց քանի որ թշնամիները դարան էին մտել, հարձակվեցին թիկունքից և սկսեցին վրաց զորքը կոտորել: Փախածները նույնպես վերադարձան ու այս կողմից, այն կողմից մեջտեղ առնելով՝

մեծ հարված հասցրին քրիստոնյաների զորքերին: Փախան թագավորն ու բոլոր իշխանները: Իսկ թշնամիները հավաքեցին զորքի ավարը, տարան իրենց բանակատեղերը:

Մյուս անգամ կրկին վրաց թագավորը, նախորդ անգամից ավելի մեծ զորք հավաքելով, կամեցավ ձակատամարտ տալ թշնամիների դեմ: Իսկ նրանք վերցնելով իրենց կանանց, որդիներին ու ամբողջ ունեցվածքը՝ կամեցան Դերբենդի դրնից անցնել իրենց երկիրը: Բայց մահմեդականների զորքը, որ Դերբենդում էր, նրանց անցամուտք չտվեց: Նրանք կտրեցին Կովկաս լեռն անանցանելի տեղերով, վիհերը լցնելով փայտ ու քար և իրենց քոչերը, ձիերը, ռազմապաշարը [առնելով][՝] անցան գնացին իրենց երկիրը: Նրանց գլխավորի անունն էր Սաբադա Բահատուր:

(Կիր. Գանձ., Գլ. ԺԱ)

Սրանից հետո, երբ որոշ ժամանակ անցավ, մի այլ զորք դուրս եկավ Հոնաստանից, որին դփշաղ են ասում. սրանք եկան Վրաստան՝ Լաշա թագավորի և Իվանե հազարապետի մոտ, որպեսզի իրենց բնակության տեղ տան, իսկ իրենք նրանց հավատարմությամբ կծառայեն: Սակայն նրանք չհամաձայնվեցին սրանց բնակության տեղ տալու:

Նրանք ուղղություն վերցրին ու գնացին Գանձակ քաղաքի բնակիչների մոտ, որոնք հոժարությամբ ընդունեցին, որովհետև վրաց զորքի կողմից մեծ նեղություն էին քաշում. նրանք ավերում էին նրանց երկիրը, գերի էին տանում մարդկանց ու կողոպտում անասունները: Նրանց բնակվելու տեղ տվին քաղաքի սահմաններում, այլև ուտելիքներով ու խմելիքներով օգնում էին, որպեսզի սրանց միջոցով կանգնեն վրաց թագավորության դեմ: Իսկ հոնաց զորքը այնտեղ դադարեց ու տեղակայվեց:

Իվանեն գորահավաք արեց ու գորոզամտությամբ նրանց վրա դիմեց: Սաստիկ հոխորտում էր բնաջնջել նրանց և նրանց քաղաքը՝ հուսալով իր գորքի բազմության և ոչ թե աստծու վրա, որ հաղթություն է տալիս, ում կամենում է:

Երբ ընդհարվեցին միմյանց, խուժերը [հոները] հանգիստ վիճակում իրենց որջերից դուրս եկան ու հոգնած ու լրված վրաց գորքին սրի բերան տվին. շատերին բռնեցին, իսկ մնացածին փախցրին: Այս օրերում քրիստոնյաների գորքերի մեջ մեծ հուսալքում առաջացավ. այնքան լրվեցին աստծուց, մինչև որ մի վախկում մարդ բազմաթիվ քաջ ու պատերազմում անուն հանած մարդկանց իր առջևը զցած բերում անց էր կացնում, ինչպես հովիվը հոտը, որովհետև տերը նրանց սրից վերցրեց իր օգնությունը և պատերազմում նրանց օգնական չեղավ...

Բայց որոշ օրեր անցնելուց հետո դարձյալ գորք հավաքեց մեծ հազարապետ Իվանեն, որպեսզի գնա վրեժ լուծի նրանցից, որոնք նրա գորքը ջարդեցին: Եվ անսպասելի մի ժամի հարձակվելով նրանց վրա՝ զարկեց սպանեց խուժադրուժներին սրահարելով, իսկ նրանց ավարը ու մանուկներին գերեվարեց բերեց իր երկիրը:

(Կիր. Գանձ., Գլ. ԺԲ)

Միփթարը, (55) մնալով սրա ու ուրիշների մոտ, վարդապետական կոչում ստացավ: Եվ դրանով չբավականացավ, այլ մեկնեց արևմտյան կողմի երկիրը, որ կոչվում է Սև լեռ, վարդապետների մոտ, որոնք այնտեղ ուսուցիչներ էին: Նա չհայտնեց, որ ինքը վարդապետական աստիճան ունի, այլ շատ բան օգտվելով նրանցից՝ եկավ Կարին (56) քաղաքը: Այնտեղ պատահեց հավատով քրիստոնյա Քուրդ անվանված իշխանին, որ այդ ժամանակ այնտեղ էր լինում՝ փախած վրաց թագավորից: Նա ծանոթ եղավ

ու սիրվեց նրա կողմից իբրև հայր: Սրանից հետո նա վերադարձավ իր երկիրը:

...Ապա Քուրդ իշխանը վերադարձավ եկավ իր հայրենիքը՝ Կայան (57) և Մահկանաքերդ գավառը: Բազմաթիվ մեծարանքներով պատվեց նրան վրաց Թամար կոչված թագուհին՝ վերադարձնելով նրան նրան նրա հայրենի վայրերը և ուրիշ շատերը: Սա [Քուրդը] Սաղունի ու Դավթի հայրն է, Սաղունի հոր՝ Շերբարոքի պապը:

...Իսկ սուրբ Վարդապետը արգելեց նրանց այդ մտադրությունը՝ [ասելով]՝ շպետք է միմյանց թողնել ու ցրվել, այլ միասին ապրել ու խնդրել իրենց համար բնակության տեղ: Ապա միասին գնացին մեծ իշխան Իվանեի՝ վրաց զորավար Զաքարեի եղբոր մոտ, որոնք այդ ժամանակ Կայան բերդին ու գավառին իշխող բարեպաշտ Քուրդ իշխանի քեռորդիներն էին, ցույց տվին նրան իրենց խնդիրքը, որպեսզի տեղ տա, ուր փոխադրեն իրենց վանքը (58):

(Կիր. Գանձ., Գլ. ԺԳ)

Եկեղեցու տոնախմբության ժամանակ ներկա էր նաև սուրբ Վարդապետ Խաչատուր Տարոնացին՝ Հաղարծին (59) կոչված սուրբ միաբանության առաջնորդը, սուրբ և առաքինի զիտությամբ, մանավանդ երածշտական արվեստով հռչակված մի մարդ: Սա պայծառացրեց իր առաջնորդության ենթակա սուրբ միաբանությունը, որ իր գալուց առաջ ամայի էր ու խամրած: Սրան մեծապես հարգում էր վրաց թագավոր Թամարի հայր Գիորգին:

(Կիր. Գանձ., Գլ. ԺԴ)

Այս Զատկի համար շատ ազգեր բազմաթիվ հակառակություններ ու վեճեր ունեին հայերի հետ, առավել ևս վրացիները,

որովհետև հանդգնելով թյուրք ուղիղ էին համարում, որը [ուղի-նը] եղծ ու փշացրեց անիծյալ Իրոնը, որ անօրեն Հուստիանոսի պալատում էր, զատիկների ու այլ տոների լրումի համար Ալեք-սանդրայում տեղի ունեցած ժողովին իրեն չկանչելու պատճառվ։ Անդրեասի երկիարյուրակը լրանալուց հետո ինը տարի խանգարված մնացին բոլոր տոները, որովհետև լրանալուց հետո չկարողացան նրա տոմարական արվեստը ուղիղ կարգավորել։ Ապա Էաս անունով մի իմաստասեր ձայն բարձրացրեց, իր մոտ կանչեց բոլոր ազգերի իմաստուններին՝ հրեա Փենեհեսին, ասորիներից Գիգանին, գամիրներից Արքեին, հովներից Ելոզսին և ուրիշ շատերին։ Եվ սկսեցին ներքինց դեպի վեր հաշվել տարիները և հաստատուն կերպով գտնելով՝ կարգեցին ամբողջ հինգհարյուրակը՝ իբրև հավիտենական անտարակուսելի օրինակ, որ տարան Հուստիանոս կայսեր մոտ։ Նա հրամայեց Իրոնին, իսկ նա նախանձով լցվեց մեծ անձերի տոմարական արվեստի ու իրեն չկանչելու համար։ Կամեցավ այն որևէ ձևով եղծել, ապրիլի տասնինզը փոխեց տասնվեցի ու վեցը հինգի պատրիվակ բռնելով, թե մյուս բոլորը ճիշտ են՝ բացի սրանից։ Այն տասնվեցը չի սխալեցնի, իսկ այն հինգը իննառևնինզ տարում միշտ կսխալեցնի նրանց՝ հրեաների հետ զցելով Զատիկը լրման ժամանակ, որովհետև հինգը նրանց Զատիկը շաբաթ կզցի, իսկ վեցը մերը կզցի՝ կիրակի, ինչպես և այստեղ պատահեց։

Եվ հայերի ու վրացիների այսպիսի վեճի համար Թամար թագուհին ու Զաքարիա սպարապետը վրաց իշխաններից մեկին նմանապես և հայերից [մեկ ուրիշի] Զատկից առաջ ուղարկում են Երուսաղեմ՝ տեսնելու ճիշտը։ Եվ սրանց համար դատավճրո է կանքեղի վառումը, որ Քրիստոսի սուրբ գերեզմանի վրա է։ Սրա մասին ասում են, որ հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորի խնդրան-

քով, առանց մարդու ձեռքերի ու տեսանելի կրակի՝ աստծու հրամանով վառվում է ամեն Զատկին, որ մինչև այսօր լինում է:

Բայց քաղաքի իշխանությունը արաբների ձեռքին էր. հարցրին քրիստոնյաներին, թե «ե՞րբ է ձեր Զատիկը»: Հույներից և այլ ազգերից [այնտեղ եղածները] պատասխանեցին, թե «Այս կիրակի»: Իսկ ովքեր հայերից էին, ասացին. «Ոչ այս կիրակի, այլ մյուս կիրակի»: Իսկ քաղաքի արաք վերակացուն մի խելացի մարդ էր, հրամայեց տաճարում եղած բոլոր լույսերը մարել ու դռները փակելով՝ կնքեց իր մատանիով ու ոչ ոքի թույլ չտվեց ներս մտնել, որպեսզի տեսնի, թե որ ազգն է ճշմարիտ:

Եվ երբ այն ցերեկը անցավ ու երեկո եղավ, սպասում էին կանքեղի վառվելուն, բայց երբ շվառվեց, իշխանը հրամայեց անարգանքով ու ծանր զանահարությամբ բոլորին հանել՝ իբրև տղետների ու ստախոսների, բացի հայերից: Եվ երբ շաբաթն անցավ ու եկավ մյուս կիրակին, որը հայերը Զատիկ էին համարում, երբ պաշտամունք ու աղոթք էին անում, տասներորդ ժամին ամենը ազդմունք ունեցան, և անմիջապես կանքեղն առանց ձեռքերի վառվեց: Հայերը մեծապես ուրախացան: Վեցրին ծեծեցին այլ ազգերին, և ամենքը գովում էին հայերի իմաստությունն ու հավատը, առավելապես արաբները, ու անարգում ծաղրում էին հույներին այն բոլոր քաղաքներում, որոնք արաբների իշխանության ներքո էին գտնվում: Այս տեսան նաև վրաց թագավորի ու զորավարի կողմից ուղարկված մարդիկ, եկան պատմեցին տեսածները: Մեծ զորավար Զաքարեն ուրախացավ, և այն բոլոր հայերը, որ զորքի մեջ էին, ավելի ևս ամրացան հայոց ուղիղ հավատի մեջ:

(Կիր. Գանձ., Գլ. ԺԴ)

Այնպես պատահեց մի անգամ, որ նրա (60) սպասավորները վանքի պետքերի համար զինի բարձած գրաստներով գալիս էին: Բասիլա անունով մի ոմն վրացի եկավ ու կամենում էր բռնի կերպով նրանցից զինի առնել, որովհետև Իվանեի գործակալն էր անտառի վրա ու պահում էր նրա իշխանատեղը: Սպասավորները ասում են նրան. «Մեզ նեղություն մի տա, որովհետև մենք Գոշի մարդիկ ենք»: Մականունով այսպես էին կոչում նրան, որովհետև շատ քիչ էին նրա մազերը: Իսկ այդ թշվառականը հայիոյելով անարգեց նրան ու Գոշին: Երբ հասավ այն տեղը, ու նրա անունը պետք է անարգվելով հիշատակեր, անմիջապես համրացավ, կապվեց նրա լեզուն, ծովեցին նրա շրթունքները, և այսպես մնաց շատ օրեր, մինչև որ հառաջանքներով թողություն խնդրեց:

(Կիր. Գանձ., Գլ. ԾԶ)

Չեռնարկեցին (61) հինգ խորանով, կոփածո ու տաշած քարերով, գմբեթավոր ու գեղակառույց մի այլ եկեղեցի ևս շինել: Եվ երբ կես եղավ եկեղեցին, երկար ժամանակ խափանվեց, որովհետև Խորասանի Զալալարին կոչվող սուլթանը եկավ, ջարդեց հայոց և վրաց զորքերը և ավերեց բազմաթիվ գավառներ: Այս և այլ բազմաթիվ պատճառներով [եկեղեցին] մնաց անավարտ: Հետո կապալեցի Գրիգոր անունով մի մարդ, որ առաջ եկեղեցու կառուցման նյութական ծախսերը հոգում էր, վերստին ձեռնարկեց ու այն ավարտեց վեց հարյուր իննսուն թվականին (1241 թ.):

Վախճանվեց նաև Իվանեն՝ Զաքարեի եղբայրը, ու թաղվեց Պղնձահանքում իր շինած եկեղեցու դռանը. [Պղնձահանքը] վերցրեց հայերից ու վրացական վանք հաստատեց: Մեռնելիս նա իր որդուն ու տունը հանձնեց իր սնած ու փառքի հասցրած Գրիգոր անունով մի ոմն իշխանի, որին Տղա էին կոչում:

(Կիր. Գանձ., Գլ. ԾԷ)

*Սուլթան Զալալադնի (62) վեց հարյուր յոթանասունչորս
թվականին (1225 թ.) վրացական զորքը կոտորելու մասին*

Նախապես հիշատակված հյուսիսարևելյան զորքը, որ թաթար էր կոչվում, նեղեց Խորասանի սուլթան Զալալադնին ու ջարդեց նրա զորքը, կործանեց նրա երկիրը: Նրան հանեցին փախստական զցեցին Աղվանից աշխարհը: Նա եկավ Գանձակ քաղաքը ու գրավեց այս: Պարսիկներից, արաբներից, թուրքերից անշափ զորք հավաքեց իր համար ու եկավ Հայատան:

Իվանեն, այս տեսնելով, հայտնում է վրաց թագավորին ու մեծ զորք է հավաքում սուլթանի դեմ կանգնելու համար: Հպարտությամբ մեծապես ուշում-փքվում էին և ուխտ էին արել, եթե նրան հաղթեն, իրենց իշխանության ներքո գտնվող ամեն հայի կղարձնեն վրաց դավանանքին, իսկ դիմադրողներին սրով կվերացնեն: Այս խորհուրդը աստծով շմտածեցին և ուխտը կնքեցին և ոչ ել նրա հոգով խորհեցին այս ու տիրոջը չհարցրին, որ հաղթության տվիչն է նրան, ում որ կամենում է:

Սուլթանը հետո եկավ Կոտայք (63) գավառը: Գնաց նաև Իվանեն վրաց զորքերով ու կանգնեց նրանց հանդեպ վերսից: Տեսնելով նրանց՝ երկյուղեց ու այդ տեղում բանակեց: Իսկ սուլթանը, առաջ վարելով իր զորքը, եկավ նրանց հանդեպ: Եթք սա տեսան վրաց ավագներից Շալվե անունով մի իշխան ու նրա եղբայր Իվանեն, որ քաջ, անվանի ու պատերազմում հաղթող մարդիկ էին ասացին մյուս զորքերին. «Դուք մի փոքր ժամանակ սպասեցեք, մենք զնանք ընդհարվենք նրանց, եթե նրանցից ումանց ետ դարձնենք, հաղթությունը մերն է, եկեք նաև դուք, իսկ եթե նրանք մեզ հաղթեն, դուք փախեք ու ձեր անձը ազատեցեք»:

Եվ եթք նրանք ընդհարվեցին, սկսեցին սուլթանի զորքը կոտորել: Իսկ վրաց զորքը դրա վրա ուշադրություն չդարձրեց, այլ

փախավ այդ տեղից այնպես, որ ընկերը ընկերոց փախուստը չի-մացավ: Եվ առանց որևէ մեկի հալածանքի՝ փախից ամենքը մի վայր մղվելով լցվեցին գյուղաքաղաք Գառնիի (64) վերևում մի ձոր: Եթի Սուլթանի գորքերն այս տեսան, հետամտելով շատերին կոտորեցին, ուրիշներին էլ գահավեժ արին:

Սուլթանը եկավ ձորի գլուխը ու տեսավ այդ ողբալի տեսարանը, որովհետև քարակարկաների նման կուտված էր այնտեղ մարդկանց ու ձիերի բազմությունը: Գլուխը շարժեց ու ասաց. «Այս գործը մարդու բան չէ, այլ միայն աստծու, որ ամեն բանում կարողն է»: Ապա դարձավ կողոպատեց ընկածներին ու բազմաթիվ տեղեր ավերելով՝ զնաց Տփղիս քաղաքը: Քաղաքում գտնված պարսիկները օգնեցին նրան, առավ քաղաքը ու շատերին կոտորեց: Ավելի շատերին ստիպում էր թռղնել քրիստոնեությունը և ընդունել մահմեդականների խաքերայական ու թյուր կրոնը: Այնուհետև շատերը մահվան երկյուղից վախենալով՝ ճշմարտությունը փոխանակում էին ստով, իսկ ուրիշներն էլ քաջությամբ մահ էին հանձն առնում, քան թե խոճի խայթով կյանքը. սրանք մարտիրոսի անուն ժառանգելով՝ թռղին այս աշխարհը բարի անվամբ:

Ապա հրամայեց համաձայնվողներին, չհամաձայնվողներին առանց հարցաքննություն անելու ամենքին բռնությամբ թղպատել: Եվ այսպես բռնի կերպով երկու հոգի հրապարակում բռնում էին մարդկանց ձեռքից, իսկ մի ոմն սուրբ բռնած կտրում էր առնանդամի մաշկը: Նաև խառնակվում էին կանանց հետ զազրելի պղծությամբ ամեն տեղ, ուր խաչ կամ եկեղեցի էին գտնում, կործանում ու քանդում էին: Այս անում էին ոչ միայն Տփղիսում, այլև Գանձակում, Նախշենանում ու այլ վայրերում:

(Կիր. Գանձ., Գլ. ԺԼ)

**Նույն գորքերի կողմից Հայաստանի
և Վրաստանի ավերման մասին**

Գանձակ քաղաքի ավերումից տարիներ անցնելուց հետո այս կատաղի և խորամանկ զորքը կարծես վիճակով բաժանել էր Հայաստանը, Վրաստանը, Աղվանը: Յուրաքանչյուր զլիսավորի ըստ մեծության ու փոքրության [բաժանեցին] քաղաքները, գավառները, երկրներն ու բերդերը, որպեսզի զրավեն, քանդեն, ավերեն: Եվ յուրաքանչյուրը կանանցով, որդիներով ու իր բանակի ժողովրդով գնաց իր մասնաբաժինը: Եվ նստեցին անհոգությամբ՝ ոչնչացնելու, ուտելու բոլոր կանաչ բույսերը իրենց ուղտերով ու անասուններով:

Այս ժամանակ վրաց թագավորությունը թուլացել էր, որովհետև մի Ռուգուղան անունով կնոշ էր ենթարկվում: Սա Թամարի դուստրն էր, Լաշայի քույրը՝ Գիորգիի թոռը. վավաշոտ էր ու կրքոտ, ինչպես Շամիրամը. իր համար բերված տղամարդկանց չհավանելով՝ շատերի հետ էր ընկնում և այրի էր մնացել: Թագավորական իշխանությունը կառավարվում էր գորագլուխներ Իվանեի, սրա որդի Ավագի, Զաքարեի որդի Շահնշահի, Վահրամի ու այլոց միջոցով: Եվ որովհետև կարձ ժամանակ առաջ մեռել էր Իվանեն, սրան տարան թաղեցին Պղնձահանքում (65), որտեղ ինքը վրաց վանք էր կառուցել՝ առնելով հայերից: Նրա իշխանությունը վարում էր իր որդին: Եվ որովհետև չէին կարող եկած անասելի մրրկին դիմագրավել, այս պատճառով ամենքը իրենց անձն էին պահպանում՝ սողոսկելով այն ամրոցները, ուր կարողանում էին:

Իսկ նրանք ընդհանրապես մորեխի բազմությամբ սփռված էին դաշտերը, լեռները, ձորերը, կամ իբրև անձրև հորդությամբ տեղացել էին երկրի վրա: Այնուհետև այնտեղ պետք էր տեսնել

տրտմագին աղետներ և ողբերի արժանի սուց: Որովհետև հողը չէր թաքցնում մտածներին, ոչ էլ քարերն ու անտառներն էին պահում ապաստանածներին, ոչ բերդերի շատ ամուր շինվածքները, ոչ նեղ ու խոր ձորերը, այլ ամենը դուրս էին նետում թաքնվածներին: Լսվում էր արանց արին, աղեղնավորների կորովի ձեռքերը թուլանում էին, թաքցնում էին սրեր ունեցողները, որպեսզի թշնամիները չտեսնեն ու անողորմ կերպով չսպանեն: Թշնամիների ձայները հալում էին նրանց, կապարձների չխկոցները ահաբեկում էին նրանց բոլորին: Յուրաքանչյուր աչք իր օրիասը եկած էր տեսնում, և իրենց սրտերը ներսում մեռնում էին: Մանուկները սրի ահից փախչում էին ծնողների մոտ, իսկ ծնողները նրանց հետ վախից ընկնում էին նախքան թշնամիների վար զցելը:

Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես սրերն անխնա կոտորում են տղամարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին, եալիսկոպոսներին ու քահանաներին, սարկավագներին ու դպիրներին: Ծծկեր մանուկները քարի էին խփում, և գեղեցիկ կույսերը խառնակվում ու գերվում էին:

Ահավոր էր նրանց կերպարանքի տեսքը, և անգութ էին նրանց որովայնի աղիքները [սրտերը]: Միակին ու միամոր արտասուրներին չէին խճառում ու ծերությունը երբեք չէին ողորմում: Ուրախությամբ էին դիմում սպանությանը, կարծես զնում էին հարսանիք կամ զինարբուր:

Ամբողջ երկիրը լցվեց մեռելների դիակներով, և չկար մեկը, որ թաղեր դրանք: Սիրելիների աչքերի արտասուրքը սպառվել էր և չկար մեկը, որ անօրենների ահից ընկածներին ողբար:

Սուգ հագավ եկեղեցին, և նրա գեղեցկության պայծառությունը վերացավ, խափանվեցին նրա արարողությունները և վերացան պատարագները նրա սեղանից. լուեցին նրա ժամասացու-

թյունները և նրա մեջ այլս չէր լսվում երգերի ձայնը: Ինչպես խավարով պատած էր ամբողջ երկիրը, և մարդիկ ավելի զիշերն էին սիրում, քան ցերեկը: Երկիրը թափուր դարձավ իր բնակիչներից, իսկ նրա վրա օտար որդիներ էին շրջում: Ինչք ու ստացվածք հափշտակվեցին, իսկ նրանց ազահությունը երբեք չհագեցավ: Խուզարկվեցին բոլոր տներն ու սենյակները, և ոչինչ չմնաց, որ չգրավեցին: Այստեղ-այստեղ շրջում էին այծյամների արագությամբ ու կեղեքում, պատառոտում էին իբրև գայլեր: Նրանց երիվարները վազրի մեջ չէին հոգնում, և նրանք, ավար հավաքելով, չէին ձանձրանում...

Սակայն այսուհետև մարտնչում էին բոլոր ամրոցների ու շատ քաղաքների դեմ: Բազմաթիվ ու տեսակ-տեսակ մեքենաներ էին կանգնեցնում, որովհետև չափազանց խորամանկ ու հնարամիտ էին: Գրավեցին, քանդեցին բազմաթիվ ամրոցներ ու բերդեր: Եվ որովհետև ամառ ժամանակ էր ու չափազանց շոգ, և ջուր չէր ամբարված, քանի որ անսպասելի ժամանակ վրա տվին, այդ պատճառով մարդ ու անսառուն ծարավից պապակած, կամա թե ակամա ընկնում էին թշնամիների ձեռքը կարիքից ու նեղվածությունից: Իսկ նրանք ոմանց սպանում էին, ոմանց պահում էին իրենց պետքերի համար ստրկական ծառայության: Նույն անցքերը կատարում էին նաև քաղմաթիվ քաղաքների հետ, շուրջը նստած՝ պատում-պաշարում էին դրանք:

(Կիր. Գանձ., Գլ. ԻԲ)

Այսպես վարվեցին նաև այլ քաղաքների՝ Դումանիսի, Շամշուլդայի, Մայրաքաղաք Տիղիսի հետ: Բոլորն առ ու ավարի, կոտորածի ու գերության մատնեցին, անխնա ասպատակեցին բոլոր կողմերում՝ հարձակումով, հափշտակությամբ, կոտորածով, որովհետև չկար մեկը, որ նրանց դեմ կանգներ կամ նրանց հետ

պատերազմեր: Այս պատճառով ամեն կողմից աներկյուղ էին: Ճողովրելով փախել էր Ռուզուլան (66) կոչված վրաց թագուհին, ուր որ կարողացել էր ազատվել: Այսպես բոլոր իշխանները մորթիները փրկել էին նրանցից:

(Կիր. Գանձ., Գլ. ԻԵ)

Այն մարդիկ, որ ազատվել էին սրից, մերկ ու առանց ուտելիքի էին, ընկած ու տրորվոծ հասկերով հոգում էին իրենց կարիքները, և այդ ձմեռ սաստիկ ցուրտ չեղավ, ինչպես ուրիշ տարիներ, այլ մեղմ էր ու ցանկացածի նման: Եվ որովհետև եզներ չունեին, որ հողը վարեին, և ոչ էլ սերմեր, որ ցանեին, երբ գարունը եկավ, աստծու հրամանով հողը ինքնեկ բուսցրեց, որ բավական էր մարդկանց կարիքները բավարարելու. նաև ամեն կողմ հացի լիուրյուն եղավ, որով փախածները տեղերում ապրում էին: Այլն վրաց անխիղդ ազգը մեծ գութ ու խնամք ցուցաբերեց իրենց մոտ պանդիտածների հանդեպ: Եվ այսպես ողորմած աստված միսիթարեց տառապածներին:

(Կիր. Գանձ., Գլ. ԻԸ)

Մի օր Ավագի (67) տան մեջ նրանցից [թշնամիներից – Հ. Ռ.] մեկը, և այն էլ ոչ շատ մերձավորներից, եկավ Ավագի սենյակը, ուր նա նստում էր: Եվ երբ նա անմիջապես վեր չկացավ նրան ընդառաջ, ձեռքին բռնած ձիու մտրակով զարկեց նրա զլիսին: Իշխանի սպասավորները, այս տեսնելով, բարկացան իշխաննի՝ իրենց տիրոջը անարգելու համար. վեր կացան այդ մարդուն ծեծելու: Եվ իշխանը, չնայած զայրացել էր, արգելեց նրանց: Այդ մարդը, որի անունը Զոջ Բուլա էր, գնաց՝ իր հետ վերցնելով նաև այլ ընկերներ, կամեցավ զիշերով սպանել իշխանին: Նա իմացավ և մազապուրծ փախավ վրաց թագուհու մոտ, որովհետև նա դեռևս ապստամբ էր և քաշվել էր Վրաստանի շատ ամուր վայրերը...

(Կիր. Գանձ., Գլ. ԻԹ)

...Եվ երբ Ավագը եկավ, զորաբանակը (68), իսկույն խաղանցից հրաման հասավ իր զորքին, որ ոչ ոք չհանդինի չար բան անել Ավագի հանդեպ, և թուղթ եկավ Ավագին ու պարզեներ նրան, որ համարձակ գա և չվախենա: Ապա մեծարեցին նրան և զորքից հեռացրին այն մարդկանց, որոնք կամենում էին սպանել նրան: Ապա նրան և նրա հետ Տոնդրու աղա անունով մի իշխանի, որ եկել էր դանի հրամանով հարկ առնելու բոլորից, ուղարկեցին վրաց Ռուզուդան թագուհու մոտ, որ սա հնազանդվի մեծ արքային:

Մրանք գնացին նրա մոտ, հորդորեցին նրան հնազանդվել մեծ արքային և չվախենալ: Նրանից զորք առնելով՝ եկան իրենց ուղարկողների մոտ՝ խաղաղության և բարեկամության դաշինքով, որ թագուհին հնազանդ կմնա իր մանուկ Դավիթ որդով հանդերձ, որին նորընծա թագավորեցրել էր, և նրանք չդրժեցին ուխտը:

(Կիր. Գանձ., Գլ. Ի՞՞թ)

Դավիթի թագավորության մասին

Բազմահնար ու խորամանկ նետողների ազգը շատ անգամ [պատգամավոր] ուղարկեց վրաց թագուհի Ռուզուդանի մոտ, որ գնա իրենց մոտ, կամ իր մանուկ որդի Դավթին զորքով իրենց տա: Իսկ նա այս չարեց. քիչ զորք է տալիս, թաթարական բանակում գտնվող Ավագի՝ Իվանեի որդու ձեռքով ուղարկում է նրանց մոտ՝ ասելով. «Մինչև խաղանի՝ ձեր արքայի մոտ իմ ուղարկած պատգամավորը չվերադառնա, չեմ կարող ձեզ մոտ գալ»:

Իսկ նրանք երբ ջարդեցին հոռոմների սուլթանին՝ նրա փեսային, գրավեցին նրա քաղաքներից շատերը, նրա մոտ պատգամավոր ուղարկեցին Վահրամ իշխանին, որ հնազանդության գա

իրենց: Նա գալիս իր հետ բերեց վրաց թագավոր, Ռուզուդան թագուհու եղայր Գիորգի Լաշայի որդուն, որին [Ռուզուդանը] իր դստեր հետ դավով ուղարկել էր հոռոմների սուլթանի մոտ, որպեսզի ոչնչացնի նրան, որ չդավի իր թագավորությանը, և նա սուլթանի մոտ արգելափակված էր:

Վահրամը բերեց թաթարական զորքին հայտնեց, թե «մեր արքայի որդին է և անմեղ տեղը զրկված է իր տերությունից»: Իսկ նրանք, հակառակ նրա, հորաքրոջ, թագավորեցրին նրան, հրամայեցին ըստ քրիստոնյաների կրոնի օծել և նրա հոր բոլոր իշխաններին կարգադրեցին հնազանդ մնալ սրան, և սա էլ պետք է նստի Տփղիս քաղաքում: Թաթարներին ենթակա մեծամեծ իշխանները՝ Ավագը, որ գորավար էր, Զաքարիայի որդի Շահնշահը, Վահրամը և նրա որդի Աղբուղան նրան վերցրին տարան Մցիւեթ, կանչեցին նաև վրաց կաթողիկոսին և նրան թագավոր օծեցին: Նրա անունը Դավիթ էր (69):

Իսկ նրա հորաքույր Ռուզուդանը երբ այս լսեց, իր որդու՝ մյուս Դավթի (70) հետ փախավ Ավիսազիա ու Սվանեթիա և պատգամավորներ ուղարկեց թաթարական Բաթու անունով մյուս զորապետի մոտ, որ դանի ազգականն էր և իշխում էր Ռուսաստանում, Օսեթիայում ու Դերբենդում գտնվող զորքերի վրա, և դանից հետո [ամենամեծը] նա էր նրան հնազանդ մնալու: Նա հրամայեց, որ սա նստի Տփղիս, իսկ սրանք չընդդիմացան, որովհետև այդ օրերին դանը մեռել էր:

(Կիր. Գանձ., Գլ. I.2)

Ղիաթաղին սուլթանին փախցնելու երկրորդ տարեմուտին դարձյալ շարժվեցին գնացին Բզնունյաց կողմերը՝ Խլաթ քաղաքը. գրավելով այն տալիս են Ավագի քույր Թամթային, որ առաջ Աշրաք Մելիքի կինը եղած ժամանակ քաղաքի տերն էր եղել և գեր-

վեց խորագմեցի Զալալաղին սուլթանի կողմից: Նրանցից [թաթարներից] դարձյալ գերվեց և ուղարկվեց դանի մոտ ու երկար տարիներ այնտեղ մնաց:

Եվ երբ վրաց թագուհի Ռուզուդանը Համադոլա իշխանին պատգամավոր ուղարկեց դանի մոտ, Համադոլան իր վերադարձին դանից խնդրեց Թամթային և դանի հրովարտակով նրան իր հետ բերեց, որպեսզի Մելիք Աշրափի կինը եղած ժամանակ նա ինչ որ ունեցել է, իրեն տան:

(Կիր. Գանձ., Գլ. Խ)

Երբ եկավ երկրորդ տարին, որ հայոց վեց հարյուր իննսուն-վեց թվականն էր (1247 թ.), առաքինի կաթողիկոս Կոստանդինը (71) իր սպասավոր Թաղեռուի միջոցով արևելյան Եկեղեցիներին կերպասից մետաքսառէց, բազմագույն ու թանկագին շուրջառներ է ընծա ուղարկում իիրը սուրբ պատարագի սպասներ պատվավոր վանքերում: Նաև շրջաբերական նամակ է ուղարկում, որ պեսզի Թաղեռուի շիրիմին [Եկեղեցի] իիրը թեմ տան շրջակա գավառներն ու քաղաքները և շատ ուսկի գավթի շինության համար, որ կառուցում էր Հովսեփի վարդապետը՝ թուրքերի և վրացի ավագակների ձեռքով ավերվելուց հետո, քանի որ երկար ժամանակ մարդուց թափուր էր ու ամայի:

(Կիր. Գանձ., Գլ. ԽԳ)

Երբ Դիուդ դանը իրենց երկրում գտնվող թաթարական զորքի մեծ թագավորությանը տիրացավ, իսկույն հարկապահանջ մարդիկ ուղարկեց իր զորքերի մոտ, որ զանազան կողմերում ու երկրներում էին գտնվում, որոնց [զորքերին] հնազանդեցրին նրանք՝ առնելու տասնորդ զորքերի բոլոր ստացվածքներից և հարկեր բոլոր իրենց կողմից նվաճված երկրներից ու թագավո-

բություններից, պարսիկներից, արաբներից, թուրքերից, հայերից, վրացիներից, աղվաններից և այն բոլոր ժողովուրդներից, որ նրանց իշխանության տակ էին:

(Կիր. Գանձ., Գլ. ԽԴ)

Վրաց թագավորների դանի մոտ գնալու մասին

Վրաց թագավորությունը այս ժամանակ թուլացել էր. սա, որ առաջ մի քիչ ուժեղ էր, ընկավ արևելքում գտնվող թաթարական գորքերի հարկատուական լջի տակ, որոնց գլխավորն էր Զարմանանի մահից հետո Բաշու նուինը:

Այս ժամանակ վրաց թագավորը Ռուզուդան անունով մի կին էր, որ թաքնվեց, ամրացավ Ավանեթիայի անառիկ վայրերում: Նրա մոտ պատգամավորներ էին զալիս երկու կողմերից՝ թաթարական գորքից՝ հյուսիսի կողմերում գտնվող Բաթու անունով մեծ զորավարից, որ մոտավոր ազգականն էր դանի և իշխում էր ամենքին. նույնիսկ դանը առանց նրա հրամանի աթոռ չէր նստում, և Բաշու կոչված մյուս զորավարից, որ Հայաստանի կողմերում էր: [Պահանջում էին] զալ նրանց մոտ հաշտությամբ ու խաղաղությամբ և իր տերությունն իշխել նրանց հրամանով:

Իսկ նա, որովհետև գեղեցիկ կին էր, չհամարձակվեց նրանցից ոչ մեկի մոտ գնալ, որպեսզի չխայտառակվի նրանց կողմից, այլ իր Դավիթ անունով մանուկ որդուն թագավորեցրեց, ուղարկեց Բաթու զորավարի մոտ:

Իսկ արևելյան կողմերում գտնվող գլխավորները, որ Բաշու նուինի հետ էին, զրավել էին ամբողջ Հայաստանը, սրանց մոտ կային վրաց թագավորության իշխաններ ևս, երբ տեսան, թե թագուհին իրենց մոտ չեկավ, այլ իր որդուն ուղարկեց Բաթուի մոտ, դժողոհեցին այս բանի վրա, ուղարկեցին հոռոմների Ղիաթաղին

սուլթանի մոտ և այնտեղից բերին Ռուզուդանի եղբորորդուն՝ վրաց թագավոր Գիորգի Լաշայի որդուն, որին նոյն Ռուզուդանը ուղարկեց իր դստեր հետ, որ Ղիաթաղին սուլթանի կինն էր: Իսկ նա [Ղիաթաղինը] սրան արգելափակեց, որպեսզի իր զոքանչի դեմ թագավորության համար դավադրություն չլինի:

Մրանք նրան այնտեղից բերին և իր հոր իշխանությունը հանձնեցին նրան և ուղարկեցին իրենց արքա դանի մոտ՝ նրա իշխանությունը հաստատելու համար: Իսկ իրենք մեկը մյուսի հետևից շտապ պատգամավորներ են ուղարկում Ռուզուդան թագուհու մոտ, որպեսզի նա կամա թե ակամա իրենց մոտ գա: Նույնպես և Բաթուն նրա որդուն ուղարկեց դանի մոտ, իսկ ինքը կանչեց Ռուզուդանին, որ իր մոտ գնա:

Նա երկու կողմերի հարկադրանքի տակ անձամբ մահառել ընդունեց և հեռացավ այս կյանքից: [Իսկ մինչ այդ] կտակագիր գրեց Ավագ իշխանին և իր որդուն հանձնարարեց Ավագին, եթե դանի մոտից վերադառնա:

Իսկ նրանք գնացին Գիուզ դանի մոտ, և նա սիրով ընդունեց նրանց: Նա վճռեց, որ սրանք ըստ հասակի կարգի ստանձնեն թագավորությունը: Նախ Գիորգի Լաշայի որդի Դավիթը, որ ավագն էր իրենց, իսկ նրա մահից հետո, եթե ողջ մնա, մյուս Դավիթը՝ Ռուզուդանի որդին, սրա հորդուրի որդին:

Թագավորության գանձերը երեք մասի բաժանեցին. փառավոր ու անգին գահը, հրաշալի թագը, որ այլ թագավորներ չունեին և որը ասում են, հայոց արքա Տրդատ մեծի հոր Խոսրովին (72) է պատկանել, այնտեղ մնացել է Գիուսադրությամբ՝ տեղի ամրության պատճառով և վրաց թագավորների ձեռքն ընկնելով մինչև այսօր մնացել է. այդ և գանձերից այլ թանկագին բաներ ուղարկեցին դանին, իսկ մնացածը բաժանեցին իրենց մեջ: Գալով՝ այդ այդպես արեցին Իվանեի որդի Ավագի միջնորդությամբ:

Լաշայի որդի Դավիթը նստում էր Տփղիս քաղաքում, իսկ
մյուս Դավիթը՝ Սվանեթիայում:

(Կիր. Գանձ., Գլ. ԽԵ)

*Թարթարական զորքի Վրաստանում
արած կոտորածի մասին*

Մինչդեռ մի փոքր կազդուրվել էր մեր երկիրը ավագակների
ու ասպատակների բորբոքած աշխարհաջնջ հրդեհից [պատե-
րազմից], և մարդիկ սրանց [իշխաններին] ավելի էին ապավինել,
քան աստծուն, իշխանների զրկում ու կողոպտում էին աղքատնե-
րին և այդ զրկանքների գնով գնում էին թանկագին զգեստներ ու
հազնում, ուտում-խմում էին և ամբարտավանորեն հոխորտում,
ինչպես վրաց ամբարտավան սովորույթն է, աստված այնպես ա-
րեց, որ իրենց բարձրությունից խոնարհվեն և ճանաշեն իրենց
տկարությունների չափը նրանք, ովքեր առաջինով չխրատվեցին:
Իրենց սատանան զարթեցրեց նրանց, որոնց վրա հույս էին որել:
Հանկարծ թաթարական զորքի ամբողջ ավագանին խորհուրդ
արեց, զինավառվեցին, առհասարակ պատրաստվեցին կոտորե-
լու իրենց հնազանդված հայերին ու վրացիներին այն պատճա-
ռաբանությամբ, թե վրաց թագավորը բոլոր իշխաններով ապս-
տամբվել է կամենում. և զորք են հավաքում՝ գալու մեզ կոտորե-
լու: Եվ դա իսկապես այդպես էր, որովհետև իշխանները զորաժո-
ղովի էին հավաքվել Տփղիս Դավիթ թագավորի մոտ: Գինի խմելու
ժամանակ նրանց սրտերը թունդ ելան, և նրանցից խակամիտ
մարդիկ ասացին. «Ենչո՞ւ մենք սրանց հարկ տանք, եթք այսքան
բազմաթիվ զորք ունենք. եկեք հանկարծակի հարձակվենք նրանց
վրա և կոտորելով ջնջենք նրանց, ու մենք տիրենք մեր երկրին»:

Նրանց այս մտադրությունը խափանեց մեծ իշխան Ավագը: Թաքարական զորքից տեղում պատահեցին, այս լսեցին և իրենց զլիավորներին հայտնեցին:

Երբ իշխանների զորքերը ցրվեցին իրենց տեղերը, նրանք կամենում էին համահավասար բոլորին այսպես զինված կոտորել: Իսկ իշխաններից որին իրենց մոտ գտան, կալանավորեցին, իսկ նրանք, որոնք իրենց մոտ էին՝ հրավիրակներ ուղարկեցին և շտապ իրենց մոտ կանչեցին:

Իսկ ողորմած աստված թույլ չտվեց, որ բանք մինչև վերջ հասնի, խափանեց հետևյալ պատճառով:

Ավագ զլիավորներից Չաղատա անունով մեկը, որ ամբողջ զորքի զորավարն էր և բարեկամ էր Ավագի հետ, կանգնեց զինավառ զորքի մեջ և ասաց նրանց. «Մենք դանից հրաման չունենք կոտորելու նրանց, որ հնազանդված են մեզ, մեզ ծառայություն են մատուցում և հարկատու են դանին, իսկ նրանց ապստամբության հանգամանքները ճշտված չեն: Արդ էթե նրանց առանց պատճառի կոտորեք, դուք պատասխան պիտի տաք դանին»: Այս լսելով՝ դադարեցին գործը քննելուց:

Նրանց մոտ գնաց Ավագի Խոշաք անունով մայրը, երաշխավորեց իր որդու հավատարմությունը նրանց հանդեալ և [ասաց], թե նա ինքը ընդհուած նրանց մոտ է գալու, որը և եղավ իսկապես, քանի որ իշխան Ավագը անմիջապես եկավ ու նրանց ցույց տվեց իր հավատարմությունը նրանց հանդեալ շատ վկաների ներկայությամբ:

Եկավ նաև Դավիթ թագավորը ու այլ իշխաններ: Հատ իրենց օրենքի՝ բարակ պարաներով ամուր կապեցին նրանց ձեռքերն ու ոտքերը և այդպես կապված թողեցին երեք օր. ծաղրուծանակի էին ենթարկում նրանց գոռողության և ապստամբ մտադրության համար: Ապա առնելով նրանց բոլոր ձիերն ու զլիազները՝ բաց

թողին նրանց, իսկ իրենք հարձակվեցին վրաց կողմերը այն բազմաթիվ գավառների վրա, որոնք ապստամբվել, որոնք չէին ապստամբվել, և շատերին կոտորեցին ու շատ ավելի շատերին գերեվարեցին: Բազմությունից անհամար տղամարդիկ, կանայք, մանուկներ գետասույզ արին: Եվ այս կատարվեց հայոց վեց հարյուր իննառունութ թվականին (1249 թ.):

Մրանից հետո մեռավ իշխանաց իշխան Ավագը և թաղվեց Պղնձահանքի՝ իր հայր Իվանեի գերեզմանատանը: Նրա իշխանությունը հանձնեցին Ավագի հորեղբոր որդու՝ Շահնշահի որդի Զաքարեին, որովհետու Ավագը արու զավակ չուներ, ուներ միայն մի մանուկ դուստր և մի արու երեխա, որ ծնված էր ապօրինի կենակցությունից. նրա համար Ավագի մահից հետո ասացին, թե նրանից է, որին նրա քույրը վերցրել պահում էր: Ապա [իշխանությունը] խլեցին Զաքարեից և տվին Ավագի Գոնցա անունով կնոջը:

(Կիր. Գանձ., Գլ. ԽԵ)

Մրանց հետ նրա (73) մոտ գնաց նաև Արցախի կողմերի Խաչենի մեծ իշխան Հասանը, որին փաղաքշանքով Զալալ էին կոչում. աստվածապաշտ, երկյուղած ու պարկեշտ մարդ էր, ազգությամբ հայ: Նա սիրով ու մեծարանքով ընդունեց նրան ու նրա հետ եղածներին՝ իշխան Գրիգորին, որին սովորաբար Տղա էին կոչում, իսկ այդ ժամանակ սա ծեր էր, պարկեշտ պատանի Դեսում իշխանին, Մարկոս վարդապետին և Գրիգոր Եպիսկոպոսին:

Տարավ իր հոր մոտ, մեծարեց ու նրան տվեց իր հայրենիքներ Չարաբերդը (74), Ականան (75), Կարկառը (76), որ նրանից առաջ խլել էին թուրքերն ու վրացիները: Առավ նաև աղվանից տեր Ներսես կաթողիկոսի ու նրա ամբողջ գույքի ու ստացվածքի համար ազատության թուղթ, որ ազատ ու անհարկատու լինի և ազատ

լինի իր իշխանության բոլոր թեմերում ամենուրեք, ու ոչ ոք չընդ-դիմանա նրա հրամաններին:

(Կիր. Գանձ., Գլ. ԾԵ)

Այժմ հայոց յոթ հարյուր երեք թվականին (1254 թ.) Սանգու ղանը և Բաթու մեծ զորավարը Արդուն անունով մի ոստիկանի, որ Գիուզ ղանից հրաման ուներ հնազանդված երկրներից գանձվող արքունի հարկերի վերակացույթյան, և Բաթուի տանից Թորա աղա անունով մի այլ զիշավոր մարդու ուրիշ բազմաթիվ մարդկանց հետ ուղարկեցին աշխարհագիր [մարդահամար] անելու իրենց իշխանության ենթարկված բոլոր ազգերին:

Նրանք, այս հրամանը ստանալով, գնացին բոլոր երկրները՝ այդ գործը զլուխ բերելու: Հասան նաև Հայաստան, Վրաստան, Աղվանք ու նրանց շուրջը գտնվող երկրները. սկսեցին տասը տարեկանից վեր բոլորին համարագրել՝ բացի կանանցից: Եվ բոլորից խստագույն կերպով հարկեր էին պահանջում շատ ավելի, քան մարդ ի վիճակի էր տալու: Սկսեցին աղքատանալ: Տանջում էին անասելի խոշտանգումներով, չարչարանքներով, գելարաններով [պրկող գործիքներով]: Ով թարնվում էր, բռնում սպանում էին: Իսկ ով չէր կարողանում հարկը վճարել, նրանց երեխաներին էին վերցնում պարտքի դիմաց, քանի որ մահմեղական պարսիկների հետ էին շրջում. նեղում էին նաև իշխանները, զավառատերերը՝ դառնալով նրանց գործակիցներ տանջելու ու պահանջելու գործում իրենց շահի համար: Սրանով չբավականացան, այլ բոլոր արհեստավորներին թե՛ քաղաքներում և թե՛ զյուղերում ամենքին հարկատու դարձին: նաև ծովակները, ձկնորսների լճերը, երկաթահանքերը, դարբիններին, ծեփարարներին [հարկի տակ դրին]: Եվ ի՞նչ անհրաժեշտ է մանրամասն պատմել, մարդկանց եկամուտների բոլոր աղբյուրները կտրեցին, միայն իրենք է-

ին շահում: Առան նաև Կողբում և զանազան կողմերում գտնվող բոլոր աղահանքերը:

Նաև վաճառականներից մեծ շահ առնելով՝ ոսկու, արծաթի ու քաննկագին քարերի հսկայական զանձեր կուտակեցին: Այսպես բոլորին աղքատացնելով՝ վայով ու վայնասունով երկրները լցրին, չար ոստիկաններ թողին երկրներում, որ ամեն տարի պահանջեն միևնույն շափով ու գրով:

Բայց նրանցից մեծարվեց Ումեկ անունով մի հարուստ վաճառական, որին իրենք Ասիլ էին կոչում: Սա մի բարեգործ մարդ էր, որին երբեմն հիշատակեցինք. Կարս քաղաքի ավերման ժամանակ թաթարների կողմից Հովհաննես, Ստեփանոս որդիներով ու եղբայրներով ազատվեց: Այն ժամանակ բնակություն հաստատեց Տիգիս քաղաքում և անվանվեց Վրաց Դավիթ թագավորի հայր դանից գրով և ամբողջ ավագանուց մեծարվեց:

Բայց Եկեղեցականներից ոչ մի հարկ չառան, որովհետև դանից հրաման չունեին:

(Կիր. Գանձ., Գլ. ԾԷ)

Բայց այս դեպքերը (77) դեռ չեն պատահել, զորավարների մեծ դանանման Հուլավուն հրաման տվեց արևելքում գտնվող ամբողջ թաթարական զորքին, որի գլխավորն էր Բաչու նուինը, որ ամբողջ իրենց ժողովրդով, ունեցվածքով թողնեն իրենց բնակության երկիրը՝ Մուղանը, Աղվանքը, Հայաստանն ու Վրաստանը և զնան հոռոմների երկիրը, որպեսզի նրանց փոխարեն ինքը նստի քարերեր երկրում: Որովհետև այնքան մեծ բազմությամբ եկավ նա, որ ասում են, թե մի ամիսը հազիվ բավականացավ նրա գորքին Զեհուն (78) մեծ գետով անցնելու համար...

...Հոռոմների սուլթանը պատերազմով դուրս եկավ նրանց դեմ, բայց չկարողացավ դիմադրել, այլ փախստական դառնալով՝ ընկավ Ալայիա կղզին:

(Կիր. Գանձ., Գլ. ԾԲ)

Իսկ Մսրա Սուլթանը հավաքեց բազմաթիվ զորքեր, եկավ թաթարական տեղապահ զորքերի վրա, որի գլխավորն էր հավատով քրիստոնյա, ազգությամբ նայիման Քիթբուղա անունով մեծապատիվ մի մարդ, որ պատերազմով դուրս եկավ սուլթանի դեմ: Քաջաբար կովեցին, նրա [Քիթբուղայի] հետ եղած ամբողջ զորքը կոտորվեց, որովհետև եզիպտացիք չափազանց շատ էին: Կոիվը տեղի ունեցավ Թաքորական լեռան դաշտում: Քիթբուղայի հետ պատերազմում կային բազմաթիվ հայեր ու վրացիներ, որոնք նրա հետ կոտորվեցին: Այս տեղի ունեցավ հայոց յոթ հարյուր ինը թվականին (1260 թ.):

(Կիր. Գանձ., Գլ. ԿԲ)

Իսկ Լաշայի որոյի վրաց թագավոր Դավիթը, որ հնագանդվել էր թաթարներին, նեղվեց, զզվեց ծանր հարկապահանջությունից. նեղում էին նրան, բոլոր իշխաններին ու ամբողջ երկիրը անասելի ծանրությամբ, որը չին կարողանում տանել: Նա թողեց Տիղիս քաղաքը, աթոռը, ունեցած ամեն ինչը և փախավ խոր Ափխազիա և Սվանեթիայի անառիկ վայրերը: Նրա հետ [փախան] նաև զավաների մեծամեծ իշխաններ, որոնք նեղվել ու տառապել էին, ծախել ու գրավ էին դրել քաղաքներ ու զավառներ, բայց չին կարողացել կշտացնել անկուշտներին, որոնք նման էին ազահ տզրուկների: Եվ այնպես տագնապահար փախավ, որ իր կին Գոնցա թագուհուն և նորածին Դեմետրե որդուն չկարողացավ իր հետ տանել, միայն Գիորգուն իր անդրանիկին տարավ:

Իսկ մեծ ոստիկան Արդունը շատ զորք գումարած գնաց փախած Դավիթ թագավորի հետևից, որ բռնի նրան: Երբ չկարողացավ հասնել նրան, վրաց բազմաթիվ գավառներ անխնայորեն կոտորեց ու գերեց: Այլև վրաց թագավորների գերեզմանատունը՝ Գելաթը (79), սաստկապես կոտրատեց ու քանդեց. նաև Ածորը (80) կաթողիկոսարանը նույնպես անողորմաբար ջարդուիշուր արեց:

Բայց հանկարծակի Վրաստանից եկավ հեծյալների մի գունդ և մեծ քաջություն ցուցաբերեց: Արդունի զորքից շատերին կոտորեցին, ինչպես կրակը ընթանում է եղեգնուտի միջով, իսկ իրենք անվնաս գնացին. և դրանք մոտ չորս հարյուր հոգի էին:

Արդունը երկյուղեց, այլևս չէր հանդգնում այնպես համարձակ մտնել ու հետախուզել վայրերը: Ապա վերադարձավ Հուլավուի մոտ և իր մտքում չարություն նյութեց: Կալանավորեց վրաց թագուհի Գոնցային, սրա դուստր Խոշարին, մեծ իշխան Շահնշահին, Խաչենի տեր Հասան Զալալին և ուրիշ շատերին՝ պարտքերի ու հարկի պատրվակով. սրանցից շատ գանձեր առավ, հազիկ մահվանից պլծան:

(Կիր. Գանձ., Գլ. ԿԳ)

Այնպես պատահեց, որ մի անգամ Արդունը մեծ զորքով Վրաստանի կողմերում էր նրա հետ էր նաև Զաքարեն (81): Արդունից և այլ զորքերից զաղտնի Զաքարեն գնաց իր կնոջը տեսության, որ նրա [կնոջ] հոր Ռիխտիքի (82) իշխան Սարգսի մոտ էր, իսկ սա վրաց թագավոր Դավիթի հետ ապստամբ էր: Արդունը իմացավ, հայտնեց Հուլավուին: Նա հրամայեց կապաճներով իր մոտ բերել և այլ սուտ մեղադրանքներ բարդելով վրան՝ հրամայեց նրան սպանել, անդամ-անդամ հաշել և զցել շներին: Երբ նրա հայրը՝ Շահնշահը, Օծուն (83) գյուղում լսեց այդ գույժը, սրտա-

բեկվեց և վշտից մեռավ: Նրան տարան թաղեցին Քոբայրում (84),
որը նրա կինը գնեց հայերից:

(Կիր. Գանձ., Գլ. ԿԴ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Կիրակոս Գանձակեցին, թվարկելով հայ պատմիչներին,
այստեղ նկատի ունի Արծրունյաց տան պատմիչ Թովմա Արծրու-
նուն, որն իշխան Գրիգոր Դերենիկի, ապա նրա որդի Գագիկի ա-
ռաջարկով գրել է «Պատմություն տանն Արծրունյաց» աշխատու-
թյունը:

2. Շապոհ Բագրատունին IX դարի պատմիչ է, գրել է Աշոտ
Ա Բագրատունու պատմությունը, որը չի պահպանվել, սակայն
նրա մասին հիշատակում են Ասողիկը, Հովհաննես Դրասիանա-
կերտցին, Ուխտանեսը, Սամվել Անեցին և այլ պատմիչներ:

3. Մաս X դարի պատմիչ, կաթողիկոս Հովհաննես Դրասիա-
նակերտցին է, որի «Հայոց պատմություն» աշխատությունը, սկսե-
լով սկզբից, հասնում է մինչև 924 թվականը:

4. Մովսես Կաղանկատվացին VII դարի պատմիչ է, գրել է
«Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատությունը՝ հասցնե-
լով մինչև իր ժամանակը: Կաղանկատվացու գործը շարունակել է
Մովսես Դասիուրանցին՝ ժամանակագրորեն այն հասցնելով
մինչև XI դարի սկիզբը:

5. Ուռիհան քաղաք էր Հյուսիսային Միջագետքում: Ավելի ուշ
կոչվել է Եղեսիա, թեև հայկական աղբյուրները պահպանել են
Ուռիհա, Ուրիհա, Ուրֆա անվանաձևերը:

6. Խոսքը Վիրքի պատրիարք Վյուրիփոն Ա-ի (599-614 կամ 616
թթ.) մասին է, որի օրոք և նախաձեռնությամբ վրաց եկեղեցին 608
թ. անջատվեց Հայոց միաբանությունից: Այս իրողությանն է նվիր-

ված X դարի պատմիչ Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմություն» վերնագրված գրեթե ամբողջ աշխատությունը:

7. Գրիգոր Լուսավորիչն է (մոտ. 257-331 թթ.):

8. Արիստակեսը Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին է, որը կաթողիկոս է ձեռնադրվել 325 թ. և աթոռակալել ութ տարի: Սպանվել է Ծոփքի Արքեղայոս իշխանի ձեռքով, որին խիստ կշտամբել էր Արիստակեսը անբարի վարքի համար:

9. Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց Պատմության» այս հատվածը գրելիս հիմնվել է Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության տեղեկությունների վրա, ուր առավել մանրամասն տրվում է Մեսրոպ Մաշտոցի (361-440 թթ.) կողմից հայ, աղվանից և վրաց գրերի ստեղծման պատմությունը:

10. Գրիգոր Լուսավորչի տոհմից վերջին կաթողիկոս Սահակ Պարթևն է (348-439 թթ.), որն ընդմիջումներով աթոռակալել է 387 թվականից:

11. Մժեծ Գնունին է, որը 517 թ. նշանակվել է հայոց մարզպան: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ նա այդ պաշտոնը վարել է երեսունչորս տարի, մինչդեռ նրա մահվան թվականն է համարվում 548 թվականը:

12. Մովսես Բ Եղվարդեցի (574-604 թթ.) հայոց կաթողիկոսն է:

13. *Տե՛ս՝ ս ծանոթ. 6:*

14. Վրթանես Քերթողը կաթողիկոսական տեղապահությունը ստանձնել է 604-607 թվականներին:

15. Ցուրտավը, որը X դարի պատմիչ Ուխտանեսն անվանում է նաև Գաջենք, գտնվում էր Մեծ Հայքի Գուգարք նահանգի Բողնովոր գավառում, Գաջենագետի և Ցուրտագետի ջրկիցում: Բնակավայրն այժմ գտնվում է Վրաստանի Բոլնիսի մունիցիպալիտետի Արուխլո գյուղի մոտ:

16. Աբրահամ Ա Աղբաթանեցի (607-615 թթ.) հայոց կաթողիկոսն է, որը հաջորդել է կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերքողին:

17. Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմությունը» գրեթե ամբողջությամբ նվիրված է Հայոց միաբանությունից Վիրքի դուրս գալու պատմությանը, որից էլ օգտվել է Կիրակոս Գանձակեցին այս հատվածը շարադրելիս:

18. Խոսքը Վերաբերում է Հյուսիսային Կովկասում և Ղրիմում բնակվող խազիրների Զերու խաքանին: Իր շարադրանքի այս հատվածը գրելիս Գանձակեցին օգտվել է Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքից, ուր մանրամասն պատմվում են այս դեպքերը:

19. Անանիա Մոլացի հայոց կաթողիկոսն է, որն աթոռակալել է 946-968 թվականներին:

20. Բաղրը Մեծ Հայքի Սյունյաց աշխարհի գավառներից է, համապատասխանում է ներկայիս Կապանի տարածաշրջանին:

21. Աշոտը հայոց Արքա (928-953 թթ.) թագավորի որդին է, որը պատմության մեջ հայտնի է Աշոտ Գ Ողորմած (953-977 թթ.) անվամբ:

22. Խոսքը Լոռու (Կյուրիկյան) թագավորության հիմնադիր Գուրգեն Ա Կյուրիկեի (970-991 թթ.) մասին է:

23. Սանահինը կառուցվել է 957 թ., իսկ Հաղպատը՝ 967 թ.: Կառուցողը Աշոտ Ողորմածի կին Խոսրովանույշ թագուհին է և ոչ Կյուրիկե արքան: Երկու վանքերն ել ունեին բարձրագույն դպրոցներ և մատենադարան:

24. Խաչենը գտնվում էր Արցախ աշխարհում: Խաչենի իշխանության սահմաններն արևմուտքում հասնում էին մինչև Սևանա լճի ավազանը, իսկ արևելքում՝ կցվում Զրաբերդին:

25. Խոսքը հայ մատենագիր, փիլիսոփա, գիտնական ու մանկավարժ Հովհաննես Սարկավագի (1047-1129 թթ.) մասին է:
26. Վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125 թթ.) թագավորն է:
27. Սաղմ. ԶԸ, 21-23:
28. Վրաց Դավիթ Դ. Շինարարի որդի Դեմետրե Ա.-ն է, որը թագավորել է 1125-1154/1155 թվականներին:
29. Լոռու (Կյուրիկյան) թագավորության հիմնադիր Գուրգեն Ա Կյուրիկըն (870-891 թթ.) է՝ Աշոտ Գ Ողորմածի որդին:
30. Բ. Հարությունյանը Տավուշն ընդգրկում է Փառիսոսի թագավորության կազմում՝ միաժամանակ համարելով Լոռու թագավորությանը միացված տարածք: Տավուշը գտնվում էր Գարդմանում, որը Մեծ Հայքի Ուտիք նահանգի գավառներից էր:
31. Մածնաբերդը գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգում: Առ այսօր պահպանվել են նրա ավերակները:
32. Խոսքը Կիլիկիայի թագավոր Լևոն Բ Մեծագործի (1198-1219 թթ.) մասին է:
33. Վրաց Թամար թագուհին գահակալել է 1184-1213 թթ., իսկ մինչ այդ՝ 1178 թվականից, թագավորում էր հոր՝ Գեղրգի Գ (1156-1184 թթ.) թագավորի հետ համատեղ:
34. Շահարմենների պետությունը գոյատևել է 1100-1244 թվականները: Ընդգրկել է Վասպուրականի մի մասը, Բերկրիի, Արձեշի, Բաղեշի, Խլաթի, Մանազկերտի, Խնուսի, Բյուրակնի շրջանները և Դերջանի մի մասը:
35. Խլաթ քաղաքը գտնվում էր Բգնունյաց (Վանա) ծովի հյուսային ափին: Պատմական այս ժամանակահատվածում այն Շահարմենների տիրապետության ներքո էր և սուլթանի նստավայրը: Խլաթը ներկայիս Ախլաթ բնակավայրն է Թուրքիայում:
36. Տարոնը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից էր, որի անունը հաճախ տարածվում էր ամբողջ նահանգի վրա:

Պատմական այս ժամանակահատվածում Տարոնի կամ Տուրուբերանի մի մասը գտնվում էր Շահարմենների պետության ենթակայության տակ, իսկ մյուս մասը ենթարկվում էր Թոռնիկյանների իշխանությանը:

37. Խոսքն Աղվանից Ստեփանոս Գ (1155-1195 թթ.) կաթողիկոսի մասին է, իսկ քորեպիսկոպոսի անունն էր Սարկավագ:

38. Խոսքը Գանձակի Գուրջի Բաղրադին ամիրայի մասին է, որը հրամայել էր Սարկավագ քորեպիսկոպոսին օրինել իրենց քաղաքի ջուրը:

39. Խաչենի իշխանությունը հայ ավատական վարչաքաղաքական միավորում էր Հայաստանում, որի սահմաններն արևելքում հասնում էին մինչև Մուխանք (Միլ Մուլան) դաշտը, իսկ արևմուտքում այն ընդգրկում էր Գեղամա ծովի ամբողջ արևելյան ափը՝ Սոթք գավառով: IX դարի կեսից Խաչենի իշխանությունը տարածվում էր Ուտիքի հարավային և արևմտյան գավառների վրա:

40. Աղվանքի Հովհաննես Զ (1195-1235 թթ.) կաթողիկոսն է:

41. Չարեք բերդը, որը կոչվել է նաև Սահակ Անարայի բերդ, Շամքորի բերդ և Մամոտ բերդ, գտնվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառում, որը ներկայումս Աղբքեջանի տարածքում է՝ Շամխոր և Գետարակ գետերի միախառնման տեղում, գետափից 100 մետր բացարձակ բարձրության վրա:

42. Բ. Հարությունյանը Խամշի վանքը տեղադրում է Վահրամյանների կալվածքում:

43. Խոսքը Հայաստանի ինքնակալ կառավարիչ (1200-1212 թթ.), հայ-վրացական բանակի ամիրսպասալար, պետական, ռազմական և դիվանագիտական գործիչ Զաքարե Զաքարյանի (մահ. 1212 թ.) մասին է:

44. Գեորգի Լաշան (1191-1223 թթ.) թագավորել է 1213-1223 թթ.՝ հաջորդելով իր մորը՝ Թամար թագուհուն (1184-1213 թթ.):
45. Հեղինակը նկատի ունի Աղվանից Եսվաղեն թագավորին:
46. Աղվանից կաթողիկոս տեր Վիրոն աթոռակալել է 595-629 թվականներին:
47. Պարսից արքա Խոսրով Բ Փարվեզն (591-628 թթ.) է:
48. Աղվանից կաթողիկոս Միքայելն է, որն աթոռակալել է 707-744 թվականներին:
49. Մաքենացիների վանքը կառուցվել է VIII դարում: Եղել է գրական-կրթական խոշոր կենտրոն:
50. Խոսքը Աղվանիքի Գրիգորիս (Գագիկ) կաթողիկոսի մասին է:
51. Տե՛ս՝ ս ծանոթ. 28:
52. Պարտավը գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգի Ուտի Առանձնակ գավառում: Պատմական այս ժամանակաշրջանում գտնվում էր Ելտկուզյանների պետության ենթակայության ներքո:
53. Բ. Հարությունյանը Բելուկանը ներկայացնում է Բայլական ձևով և տեղադրում Մուլանի դաշտում:
54. Վ. Առաքելյանը Խունանը տեղադրում է Տփոխից հարավ՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանիք սահմանագլխին:
55. Հայ գիտնական, օրենսդիր, առակագիր, մանկավարժ Միհթար Գոշն (1130-1213 թթ.) է:
56. Կարինը գտնվում էր Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Կարին գավառում: Ներկայիս Էրզրում քաղաքն է Թուրքիայում:
57. Կայան և Մահկանաբերդ ամրոցները գտնվում էին Կայան գավառում, որը Մեծ Հայքի Գուգարք նահանգի Զորովոր գավառն էր: Գավառը տարածվում էր Աղստև գետի ձախ ափին, նրա միջին հոսանքում: Մահկանաբերդը պատմական այս ժամանա-

կահատվածում պատկանում էր Մահկանաբերդի Արծրունիներին:

58. Խոսքը երկրաշարժից կործանված Գետիկ վանքի մասին է:

59. Հաղարձնի վանքը գտնվում է ներկայիս Հայաստանի հանրապետության Տավուշի մարզում՝ Դիլիջան քաղաքից 18 կմ հեռավորության վրա:

60. Խոսքը վարդապետ Մխիթար Գոշի մասին է:

61. Խոսքը Գետիկ վանքի միաբանության մասին է:

62. Խոսքը վերջին խորեզմշահ Զալալ աղ Դինի (1220-1231 թթ.) մասին է, որը յոթնամյա (1225-1231 թթ.) պատերազմական գործողություններ ծավալեց Այսրկովկասում:

63. Կոտայք գավառանունն առաջացել է Մեծ Հայքի Վասպուրական նահանգում գտնվող Կոտուրի լեռներում բնակվող կոտեր ցեղախմբի անունից, որոնց մասին հիշատակում է Ստրաբոնը: Կոտերը ներկայիս տարածքում բնակվել են Արշակունյաց թագավորական հարստության վերացումից հետո, երբ պարսից արքունիքը, մասնատելով Արշակունյաների ոստան հանդիսացող Ոստան Հայոց գավառը, այն մաս առ մաս նվիրաբերել է փոքր նախարարական տոհմերին սեփականության իրավունքով, որպեսզի նրանց կախման մեջ պահի արքունիքից: «Կոտայք» բառը ևս նշանակում է «կոտեր», և հայ պատմիչներից առաջինը Սեբեոսն է հիշատակում Կոտայք գավառի մասին:

64. Գառնին Հայաստանի նշանավոր բնակավայրերից մեկն է: Գտնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մազագ գավառի տարածքում, ներկայիս Կոտայքի մարզի գյուղերից է: Դեռևս առաջին դարում այստեղ կառուցվել է հեթանոսական տաճար՝ բերդ-ամրոցով: XVII դարում փլված տաճարն այսօր նորից կանգուն է ձարտարապետ Սահինյանի շնորհիվ: Գառնին Արշակունյաների դաստակերտն էր, իսկ V դարում եղել է պաշտպանական

կարևոր ամրություն: Գանձակեցին Գառնին հիշատակում է որպես զյուղաքաղաք:

65. Պղնձահանքը ներկայիս Ախթալա քաղաքն է, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ Լալվարի ստորոտում:

66. Վրաց Ռուսուդան թագուհին թագավորել է 1223-1245 թթ.՝ հաջորդելով իր եղբորը՝ Գեորգի Լաշային (1213-1223 թթ.):

67. Իվանե Ա Զաքարյանի (մահ. 1227 թ.) որդին է, որը հոր մահից հետո ժառանգել է աթարեկի պաշտոնը և Զաքարյան իշխանական տան ավագությունը:

68. Այսինքն՝ վերադարձավ վրաց թագուհու մոտից:

69. Վրաց թագավոր Դավիթ Է Ուլուն (1247-1270 թթ.) է:

70. Վրաց թագավոր Դավիթ Զ Նարինն (1245-1259 թթ.) է:

71. Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաքերդցին է, որն աթոռակալել է 1221-1267 թվականներին:

72. Տրդատ Մեծը թագավորել է 287-330 թվականներին, իսկ նրա հայրը՝ Խոսրով Բ Արշակունյան (272-287 թվականներին):

73. Խոսքը Բաթու դանի որդի Սարթախի մասին է, որը քրիստոնեական դաստիարակություն և կրթություն էր ստացել ասորի դայակների կողմից և չափահաս դառնալով՝ քրիստոնեություն էր ընդունել: Սա բազմաթիվ հնարավորություններ ստեղծեց եկեղեցու ու քրիստոնյաների համար և հոր համաձայնությամբ հարկից ազատելու թուղթ գրեց հոգևորականների ու եկեղեցիների համար՝ ուղարկելով բոլոր կողմերը:

74. Չարաբերդը ամբոց է Խաչեն գավառում, որ հիշատակում են Սովուն Կաղանկատվացին և Ստեփանոս Օրբելյանը: Այժմ հայտնի է Զաքարերդ անվամբ:

75. Բ. Հարությունյանը Ականան տեղադրում է Չարաբերդից հարավ-արևմուտք՝ Տրտու գետի ձախ ափին:

76. Կարկառը նույնպես պետք է փնտրել Խաչենում, թեև նրա տեղադրությունը հայտնի չէ:

77. Գանձակեցին նկատի ունի Բաթու դանի մահն ու նրա որդի Սարբախի թունավորումը, որոնց մասին խոսում է վերը և թվագրում 1256 թվականով:

78. Վ. Առաքելյանը Զեհուն գետը նույնացնում է Ամուղարիայի հետ:

79. Գելաթը մենաստան է Իմերեթիայում, որը կառուցել է Դավիթ Բ-ն:

80. Ածղորը գտնվում է Ախալցիխեից հյուսիսի:

81. Շահնշահի որդի Զաքարեն է՝ ամիրսպասալար Զաքարե Զաքարյանի թոռը:

82. Ուխտիքը, որ կոչվում է նաև Ոքաղե, Մեծ Հայքի Տայք նահանգի գավառներից էր: Ուխտիքը եղել է նաև քերդաքաղաք, որն այժմյան Օլթին է Թուրքիայում:

83. Օձունը նույնանուն գյուղն է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ Ալավերդի քաղաքի մոտ:

84. Քոբայրը նույնպես տեղադրվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում: Այստեղ էր գտնվում Քոբայրավանքը, որը զարգացած միջնադարում Հյուսիսային Հայաստանի հոգևոր, մշակութային և գրչության հայտնի կենտրոններից էր:

ՄԽԻԹԱՐԱՅ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ¹²

Իշխանք Վրաց

Հայկն և եօթն եղբարք իւր. Քարթլոս. Քարդոս. Մովկան. Լեկան. Հերոս. Կովկաս. Եզրիս. Մծխիթա. Ուփլոս. Ակրիտոնազոն: Աստ Աղեքսանդր¹³:

Թագաւորք Վրաց

Փառնաւազ (1)՝ առաջին թագաւոր. Սուրմակ. Մրվան. Փառնաջում. Արբոկ. Արտակ. Բարտոն. Մրվան. Արբակ. Անդրիկ. – Քրիստոս ծնաւ: Բարտոն և Քարթամ. Ազուկ. Ազմայէլ. Համազասպ. Դերուկ. Փարսման. Միհրդատ. Արմի. Համազասպ. Վրոյ. Վաչէ. Ասպազուր. Միհրան (2). – սա հաւատաց ի Քրիստոս Նունեայ քարոզութեամբ: Բահքար. Միհրատ. Վարզաբաքար. Տրդատ. Փարսման. Միհրատ. Վարչիլ. Միհրդատ. Վարզաբաքար. Սուրմակ. Զուանշէր. Վախթանկ (3). – սա զՏփխիս շինեաց: Դաշէ. Գուրգ ասլան. Փարսման. Փարսման. Բակուր. Քարեպարազ. Գորամ. Ստեփանոս. Ատրներսէի, Ստեփանոս. Արչիլ և Միհր. Զուանքեր. Աշոտ. Դավիթ. Գուրգի. Լևոն. Դեմետրէ. Թէոդոս. Գուրգէն Բագրատունի. Բագարատ. Գուրգի. Դավիթ (4). Գուրգի (5). Թամար (6). Լաշա. Գորգի. (7) Ըռուսուդան (8). Դաւիթ փոքր. Դաւիթ մեծ. Դեմետրէ սպանեալ: – ՀԹ. իշխանք և թագաւորք: Դաւիթ. Վախթանկ:

¹² Աշխարհաբար տեքստի բացակայության պատճառով օգտագործել ենք հեղինակի երկի գրաբար բնօրինակը:

¹³ Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն Հայոց» երկի գրաբար բնօրինակը տե՛ս Մխիթարայ Այրիվանեցվոյ «Պատմութիւն Հայոց», Մուկվա, 1860:

Եպիսկոպոսը Վրաց

Տէր Յոհան. տէր Յակոբ. տէր Յոր. տէր Եղիայ. տէր Յունան. Տէր Գրիգոր. տէր Բարսեղ. տէր Սուշեղ. տէր Միքայէլ. տէր Պետրոս. տէր Սամուէլ. տէր Թափեջան. տէր Չիմազ. տէր Աքաս կաթողիկոս. տէր Ելթայ. տէր Կիրիկոն պիղծ (9). տէր Մակար. տէր Սիմեոն. տէր Սամուէլ. տէր Բարթողմէնոս. տէր Յոհաննէս. տէր Բաբելաս. տէր Թափօր: Զայսչափս գտաք յօրինակս:

Իսկ Բէլ ի վարչնականգնեան հասակն իւր հպարտացեալ՝ հնազանդեաց իւր զամենայն ազգս և ետ պաշտել զինքն, բաց ի Հայկա քաջէ, որ ուր եղբարք իւր և 300 ոգուվք զայ բնակէ ի Հայք ի Հարք (10) զաւառի, և զեղբարս իւր ցրուէ ի Տրավիզոնէ մինչև ի Դալիարա և ի Դարբանդ: Եւ ինքն սպանանէ նետիւ զՆեբրուվթ, տիրելով Դարբանդայ և Ըուանայ, Մուլանայ և Աստրատականի, Մարաց և Մծբնայ (11), Միջագետացև Մելտինոյ (12), Կոկիսոնոյ (13) և Կեսարիոյ (14), Կողոնիոյ (15) և Սպերոյ (16), Խաղոտեաց (17) և Քարթլոյ (18), Սոնեթոյ և Կովկասու(19)՝ լնլով զմիջոցս այս աշխարհաց:

(Մխիթ. Այրիվ., Ամք աշխարհի, 2772)

Հայոց՝ Հրաշեայ, Վրաց առաջին թագաւոր Փառնաւագ, որ ի վեց լեզուէ արար զվրացերէնն, նաև և զգիր նորա:

(Մխիթ. Այրիվ., Ամք աշխարհի, 4551)

Հաւատան յԱստուած Վիրք և Միհրան թագաւորն ի ձեռն Նունեայ (20):

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 287)

Սուրբ Շուշանիկ (21) նահատակեցաւ և Անդրէաս զՆունեայ խաչն ի Սպեր տարաւ:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 452)

Վախթանկ (22) վրաց թագաւորն զՏփիս շինեաց:
(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 500)

Սաբայ նստի կաթողիկոս ի Վիրս առանց պատրիարքին Ան-
տիոքու:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 571)

Վիրք ի բաց կացին ի միաբանութենէ Հայոց (23):
(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 615)

Արչիլ և Միհր թագաւորք Վրաց հարին զՄրուանն (24) մերձ
յԱնակոր բերդն (25):

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 690)

Յաւուրս տէր Դաւթի Փարման քահանայ Կակաղեցի որոշեալ
ի հայոց՝ ի Վիրս դարձոյց զԾոնդիացիսն, այս է Ծադն, որ կան
այժմ ի հոռոմս:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 821)

Թագաւորն Ամբատ տիեզերակալ (26) շինեաց զԱնի քաղաք,
որ թարգմանի Խնամք. սա կալաւ զՍուլտանն և ծամեր ետ առնել
Տաճկաց որպէս կանանց: Կալաւ և զԴեմետրէ թագաւորն Վրաց և
քազում Վրացոց ձեռսն խազեաց, ուստի և Ավիշազք անուանե-
ցան: Զսա խաչեաց պիղծն Յուսուփի ի Դուին. և կատարեցաւ մար-
գարէութիւն Մովսեսի Խորենացւոյն, որ ասաց. «Բազրատունիքդ
թագաւորէք ի Դուին»:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 913)

Աստ եղև սկիզբն թագաւորելոյ Բագրատունեաց ի վերայ Վրաց. զի Գուրգէն ի Վիրս և Ամբատ (27) եղբայր նորա ի Հայս թագաւորեցին: Սա զԱնւոյ պարիսպն ամբացոյց և զմեծ կաթողիկէն հիմնարկեաց:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 981)

Իպն Խոսրով՝ թագաւոր պարսից, զարմացոյց զաշխարհս ի-մաստութեամբ իւրով. սա քրիստոսասէր և տօնասէր էր, ել թա-գաւոր ի Հայս և հնազանդեաց զՎիրս:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1011)

Մոնոմախն (28) երարձ զթագաւորութիւնն Բագրատունեաց, որք 10 թագաւորք կալան զամս 160: Սոյնպէս եհան յաշխարհէս մերմէ զկաթողիկոսն տէր Պետրոս (29) և նստոյց ի Սեբաստիա (30), և անտի և այսո ոչ եկն առ մեզ կաթողիկոս: Իսկ ի զարմէ թա-գաւորացն Բագրատունեաց մնացին ի Վիրս և ի Մածնաբերդ (31) և ի Նոր բերդ, որք կալան զբազում զաւառս և շինիցին բերդս բա-զումս:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1045)

Բագարատ թագաւոր Վրաց (32) էառ զՏփխիս ի Զափայ օգ-նականութեամբ Գագկայ թագաւորին Կախեթոյ՝ որդոյ Յովհան-նէս թագաւորին:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1051)

Թագաւորն Հայոց Վիրիկէ և Վրաց Դեմետրէ և կաթողիկոսն Հայոց տէր Բարսեղ զնացին առ Մելիք Շահ (33) սուլթանն և դար-ձան պատուով:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1081)

Դաւիթ թագաւորն (34) Վրաց եհար զԷլդազի և զՄելիքն և
էառ զԳագ (35), զՏէրունական և զԱնի քաղաք:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1121)

Ապլսուար եբեր ի Խլաթայ զռսկի նալն և եղ ի զլուխ կաթու-
ղիկէին Անոյ: Իսկ քաղաքացիքն բերին զԴաւիթ թագաւորն Վրաց
և բացին նմա զղուռն քաղաքին. և նա կալեալ զԱպլսուար ի Սո-
նէթ առաքեաց որդովն, և զնալն ձգեաց յեկեղեցայն և խաչ կանգ-
նեաց:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1121)

Գայ Փալտուն՝ որդի Ապլսուարայ և դարձեալ առնու զԱնի:

Դեմէտրէ (36) թագաւորն եհար զՂարասնթուր աթապէկն ի
Նոր բերդին:

ԶԴմանիս և զԽունան էառ Ապուլեթ:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1131)

Կալաւ Դեմէտրէ զՄալթուին ի դրանն Անոյ, իսկ Դավիթ (37)`
որդին Դեմէտրէի եհար զՄէլիք Սուլտանն և էառ զՏփիխիս:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1151)

Թագաւորն Գէորգի (38) էառ զԴուխին:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1161)

Գէորգի թագաւորն եբարձ զգողս և զաւազակս:

Թամար (39) թագուհին մեծացոյց զԶաքարիա և զՅոհաննէս,
որ և Իւանէ:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1181)

Զաքարէ և Իւանէ առին կարգաւ զաշխարհս տաձկաց ի
Կայենոյ (40) մինչ ի Բաղաբերդ (41)` ի Սամշոյլտոյէ մինչ ի Վա-
ղարշակերտ (42) աստուծով յաջողեալք:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1191)

Մեռաւ Թամարն (43) և թագաւորեաց որդի նորա Լաշայն
(44), և ասպատակեայ յԱրձէշ (45) և ի Վարագ (46), իսկ ի կողմն
Պարսից մինչ ի Զրեհ...

ԶԻւանէ կալան ի Խլայթ (47) և դարձեալ դաշամբք խաղաղու-
թեան քողին:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1201)

Մեռաւ Զաքարէ (48), և նստաւ Շահանշահ:

Աստո՞ մի նիզակածն երևեցաւ: Զափայ և Սափատայ թաթար
նոյիքն հարին զԼաշայն ի Կոտմայ:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1211)

Ղփչախն եհար զԼաշայն ի Գանձակ...

Զալալադին սուլթանն Խորասանայ զայ փախստական ի
Թաթարէն և հարու զԼաշայն և զԻւանէ (49) ի Կոտայսն՝ անձաւա-
հնս առնելով ի ձորն Գառնոյ:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1221)

Ըուսուդանն (50) թագաւորէ Վրաց, իսկ Հայքոթաղանն բա-
ժանէ զզօրս իւր յերիս առաջս՝ ի հարաւ, ի հիւսիս և ի միջոց աշ-
խարիս անհուն բազմութեամբ: Հարաւայինն էառ զամենայն
Հնդիկս և զծովեզերայս մինչև ի ձկնակերն Եթովպահա. հիւսի-
սային գնայ զվերին կողմամբքն Կազբիական ծովուն՝ կոխելով
զբազում աշխարհս՝ անցանէ ընդ Դանուր գետ, զայ ընդ առաջ նո-

բա կայսրն Ալամանաց և յետո նահանջէ զնա. իսկ միջին զօրքն հարկանեն ի սուր սուսերի իւրեանց զՊարթևս և զՎրկանս, զՔուշանս և զԵլիմացիս, որ այժմ ասին Մլիուտք, զԽորասան, զՊարսս, զՄարս, զԱսպահան և զԱտրպատական և կարգաւ կոխելով զան ի Հայս, ի Վիրս և յԱղուանս. և ի միում ամի, ի ՈՉԵ (1236) թիւն՝ առին առհասարակ և կոտորեցին զաշխարհս, զբերդս և զքաղաքս: Իսկ թագաւորն Վրաց և իշխանք աշխարհիս փախստական լինին: Եւ յետոյ իշանէ Աւազն (51) ի Կայենոյ և երթայ առ Չարմաղանն և առնէ խաղաղութիւն:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1231)

Եհար թայթարն զՀոռմոց սուլթանն և էառ մինչ ի Կեսարիա և յետոյ մինչ յԱնտալիա և աւերեաց զՍամցիսէ. Թենալն և Զեկանն զանասունս աշխարհիս կրկին աւար առին:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1241)

Փախեան երկոքին Դաւիթ թագաւորքն Վրաց (52) ի Սոնեթ, իսկ զիշխանս և զազասորդիս զամենեսին պատանդ՝ տարան յորտուն և քեսիրքանը անուանեցին: Քակեցին զամենայն բերդս և զամենայն ամուր եկեղեցիս զՀայոց, զՎրաց և զԱղուանից ի ձեռն Խոճազիզ տաճկին. առին կրկին զՄոսփարդին, նաև զԱլամուդ և զամենայն միջերկրեայս մինչև յԵրուսաղէմ:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1251)

Արդունն զՎրացտունն աւերեաց. զԶալալն և զԶաքարէն սպանին...

Դակութարն փախեալ ի Սոնեթ...

Շարժ եկն ի Վրացտուն և բազում վնաս արար:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1261)

Կոտորեաց Արդունն զՁալալտայքն և զայլ բազում նուինայս յաղագս ապստամբութեան, ընդ որս և զանմեղ թագաւորն Վրաց զԴեմետրէ սպանին:

(Մխիթ. Այրիվ., Ամք տեառն, 1281)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փառնավազյանների մասին հիշատակություն ունի Փավստոս Բուզանդը (5-ԺԵ):

2. Միհրանի կողմից քրիստոնեության ընդունման պատմությունը նկարագրում է Սովորեածությունը (Բ-ԶԶ):

3. Վրաց Վախթանգ թագավորի և հայ-վրացական համատեղ պայքարի մասին գրում է Ղազար Փարպեցին (ԿԷ, Հ, ՀԳ):

4. Դավիթ Դ Շինարարն է (1089-1125 թթ.):

5. Գեորգի Գ-ն (1156-1184 թթ.) և՝ Դեմետրէի (1126-1155 թթ.) որդին:

6. Թամար թագուհին թագավորել է 1184-1213 թվականներին:

7. Լաշա Գեորգին (1213-1223 թթ.) Թամար թագուհու որդին է և հաջորդը:

8. Ռուսուդանը (1223-1245 թթ.) Թամար թագուհու դուստրն է և հաջորդել է իր եղբորը՝ Գեորգի Լաշային:

9. Կյուրինը պիոն է համարվում Վրաց եկեղեցու՝ Հայոց միաբանությունից դուրս գալու պատճառով, որը տեղի ունեցավ 608 թ. Կյուրինի նախաձեռնությամբ: Այս մասին մանրամասն պատմում է Ուխտանես եպիսկոպոսն իր «Պատմություն Հայոց» աշխատությունում:

10. Հարքը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից էր: Տարածվում էր Արածանի գետի վերին հովտում՝ Տարոն, Վարձնունիք Ապահովնիք, Բզնունիք զավառների միջև:

11. Մծբինը Վերին Միջազգետքի կամ Արվաստանի մայրաքաղաքն էր, եղել է ուղմավարական կարևոր նշանակություն ունեցող ամրություն պարսկաբյուզանդական սահմանին, գտնվում է Տիգրիս գետից 100 կմ դեպի արևմուտք:

12. Մելիտենեն քաղաք էր Փոքր Հայքի հարավում:

13. Կոկիսոնը բնակավայր էր Փոքր Հայքում՝ նրա հարավարևմտյան սահմանի մոտ:

14. Կեսարիան Կապաղովկիայի քաղաքներից է, որը հայկական աղբյուրներում հիշատակվում է Մաժակ անվամբ:

15. Կոլոնիան բնակավայր է, որը սահմանակից է Փոքր Հայքին նրա հյուսիսարևմտյան սահմանի մոտ:

16. Սպերը Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի հյուսիսային գավառն է, որը Բագրատունիների հայրենական կալվածքն էր և սահմանակից էր Կապաղովկիական Պոնտոսին:

17. Խաղողիքը, ըստ «Աշխարհացույցի», Կողքիսի չորս վարչական միավորներից մեկն էր: Այն սահմանակից էր Մեծ Հայքին հյուսիս-արևմուտքում:

18. Քարթլին Վիրքն է՝ Արևելյան Վրաստանը:

19. Վերը նշված երկրների ու բնակավայրերի հիշատակումը ցույց է տալիս հայ կթնոսի տարածված լինելը տվյալ սահմանների ներսում:

20. Վիրքում Միհրանի օրոք Նունեի նախաձեռնությամբ քրիստոնեության ընդունումը Միհրար Այրիվանեցին դնում է 287 թվականի ներքո, իսկ մինչ այդ եղած իրադարձությունները, որոնք կրում են «Ամք աշխարհի» անունը, տեղի են ունեցել Քրիստոսից առաջ:

21. Սուրբ Շուշանիկը Վարդան Մամիկոնյանի դուստրն էր, որն ամուսնացել էր վրաց Վազգեն իշխանի հետ: Վերջինս, զրադաշտականություն ընդունելով ու պարսկուիու հետ ամուսնա-

նալով, պարտադրում է Շուշանիկին նոյնպես հավատափոխ լի-նել, սակայն չնայած ծեծին, բռնություններին ու անմարդկային տանջանքների ենթարկվելուն՝ Շուշանիկը հրաժարվում է և նա-հատակվում մութ ու խոնավ բանտում վեց տարի մնալուց հետո՝ 475 թվականին:

22. Վրաց Վախթանգ Գորգասալ (մահ. 502 թ.) թագավորն է:

23. Վրաց Եկեղեցու՝ Հայոց միաբանությունից դուրս գալու թի-վը համարվում է 608 թվականը, մինչդեռ Մխիթար Այրիվանեցին նշում է 615 թվականը:

24. Արաք զորավար Մրվանն է:

25. Անակոր բերդը պետք է նոյնացնել Աբխազիայի Նոր Աֆոն քաղաքում գտնվող Անակոփիա ամրոցի հետ, որի մոտ տե-ղի է ունեցել վրաց-արաբական ընդհարումը:

26. Հայոց արքա Սմբատ Ա-ն է (890-914 թթ.):

27. Հայոց Սմբատ Բ Տիեզերակալ (977-989 թթ.) արքան է:

28. Կոստանդին Թ Մոնումախոս (1042-1055 թթ.) կայսրն է:

29. Պետրոս Գետաղարձ (1019-1058 թթ.) հայոց կաթողիկոսն է:

30. Սերաստիան գտնվում էր Փոքր Հայքում՝ Ալիս գետի աջ ափին: Ներկայիս Սվագ քաղաքն է Թուրքիայում:

31. Մածնաբերդն ու Նոր բերդը գտնվում էին Տաշիր-Չորագե-տի (Լոռու) թագավորությունում:

32. Բագարատ Դ-ն (1027-1072 թթ.) և՝ Գեորգի Ա-ի (1014-1027 թթ.) որդին:

33. Մելիք Շահ սուլթանը թագավորել է 1072-1092 թվական-ներին:

34. Դավիթ Դ Շինարարն է, որը թագավորել է 1089-1125 թվականներին:

35. Գագ և Տերունական ամրոցները հետազայում՝ Զաքարյանների օրոք, գտնվում էին Կահրամյանների իշխանության ներքո, իսկ Անին անմիջականորեն պատկանում էր Զաքարյաններին:

36. Դավիթ Շինարարի որդի և հաջորդ Դեմետրե Ա-ն է, որը թագավորել է 1125-1154/1155 թվականներին, ապա 1155-1156 թվականներին:

37. Վրաց թագավոր Դավիթ Ե-ն է՝ Դեմետրեի որդին, որը թագավորել է 1154/1155-1155 թվականներին:

38. Վրաց թագավոր Գեորգի Գ-ն է՝ Դեմետրե Ա-ի որդին, որը թագավորել է 1156-1184 թվականներին:

39. Գեորգի Գ-ի դուստր և հաջորդ Թամար թագուհին թագավորել է 1184-1213 թվականներին:

40. Այստեղ հեղինակը թերևս նկատի ունի Կայան բերդը:

41. Բաղաբերդը գտնվում էր Մեծ Հայքի Սյունեաց նահանգի Ձորք գավառում: Նրա ավերակներն առ այսօր գտնվում են Ողջի գետի և նրա ձախակողման Գիրաթաղ վտակի ջրկիցում:

42. Վաղարշակերտը գտնվում էր Արածանիի աջակողմյան վտակ Շատիխան գետի վտակներից մեկի հովտում՝ Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի տարածքում: Ներկայիս Ալաշկերտ քաղաքն է Թուրքիայում:

43. Թամար թագուհին մահացել է 1213 թվականին, մինչդեռ Մխիթար Այրիվանեցին այս իրողությունը թվագրում է 1201 թվականով:

44. Թամար թագուհու որդի և հաջորդ Գեորգի Լաշան թագավորել է 1213-1223 թվականներին:

45. Արձեշը գտնվում էր Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառում՝ Վանա լճի հյուսիսային ափին: Ներկայումս քաղաքը գտնվում է Թուրքիայում, Վանի նահանգի Էրջիշ շրջանի կենտրոնն է:

46. Վարագ ասելով հեղինակը նկատի ունի Վան քաղաքից հարավ գտնվող Վարագ լեռ, որն այսօր գտնվում է Թուրքիայում՝ Վանի նահանգում:

47. Խլաթում Իվանե Զաքարյանի գերի ընկնելու, իսկ այնուհետև արձակվելու և կռվող կողմերի միջև կնքված դաշինքի մասին մանրամասն պատմում է Կիրակոս Գանձակեցին:

48. Վրաց-հայկական միացյալ զորքերի ամիրսպասալար, Հայաստանի ինքնակալ կառավարիչ (1200-1212 թթ.) Զաքարե Զաքարյանի մահից հետո նույն պաշտոնը զբաղեցնում է նրա որդին՝ Շահանշահ Զաքարյանը:

49. Վրաց արքունիքում աթաքեկի պաշտոնը զբաղեցնող Իվանե Զաքարյանն է:

50. Թամար թագուհու դուստր Ռուսուդանը, որը Գեղրգի Լաշայի քույրն էր, հաջորդել է վերջինիս և թագավորել 1223-1245 թվականներին:

51. Ավագը Իվանե Զաքարյանի որդին էր, որը հոր մահից հետո փոխարինել էր նրան Վրաց արքունիքում աթաքեկի պաշտոնում:

52. Խոսքը Ռուսուդանի որդի Դավիթ Զ Նարինի (1245-1259 թթ.) և Գեղրգի Լաշայի որդի Դավիթ Է Ռուսի (1247-1270 թթ.) մասին է:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ¹⁴

Համառոտ կերպով հիշենք նաև մեր նախնի Հաբեթին, որը շրիեղեղից հետո ծնեց Գամիրին, որից էլ գամիրներն են, Մազոգին, որից կելտերն ու գաղատացիներն են, Մեղային, որը շինեց Մարքը, Թորելին, որից էլ թետալներն են, Մոսորին, որ առավ Լյուրիկիան, Թիրասին, որից սերում են մեր Ասքանազն ու Թորգոմը, Հավանից հույներն են, Թարշիշից՝ վրացիներն ու տյուրենացիները, Կիտիմից՝ հռոմեացիներն ու լատինացիները: Թորգոմը ծնեց Հայկին ու նրա յոթ եղբայրներին՝ Քարթլոսին, Կովկասին և ուրիշներին, որոնք ժառանգեցին հյուսիսը:¹⁵

(Վարդ. Արևել., Է.)

Աստծու սրանչելի այր Մեսրոպը, անցնելով Վրաստան, գրեր է ստեղծում նաև նրանց համար ոմն Զադելի (1) օգնությամբ, որն աշակերտեց նրան: Գնալով Աղվանք՝ Մեսրոպը գրեր է ստեղծում նաև նրանց լեզվի համար Բենիամինի օգնությամբ, որն էլ այնտեղ աշակերտեց նրան:

(Վարդ. Արևել., ԻԵ.)

Իսկ մեր սուրբ նահատակների (2) վախճանից հետո չար Վասակը (3) Հմայակի (4) կնոշն ու երեք որդիներին տանում է պալատ՝ որպես մահապարտների որդիներ: Վրաց Աշուշա բրեշիը (5) նրանց խնդրեց Հազկերտից, և նա նրան տվեց այդ անակնկալ պարզելը:

(Վարդ. Արևել., ԻԹ.)

¹⁴ Վարդան Արևելցու տեղեկությունների աշխարհաբար տարբերակը տե՛ս Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Եր., 2001:

¹⁵ Վարդան Արևելցու տեղեկությունների գրաբար բնօրինակը տե՛ս Պատմութիւն տիեզերական Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1882:

Դրանից հետո Պարսից գորավար Միհրանը մեծ զորքով գալիս է Վրաց Վախթանգ արքայի վրա և աղաշանք հղում Վահանին՝ օգնել իրեն (6): Նա գնաց հոժարակամ, բայց պատերազմի թեժ պահին վրացական վախկոտ զորքը փախավ իր թագավորի հետ Հայաստանից եկած վախկոտների հետ միասին: Նահատակվեց սուրբ Վասակը՝ Վահանի եղբայրը, որի դեմքը, մարտից առաջ փառավորվելով, փայլում էր, ինչպես Մովսեսինը, որին չին կարողանում նայել ներկաները, և [մարդիկ] իմացան, որ նա այդ օրը մեռնելու է: Նահատակվեց նաև Սյունյաց սուրբ սեպոհ Հազոր հոռի տասնվեցին Բագվան գյուղում, որին բռնելով՝ Միհրանը ստիպում էր ուրանալ հավատը ու ապրել մեծությամբ, բայց հակառակ պատասխան տալով՝ մեռնում է հանուն Քրիստոսի և [նահատակի] պսակի արժանանում: Նոյնպես և քաջ ասպետ Սահակը վախճանվում է պատերազմի ժամանակ կրոնական սուրբ ուխտի համար:

(Վարդ. Արևել., Իթ.)

Այդ ժամանակ ապրում էին Սյունյաց քերթող Պետրոս Եափսկոպոսը, տարոնցի Ներշապուհը և սասունցի Աբդիշոն, որին Մովսեսը (7) Եպիսկոպոս ձեռնադրեց, իսկ Կյուրոնին, որն ազգությամբ Վրաստանից էր, Զավախը (8) գավառի Սկուտրի գյուղից և գիտեր հայոց ու վրաց դպրությունը, ձեռնադրեց Վրաստանի կաթողիկոս (9), որը հետո քաղկեդոնիկ դարձավ, որովհետև նա երեխա ժամանակ գնացել էր Հունաստանի Կողոնիա գավառը, բնակվել Գայլ գետի ափին գտնվող Նիկոպոլիս գյուղում և ստացել հունական կրթություն: Տասնիննական տարի անց նա եկավ Դվին, Մովսեսի մոտ, և վերջինս նրան նշանակեց սուրբ կաթողիկեի վաներեց, միաժամանակ Այրարատյան գավառի քորեպիսկոպոս, յոթ տարի: Իսկ եթք մեռավ Վրաց կաթողիկոսը, երկրի իշխանները

Մովսեսի մոտ [պատվիրակ] ուղարկեցին առաջվա նման, որպես-
զի Մովսեսն իրենց համար առաջնորդ տա, և նա կամեցավ տալ
նրան [Կյուրոնին]: Որպես իրեն մոտ մարդու: Կյուրոնը գալով
նվաճեց ամբողջ Երկիրը: Եվ ապա նրա մոտ եկավ խուժաստանցի
մի նեստորական, որի անունը Կիս էր, այսինքն՝ խստություն, ինչ-
պիսին որ նա եղավ իրականում: Նա Կողոնիայից էր, Նիկոպոլսի
մոտ գտնվող Զուտառիմա գյուղից. նրանք միմյանց կրոնակից ու
աղանդավորակից էին: [Կյուրոնը] նրան ձեռնադրում է եպիսկո-
պոս և նրա պատճառով ամբողջ Երկիրը կորսայան է մատնում:
Այդ բանն իմանալով՝ Մովսես եպիսկոպոսը, որը գտնվում էր
Ցուրտավում (10), որն այժմ կոչվում է Գաշենք, հայտնում է Մով-
սես պատրիարքին: Վերջինս Կյուրոնին գրում է հանդիմանանքի
ու սպառնալիքի թուղթ, և նա սրբի Երկյուղից ամբողջովին ուրա-
նում է աղանդը: Որոշ ժամանակ անց, իր հայրապետության Երե-
սուներորդ տարում մեռնում է պատրիարքը, և Կյուրոնն անփու-
թորեն ընդունում է քաղկեդոնականությունը:

(Վարդ. Արևել., Լ.)

Եվ Սմբատն (11) ուրախանալով ի փառս Քրիստոսի, եկեղե-
ցին շինում է վիմատաշ քարերով և պատրիարք է ձեռնադրել
տալիս Ռշտունյաց եպիսկոպոս տեր Աբրահամին (12), որը
թղթով Պետրոսի օգնությամբ ձգտում է Կյուրիոնին դարձնել դե-
պի ուղղափառություն: Այդ պատճառով Դվինում ժողով են անում
և անիծում Կյուրիոն հերետիկոսին:

(Վարդ. Արևել., Լ.Ա.)

Եվ քանի դեռ Ներսեսը (13) Տայքում (14) էր, Թեոդորոս
Ռշտունին (15) շինեց Աղթամար (16) կղզին: Դպրավանքից տա-
րան այն խաչը, որը կոչվում է սուրբ Վարձիայի [խաչ], [խակ] այն

Ժամանակ Ճոնյանց էր կոչվում: Սարգիս Ճոնյանցը այն տեղափոխեց այլազգիների պատճառով: Այնտեղ նա Տիմոթ վարդապետի ձեռքով հրաշքներ գործեց. Վրաց արքա Դեմետրեի կնոջը բժշկեց բորսությունից, որի համար էլ Վրացիները խաչը խլեցին հայերից: Նա օրինված է սուրբ Մեսրոպի կամ սուրբ Բարսեղ Ճոնի կողմից և աջ թիկի վրա հայերեն գիր ունի:

(Վարդ. Արևել., Լ.Զ.)

Նրա օրոք (17) արաբների գորագլուխ ոմն Բառաբային, որը գտնվում էր Հայաստանում, վրնդելով հալածում է Վրաց Ներսեհ իշխանը:

(Վարդ. Արևել., Լ.Զ.)

Այն ժամանակ Ումարը (18) Լևոն կայսրին (19) գրեց շատ բաներ, նաև այն մասին, թե ինքը լսել է, որ քրիստոնյաները բաժանվում են յոթանասուներկու մասի: Իսկ նա պատասխան գրեց, թե տասներկուսն են՝ հույներ, հոռմեացիներ, բարելացիներ, եզիստացիներ, եթովպացիներ, հնդիկներ, ասորիներ, հայեր, սարակինոսներ [արաբներ], պարսիկներ, աղվաններ, վրացիներ:

(Վարդ. Արևել., Լ.Ը.)

Այն ժամանակ Հայոց իշխանները որոշում են ապստամբվել և չեն ենթարկվում Աշոտ պատրիկին (20), որին բռնում են Սամիկոնյան Գրիգորն ու Դավիթը և կուրացնում. նա Հայոց և Վրաց թագավորների նախնի Աշոտն էր:

(Վարդ. Արևել., Լ.Ը.)

Այն ժամանակ իսմայելցիները զժովեցին միմյանց հետ և մեր երկիրը հանգստացավ, ու սկսեցին հզորանալ մեր իշխանները

յուրաքանչյուրն իր տեղում: Եվ Խսմայելի իշխանը Վրաց երկիրը տպիս է Աշոտին՝ Հայոց իշխան Աշոտի որդի Վասակի, նրա որդի Ատրներսեհի որդուն, որը գնալով հնազանդեցնում է իրեն, և կայսրը նրան ուղարկում է կուրապաղատության աստիճան... Կուրապաղատ Աշոտը տիրեց Կաղաքքից մինչև Տփողիս՝ լեռնային կողմերի հետ միասին:

(Վարդ. Արևել, ԽԱ.)

Բայց պետք է ասել, որ այստեղից են սկիզբ առնում Հայոց և Վրաց այն թագավորները, որոնք սերեցին հիշյալ Բագրատունիներից: Քանի որ, ինչպես ասվեց, քաջ Վարդանից հետո Հայոց իշխանները պատահական կերպով միմյանց հաջորդեցին մինչև Սմբատ Բագրատունին, նրանից հետո՝ Վասակի որդի Աշոտը, այն Վասակի, որին կուրացրին Մամիկոնյանները: Աշոտն ունենում է երկու որդի՝ Հայոց թագավորների նախնի Սմբատը և Վասակը՝ Վրաց թագավորների հիմնադիրը: Վերջինիս որդին էր Ատրներսեհը, նրանը՝ Աշոտը, նրանը՝ Բագարատը, որի եղբայրն էր Գորամը (21), նրա հետ՝ Բագարատի որդի Դավիթը, որն սպանվեց իր հորեղբայր Գորամի կողմից, որի որդին էր Ատրներսեհը, նրա որդին՝ Դավիթը, նրա եղբորորդին՝ Գուրգենը, որի որդին էր Բագարատը, որը իրեն կին առավ Վասպուրականի (22) Սեներիմ թագավորի (23) դստերը: Այս է վրաց թագավորների կարգը:

(Վարդ. Արևել, ԽԴ.)

Նրա (24) ժամանակ մեծն Աշոտը (25), ընդարձակելով իր տարածքը Վրաստանում ու Աղվանքում և կովկասյան ցեղերին էլ իրեն ենթարկելով, ոչ մի բանից պակաս չի մնում, բացի թագից, որի մասին մտածում էին Հայոց իշխանները...

Բայց Աշոտ արքան Վրաստանում իշխան է նշանակում իր քրոջորդուն, և ինքը վախճանվում է յոթանասունմեկ տարեկանում:

(Վարդ. Արևել., ԽԵ.)

Աշոտը (26) նրանց (27) ու Վրաց Ներսէհ (28) թագավորի համեմատ ավելի մեծազոր գտնվեց և նրանց նկատմամբ շահնշահ կոչվեց [թագավորելով] ութ տարի: Նա վախճանվում է, և թագն առնում է նրա եղբայր Աբասը (29), որը հոր մահից հետո զնալով Վրաստան ու փեսայանալով նրանց հետ՝ վերադառնում է այնտեղից և երեք հարյուր յոթանասունմեկ թվին տիրում է իրենց ամբողջ հայրենիքին ու [թագավորում] քանինը տարի:

(Վարդ. Արևել., ԽԶ.)

Նրանից (30) հետո աթոռին մեկ տարի նստում է Վահանը (31), որը Բաղրից էր: Հետազյում հայտնի դարձավ, որ նա վրացիների դաշնագիրն է և այնտեղից արձաններ (32) է բերել տալիս: Այդ պատճառով նրան փոխում են և երկու տարի աթոռին են նստեցնում սուրբ Մաշտոցի ազգական տեր Ստեփանոսին (33), որը գտնվում էր Սևանում:

(Վարդ. Արևել., ԽԷ.)

Նա (34) շինեց Անիի մեծանիստ պարիսպը և հիմնադրեց կաթողիկեն, իսկ նրա կրտսեր եղբայրը (35) ժառանգում է Տաշիրը՝ Զորագետի Սևորդիքի հետ միասին, Կայենը, Կայծոնը, Խորխուունիքը, որը Խոռն էր շինել, որը նույն Խոչոռնին է և Խոռակերտը, Բազունիքը, այն է Տաշիրը գավառի Բազկերտը, և անվանի այլ բերդեր (36) հասան Գուրգենին, որին վրացիները Սոմիւթ են կոչում:

(Վարդ. Արևել., ԽԸ.)

Իսկ վրաց թագավորների սկզբի մասին, որ կա նրանց գրքերում, հետևյալն է: Մեծ ջրհեղեղից հետո Թորգոմը ութ որդիներով եկավ Այրարատ գավառը (37), և նրա որդիներից երեքը՝ Հայոսը, Քարթլոսը և Կոկասոսը, եղան առաջին գահակալները և տիրեցին աշխարհների, որոնք իրենց անուններով կոչեցին Հայք, Քարթլ և Կովկաս: Նրանք տիրեցին Պոնտոս ծովից մինչև Կասպից ծովը, մինչև Միհրանը և նրա թռո Արբակը, որը կին առավ պարթևներից՝ պարտավճի Սահակդուխտ անունով մեկին, որը ամուլ լինելով՝ հավատաց Քրիստոսին, և [Վերջինս] նրան տվեց մեկ գավակ՝ Վախթանգին (38), որը Գորգասար կոչվեց, որը պարսկական բառով գայլազլուխ է նշանակում, որովհետև սադավարտի վրա առջևի կողմից ուներ գայլի պատկեր, իսկ ետևի կողմից՝ առյուծի: Նա կնության առավ Լևոն կայսեր դստերը և նրանից սերվեցին թագավորները մինչև Թևտասը, որին կուրացրեց Աբասը: Նրանից հետո ավխազների վրա թագավորեց Բագարատը՝ Աշոտ Ողորմածի որդի Գուրգենի որդին. սա ըստ Միհրար Երեցի (39) պատմության:

(Վարդ. Արևել., Ծ.)

Չորս հարյուր քառասունչորս թվին մեռավ Գագիկը (40)՝ թագավորությունը տալով իր երեք որդիներին՝ Հովհաննեսին (41), Աբասին և Աշոտին (42): Հովհաննեսին տալիս է թագը, Անին, Շիրակը, Սուլրք Գրիգոր [եկեղեցին] Աշոցքի ձորի հետ միասին, Անբերդը, Արարատյան դաշտը, Կայանը, Կայծոնը և Սևորդաց Տավուշ գավառը, իսկ մնացածը բաժանում է Աշոտի և Աբասի միջև: Դրանից հետո, եթե նրանք վիճում են, զալիս է ավխազների թագավոր Գորգին (43): Աշոտ Ողորմածի որդի Գուրգենի, նրա որդի Բագարատի (44) որդին և օրենքով դատում է նրանց ու գնում...

Այն ժամանակ վախճանվեց Դավիթ կուրապաղատը (45): Անժառանգ լինելով՝ նա իր հայրենիքը, Ուխտիքը (46), Նամրվանը, Ապահունիքի (47) քաղաք Մանձկերտը և ամբողջ ունեցվածքը անդարձազրով՝ [կտակով] տալիս է Վասիլին (48): Այդ բանը լսելով՝ Վասիլ կայսրը գալիս բանակ է դնում Կարնո դաշտում (49): Այդ մասին իմանալով՝ Հովհաննեսը վախենում է և նվերներով նրա մոտ է ուղարկում Պետրոս պատրիարքին (50), որին մեծ հանդիսավորությամբ օծել էր տեր Սարգիսը իր կենդանության ժամանակ Անի քաղաքում: Բացի դրանից, Հովհաննեսին նեղում էր նաև Վրաց արքան: Այդ պատճառով նա պատրիարքին պատվիրում է իր մահից հետո Անին զրությամբ տալ հույներին, եթե կուրապաղատը այն պահպանի նրան նեղողներից: Այդ լուրն ուրախությամբ լսեց Վասիլը: Եվ նա իր մոտ կանչեց Վրաց Գորգի թագավորին, որը չեկավ նրա կանչով: Այդ պատճառով նա զայրացած գնում է, ավերում նրա տասներկու գավառները, վերադառնում է Խաղոտիք (51) ու այնտեղ ձմեռում:

(Վարդ. Արևել., ԾԲ.)

Այն ժամանակ Վրաց Գեորգի թագավորին փոխարինում է իր որդի Բագարատը (52) բայց իշխան Լիպարիտը ապստամբվելով նրան փախուստի է մատնում Ափխազիայի կողմերը ու իմաստությամբ շեն է պահում աշխարհը Միքայել կայսրի (53) օգնությամբ:

(Վարդ. Արևել., ԾԴ.)

Այդ ժամանակներում քաջ Վասակի որդի Գրիգորը Բջնին, Կայանը, Կայծոնը, որոնք իր ձեռքի տակ էին, տալիս է Մոնոմախին (54) և փոխարենն ստանում է Միջազետքի դքսությունը: Գրիգորն իր հետ վերցնում է Վրաց Ապիրատ իշխանին, նաև եր-

կու մազիստրոսի և գնում է Տուղրիլ-Բեկ սուլթանի Բրեհիմ զորավարի դեմ: Այնտեղ բռնում են Լիպարիտին և բերում են սուլթանի մոտ, որպեսզի Լիպարիտը դավանի նրա հավատը: Լիպարիտը տվեց [հետևյալ] պատասխանը. «Երբ տեսնեմ քո երեսը, կկատարեմ այն, ինչ կիրամայեա»: Իսկ երբ տեսավ, ասաց. «Երբ արժանաց քո տեսությանը, չեմ կատարի քո կամքը և չեմ վախենա մահվանից»: Սուլթանը հարցնում է. «Ի՞նչ ես կամենում»: Եվ նա պատասխանում է. «Եթե դու վաճառական ես, ծախիր ինձ, եթե դահիճ ես, սպանիր ինձ, իսկ եթե թագավոր ես, պարզեներով ազատիր ինձ»: Սուլթանն ասում է. «Քո գնով ես չեմ կարող լինել վաճառական, և ոչ ել արյան գնով՝ դահիճ, այլ ես թագավոր եմ, գնա, ուր կամենում ես»: Եվ նրան բաց թողեց պարզեներով: Եվ որովհետև կայսրը պահանջում է նրան, նա գնաց նրա մոտ և նրանից զորք առնելով՝ եկավ Վրաստան, բռնեց Բագրատ թագավորին, ուղարկեց կայսրի մոտ և գրավեց ամբողջ երկիրը:

(Վարդ. Արևել, ԾԵ.)

Այդպես հզորանալով նա (55) տիրում է Խաչենին, Գորոզին, Սևորդյաց [զավատին] և կրիվ է սկսում Զորագետի Գագիկ թագավորի, Աղվանից Կյուրիկե թագավորի, Վրաց Բագրատ թագավորի դեմ և նեղում նրանց:

(Վարդ. Արևել, ԾԶ.)

Անիի Հայոց թագավորության վերացումից հետո Հայաստանի վրա հարձակվեց Տուղրիլի (56) հորեղորորդի Ալփասանը և ավերեց քանչորս գավառ: Նա սուլթանի զորագլուխն էր և նրա մահից հետո սուլթան դարձավ: Նա դարձյալ հարյուր հազարով եկավ և գրավեց Նոր քաղաքը, որ վրացիները Ախալքալաք են կոչում, և Սամշուլդեն: [Ալփասանը] կնության է առնում Կյուրիկե (57) թագավորի դստերը և Վրաց թագավորի քրոջ դստերը:

(Վարդ. Արևել, ԾԷ.)

Իսկ նրա (58) ավագ որդի Հովհաննեսը հույսով փեսա դարձավ Անիի հոյսն դրսին և զնաց Անի, բայց հանգիստ չզտնելով՝ մեկնեց Վրաստան: Այնտեղից նա վերադարձավ Կոստանդնուպոլիս Աշոտ անունով իր տղայի հետ, որին կայսրը ուզեց փեսա դարձնել, բայց Հովհաննեսը չհամաձայնվեց:

(Վարդ. Արևել, Կ.)

Իսկ Վրաց թագավոր Բագարատը (59) կայսրից դարձալ ետ է վերցնում իր հայրենիքը: Նրանից հետո [թագն] առնում է նրա որդի Գեորգին (60), որը, Կյուրիկեից հետո զնալով Խորասան, Մելիք Շահի մոտ, այնտեղից վերադառնում է պատվով: Այս Կյուրիկեն Աշոտ Ողորմածի որդի Գուրգենի, նրա որդի Դավթի որդին էր: Նրա համար հայր Դավիթը շինեց Լոռեն և տասներկու այլ բերդեր, որոնք թաղված են Սանահնի մեջ: Նրանց Աբաս և Դավիթ թռուները, նեղվելով վրացիների կողմից, գնում են Ռանի (61) տերերի մոտ, ամեն մեկը մի բերդ է առնում (62) և ապրում տառապանքով:

(Վարդ. Արևել, ԿԱ.)

Այդ ժամանակներում Նունեի սուրբ խաչը մտնում է Անի, այն խաչը, որ Վրաց առաջնորդ Վազգենի ուրացման ժամանակ զաղթել էր Պարիսար լեռան խորշերը սուրբ Սահակի աշակերտներից մեկի՝ սուրբ վանական Անդրեասի միջոցով: Այնտեղ մնում է յոթ տարի և ապա հայտնի է դառնում Հմայակի որդի Մամիկոնյան Գրիգորին, որը տանում է Կապույտ կոչված բերդը (63), իսկ այնտեղից տեղափոխվում է Վանանդ (64), որի համար կոչվեց Վանանդի խաչ: Իսկ տեր Բարսեղի հայրապետության ժամանակ, երբ անօրեն Սուքմանը վերացնում է Մամիկոնյան տոհմը, [խա-

չը] բերվում է Անի և նրա համար տոն է կարգվում կիրակի օրը, որը տոնվում է Խաչվերացի տոնից ութ օր հետո:

(Վարդ. Արևել., ԿԴ.)

Այս ժամանակ հզորանում է Վրաց Դավիթ (65) թագավորը՝ Բագարատի որդի Գեղրգիի որդին, որը պարսիկներից խլում է Տփղիսը, ծանր հարվածներ է հասցնում Գանձակի սովորան Մելիքին և հինգ հարյուր մարդու բարձրացնում է ցցերի Տփղիս քաղաքում: Այդ օրը, քանի որ մեռել էր Անիի ամիրա Մանուչեն, քաղաքին տիրում է նրա որդի Ապլսուարը՝ վախկու ու կնամոլ մի մարդ, որը ցանկանում էր Անին վաճառել Կարսի ամիրային վաթսուն հազար դինարով: Նա հրամայում է Խլաթից բերել ծանր ու բարձր նալ ու դնել կաթողիկեի գմբեթի վրա՝ փոխելով առաջինների դրածը: Քրիստոնյաները դրանից նեղանալով՝ կանչում են Դավթին և նրան հանձնում Անի քաղաքը: Եվ ատելի գենքը զցելով կաթողիկեի պատվական գլխից, որը վաթսուն տարի մնում էր մեր մեղքերի պատճառով, դնում են զարդապսակն ու Հիսուսի թագը, Պողոսի պարծանքը, մեր փրկության արեգակը՝ աստվածընկալ խաչը: Եվ խաչին զանգակ ամրացնելով՝ դավանում են խաչված աստծուն հավատացյաների փրկության համար: Իսկ թագավորը, Աբովլեթին և իր որդի Իվանեին թողնելով Անիում, վերադառնում է իր երկիրը՝ իր հետ տանելով Ապլսուարին և նրա որդիներին, որոնք այլև չեն վերադառնում, այլ այնտեղ էլ մեռնում են: Դավիթը, ընդարձակելով Վրաստանի սահմանները, գրավելով Ուխտիքն (66) ու նրա սահմանները, Գագը (67), Տերունականը, Տավուշը, Կայանը, Կայծոնը, Լոռեն, Տաշիրը, Մահկանաբերդը, Վյուրիկեի ու Աբասի հայկական ամբողջ իշխանությունը, իրեն է հնազանդեցնում նաև Կովկասյան լեռը, սոնքերի թագավորությունը, Մրածուլքը, Ճքեթը, Դուալեթը, Հերե-

թը, մինչև Կասպից ծովը, Հաղբանդն (68) ու Շապուրան քաղաքը (69): Նոր տանելով նաև վրաց անքան ազգի մասին՝ ընտրում է քառասուն մանուկներ և ուղարկում Հայաստան՝ լեզու սովորելու, թարգմանություններ կատարելու ու բերելու, որը և նրանք կատարեցին: Նրանցից երեքը ավելի լավ և խելացի գտնվեցին ու զարդարեցին իրենց անկիրթ ազգը: Դավիթը մեր եկեղեցու և աղոթքների վերաբերյալ երկմտություն չուներ, որի համար իր զլուխը բազմիցս դնում էր մեր ձեռքի տակ, խնդրելով օրինել իրեն: Նա թագավորում է երեսուններեք տարի, մերնում է Տփղիսում ու թաղվում Գելաթում, իր հայրերի գերեզմանոցում: Թագն առնում է նրա որդի Դեմետրեն (70), որը նույնպես պահում է իր իշխանությունը և ավելացնում Դմանիքն (71) ու Խունան (72)[՝] [դրանք] խլելով Պարսկաստանից:

(Վարդ. Արևել., ԿԸ.)

Այն ժամանակ Ապլսուարի մի որդին, որ գտնվում էր Խորասանում, երբ լսում է հոր և եղբայրների հետ կատարվածն ու Դավիթի մահը, զալիս է ստանալու իր հայրենի Անի քաղաքը և աղերսանքով խնդրում է Արուլեթից (73) ու քաղաքի ավագներից: Եվ որովհետև քաղաքին մեծ վտանգ էր սպառնում թուրքերի կողմից, Արուլեթը այն տալիս է նրան՝ խնայելով քրիստոնյաներին, առավել ևս իր որդի Իվանեին, որպեսզի նա չկորչի հաճախակի մղվող մարտերում, և ինքն անցնում գնում է իր տունը:

(Վարդ. Արևել., ԿԹ.)

Այդ դեպքերից ոչ այնքան հեռու ժամանակում Արուլեթի որդի Իվանեն որոշում է սպանել Դեմետրեին և իր եղբայր Գորգիին, բայց նրա հայր Արուլեթը, որդու առաջ պոկելով իր ալեհեր մազերը, արգելում է նրան: Եվ երկուսն էլ փակված էին Դմանիս բեր-

դուս՝ եղբայրների մեջ եղած ինչ-որ խաքեռության պատճառով, որի մասին եետո իմանալով՝ Դեմետրեն Իվանեին ասում է. «Բոնեցիր ինձ, տատ»: Եվ նա զղալով ասում է. «Ոչ, արքա, ես քո եղբորը տվեցի քո ձեռքը, որն ուզում էր խլել քո թագավորությունը»: Եվ նա բռնում կուրացնում է նրան ու բաց բռնում:

Նրա ժամանակ Գագ դաշտը (74) լցվում է անօրեն ազգերից հավաքված անթիվ, անհամար հեծյալներով, որոնք ուզում էին այրել այն սուրբ խաչը, որը զորավար սուրբ Սարգսի անունով էր: Եվ Տիրոջ բարկությունից խելացնորված՝ կոտորում են միմյանց: Այդ դեպքից օգտվելով՝ Դեմետրեն գնում ու հեշտությամբ խլում է նրանց ունեցվածքը...

Հինգ հարյուր ութսուն թվին Արուլեթի որդի Իվանեն ասպատակում է Գառնին, բայց նրա զորքը հաղթվում է Խուրքի կողմից, որը հրամայում է նրանց զլուխները կտրել, եփել թանով, իսկ գանգերը դնել բարձր մինարեթի քարորմի շարքերում: Իվանեն հաջորդ տարի գալու ժամանակ նենգությամբ սպանվում է Դեմետրեի կողմից, որի որդի Թիրքաշը գնում է Շահի Արմեն ամիրապետի մոտ և նրանից առնելով Արշարունիքը՝ մեծ քաջությամբ ավերում է Վրաստանը:

(Վարդ. Արևել., ՀԱ.)

Իսկ Վրաց թագավոր Դեմետրեն, թագավորելով երեսուներկու տարի, վախճանվում է, և թագն առնում է նրա որդի Դավիթը՝ կորովամիտ ու բարեսեր [մի մարդ]: Նա բանտից հանում է իր հոր կողմից շղթայված Թիրքաշին, նշանակում զորագլուխ և մեկ ամիս անց մեռնում է: (Ումանք ասում են, թե նա զոհվում է Ամբատ և Իվան Օքբելյանների դավելու՝ նրանց փոխարեն Թիրքաշին նշանակելու պատճառով, նախօրոք պայմանավորվելով Դավթի

եղբայր Գևորգի հետ՝ իրենց զորավար դնելու համար): Եվ թագն առնում է Գևորգը (75) վեց հարյուր հինգ թվին:

...Վեց հարյուր տասը թվին Վրաց Գեորգի թագավորը Անին խլում է Փատլուն ամիրայից, որը փոխարինել էր Շատատ անունով իր եղբորը: Եվ հիսուն օր անց Շահի Արմենը մեծ զորքով գալիս է սոնքերի կողմից պատժված և վնասված քաղաքի վրա: Այդ բանը լսելով՝ Գեորգին այնտեղից վերադառնում և սրի է քաշում նրանց, որոնց քանակը ոչ ոք չի կարող իմանալ, բայց ձերբակալվածները քսան հազար էին: Թագավորը Անիում թողնում է Սադուն իշխանին (76), որի մասին կարծիք կար, թե նա ապստամբության [Է նախապատրաստվում] քաղաքի պարիսպները ինամքով ամրացնելու պատճառով: Այդ բանն իմանալով՝ թագավորը նրան զրկում է պաշտոնից: Եվ նա, սրտակոտոր լինելով, գաղթում, գնում է Ելտկուզի մոտ, որին խարենությամբ բռնելով Շաքե Էրիաթավը՝ այնտեղից նրան բերում է արքայի մոտ, և նրան սպանում են: Նրա տեղը դնում են իշխան Սարգիս Զաքարյանին: Չնայած Ելտկուզը զայրանում է, բայց ի վիճակի չի լինում ինչ-ոք բան անելու, որովհետև չորս հազար պարսիկ էր գոհվել Սադունի հետ միասին:

Իսկ վրաց թագավորը իր մոտ է հավաքում կովկասյան զորքը և զալիս վերցնում է Դվինը՝ բնակիչներին խստագույնս կոտորելով սրով ու հրով, բացի այնտեղ եղող քրիստոնյաներից: Հրամայում է մինարեթից իջեցնել թանի մեջ եփած զանգերը, զարդարել ոսկեթել հանդերձանքով, դնել դագաղների մեջ, բարձել մահմեդական կրոնավորների ուսերին ու բոկոտն տանել մինչև Տփղիս՝ իր հնագույն մայրաքաղաքը, վեց հարյուր տասներկու թվին: Այդ բանը լսելով՝ Ելտկուզը զալիս է այրված ու քանդված Դվին, իսկ այնտեղից խոցոտված ու մորմոքված սրտով, իբրև կատաղի զագան, գնում է Մրեն և այնտեղ այրում է ամբողը, ուր հանուն Քրիս-

տոսի ողջակիզվում է մոտավորապես չորս հազար հոգի: Նա վերադառնում է Գագի դաշտը և հրամայում է այրել հոչակավոր խաչը, որի պատճառով Տիրոջ բարկությունից նրանք զիշեր-ցերեկ պատժվում են թունավոր օձերի կողմից: Իսկ հետո ահաբեկվելով Վրաց բազավորից՝ նա փախչում է, այնտեղ թողնելով ունեցվածքն ու գերիներին, սակայն գրգռում է Ծովիկ սուլթանին՝ Մահմուդի որդի Ասլանին և բերում է Անի: Նա չորս տարի քաղաքը պահում է տագնապի ու նեղության մեջ, մինչև որ Վրաց բազավոր Գեորգին, ողորմելով բնակիչներին, իր մոտ է կանչում սուլթանին և Անին տալիս է նրան, որովհետև նա այլս ի վիճակի չէր անօրենների բազմությունից պաշտպանել քաղաքը:

(Վարդ. Արևել., ՀԴ.)

Վեց հարյուր քսաներեք թվին Գևորգը Իվանե ամիրսպասալարի հորդորանքով Անին գրավում է երկրորդ անգամ, որպեսզի ինքը նստի Անիում և քրիստոնյաներին գերությունից ազատի: Շահնշահ ամիրային արքան տանում է իր հետ, և նա այլս չի վերադառնում այնտեղից: Եվ այդ բանը լսելով՝ ի մի են հավաքվում բոլոր թուրքաստանցիները և իրենց հետ վերցնելով Ալֆաալան (77) կոչեցեալ սուլթանին՝ զալիս են Անի ու ավերում Շիրակի տունը: Իսկ Իվանեն ուզում էր քաղաքը տալ թուրքերին, բայց դա նրան չի հաջողվում, որովհետև քաղաքացիները [նախօրոք] իմանում են և զգուշանում: Սուլթանն ու աթաքեկը [թագավորահայրը] սրտակոտոր վերադառնում են, և երկուսն էլ մեռնում են նույն տարում:

Այդ նույն ժամանակ Կարսի բանտից դուրս է ելնում մեծ իշխան Ապիրատը և զալիս է Անի: Նա քաղաքի եպիսկոպոսի՝ տեր Բարսեղի եղբայրն էր, որի աղաջանքով Վրաց բազավորը սպանում է նրան և փոխարենը ամիրային տալիս է տասնյոթ հազար

դահեկան: Այդ պահին Իվանեն դրսեորում է իր չարությունը. իրենց թագավորի եղբորորդի Դեմնեխն և ազատներից շատերին իր կողմը գրավելով՝ որոշում է սպանել թագավորին, որը Սահսատայում (78) գտնվում էր ապահովության մեջ: Մի մարդուց այդ մասին իմանալով՝ թագավորը փախչում է Տփղիս, որովհետև քիչ մարդիկ ուներ: Այնտեղ նրա շուրջը հավաքվում են շատերը՝ թողնելով իրենց չար մտադրությունը: Եվ երբ հզորանում է թագավորի կողմը, նա ցանկանում է գնալ այն ապատամբների վրա, որոնք Սահսատայից էին ու փախել էին իրենց ամրոցները և ապա մտել Լոռե, բացի Լիպարիտից, որն իր երկու որդիների հետ մեկնել էր Պարսկաստանի կողմը: Թագավորը խլում է Օրբեյանների ամբողջ գանձը, և բոլորն ընկնում են թագավորի ոտքերը՝ իր եղբորորդին, նաև ուրիշները, մինչև անզամ ինքը՝ Իվանեն, որի աչքերը նա կուրացրել էր և սպանել նրա կրտսեր որդուն՝ Քավթարին ու Լիպարիտի որդի հնեին: Եվ այդպիսով չքանում են բոլոր չար խորհուրդները վեց հարյուր քսանվեց թվին:

(Վարդ. Արևել., ՀԶ.)

Վեց հարյուր քսանինը թվին Գեռզին երկրից վերացնում է գող ու ավազակ, որովհետև ամբողջ զորքի համար կարգ է սահմանում մեծ ու փոքր հանցանքների համար բոլոր մարդկանց անողորմաբար կախել փայտից. կախեցին նաև պատվավոր մարդկանցից շատերին: Գտնելով նրանց ունեցվածքները՝ տանում կախում էին նրանց պատժափայտերից, կախում էին նույնիսկ անսուն, շուն, մուկ, և բոլորին ահ է պատում ու տիրում մեծ խաղաղություն:

(Վարդ. Արևել., ՀԷ.)

Վեց հարյուր երեսուներեք թվին մեռնում է Վրաց Գեորգի թագավորը, որը որդի չուներ, իսկ Դավթի որդի Դեմետեն, քանի որ կույր էր և ամորձատված, թագն առնում է Գեորգիի դուստր Թամարը, որի համար ամուսին են բերում Ըզց թագավորի որդուն՝ Սոսլանին, որն առնում է Դվին քաղաքը:

(Վարդ. Արևել., ՀԸ.)

Այդ ժամանակներում ապրում էին քուրդ ազգի [ներկայացուցիչ] Սարգսի որդի Զաքարեի, նրա որդի Վահրամի, նրա որդի Սարգսի որդիները՝ Զաքարե և Իվան իշխանները, որոնք գաղթել էին Զորագետի թագավորների մոտ, որոնք Բագրատունյաց ազգից էին: Նրանք հավատում են Քրիստոսին և պատվի արժանանում: Նրանց բնակության տուն է տրվում Խոշորնին, և որովհետև նրանք քաջ մարդիկ էին, օրեցօր աճում էր նրանց պատիվն ու աստիճանը: Թամարի օրոք նրանք էլ ավելի փառավորվեցին: [Թամարը] նրանց տվեց Լոռեն, և կարճ ժամանակամիջոցում նրանք թուրքերից խլեցին շատ բերդեր ու գավառներ. այսպես վեց հարյուր քառասուն թվին [նրանք] գրավեցին Շիրակի երկիրը, վեց հարյուր քառասունինգ թվին՝ Անին, վեց հարյուր հիսուն թվին՝ Բջնին, վեց հարյուր հիսուներկու թվին՝ Դվինը, վեց հարյուր հիսունինգ թվին՝ թագավորի (80), Կարսը, այնուհետև՝ Գետաբակըն ու Չարեքը (81), և նրանց անունը տարածվում է ամբողջ Երկրում: Բայց Իվանեն, խարվելով Թամար թագուհուց, տկարանում է հավատի (82) մեջ և անհաջողության մատնվելով՝ գերի է ընկնում Խլաթում, բայց եղբոր արիական անվամբ դարձյալ ազատվում է՝ իր դստերը կնության տալով Խլաթի տիրոջ՝ Մելիք Աշրաֆին: Իսկ Իվանեի եղբայր Զաքարեն չնայած մնում է իր սեփական հավատի մեջ, սակայն ցանկանում էր Տիրամոր և խաչի տոնք ամսվա կամ

շաբաթվա օրը կատարել, ճրագալույցը չհանգցնել, կրոնավորներին [պատվիրում է] միս չուտել, ողջ [անձանց] պատարագ մատուցել և վրանով բացօթյա պատարագել դպիրների և սարկավագների միջոցով։ Այդ նպատակով Լեռնի (83) մոտ է ուղարկում նրան, ով ֆռանկների ու հովյաների կողմից օծվել էր թագավոր՝ նրան առաքելով թագ, վեց հարյուր քառասունվեց թվին...

Իսկ Վրաց Թամար թագուհու ժամանակ հզորանում են քրիստոնյաները, թեպետ [նա] գահընկեց է անում իր ոռու ամուսնուն և առնում է օս Սուլանին, որը Վրաստանը լցնում է թուրքերից խլած գերությամբ ու թալանով։ Նրանից ծնվում է մինուճար մի զավակ, որին կոչում են Լաշա (84), իսկ ինքը քսաներեք տարի թագը կրելուց հետո վախճանվում է։ Վեց հարյուր հիսունյոթ թվին աթոռին նստում է Լաշան, որին զորքը անվանեց Գեռզի։

(Վարդ. Արևել., ԶԲ.)

Վեց հարյուր հիսունինը թվին մորեխը ավերում է բազում գավառներ։ Այդ ժամանակ մեծն Զաքարեն ավերում էր Պարսկաստանը՝ հասնելով մինչև Արտավիլ քաղաքը՝ նրանցից առնելով քրիստոնյաների արյան վրեժը։ Ըստ որում նրանց աղոթատները լցնելով տղամարդկանցով՝ հրամայում է այրել և նրանց զոհել այն իշխանների համար, որոնք գտնվում էին Նախճավանի եկեղեցիներում, իսկ դուրան կարդացողներին և մահմեդական կրոնավորներին [զոհել]՝ այն սուրբ քրիստոնյաների համար, որոնք մորթվեցին Բագավանում (85), և նրանց արյամբ ներկվեց եկեղեցու պարիսապը։ Եվ այդ կոտորածից վերադառնալով՝ վախճանվում է [Զաքարեն] (86)՝ [ապրելով] ուղղափառ և անքիծ հավատով, և թաղվում է Սանահին սուրբ վանքում, վեց հարյուր վաթսունմեկ թվին՝ թողնելով հնգամյա մի տղա՝ Շահնշահ անունով (Անի կոչված տերության դեկավարության համար), որին Խո-

շաբը՝ Իվանեի (87) կինը, շուր է տալիս դեպի Քաղկեդոնի աղանդը:

...Վեց հարյուր վաթուներեք թվին Հաթերքը (88) նրա տերերը տալիս են Իվանեին, որովհետև մեռնում է նրա խսկական տերը՝ Վախթանգը. անժամանակ մեռել էին նաև նրա որդիները, իսկ մյուս Վախթանգ Սակոյանցը՝ Իվանեի փեսան, Ներքին Խաչենի տերը, թողնում է երկու տղա՝ Հասանին, որը փաղաքաբար Զալալ-Դոլա էր կրչվում, և Զաքարեին՝ նույն ինքը Նասրա-Դոլային, որոնց խնամակալում էր Իվանեն նրանց մոր՝ Խորիշահի հետ միասին: Վերջինս հետո Երուսաղեմ գնալով ու այնտեղ մնալով՝ մեռնում է մեծ շարչարանքով բազում գովեստներ հղելով Տիրոջը: Եվ մեծն Իվանեն, աչքի ընկնելով արիությամբ, գրավում է Զարեքն ու նրա ամբողջ շրջակայքը և ապա օգնելով իր ազգական Վահրամին՝ Զաքարեի որդուն, գրավում է Շամքորը: Իսկ վեց հարյուր վաթունութ թվին Իվանեն գրավում է Որոտն (89) ու մերձակա դրյակները, թեև ոչ ամբողջը, քանի որ երբ նրան տիրում էին Հայկազունները, նշանավոր բերդերը քառասուներեքն էին, գյուղերը՝ հազար չորս հարյուրը, վանքերը՝ քառասունութը, որոնց ավերման սկիզբը դրվեց իինգ հարյուր հիսուներկու թվին՝ Մելիք-Շահ սուլթանի մի երիտասարդ մատովակի պատճառով: Հայկազուն թագակալի (90)՝ սուլթանի մոտ հնազանդության գնալու ժամանակ [մատովակը] նրան խստազույնս նեղում էր զինով, մինչև որ նա խոստանում է իր դստերը կնության տալ նրան, նա էլ, ըստ իրենց սովորության, գոտին հանգույց անելով, ցույց է տալիս սուլթանին: Եվ մի քանի օր անց նա պահանջում է խոստացածը և երբ նախատինք է ստանում նախանձաբեկ է լինում ու վերցնելով մեծ զորք՝ ավերում է երկիրը, մինչև որ ամբողջովին քանդվում և բնաջնջվում է այն, որին հետո տիրեց հզոր Իվանեն:

(Վարդ. Արևել, ԶԳ.)

Բոլորը ամեն զիշեր երկնքում տեսնում էին նիզակածե մի աստղ, որը նշանակում էր երկրի խաղաղության խախտումը, ինչպես որ եղավ հաջորդ՝ վեց հարյուր վաթսունինը թվին: Մոտ քսան հազարանոց այլազգի ու այլալեզու մի զորք, կոչված Սունդալ և Թաթար անունով, շարժվեց Չին ու Մաշին երկրից: Աղվանքի կողմերից դաշտավայրերով եկավ հասավ Գուգարաց երկիրը, կոտորեց բոլորին, ինչ որ կենդանի գտավ և փութով վերադարձավ: Մեծ զորքով նրանց հետևից ընկնելով՝ Լաշան նրանց հասնում է Կոտման գետի մոտ և պարտվելով նրանց կողմից՝ փրկվում ու փախչում է Իվանեի հետ միասին, որի երիվարի ջիլը կտրում է ինչ-որ իշխան և նրան զրկում երիվարից: Բայց երկրի տեր Վահրամը մեծ քաջությամբ սաստիկ կոտորածով գնում է իր երեսը դարձրած կողմը [հասնում է] մինչև Գարդման՝ չիմանալով ուրիշների փախուստի մասին:

Վեց հարյուր յոթանատունմեկ թվին նրանք ցանկանում էին այնտեղից վերադառնալ, բայց որովհետև նրանց սուրհանդակները Հայաստանն ու Վրաստանը գտան կազմ ու պատրաստ և այդ լուրջ տեղ հասցրին, նրանք չհամարձակվեցին գալ, այլ այնտեղից դարձան ու գնացին, ուր որ գնացին: Նոյն տարում մեծաքանակ մի զորք, անջատվելով հոներից, որոնք Խվչաղ են կոչում, գալով Գանձակ, միացավ նրանց [թաթարների] հետ: Եվ երբ մերոնք համարձակ ու անզգույշ կերպով գնացին նրանց վրա, անջատվելով փախուստի մատնվեցին, որոնցից շատերին սրի քաշեցին, փառավոր ազատներից շատերին բռնեցին ու բանտ զցեցին, նրանց հետ էլ Գրիգոր իշխանին՝ Խաղբակի որդուն, և նրա եղբորորդուն՝ արի ու քաջ Պապաք անունով նահատակին, որի վրեժը հաջորդ տարի առավ մեր զորքը՝ բնաջնջելով Խվչաղի մեծ մասը նրանց՝ Վարդանաշատի երկիր (91) վերադառնալու ժամանակ:

(Վարդ. Արևել, ԶԴ.)

Իսկ սուլթանը (92), իր հաղթական փառքից ոգևորված, ոտքի տակ է տալիս շատ տեղեր և ետ դառնալով դեպի Դավրեծ՝ մեկ տարի անց գալիս է Գագ դաշտավայրերի կողմը, դեպի Տփղիս և բազում ոճիրներ գործելով՝ հարձակվում Խլաթի վրա... Իսկ թաթար կոչեցյալը, որ վեց հարյուր վաթսունինը թվին եկել էր քիչ մարդկանցով, ցանկացավ վերադարնալ վեց հարյուր յոթանասունմեկ թվին, բայց չհամարձակվեց: Եվ իրեն միացնելով գորքի մեծ բազմություններ և առաջնորդ ունենալով Չարմադան անունով գորապետին՝ վեց հարյուր յոթանասունչորս թվին նա գալիս է Շահաստան Գանձակ քաղաքը, պաշարում է այն մի քանի օր, գրավում ու անողորմաքար կոտորում բոլորին, բացի մատղաշ տղաներից և այն կանանցից, որոնց հավանում էին: Եվ դրանից հզրանալով՝ մտնում են Վրաց թագավորությունը, զավաների անվանի տեղերն ու ամուր բերդերը բաժանում են մեծամեծ իշխաններին, որոնց նոյինք էին կոչում:

(Վարդ. Արևել., ԶԵ.)

Արդ՝ հայոց վեց հարյուր ութսունինգ թվից սկսած մինչև յոթ հարյուր տասնչորս թիվը, որի մեջ գտնվում ենք մենք, թաթարների ցեղը ինչ որ արեց պետությունների ու իշխանությունների հետ, որոնք մեծ ծովի այս կողմում են [այն է՝ Պարսկաստանի, Աղվանքի, Հայաստանի, Վրաստանի, այսպես կոչված Հռոմեական կայսրության հետ, ուր բնակված էին հայեր, ասորիներ, հույներ, տաճիկներ և թուրքմեններ, [այդ ամեն միասին] մանրամասնորեն գրել են մեր փառաբանված հայր Վանական վարդապետն ու մեր հայրապետ, հորը համանման Կիրակոս վարդապետը (93):

(Վարդ. Արևել., ԶԵ.)

Նման ողբը կրկնվեց նաև վեց հարյուր իննսունութ թվին, երբ Բաշոն (94) և ավագանին իմացան Վրաց թագավորի և իշխանների ամբարտավանության ու ապստամբության մասին, բռնեցին Դավիթ թագավորին և այլ մեծամեծների և մահվան վճիռ կտրեցին, բայց վերին նախախնամության շնորհիվ նրանք մահից ազատվեցին: Սակայն շատերին կոտորեցին և գերեցին անթիվ գյուղեր ու ազարակներ, հայ կանանց խայտառակեցին Հայաստանում, բայց ավելի շատ Վրաստանում:

Վեց հարյուր իննսունինը թվին մեռավ Ավագը՝ Իվանեի որդին, և թաղվեց Պղնձահանքում, իր հոր մոտ. նա պարկեցած կտրիձ և աղոթասեր մարդ էր:

(Վարդ. Արևել., ԶԸ.)

Յոթ հարյուր թվին հարց բարձրացվեց Հռոմի մեծ պապի կողմից, որը գրեց բոլոր քրիստոնյա ազգերին, թե պետք է ամենասուրբ Հոգի Աստվածը խոստովանել Հորից և Որդուց բխած: Դա հաճո՛ չեղավ ասորիներին, հույներին և վրացիներին, բացի հայերից, որոնք աստվածամերձ Վանական վարդապետի միջոցով քննեցին առաջին սրբերի դավանությունը, գտան իրենց համախոհ երևելի ու փառավոր մարդկանց՝ Աթանասին, Գրիգոր Աստվածաբանին, Գրիգոր Նյուսացուն, Գրիգոր Լուսավորչին և այլ սրբերի:

(Վարդ. Արևել., ԶԹ.)

Յոթ հարյուր չորս թվին Հուլավուն՝ Մանգու դանի Եղբայրը, անթիվ զորքով ու մեծասաստ իշխանությամբ եկավ Պարսկաստանի, Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի վրա: Նախ եկած զորքին հրաման տվեց՝ իր ամբողջ թագմությամբ գնալ հռոմեական աշխարհը, որի ահից [հույները] թողեցին վերին աշխարհը,

ստիպված գնացին և գրավեցին ամբողջ միջերկրայքը, մինչև ծովը՝ տիրելով այն երկրներին, որոնք հռոմեական կոչեցյալ սութանների իշխանության տակ էին:

Իսկ մեծն Հուլավուն իր զալստյան նույն տարում, յոթ հարյուր չորս թվին, գնաց Սլիեղքի Ալամուդ կոչված երկիրը, գրավեց այն, հեռացրեց զիսավորին, որովհետև նրա զալուց առաջ նրանց զորքը պաշարվել ու նեղ վիճակի մեջ էր ընկել նրանց զիսավորի անունն էր Իսավուր նոյին: Եվ Հուլավուն երբ այնտեղից վերադարձավ, իր մոտ կանչեց Վրաց Դավիթ թագավորին ու աշխարհի մեծամեծներին և սիրով ու պատվով ընդունեց բոլորին, մանավանդ քրիստոնյաներին, որովհետև իր առաջին կինը՝ Տնողությանը, քրիստոնյա էր...

(Վարդ. Արևել., Ղ.)

Հայոց թվականության նույն՝ յոթ հարյուր թվին Ելդան Հուլավուի դրանը սպանեցին Վրաց Զաքարե զորապետին՝ Շահնշահի որդուն (95), բոլորին հայտնի և ծանոթ մարդուն, երիտասարդ և ծաղկագեղ հասակում, իր առաջադիմության ու հաջողության ժամանակ ինչ-որ մեղադրանք բարդելով նրա վրա, նաև այն, թե խափանվել է իր ժամանակին արքունիք գնացող հարկի կարգը: Նրա մահը ողորմագին վայնասունով սպաց Վրաց ամբողջ ազգը Հայաստանի՝ նրանց մերձավորների հետ միասին. որքան ավելի դառնակսկիծ ու մարմնատանջ ողբով էին սպում նրա ծնողները: Այդ պատճառով նույն օրը, այդ նույն սև սգի ժամանակ սրտակուոր լինելով մեռապ նրա հայրը՝ Շահնշահը, տերը Անի մայրաքաղաքի, որը երբեմն արքայանիստ քաղաք էր՝ Բագրատունյաց թագավորների և այլնայլ աշխարհների ավագ քաղաքը, իսկ Անիի տիրոջ անունը Շահնշահ էր կոչվում, այսինքն՝ արքայից արքա:

(Վարդ. Արևել., ՂԴ.)

Յոթ հարյուր տասներեք թվին մեզ կանչեց Հուլավու Էլդանը Շնորհավոր անունով մարդու միջոցով, որն այն ժամանակ մեծարվում էր բոլորի կողմից, առավել ևս աշխարհակալների, հյուսիսի կուսակալ Բաթուի, որի մոտ գնաց ու նախ պատվի արժանացավ նրա, և ապա Հուլավու Էլդանի կողմից: Վերջինս իր ծախսով ու գրաստներով տարավ մեզ ու մեզ հետ եղող վարդապետներին՝ մեր եղբայրներ Սարգսին, Գրիգորին և Տփղիսի ավագերեց տերտերին: Եվ այդ մեծ մարդուն մենք տեսանք ամսամուտի և իրենց տարեմուտի ավագ օրերին, ըստ հոռմեացիների՝ հուլիս, իսկ ըստ մեզ՝ արաց ամսին: Դրանք նրանց ուրախության օրերն էին, մտտավորապես մեկ ամիս, որը կոչում էին խուռուլքա, այսինքն՝ խորհրդատուն: Այդ ժամանակ այլ խաները, այսինքն՝ Չինգիզ խանի ազգականները, գալով մեծ խանի մոտ, ամբողջ ավագանու հետ միասին հոգ էին տանում այն ամենի մասին, ինչ որ պատշաճն էր: Նրանք բոլորը նոր շորեր էին հագնում և ամեն օր տարբեր գույնի շորեր փոխում: Այնտեղ լինում էին նաև իրենց բոլոր հպատակները շատ ընտիր նվերներով, [լինում էին] թագավորներ, սուլթաններ, ինչպես նաև մեր տեսած Հայոց Հեթում թագավորը, Վրաց Դավիթ թագավորը, Աստաքի բրինձը (96) և Պարսից կողմերի շատ սուլթաններ: Եվ մեզ ընդունելիս չթողեցին խոնարհվել կամ ծնկի չոքել ըստ իրենց սովորության, որովհետև քրիստոնյաները միայն Աստծուն են երկրպագում: Գինին մեզ օրինել տվեցին և մեր ձեռքից առան: Եվ առաջին խոսքը, որ ինձ ասաց, այս էր. «Քեզ կանչել եմ, որպեսզի դու ինձ տեսնես, ձանաշես և սրտանց աղոթես ինձ համար»: Թերևս ավելորդ է ամբողջը գրել, [նա] շատ խոսեց և մենք պատասխան տվեցինք, հետո մեզ նստեցին, զինի տվեցին, և մեր այն եղբայրները, որ մեզ հետ էին, շարականներ կատարեցին, իսկ վրացիները, ասորիները և հուները կատարեցին իրենց պաշտամունքը:

(Վարդ. Արևել., ՂԶ.)

Այդ օրերի ընթացքում իմ մեղքերի պատճառով գրքույկս իմ սպասավորների հետ միասին ընկալ հարամիների ձեռքը, բայց Հիսուսի ողորմությամբ իմ սպասավորներն անմիջապես ազատվեցին: Եվ մեկ ու կես տարի անց զիրքս վաճառքի է բերվում Տիգիս, և այն գնում է իմ եղբոր տնից Մելեք անունով մեկը: Դրա համար Տիրոջ ողորմության փառքը բոլոր սրբերի ու արարածների վրա է, իսկ զիրքը գնողին թող հասնի Քրիստոսի գթությունը:

(Վարդ. Արևել., ՂԷ.)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սովոր Խորենացին և Կորյունը կիրառում են «Զաղա» անվանաձևը:

2. Խոսքը Վարդանանց նահատակների մասին է:
3. Հայոց մարզպան Վասակ Սյունին է:
4. Հմայակ Մամիկոնյանն է՝ Վարդան Մամիկոնյանի եղբայրը:
5. Վրաց Աշուշա բղեշիսի կինը Հմայակ Մամիկոնյանի կնոջ քույրն էր:

6. Ինչպես Ղազար Փարպեցու շարադրանքից, որից օգտվել է Վարդան Արևելցին, այնպես էլ ներքոշարադրյալից պարզ է, որ վրաց թագավորն է դիմել Վահան Մամիկոնյանին օգնության խնդրանքով, ուստի կարծում ենք, որ այստեղ «և»-ի փոխարեն պետք է լինի «որն»:

7. Հայոց կաթողիկոս Սովոր Բ Եղիվարդեցին (574-604 թթ.) է, որի օրոք գործածության մեջ է դրվել Հայոց տոմարը:

8. Ըստ «Աշխարհացույցի»՝ Վերին Զավախքը Մեծ Հայքի Գուգարք նահանգի զավառներից էր: Այսօր Զավախքն ընդգրկում

Է Վրաստանի Սամցիսէ-Զավախիք նահանգը և Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջանը:

9. Կյուրիոնը վրաց կաթողիկոս է եղել 599-614 կամ 616 թվականներին:

10. Ցուրտավը, որն ավելի ուշ կոչվել է Գաջենք, Մեծ Հայքի Գուգարք նահանգի Բողնովոր զավառի բնակավայրերից էր և գտնվում էր Գաջենագետի և Ցուրտագետի ջրկիցում՝ ներկայիս Վրաստանի Բոլնիսի մունիցիպալիտետի Արուխվո գյուղի մոտ:

11. Սա Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունի Խոսրով Շումն է, որը Խոսրով Բ Փարվեզի (591-628 թթ.) օրոք պարսից արքունիքում մեծ հեղինակություն էր վայելում:

12. Սա Աբրահամ Ա Աղբաթանեցի (607-613 թթ.) հայոց կաթողիկոսն է:

13. Սա Ներսէս Գ Տայեցի (941-961 թթ.) հայոց կաթողիկոսն է, հայտնի է նաև Ներսէս Գ Շինող անվամբ՝ մի շարք եկեղեցիներ նորոգելու և կառուցելու համար:

14. Տայքը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն էր, որը հյուսիսից սահմանակից էր Գուգարքին, արևելքից՝ Այրարատին, հարավ-արևմուտքից՝ Բարձր Հայքին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Եզերը և Խաղտիք երկրներին: Տայքը հայտնի էր իր անառիկությամբ և շատ անգամ է ապաստան հանդիսացել հայ նախարարների ու թագավորների համար:

15. Թեոդորոս Ռշտունին եղել է հայոց սպարապետ 628 թվականից, մարզպան՝ 634 թվականից, իսկ 639-654 թթ. եղել է միավորված Հայաստանի իշխանը:

16. Աղթամարը Վանա լճի ներկայիս չորս կղզիներից ամենանշանավորն է, որը գտնվում է լճի հարավարևելյան մասում: Կղզում առ այսօր պահպանված հուշարձանը Սուլք Խաչ եկեղեցին է:

17. Խոսքը հայոց Իսրայել Ա Ոթմսեցի կաթողիկոսի մասին է (աթոռակալել է 667-677 թթ.):
18. Խոսքը Օմար խալիֆայի (717-720 թթ.) մասին է:
19. Լևոն Դ (717-741 թթ.) կայսրն է:
20. Աշոտ պատրիկ Բագրատունին հայոց կառավարչի պաշտոնը վարել է 732-748 թվականներին: Մահացել 761 թվականին:
21. Կոչում են Կուրամ կամ Կուարամ:
22. Վասպուրականի թագավորությունը Բագրատունյաց Հայաստանի ենթակա թագավորություններից մեկն էր, գոյատևել է 908-1021 թթ. Արծրունյաց տոհմի գլխավորությամբ: Այն ընդգրկում էր Մեծ Հայքի Վասպուրական, Մոկք նահանգները, Կորճայք նահանգի մի մասը՝ ներառելով տարածքներ ներկայիս Թուրքիայից, մասամբ Հայաստանից, Իրանից և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից:
23. Մեներիմ Արծրունին Վասպուրականի թագավորության վերջին թագավորն էր (իշխել է 1003-1021 թթ.):
24. Խոսքը Գևորգ Բ Գառնեցի (877-897 թթ.) կաթողիկոսի մասին է:
25. Հայաստանում Բագրատունյաց արքայատոհմի հիմնադիր Աշոտ Ա (885-890 թթ.) թագավորն է:
26. Հայոց արքա Աշոտ Բ Երկաթն է (914-928 թթ.):
27. Խոսքը Վասպուրականի Գագիկ (908-943 թթ.) թագավորի և Աղվանքին տիրապետած Մովսեսի մասին է:
28. Վրաց Ատրներսեհ Դ (888-923 թթ.) թագավորն է:
29. Արաւ Ա Բագրատունին թագավորել է 928-953 թվականներին:
30. Նկատի ունի Անանիա Մոկացի (949-968 թթ.) հայոց կաթողիկոսին:
31. Վահան Ա Սյունեցի (968-969 թթ.) հայոց կաթողիկոսն է:

32. Ղ. Ալիշանը կարծում է, որ այդ պատկերների նկատմամբ թշնամանք չկա, այլ դա այդպես է Վրաստանից բերելու պատճառով:

33. Ստեփանոս Գ Սևանցի (969-972 թթ.) հայոց կաթողիկոսն է:

34. Խոսքը վերաբերում է հայոց արքա Սմբատ Բ Տիեզերակալին (977-989 թթ.):

35. Խոսքը Հայոց արքա Աշոտ Գ Ողորմածի (953-977 թթ.) որդի Գուրգենի մասին է:

36. Այս բոլոր ավաններն ու գավառները, ինչպես նշում է Ղ. Ալիշանը, գտնվում են Գուգարաց աշխարհի հարավարևելյան մասում:

37. Միջնադարյան պատմիչների մոտ Երբեմն նույնացվել են «զավառ» և «աշխարհ» հասկացությունները, և այստեղ նույնպես կարծում ենք, որ պետք է լինի «Այրարատ աշխարհ», որը Մեծ Հայքի 15 աշխարհներից [նահանգներից] մեկն էր, միջնաշխարհը, որտեղ գտնվում էր արքունի ոստանը:

38. Չնայած վրացիները Գորգասալին համարում են կիսառոսապելական հերոս, սակայն Ղազար Փարպեցին Վախթանգին նկարագրում է որպես Վրաստանի թագավոր, որը Վահան Մամիկոնյանի հետ ուներ հակապարսկական պայքարի դաշնք և պատերազմ էր մղում պարսիկների դեմ՝ օգտագործելով հայերի և հոների ռազմական ուժը:

39. Ղ. Ալիշանը կարծիքով՝ Միփթար Երեցը ԺԲ դարի պատմիչ Միփթար Անեցին է:

40. Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունին է (990-1020 թթ.):

41. Հայոց արքա Հովհաննեսը, որը նաև Սմբատ էր կոչվում, իշխել է 1020-1041 թվականներին:

42. Աշուտ Դ թագավորը իշխել է 1022-1040 թվականներին:
43. Վրաց թագավոր Գեորգի Ա-ն է (թագավորել է 1014-1027 թթ.):
44. Վրաց թագավոր Բագրատ Գ-ն (1008-1014 թթ.) է:
45. Դավիթ կուրապաղատը իշխել է 966-1000 թվականներին:
46. Ուխտիքը ներկայիս նույնանուն գյուղն է Էրզրումի վիլայեթի Կամախի գավառակում:
47. Ապահունիքը Մեծ Հայքի Տուրութերան նահանգի գավառներից էր: Տարածվում էր Վանա լճից հյուսիս: Այստեղ էր գտնվում Մանձկերտ կամ Մանսազկերտ քաղաքը Արածանիի միջին հոսանքում, ձախ ափին: Գավառը եղել է Մանավազյան նախարարական տոհմի հայրենական կալվածքը:
48. Վասիլ Բ Բուլղարասպանն (976-1025 թթ.) է:
49. Կարնո դաշտը տարածվում էր Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Կարին գավառում:
50. Հայոց Պետրոս Գետադարձ (1019-1058 թթ.) կաթողիկոսն է:
51. Խաղունիքը գտնվում էր Սև ծովի հարավարևելյան ափին, հարավից սահմանակից էր Բարձր Հայքի Սպեր, արևելյից՝ Տայքի Ոքաղե և Արայաց փոր գավառներին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Պոնտական Կապաղովկիային: Սահմանակից լինելով Հայաստանին՝ այն բնակեցված է եղել նաև հայ բնակչությամբ, ընդհուպ մինչև 1915 թվականը:
52. Բագարատ Դ (1027-1072 թթ.) է՝ Գեորգի Ա-ի որդին:
53. Միքայել Դ Պաֆլագոնացի (1034-1041 թթ.) կայսրն է Հայկական (Մակեդոնական) արքայատոհմից:
54. Կոստանդին Թ Մոնոմախոս (1042-1054 թթ.) կայսրն է:
55. Խոսքը Շաղադյան Փաղլուն (985-1031 թթ.) ամիրայի մասին է:

56. Սեղուկյան պետության հիմնադիր Տուղրիլ Բեկն (993-1063 թթ.) է:

57. Դավիթ Անհողինի (990-1050 թթ.) հաջորդ Գուրգեն (Կյուրիկն) Բ-ն (1050-1089 թթ.) է:

58. Հեղինակը նկատի ունի Վասպուրականի իշխաններից մեկի՝ Խաչիկի որդի Ապլղարիբին:

59. Վրաց թագավոր Բագարատ Դ-ն է (թագավորել է 1027-1072 թթ.):

60. Գեորգի Բ-ն (1072-1089 թթ.) է՝ Դավիթ Դ Շինարարի հայրը:

61. Ուանը, ըստ «Աշխարհացույցի», Աղվանքն է:

62. Ղ. Ալիշանը կարծում է, որ այդ բերդերն են Նորքերդը և Մածնաբերդը, որոնք գտնվում են Ուտիքում:

63. Կապույտ բերդը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արշարունիք գավառում: Այս բերդում էր 914 թ. պաշտպանվում Սմբատ Ա Բագրատունին արաք զորավար Յուսուփի զորքերի հարձակումից:

64. Վանանդը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից էր, կոչվում էր նաև Վերին կամ Անվայտ Բասեն:

65. Վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125 թթ.) թագավորն է:

66. Ուխտիքը գտնվում էր Մեծ Հայքի Տայք նահանգում, որը ներկայիս Օլթին է Թուրքիայում:

67. Գագը և հիշատակված մյուս բնակավայրերն ու բերդերը գտնվում էին Լոռու թագավորությունում, որոնք ավելի ուշ դարձան Զաքարյանների սեփականությունը:

68. Հաղբանդը Ղ. Ալիշանը նույնացնում է Դարբանդի հետ:

69. Բ. Հարությունյանը Շապուրան քաղաքը տեղադրում է Դարբանդից հարավ-արևելք՝ Կասպից ծովի ափին:

70. Դեմետրէ Ա-ն զահակալել է 1125-1154 կամ 1155 և 1154 կամ 1155-1156 թվականներին:

71. Դմանիքը կամ Դմանիսը գտնվում է Սոմխիթ վարչական միավորի տարածքում:

72. Խունանը նոյնացվում է Հունարակերտ բնակավայրի հետ, որը գտնվում էր Մեծ Հայքի Գուգարք նահանգի արևելքում, Կուր գետի աջ ափին՝ Վրաց-աղվանական սահմանի մոտ:

73. Աբովելքը Օքքելյան տոհմից էր, որին Դավիթ Դ Շինարարը նշանակել էր Անիի կառավարիչ:

74. Գագ դաշտը գտնվում էր Գուգարք աշխարհի Կողբովոր գավառում, Ուխտիքի սահմանակցությամբ:

75. Վրաց արքա Գեորգի Գ-ն է (1156-1184 թթ.)՝ Թամար թագուհու (1184-1213 թթ.) հայրը:

76. Սադունը իշխան էր Արծրունյաց տոհմից:

77. Ալփասլանը Պարսից սելջուկյան Ապլան շահն է:

78. Սահմատան հիշատակում է նաև Ստեփանոս Օքքելյանը՝ մանրամասն պատմելով այնտեղի դեպքերի մասին: Տեղը կոչում է նաև Դարպաս-ազարակ, որը գյուղ է Գուգարք նահանգի Ծորոփոր գավառում:

79. Անքերդը կառուցվել է Այրարատ նահանգի Արագածոտն գավառում՝ Արքաշեն և Ամբերդ գետերի ջրկիցում: Եղել է Բագատունիների ռազմապաշտպանական կարևոր ամրություններից մեկը: X դարում պատկանել է Պահլավունի իշխանական տոհմին:

80. Ղ. Ալիշանը կարծում է, որ պետք է լինի «թագավորանիստ» և ոչ «թագավորի»:

81. Գետաբակն ու Չարեքը գտնվել են Արցախ նահանգում: Ազատագրվելով դրանք այնուհետև պատկանել են Վահրամյան-ներին:

82. Հեղինակը նկատի ունի Իվանեի՝ քաղկեդոնական դավանակը ընդունելու իրողությունը:

83. Կիլիկիայի թագավոր Լևոն Բ-ն է, որը գահակալել է 1198թ. հունվարի 6-ից և մինչև 1219 թվականը:

84. Լաշա Գեորգին հաջորդել է մորը՝ Թամարին, և թագավորել 1213-1223 թվականներին:

85. Բազավանը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բագրևանդ գավառում՝ Զիրավի դաշտում՝ Նպատ լեռան ստորոտին: Հայտնի է եղել որպես պաշտամունքի վայր հեթանոսության, ապա՝ քրիստոնեության ժամանակներում:

86. Զաքարե Բ Զաքարյանը մահացել է 1212 թվականին:

87. Զաքարյան Հայաստանի ինքնակալ կառավարիչ (1212-1227 թթ.) Իվանե Ա Զաքարյանն է՝ Զաքարե Բ-ի եղբայրը:

88. Հաթերքն իր տեղանքով համապատասխանում է ներկայիս ԼՂՀ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղին, որը գտնվում է Թարթառ գետի ձախ ափին:

89. Որոտը Սյունյաց նահանգի Ծղուկ գավառի հոչակավոր բերդն է՝ ներկայիս ՀՀ Սյունիքի մարզի Որոտան գյուղը՝ նույնանուն գետի ձախ ափին:

90. Ստեփանոս Օրբելյանը ծանուցում է, որ Մելիքշահի մոտ Սենեքերիմ թագավորն էր, իսկ մատովակը՝ ումն Չորթմանը:

91. Դ. Ալիշանը Վարդանաշատի երկիրը համարում է Կուր և Երասի գետերի խառնարանի միջև ընկած անկյունը:

92. Խոսքը Զալալ Էդ Դինի մասին է, որը Խորեզմի շահ էր 1220-1231 թվականներին:

93. Կիրակոս Գանձակեցին է՝ «Հայոց պատմության» հեղինակը, իսկ Վանական վարդապետի գործն առ այսօր գտնված չէ:

94. Մոնղոլ կառավարիչ Բաչու Նոյինն է:

95. Զաքարե զորապետը վրաց ամիրսպասալար Զաքարե Զաքարյանի թոռն էր: Նա նույնպես ծառայում էր վրաց արքունիքում:

96. Այսինքն՝ Անտիոքի ֆրանկ իշխանը:

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ¹⁶ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ¹⁷

Փայտակարան (1) Տիկիս է:

Վարդանակերտ (2) Տիկիեց վիճակն է:

Մշխեթա պատրիարքարանն է Վրաց:

Ավիսազ և Մազքթաց աշխարհն եզր է Վրաց աշխարհին:

Սամցիկ Ախլցիս է. իշխանաց երկիրն է օծեալ խաչն սուրբ հայրապետին Ներսէսի եւ գաւազան նորա:

Տայոց (3) գաւառն ի Վիրս է, որ է Կուլքիստան:

(Աշխարհացոյց, Գ ա)

Հոդքաղա խանն որդի է Չանկզ դանին, որ եկն նստաւ ի յԱլանք եւ զԳ (3) որդիսն առաքեաց ի վերայ Գ (3) բաժին աշխարհիս: ԶՄանկու դանն առաքեաց ի ներայ Խորասանայ, զԱրդուն դանն՝ ի վերայ Հոռոմոց, զՀուլաւու դանն ի վերայ Հայոց եւ Վրաց եւ Բարելացոց, եւ առին զբոլոր աշխարհս:

(Աշխարհացոյց, Գ բ)

Փայտակարան Տիկիս է: Վարդանակերտ Տիկիեց վիճակն է:

Ավիսազ Մազքթաց աշխարհն (4) է. եզր(ն) է Վրաց աշխարհին:

Մծխիթա պատրիարքարանն է Վրաց:

Սամցիկ Ախլցիս է:

Իշխանաց երկիրն է օծեալ խաչն սուրբ հայրապետին Ներսէսի, որ այժմ Աճարա կոչի:

¹⁶ Աշխարհաքար տեքստի բացակայության պատճառով օգտագործել ենք հեղինակի երկի գրաքար բնօրինակը:

¹⁷ Վարդան Արեւելցու «Աշխարհացոյցի» գրաքար բնօրինակը տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1960:

Տայոց գաւառն ի Վիրս է:

(Աշխարհացոյց, Գ թ)

Եւ Վենէտիկն աթոռ է ի մեջ ծովուն, ուր քեմիադարն բանի եւ զարձարն ոսկի ներկէ: Զի ԺԲ ազգ եւ լեզուք Ֆրանգն է, եւ Հ Հոռոմն եւ Հ Վրացին:

(Աշխարհացոյց, Դ թ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փայտակարանը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն էր: Տարածվում էր Կուր և Արաքս գետերի խառնարանից հարավ՝ Կասպից ծովի ափով: Արևմուտքում սահմանակից էր Վասպուրական, Սյունիք, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Արցախ և Ուտիք նահանգներին: Փայտակարան նահանգը չէր կարող նույնացվել Տփիսի քաղաքի հետ: Այստեղ ուրիշ միտում է նկատվում:

2. Վարդանակերտը Փայտակարանի քաղաքներից էր և տեղադրվում էր Արաքսի աջ ափին:

3. Տայքը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն էր, որը հյուսիսից սահմանակից էր Գուգարք նահանգին, հարավից և արևելքից՝ Այրարատին, իսկ արևմուտքից՝ Բարձր Հայքին:

4. Ըստ Բ. Հարությունյանի՝ մազքութները բնակվում էին Աղվանքի հյուսիս-արևելքում՝ Կասպից ծովի ափին, իսկ աբխազները՝ Սև ծովի ափին:

ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՅԻ¹⁸, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՆԵՏԱԶԻԳՆԵՐԻ ԱԶԳԻ ՄԱՍԻՆ

Եվ ի հավելումն այս ամենին իրենց խանից, որը կոչվեց Չին-գիզ խան (1), դարձյալ հրաման ստացան և հարձակվեցին Աղվանից ու Վրաց աշխարհների վրա: Վրաց թագավորը, թաթարների գալու լուրը լսելով, վաթսուն հազար հեծյալով գնաց նրանց դեմ դեպի այն մեծ դաշտը, որը կոչվում է Կոտման (2) և գտնվում է Տերունական բերդի դիմաց: Եվ երբ մարտն սկսվեց, այնժամ ստանայի ազրեցությամբ, որը հանապազ դեմ է ճշմարտությանը, Մանասա գոմուց (3) տերը Համիդոլա անունով, ինչ-որ քենի պատճառով ջլատեց Աթարեկ Իվանեի (4) ձիու [ոստքերը]: Քանզի այն ժամանակ վրաց թագավոր Լաշան (5) մեռած էր, և նրանից մնացել էին մի ուստր Դավիթ անունով ու մի դուստր Ուտուզութան (6) անունով: Դավիթն ընկել էր հոռոմների սուլթանի ձեռքը և գտնվում էր բանտում, իսկ նրա քույրը՝ Ուտուզութանը, վարում էր թագավորությունը խնամակալությամբ Իվանեի, որն Աթարեկ կոչվեց:

Իսկ երբ հասավ թաթարների գալու լուրը, ըստ ավելի վերն ասվածների, այնժամ Իվանեն վերցնելով վրաց թագավորական հեծելազորը, եկավ Գագ (7) մեծ, և իմաստուն իշխան Վահրամի [որդի] Պլու Զաքարեի մոտ, և նրան իր զորքերով վերցնելով՝ գնաց թաթարների դեմ: Կորովի ու մեծ իշխան Վահրամը ստանձնեց [զորքի] աջ թևը, իսկ Իվանեն՝ ձախը, և երբ [հակառակորդ կողմերը] հարձակվեցին միմյանց վրա, անիծյալ Համիդոլայի կողմից կատարվեց այն ոճիրը, որի մասին [վերևում] գրվեց:

¹⁸ Գրիգոր Ակներցու տեղեկությունների աշխարհաբար տարբերակը տե՛ս Գրիգոր Ակներցի, Պատմություն նետաձիգների ազգի մասին, Եր., 2011: Նույնի բնօրինակը՝ Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմություն թաթարաց, Երուսաղեմ, 1974:

Երբ նետաձիգների ազգը տեսավ նրանց մեջ այդ երկպառակությունը, այնժամ հզորանալով, հարձակվեց վրաց հեծելազորի վրա և անխնա կոտորեց նրանց: Իսկ Գագի տերը՝ մեծ իշխան Վահրամը, գրավելով աջ թևը, մինչև երեկո առաջ գնաց՝ անխնա հարձակմամբ կոտորելով թաթարներին, մինչև որ Սաղամա դաշտն արհասարակ լցվեց կոտորված թաթարներով: Բայց երբ Գագի իշխան Վահրամն ինքը լսեց թագավորական զորքերի կոտորվելու մասին, այնժամ սաստիկ տիրելով ու դադարեցնելով մարտը, վերադարձավ իր բերդ-ամրոցը, որը կոչվում է Քարհերձ (8): Եվ այս կատարվեց հայոց թվականության 663-ին: Երեք տարի անցնելուց հետո թաթարները դարձյալ եկան ու գրավեցին Գանձակ Շահաստանը (9), անխնա կոտորեցին ու գերեցին և մեծ ավարով ու զանձերով վերադարձան իրենց երկիրը:

...Երեք գլխավորներ, մեկ այլ հրաման ստանալով խանից, դարձյալ եկան Աղվանքի և Վիրքի վրա և գրավեցին բազում քաղաքներ ու բերդեր: Նրանց անուններն եին մեկինը Չորմա, երկրորդինը՝ Բենալ, իսկ երրորդինը՝ Մուլար: Անհամար հեծյալներով պաշարելով բերդերը՝ առաջինը գրավեցին Շամքորը մոտիկ Գանձակին, որն առաջ գրավել էին: Գրավեցին Սագամը (10), Քարհերձը, Տերևենը (11), Թագավորանիստ (12) մեծ դյոյակը, Գարդմանը (13), Երգեվանը (14), Մածնաբերդը (15), գրոհով գրավեցին նաև Տավուշ ամուր դյոյակը, որը սուլթանի աթոռանիստն էր, գրավեցին Տերունականը (16) և Նոր Բերդը (17), գրավեցին նաև Վարդապետի՝ բազում ինչքով լեցուն մեծ Քարայրը, իր աշակերտներով գերի տարան նաև նրան՝ մեր փառավոր Վանական վարդապետին: Սակայն ողջ երկիրը, միասին ցավակից լինելով, բազում զանձեր ու ոսկի տվեց և փրկագնեց վարդապետին իր աշակերտներով:

Սրանից հետո, երբ հայոց և վրաց իմաստուն իշխաններն իմացան, թէ Աստված է նրանց զորություն ու հաղթություն տվել գրավելու մեր երկրները, ուստ կապելով գնացին թաթարներին հնազանդվելու և խոստացան տալ հարկեր, այն է՝ մալ և թաղար, և նրանց հետ հեծելազորով գնալ դեպի ուր և տանեն: Համաձայնելով՝ թաթարները դադարեցրին կոտորածն ու երկրի ավերումը, իրենք վերադարձան իրենց բնակության տեղերը Մուղանի երկիր (18), բայց թռղին մի զլիավոր Ղարա Բուղա անունով՝ քանդելու երկրի բոլոր ամրոցները, որ գրավել էին: Եվ հիմքերից քանդեցին տաճիկների կողմից մեծ ծախսերով շինված անառիկ բերդերը: Սա այսպես կատարվեց:

(Գր. Ակներ., Գ)

Իսկ երեք զորապետերը, որոնց մասին ասվեց, գրավեցին Վրաց և Աղվանից երկրները և վերադարձան Մուղանի երկիր, որտեղ հողի պարարտության և եղանակի մեղմության պատճառով խոտը ամառ-ձմեռ դալար է լինում: Այստեղ օրեր-ինչ մնալով՝ դարձյալ որոշեցին զալ քրիստոնյաների վրա՝ առ ոչինչ համարելով քրիստոնյաների կոտորումն ու Վրաց և Աղվանից երկրներից գերեվարումը: Գրավեցին անվանի Շմեղա Քարը (19), բյուրավոր մարդկանց կոտորեցին այնտեղ (թիվ չկար կոտորվածներին) և ողջ երկրից անթիվ բազմությամբ երեխաներ գերեցին: Բայց սրանով չհագեցան, այլ դարձյալ խորհեցին հարձակվել երկրի վրա և առհասարակ ողջ երկիրը սրի մատնել:

Սակայն Ամենակալ Աստծո նախախնամությունը չի անտեսում նրան հուսացողներին, ուստի նրանց [թշնամիների] անարգ և անիրավ խորհուրդները խափանեց և երեք զլիավորներից, որոնց մասին ասվեց, երկուսին սպանեց:

Իսկ թե ինչ խորհեցին՝ փոքր-ինչ ասենք: Իրիկնադեմին խուռականապատճեն ու առաջարկում է «ժողով», խորհեցին կրկին վերադարձնալ գրաված երկրի վրա և առհասարակ կոտորել: Բայց այս ոչ թե երեքը միաբան խորհեցին, այլ երկուսը. Աստծոն հրամանով և նախախնամությամբ Չորման բարի խորհրդով ասում էր, թե բավական է երկրի ավերումն ու կոտորածը: «Թող շեն մնան, – ասում էր, – հողը մշակեն, այգու և արտի արդյունքի կեսը մեզ տան, իսկ կիսով իրենք ապրեն»:

Եվ մինչ այս խորհրդածությունների մեջ էին, օրը մթնեց, խորհուրդն ընդհատվեց, և քոն մտան: Երբ լուսացավ, երկու զիսավորներին, որոնք չար բաներ խորհեցին, գտան մեռած, իսկ մյուսը, որ երկրի շենությունն ու խաղաղությունը կամեցավ, կենդանի էր: Նրա անունը Չորմա էր: Ապա Չորման այս միջադեպի վկաներով ելավ գնաց իրենց մեծ զիսավորի՝ Շինգիկ խանի մոտ, պատմեց իր և երկու զիսավորների բոլոր մտադրությունները և մի գիշերվա մեջ նրանց մեռնելն ու իր կենդանի մնալը:

Երբ խանը լսեց, զարմացած ասաց Չորմային. «Այն, ինչ երկու զիսավորները խորհեցին, Աստծուն հաճռ չեր, Այդ պատճառով հանկարծամահ եղան: Իսկ դու քո բարի մտադրությունների համար չմեռար, որովհետև Աստծոն կամքն է, որ գրավենք երկիրը, շեն պահենք և օրենք սահմանենք, [որպեսզի նրանք] մնան մեր հրամանի ներքո և տան մեզ տղոր, մալ, թաղար ու փչուր: Իսկ ովքեր չեն հնազանդվի մեր հրամաններին և մեզ հարկ չեն տա, նրանց սպանենք, բնակատեղին քանդենք, որ երբ ուրիշները լսեն ու տեսնեն, երկնչեն և այդպես շանեն»:

Այս ասելով՝ խանն ապա հրամայեց Չորմային գնալ և պահել իր ուխտը, որը խորհեց և փրկվեց մահից...

Իսկ զիսավորների անունները, որ մնացին երկրում, այս են՝ Ասութու նուին, որը խանին արյունակից էր, Չաղատա, որը խան

կոչվեց, ապա Սոնիթա, մեկ այլ փոքր Չաղատա, Բաշու նուին, որին նշանակեցին բոլոր զորքերի առաջնորդ, Ասար նուին, Խութթու նուին, Թութթու նուին, Օգոթա նուին, Խոշխա նուին, Խոջա նուին, Խուռումչի նուին, Խունան նուին, Թենալ նուին, Անգուրաք նուին:

Նույն ձևով և այս տասներեք գլխավորները Վրաց և Աղվանից երկրները բաժանեցին միմյանց միջև լեռներով ու դաշտերով: Եվ Չորմա խանի մեծ գերդաստանը բերին Գանձակ Շահաստան, որ առաջ ավերել էին, և հետո Էլ վերաշինվեց:

(Գր. Ակներ., Դ)

Իսկ հարկերից ազատ Վրաց և Աղվանից մեծ իշխանները (որը կամքով, որն ակամա) դարձան նրանց հարկատու և անխափան տալիս էին սահմանված բոլոր հարկերը, որի մասին ավելի վաղ գրեցինք, և իրենք, ըստ իրենց զորության և կարողության, հեծելազորով նրանց հետ գնում էին հարկահանության, գրավում էին անհնազանդ քաղաքներն ու բերդերը՝ ավերելով, գերելով և անխանա կոտորելով տղամարդկանց ու կանանց, քահանաներին ու կրոնավորներին, գերեվարելով սարկավագներին՝ ծառայելու իրենց, աներկյուղաբար կողոպտելով քրիստոնյաների եկեղեցիներն ու սրբերի պատվական նշխարները և զարդերից մերկացնելով խաչերն ու զրբերը, առ ոչինչ համարելով՝ դեն էին նետում:

(Գր. Ակներ., Ե)

Հայոց վեց հարյուր ութսունութ (688) թվականին թաթարների գլխավորը՝ Բաշու նուինը, զորքեր ժողովելով, անթիվ բազմությամբ հարձակվեց Կարին (20) քաղաքի վրա: Երկու ամիս պաշարելով՝ գրավեցին, անխանա կոտորեցին և ավերեցին այն հարուստ ու գեղեցիկ քաղաքը: Նմանապես երկրի վանքերն ու հրա-

շալի եկեղեցիներն անմարդաբնակ դարձրին՝ գերելով և ավարելով, որոնց համար հայ և վրացի իշխանները զնել էին բազմաթիվ գորքեր՝ Տնացուցներ ու Հայսմակուրքներ, Առաքելական թղթեր ու Մարգարեական (աստվածաշնչան) ընթերցվածքներ, Առաքելական գործեր ու ոսկեզիր Ավետարաններ՝ աննման պերճությամբ զարդարված՝ ի շենություն և ի զարդ Նոր Սիոնի որդիներին: Այստեղից [թաթարները] առան տարան արևելքի աշխարհը և բոլոր վանքերը լցրին եկեղեցու զարդերով: Ի լրումն այս ամենի՝ մի տարի անցնելուց հետո դարձյալ ուրիշ գորք էլ ժողովեց նետածիաների ազգը հայ և վրացի իշխաններով հանդերձ, և անթիվ բազմությամբ հարձակվեց հոռոմների աշխարհի վրա: Չորքի գլխավորը՝ Բաշու նուինը, մարտական գործում քաջահմուտ էր. ում և պատահում էր իրենց աղեղներին ընդդեմ, բազմաթիվ հաղթանակներ էր տանում, բայց հաղթության պատճառը հայոց և վրաց իշխաններն էին, որ հանդես էին զալիս առաջինը և ուժգին բախմամբ հարձակվում թշնամիների վրա, ապա նրանցից հետո թաթարները՝ նետ ու աղեղով:

Երբ մոտան հոռոմների երկիրը, նրանց դեմ ելավ սուլթան Խփաթաղինը (21) հարյուր վարժուն հազարով: Վաղ ժամանակներից սուլթանի մոտ էր նաև Շալվե Մեծի (22) որդին: Երբ պատրաստվեցին մարտի, միմյանց հանդեպ ձախ թևում պատահեցին թաթար զորքերն ու Շալվեի որդին, իսկ աջ թևում՝ մեծահաղթ հայոց և վրաց իշխանները սուլթանի զորքերին ընդդեմ: Երբ մարտը սաստկացավ, Շալվեի քաջ ու անվանի որդին ետ շպրտեց թաթարներին ու նրանցից շատերին կոտորեց:

Իսկ Աղբուղա անունով վրաց իշխանը՝ Գագի տերը՝ մեծ Վահրամի որդին՝ Պլու Զաքարեի թոռը, և հայոց ու վրաց բազմաթիվ այլ ազատագունդ զորքեր, որ նրա հետ էին, քաջարար մարտնչելով սուլթանի զորքերի դեմ և ետ շպրտելով սուլթանի

զորքերի աջ թևը՝ շատ ամիրաների և մեծամեծների գլուխներ հատեցին՝ խիստ վշտացնելով սուլթանին: Երբ օրը մթնեց, մարտը դադարեցրին և բանակեցին միմյանց հանդիման այն դաշտավայրում, որ ընկած է Կարինի և Երզնկայի (23) միջև:

Իսկ երբ մյուս օրը լուսացավ, թաթարների, հայոց և վրաց զորքերը զինվեցին գնալու սուլթանին ընդդեմ, և մեծաթիվ զորքերով ձիարձակ գնացին սուլթանի բանակի վրա, բայց երբ հասան սուլթանի բանակատեղին, ուրիշ ոչինչ չտան, այլ միայն մեծաքանակ պարենով լցված վրանները: Տեսան նաև սուլթանի վրանը՝ դրսից և ներսից զարդարված բազում զանձերով, և շղթայակապ վայրի զազաններ՝ ինձ, առյուծ, հովազ՝ կապված սուլթանի վրանի առջև: Քանզի սուլթանն այդ գիշեր իր բոլոր զորքերով փախել էր ամիրաների երկմտության պատճառով, որոնք կամենում էին հնազանդվել թաթարներին:

(Գր. Ակներ., Զ)

Իսկ վրաց քաջ և անվանի զորքերը վաղուց ի վեր իրենց համար չունեին առաջնորդ և թագավոր. Լաշայի դուստրը՝ Ռոտուզուքանը, մահացավ և վրացիները մնացին անտերունչ, ինչպես հոտը, որը հովիկ չունենա: Ապա նախախնամությամբ Աստծո մտաքերեցին իրենց թագավորի որդուն՝ Դավթին, որը բանտարկված էր Բյուզանդիայում, և վրաց իշխանները, բյուզանդացիների զորքերից բռնելով զիսավոր մարդկանց, տարան Բաշուի մոտ, որը թաթարների զիսավորն էր, և չարչարանքներով հարցաքննել տվին նրանց թագավորորդի Դավթի մասին: Երբ նրանց հարցաքննությամբ ու սաստիկ զանահարությամբ նեղեցին, ինչպես սովոր էին թաթարները, [նրանք] խոստովանեցին և ասացին, թե [արքայազնը] Կեսարիայում շղթայակապ գտնվում է բանտում:

Ապա վրաց իշխանները, հույժ ուրախանալով, Բաչու նուինի և մյուս բոլոր թաթար զիսավորների հրամանով Վահրամին՝ Գագի տիրոջը, և նրա հետ էլ մի զիսավոր թաթարի հարյուր ձիավորով, մեծ պատրաստությամբ ճանապարհեցին Կեսարիա: Երբ զնացին, Աստծո կամոք արքայորդի Դավթին գտան մի մեծ ու խոր վիրապի մեջ. Աստծո կամքն էր նրան կենդանի պահել այն խոր բանտում: Երբ թաթարների զորախումբը և մեծ իշխան Վահրամը տեսան, զարմանալով նրա կենդանության համար՝ փառք տվին Աստծուն:

Դավիթը՝ վրաց թագավորի որդին, բարձրահասակ էր ու կորովի, գեղեցկադեմ և յուխ մորուքով՝ լի ամենայն իմաստնությամբ և Աստծո շնորհներով:

Ապա հանելով բանտից՝ նրան պատվական հանդերձներ հազցրին և հեծնելով երիվարները՝ առան ու զնացին Վրաց աշխարհ: Երբ հասան Տփոխ մեծ քաղաք, վրաց բոլոր իշխանները հույժ ուրախացան և հրաման ստացան Բաչու նուինից ու Այլթանա խաթունից, որը Չորմա խանի կինն էր, քանզի Չորմա խանը մահացել էր, և կինն էր այդ օրերին վարում խանությունը: Նա հրաման տվեց և Վահրամ մեծ իշխանի հետ հեծելախումբ ուղարկեց մեծ խանի մոտ, որ գտնվում էր արևելքում: Աստծո օգնությամբ զնալով ու տեսնելով խանին՝ պատմեցին արքայորդու հետ կատարված դեպքերը և հրաման ստացան մեծ խանից, Դավթին բերին նստեցրին Տփոխում՝ իր հոր զահին: Վրաց իշխանները, հույժ ուրախանալով, նրան անվանեցին Վահրալու թագավոր, այսինքն՝ «Վահրամը կարգեց թագավոր»: Նոր թագավոր նստելու առիթով Վրաց և Աղվանից երկրները միառժամանակ խաղաղվեցին:

(Գր. Ակներ., Ը)

Իսկ վրաց բարեսեր և գեղեցիկ Դավիթ թագավորը արքայանստ Տփղիս քաղաքում իր բոլոր իշխանավորներով հանապազ գտնվում էր մեծ ուրախության և գինարբուքների մեջ: Մի օր թագավորի մոտ մեծ ձաշ և ուրախություն էր, իսկ վրացիները սովորություն ունեն հանապազ ամբարտավանանալ և մեծ-մեծ բաներ խոսել:

Վրաց իշխաններից մեկը թագավորի առջև հաշվեց մյուս իշխաններին և ասաց, որ իշխանները թվով հազարն են: Կար իշխան, որ ուներ հազար պատերազմող ձիավոր, կար, որ ուներ հինգ հարյուր: Այս բանը տարածվեց ողջ թագավորության մեջ, երբ գինովցած ուտում-խմում էին: Եվ երբ հաշվեցին հայոց և վրաց զորքերը, ասացին, որ իրենց զորքերը կհաղթեն թաթարների զորքերին: Եվ իրենց համար գլխավորներ առանձնացրին: Բայց սա ոչ թե իսկապես խորհեցին և կամ խոսեցին, այլ կատակով, քանզի հոգսեր ու ցավեր շունեին, և արևելքի երկրում այլ թշնամի չկար բացի թաթարներից, որ ամեն անզամ գալիս էին և հարկահանությամբ նեղում վրաց և հայոց իշխաններին. ոմանցից ուսի կտավ էին ուզում, ոմանցից բազե, ոմանցից լավ շուն և ձի, և այդպես նեղում էին նրանց՝ չհաշված մալը, թաղարը և խալանը: Այդ պատճառով խոսեցին այդ, բայց ոչ թե իսկապես, այլ խաղով ու կատակով:

Իսկ այնտեղ գտնվողներից մեկը, մատնիչ Հուդային նմանվելով, գնաց, մատնեց թաթարներին և սուս խոսքը ձիշտ ու ուղիղ դարձնելով՝ այսպես ասաց. «Վրաց թագավորն ու իր իշխանները որոշեցին հարձակվել ձեզ վրա»: Իսկ նրանք, հավատալով այդ սուս խոսքին, վերադարձան [Վրաց] աշխարհ և ավարատեցին ողջ ունեցվածքն ու հոտերը, բայց մեծ խանի հրամանը շունենալով՝ մարդկանց չկոտորեցին: Թագավորին և բոլոր իշխաններին նեղը զցեցին, մինչև անզամ նրան, որ Աթաբեկ Իվանեի որդին՝

վրաց մեծ իշխանն էր՝ Ավագ անունով (24), պատգարակով տարան զլսավորի դուռը, քանզի այն օրերին հիվանդացել էր և չէր կարողանում ձի նստել: Եվ թեպետ մյուս իշխաններն ու թագավորը շատ խոսեցին, [սակայն] չհավատացին նրանց խոսքերին և չէին դադարեցնում գերեվարությունն ու երկրի ավարառությունը: Բայց երբ Ավագին պատգարակով տարան թաթարների զլսավորի դուռը, ապա նրա խոսքերին հավատալով՝ դադարեցրին մարդկանց կոտորածը և սրտարեկ ու թշվառ քրիստոնյաների համար խաղաղություն հաստատեցին:

(Գր. Ակներ., Թ)

Մանկու խանի հրամանով գալով՝ դատավորները (25) մեծ ժողով հրավիրեցին և կանչեցին բոլոր զլսավորներին, որ եկել էին Հուլավորի հետ, կանչեցին վրաց թագավորին իր հեծելազորով, կանչեցին Բաշուին իր հեծելազորով. [նրանք] ծածուկ չարախոսեցին դատավորների ականջին և այս պատճառով Մանկու խանի դատավորները մեծ էջիների (26) միջոցով կանչեցին խանորդիներին՝ Բալախային, Տութարին, Ղատա խանին, Բորա խանին, Թագուդարին և Միղանին, որը Խուլի որդին էր:

Երբ բոլորը միասին հավաքվեցին, այնժամ դատավորներն ասացին Մանկու խանի կողմից հրամայվածը: Բայց երբ խանորդիները լսեցին, թե Հուլավուն կամենում է խան նստել, [նրանցից] չորսը բարկացան և չկամեցան հնազանդվել Հուլավուին: Թագուդարը և Բորա խանը հնազանդվեցին Հուլավուին, իսկ Բալախան, Տութարը, Ղատա խանը և Միղանը չհնազանդվեցին: Երբ Մանկու Խանի դատավորներն իմացան, թե այս չորսը չեն հնազանդվելու, այլ կամենում են կովել Հուլավուի դեմ, հրամայեցին Բալախային, Տութարին և Ղատա խանին ասախի հասցնել, այսինքն աղեղնալարով խեղդել, քանզի նրանց մոտ օրենք է խանին այդպես սպա-

նելը: Իսկ Միղանին, որը Խուլի որդին էր և տարիքով դեռահաս, բռնեցին և բանտ դրեցին Աղի ծովի (27) մեջ, որը գտնվում է Հեր և Զարավանդ (28) գավառների միջև:

Մանկու խանի դատավորները դարձյալ հրամայեցին հայոց և վրաց զորքերին (նոյնը և Հովապուի զորքերին) հարձակվել [անհնազանդ խանորդիների] զորքերի վրա և անխնա կոտորել նրանց, որն էլ իսկույն կատարեցին: Այնքան կոտորեցին, մինչև որ կոտորված թաթարների մարմիններից լեռ ու դաշտ նեխեց: Իսկ երկու գլխավորներ՝ մեկի անունը Նուխաքավուն, մյուսինը՝ Արարամուր, նախապես իմացան, վերցրին տասներկու հազար հեծյալ և բազում գանձեր, ոսկի ու ընտիր ձի (որքան կարողացան) և փախան գնացին, անցան մեծ գետը, որ կոչվում է Կուր, ու մինչև իրենց երկիր, որտեղից եկել էին, այլևս դադար չառան: Իրենց երկրից Բերքեին, որը Սային խանի եղբայրն էր, իրենց օգնական վերցրին և տասը տարի բազում ոճիրներ գործեցին:

...Ինքը Հովապու խանը մեծ խելքի տեր և ներհուն դատավոր էր, ամենազետ, բայց հույժ արյունահետ, սակայն չարերին ու թշնամիներին էր սպանում և ոչ բարիներին ու բարեսերներին: Առավելապես սիրում էր քրիստոնյա ազգերին, քան այլազգիներին: Այնքան սիրեց քրիստոնյաներին, որ հայերից մի տարվա հարկի փոխարեն խոզ վերցրեց հարյուր հազար զոհեմայր և ամեն մի տաճկական քաղաք երկու հազար խոզ ուղարկեց ու հրամայեց կարգել տաճիկ խոզարածներ, շաբաթը մեկ անգամ օճառով լողացնել խոզերին, արոտից զատ ամեն առավոտ և երեկո տալ ուտելու նուշ ու արմավ, և եթե տաճիկ մարդը (թե՛ մեծ, թե՛ փոքր) խոզի միս չէր ուտում, գլուխը կտրվում էր: Եվ այսպես «պատվում էր» տաճիկներին: Սա կատարվեց հայոց և վրաց զորքերի խորհրդով, քանզի Հովապու խանը հույժ սիրում էր հայոց և վրաց զորքերին նրանց չափազանց քաջության համար, որ ցուցա-

բերում էին նրա առջև բոլոր պատերազմներում: Այդ պատճառով բահաքուր քաջամարտիկներ անվանեց նրանց, իսկ հայոց և վրաց մեծ իշխանների գեղեցիկ և երիտասարդ որդիներին ընտրեց, իր մոտ դրոնապաններ կարգեց և քեսիկթոններ (29) անվանեց նրանց, որ դրոնապաններ են սրով և նետ-աղեղով:

... Այս օրերին Մանկու խանի կողմից ազգությամբ մոնղոլ մի մարդ եկավ: Այդ մարդը հույժ սարսափազդու էր տեսնողներին. Երկայն հասակով, թիկնեղ, վիզը կարծես գոմեշի, ձեռքերն անձոռնի՝ իբրև արջի, օրական մի ոչխար էր ուտում և Մանկու խանից մոտը մի նամակ ուներ ու մի թանկարժեք կապա (30): Նամակի մեջ գրված էր այսպես. «Այս անվանի ըմբիշը զալիս է իմ եղբայր Հուլավու խանի մոտ: Եթե այնպես լինի, որ քո ըմբիշը դրան զգեսնի, այնժամ այդ կապան նրան հազգրու, ապա եթե իմ այս ըմբիշը քոնին զգեսնի, այնժամ այդ կապան դրան հազգրու և մեծ էջու հետ ինձ մոտ ուղարկի՛ր»:

Այնժամ Հուլավու խանը կանչեց իր զորքերի բոլոր գլխավորներին և հարցրեց. «Ճանաչո՞ւմ եք թաթարի, հայի կամ վրացու, որ դրան զգեսնի»: Որոնեցին, բայց թաթար մարդ չզտան, քանզի ով տեսնում էր այն մարդուն, բոլորը վախենում էին նրա ահարկու հասակից ու տեսքից: Իսկ հայոց և վրաց իշխաններն ասացին. «Մենք զիտենք մի մարդ, թերևս միայն նրա կողմից հնար լինի»: Խանը հրամայեց փութով բերել, բայց ասացին. «Այստեղ չէ, այլ իր կալվածքում է»: Անմիջապես էջներին հրամայեց շուտով տեղ հասցնել, բայց ոչ ձիով, այլ սայլով: Այդ մարդը, որի մասին հայոց և վրաց իշխաններն ասացին, Արծրունյաց բարձրատոհմիկ ազգից էր, ամիր Քրդի թոռը, անունը Սադուն՝ երկար ու վայելուշ հասակով, մանկությունից չափազանց ուժեղ, այդ գործում փորձառու և վարժ, սակայն խանի առջև այլ մարդու հետ չէր մրցամարտել:

Երբ էլջիները գնացին և հայտնեցին խանի հրամանը, այնժամ Սաղունը տրտմեց. մեկ, որ խանի առջև որևէ մարդու հետ չէր մրցամարտել, և մեկ էլ այն, որ լսեց, թե իր մրցակիցը ահարկու է և ուժեղ:

Ապա [Սաղունը] գնաց վանքերը իր համար աղոթելու. գնաց նա Գագ՝ ամենահաս Սուրբ Սարգիս [Եկեղեցին], որն օրինեց երանելի և սուրբ Մեսրոպ Վարդապետը (31), և այնտեղ ուխտ արեց ու մատադ Սուրբ Նշանին, ապա էլջիների հետ գնաց Հուլավու խանի մոտ:

Երբ Հուլավու խանը տեսավ Սաղունին, նրա կորովի և երկայն հասակը, հույժ ուրախացավ և երկու ըմբիշներին հրամայեց ինը օր միասին անցկացնել, օրական սնունդը մի ոչխար և մի տիկ զինի: Երբ այն ինն օրն անցավ, ապա հրամայեց իր մոտ ժողովել բոլոր գլխավորներին, կանչել երկու ըմբիշներին և մրցամարտել իրար հետ, ցերեկվա ժամը երեքն էր: Ցերեկվա ժամը երեքից մինչև ժամը վեցը երկուսով մարտնչում էին, բայց չին կարողանում մեկմեկի հաղթել: Ապա Սաղունը, Աստծո անունով զորանալով, հանկարծակի ուժգին հարվածով Հուլավու խանի առջև զգեստնեց Մանկու խանի ըմբիշին և մեծարվեց Սաղունը խանի առջև, և թաթարների ժամանակներում ողջ երկրում պատվով, մեծությամբ և ուժով նրա նման ոչ ոք չկար: Եվ Հուլավու խանը հրամայեց գրել հրամանագիր ներելու Սաղունին մինչև ինը հանցանք:

(Գր. Ակներ., ԺԲ)

Հայոց բարեպաշտ Հեթում (32) թագավորից հետո մեռավ նաև վրաց Դավիթ (33) թագավորը, և կարծում եմ, թե նրանց մահը միևնույն ամսում պատահեց, քանզի [ինչպես] իրենց կենդանության օրոք էին տեսրով ու մարմնական գեղեցկությամբ հույժ սի-

թելի և գովելի, նույնպես և երկնային թագավորի՝ մեր Քրիստոս
Աստծո առջև թող լինեն:

(Գր. Ակներ., ԺԵ)

Մրանից հետո խանի յոթ որդիների մասին, որ ավելի առաջ
գրեցինք, թե երեքին սպանեցին, երկուսը հնազանդվեցին, իսկ մե-
կին Աղի ծովում բանտարկեցին: Բայց հնազանդվածներից մեկը
Թագուղաքար անունով, հեծելազորով, զանձով, ուկով և ամենայն
ունեցվածքով հույժ հզրացավ, քանզի երեք հարյուր ուղտ և հա-
րյուր հիսուն սայլ գանձն ու ունեցվածքն էին տանում՝ չհաշված
ձիերի ջոկերն ու հոտերը, որոնց թիվ չկար: Հեծյալների թիվը քա-
ռասուն հազար էր. նշանավոր [ին], քաջ պատերազմող և ամեն
տեղ հանդուզն, քանզի զիշերով ճանապարհները փակելով՝ ավա-
զակաբար սրի էին մատնում երկրի քարավանները, թալանում
էին ողջ ունեցվածքը քարավանների, որ գնում էին քաղաքից քա-
ղաք:

Նույն ձևով նաև փոքր գյուղերն էին զիշերով կողոպտում և
ողջ ունեցվածքն ու չորքուտանիները տանում, իսկ մարդկանց ա-
նողորմաբար խոցում նետերով: Նույն ձևով և գնում էին վանքերը,
զիշիվայր կախում ժամարար երեցներին և աղ ու մուր խառնելով՝
լցնում նրանց քթերի մեջ՝ ասելով. «Ծովի չափ զինի բերեք և սարի
չափ՝ միս»: Բազում տեղերում նաև այլ բան արեցին. վանքերում
արեղաներին, այդ ողորմելիների՝ զինի չունենալու պատճառով,
շան պոչը բերանով բռնել էին տալիս, քանզի այս էր նրանց պայ-
մանը՝ կամ խմելու և տանելու զինի տալ՝ որչափ ուզում էին,
կամ այդպես բռնել շան պոչը, ինչպես գրեցինք: Այսպես ալեկո-
ծության մեջ էին արևելքի վանքերը այդ անօրեն զիսավորի կող-
մից:

Այս իմանալով՝ հայոց և վրաց իշխանները, միաբան գնացին Ապաղա խանի մոտ, իրենց սրերը նետեցին խանի առջև և ասացին՝ կա՛մ Թագուղարին իր հեծյալներով հանձնի իրենց ձեռքը, կա՛մ իր առջև իրենց էլ կոտորի, և չտեսնեն այն խայտառակությունը, որ կատարում են իրենց եկեղեցիների և եկեղեցականների հանդեպ: Ուրիշ թաթար զորքեր նույնպես զանգատվեցին՝ ասելով. «Դրսում Թագուղարի զորքերը մեզ էլ են ծեծում և մեր ձիերը խլում»: Խանը նույնպես դժգոհեց հայոց և վրաց իշխանների, այլև իր թաթար գիւղավորների առջև և ասաց. «Թագուղարը զորեղացավ, հարստացավ և մեզ չի հնազանդվում, մեր օրենքով չի շարժվում և կամենում է ավերել երկիրը՝ ինքն իր հեծյալներով անօրեն մնալով»:

Ապա Ապաղա խանը իր գինանշանը տվեց Սիրամունին (որի մասին վերևում զբեցինք, նա, որ Ոսկի սյուն անվանվեց), հրամայեց վերցնել հարյուր հազար թաթար հեծյալ, նմանապես հայոց և վրաց զորքերին հրամայեց իրենց ամենայն զորությամբ գնալ Թագուղարի վրա և անխնա կոտորել նրա [հեծելազորը], վերցնել նրա ողջ ունեցվածքը, իսկ իրեն՝ Թագուղարին, կենդանի բերել իր մոտ:

Այս լսելով՝ հայոց և վրաց զորքերը հույժ ուրախացան իրենց երկիրը Թագուղարի շարչարանքներից ազատելու համար, ապա քաջապես պատրաստվեցին պատերազմի զործի: Սիրամունը ևս՝ Չորմա խանի որդին, որ քրիստոնյաներին հույժ սիրում էր, առավ խանի գինանշանը՝ հարյուր հազար հեծյալներով, և հանկարծակի հարձակվեցին Թագուղարի վրա, անխնա կոտորեցին նրա հեծյալներին, առան նրա ողջ գանձերը և նրան յոթ հարյուր մարդով տարան խանի մոտ: Խանը, տեսնելով նրան, այպանեց. նրան մի կին տվեց, ծայրը կոտրած մի դանակ, տասը պահապան մարդ և բանտարկեց նրան Աղի ծովում, որ գտնվում է Հեր և Զարավանդ

գավառների միջև։ Եվ այստեղ կատարվեց մարզարեի խոսքը, որ ասում է. «Մարդը պատիվ ուներ, բայց չհասկացավ» (34):

(Գր. Ակներ., ԺԶ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Գրաբար բնօրինակում մոնղոլների առաջնորդը կոչվում է Չանկը դան:

2. Կոտմանի դաշտը գտնվում է Տավուշ գետի մոտ, ուր 1321թ. տեղի ունեցավ Ճակատամարտ մոնղոլների և հայ-վրացական միացյալ ռազմական ուժերի միջև։

3. Մանասա գոմքը գտնվում էր Մեծ Հայքի Գուգարք նահանգի Զորովոր գավառում և տեղադրվում է ներկայիս ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի տարածքում։

4. Վրաց արքունիքում աթաքեկի պաշտոնը զբաղեցնող Իվանե Զաքարյանն է։

5. Թամար թագուհու որդի և հաջորդ Գեորգի Դ Լաշան զահակալել է 1213-1223 թվականներին։

6. Ուռուզուքանը կամ Ռուսուդանը Դավթի ոչ թե քույրն էր, այլ հորաքույրը։

7. Գազը Մեծ Հայքի Ուտիք նահանգի բերդերից էր։ Բազրատունիների իշխանության ժամանակ գտնվում էր Լոռու թագավորության տարածքում, իսկ Զաքարյանների օրոք՝ Վահրամյանների իշխանության ներքո։

8. Քարհերձը Վահրամյաններին պատկանող ամրություն էր, որը Բ. Հարությունյանը տեղադրում է Շամքոր գետի ափին՝ նրա միջին հսանքում։

9. Սա Ատրպատականի Գանձակ քաղաքն է, որը գտնվում էր Ուրմիա լճից հարավ-արևելք։

10. Սազամը գտնվում էր Վահրամյանների իշխանության տարածքում՝ նոյնանուն գետի ափին:

11. Տերևենը բերդ էր Մեծ Հայքի Ուտիք նահանգում: Ենթադրվում է, որ գտնվել է Գարդմանաձոր գավառում:

12. Թարգմանիչները կարծում են, որ սա, հավանաբար, հասարակ անուն պետք է լինի:

13. Գարդմանը ամրություն էր Վահրամյանների իշխանության տարածքում՝ Շամբոր գետի աջ ափին:

14. Երգեվանի ավերակները գտնվում են ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքից ոչ հեռու գտնվող Այգեձոր գյուղի մոտ:

15. Մածնաբերդը ևս գտնվում էր Վահրամյանների իշխանության տարածքում՝ Քարհերձից դեպի արևելք:

16. Տերունականը նույնպես Վահրամյանների իշխանության ներք գտնվող բերդերից էր: Այն Բագրատունիների անկումից հետո անցել է Կյուրիկյաններին, իսկ հետո գրավվել վրաց Դավիթ Շինարար թագավորի կողմից:

17. Բ. Հարությունյանը Նոր Բերդը համարում է Կյուրիկյանների իշխանական կալվածք և տեղադրում Տավուշ բերդից հյուսիսի-արևմուտք:

18. Մուղանի երկիրը գտնվում էր Մեծ Հայքի Արցախ նահանգում՝ Գարգար գետի ստորին հոսանքում՝ Արաքսի ձախափնյա մասում:

19. Շմեղը բերդ էր Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդմանք գավառում:

20. Կարինը գտնվում էր Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Կարին գավառում: Թեղողս կայսեր օրոք Կարինը վերակառուցվում և վերանվանվում է Թեղողսուպոլիս: Ներկայիս Էրզրում քաղաքն է Թուրքիայում:

21. Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Խիաթաղինը վրաց թագուհի Ռուսուղանի (1223-1245 թթ.) աղջկա ամուսինն էր, որի մոտ ապրում էր Գեորգի Լաշայի որդի Դավիթը:

22. Ըստ Մ. Չամչյանի՝ Շալվեն հայ իշխան Սարգիս Խաչենցու տղան էր: Շալվեի մասին հիշատակում է նաև Կիրակոս Գանձակեցին, ըստ որի՝ նա վրաց ավագ իշխաններից էր և մասնակցել է Զալալ Էդ Դինի դեմ 1225 թ. կռվին:

23. Երզնկան քաղաք էր Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում, որը հեթանոսության շրջանում կռչվել է Անսահուական գավառ, Արևմտյան Եփրատ գետի աջ ափին: Կռչվել է նաև Երեզ, Երիզա, Երիզավան, Արզնկա: Ներկայումս գտնվում է Թուրքիայում:

24. Ավագ իշխանը աթաքեկ Իվանե Զաքարյանի որդին է, որը հոր մահից հետո Ռուսուղան թագուհու կողմից նշանակվեց աթաքեկի պաշտոնում՝ նրան հանձնելով նաև իր որդու խնամակալությունը:

25. Մանկու խանի հրամանով դատավորները եկել էին, որպեսզի Բաղրամը գրաված Հուլավուին խան հոչակեն:

26. «Էջի» բառը, ըստ Հ. Աճառյանի, թարգմանվում է «դեսպան», «պատգամավոր», «պատվիրակ», «քանագնաց»:

27. Աղի ծովը Կապուտան ծովն է՝ Ռումիա լիճը:

28. Հերն ու Զարավանդը Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի հյուսիսային գավառներն են, սահմանակից են Միմյանց և գտնվում են Ռումիա լճից հյուսիս-արևմուտք: Այստեղով է անցնում հյուսիսը հարավին և արևելքին միացնող կարևոր մայրուղին, որի համար գավառները ձեռք են բերում կարևոր նշանակություն և տարբեր առիթներով հիշատակվում պատմիչների երկերում:

29. «Քեսիկթոն» թաթարերեն բառ է, որը Հ. Աճառյանը թարգմանում է «զինյալ դրնապան», «խանի դռան պահապան»:
30. «Կապա» բառը Հ. Աճառյանը արաբերենից թարգմանում է «պարեգոստ», «վերարկու», «հասարակ չուխա»:
31. Մեսրոպ Մաշտոցն է, որն օրինել է հիշյալ եկեղեցին:
32. Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա թագավորի (1226-1269թթ.) կյանքի տարիներն են 1215-1270 թվականները:
33. Գեորգի Լաշայի որդի Դավիթը թագավորել է 1247-1270 թվականներին:
34. Սաղմ., ԽԸ, 21:

ՍՄԲԱՏԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՏԱՐԵԳԻՐՔ¹⁹

Իսկ յորժամ եղեւ թուականն Հայոց 420, մեռանէր արքայն Հայոց Գագիկ (1) խաղաղական մահուամբ: Եւ եղեւ հակառակութիւն ի մեջ որդուց իւրոց Յովիհաննիսի (2) եւ Աշոտոյ (3), քանզի Յովիհաննէս աւագ էր եւ էր այր իմաստուն. այլ տարտամ եւ հեղդ գոլով եւ թուլամորթ եւ անկիրթ ի պատերազմունս. իսկ Աշոտ այր քաջ էր, անպարտելի եւ յաղթող ի պատերազմունս: Բայց բռնակալեաց Յովիհաննէս զարոռ թագաւորութեանն. իսկ Աշոտ շրջէր զօրօք, եւ աւար հարկանէր զբազում տեղիս, եւ նեղէր զբաղաքն Անի: Եւ զնացեալ առ Սենեքերիմ (4)՝ արքայն Վասպուրականի, որ էր երկրորդ Ապուսակին՝ որդույ Գագկայ, Արծրունի ազգաւ. եւ առեալ զօրս ի նմանէ, անցանէր առ (ի) լեառն Վարագ (5). եւ մտեալ ի վանս սրբոյ Նշանին երկրպագէր սուրբ Խաչին եւ պատկերի սուրբ Աստուածածին: Եւ տայր պարզեւս բազումս յոսկւոյն Արարացոց. եւ արար զայն պահարան սրբոցն, զոր պարզեւեալ էր նմա արքայն Բաբելացոց. եւ զայր, հասանէր զօրօքն բազմօք ի քաղաքն Անի (6): Զոր լրտեալ Յովիհաննէս հանէր զզօրսն իւր ի պատերազմ ընդդէմ նորա. եւ ինքն նստէր ի զահոյսն, որպէս. եւ էր անհմուտ ի պատերազմի եւ դդրդեալ քաղաքն ելանէին ի դէմ Աշոտոյ ի պատերազմ:

Իսկ ուն իշխան ի թագաւորէն Վրաց եկեալ դեսպան առ Յովիհաննէս. Եւ յաւուր յայնմիկ անդ էր. եւ խոստանայր թագաւորին եւ ասէր «Թագաւոր՝ հրամայեա՝ զի ցուցցեն ինձ Աշոտ. եւ ես առեալ ձեռամբ ածից զնա առաջի քո»: Եւ զայս ասէր (այրն) յաղազս քաջութեան անձին իւրոյ զի էր այր պատերազմող: Եւ ասէր թա-

¹⁹ Սմբատ Սպարապետի տեղեկությունների գրաքար բնօրինակը տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:

գաւորն «մի՝ արհամարհեք զկորիւնն առիւծու մինչեւ տեսցես»: Եւ յորժամ ելին ձակատ՝ իշխանն Վրաց ձայն բարձեալ ինդրէր զԱշոտ. եւ լուեալ Աշոտոյ եւ զայրացեալ՝ ընթացան առ իրեարս. եւ հարկանէր Աշոտ զնա սուսերաւն ի վերայ սաղաւարտին, եւ հերձեալ ընդ մեջ՝ յերկիր ընկենոյր եւ եղեւ սաստիկ պատերազմ: Եւ պարտեալ զօրք թագաւորին եղեն փախստական. եւ Աշոտ զկնի նեղէր. եւ ոչ ետ նոցա անկանիլ ի քաղաքն, այլ ելից զամենեսին ի գետն:

(Սմբ. Սպար., Էջ 5-6)

Ի թուին Հայոց ՆԼԲ (432=983) ...Արդ զայսու ժամանակաւ անօրէն ամիրայն պարսից Մամլանն (7) զայր ահազին բազմութեամբ ի վերայ Հայոց, և աւար հարկանէր հրկիզութեամբ և զերութեամբ զաշխարհն Հայոց, զեկեղեցիս, և հասանէր յաշխարհն կուրապաղատին Դաւթի (8) ի զաւառն Ապահունեաց (9), և յիէ առ Դաւթի բանս ամբարտաւանս և ասէ, տուր ինձ հարկս Ծ ամի, եւ զորդիսն քո գրեա ծառայս ինձ. ապա թէ ոչ զամ բազում զօրօք ի վերայ քո եւ ով է Աստուած որ փրկէ զքեզ ի ձեռաց իմոց: Եւ լուեալ զայս Դաւթի ժողովեաց զզօրս իւր, առ եւ ի Վրաց եւ ի Հայոց, եւ բանակ հարկանէր յանուն Տեառն եւ զնայր ընդ առաջ անօրինին, եւ իշեալ ի սահմանս Ապահունեաց կայր յաղօթս ինքն և ամենայն վանօրեայքն: Եւ զԿարմրակելն զայրն քաջ կացուցանէր ԷՃ (700) ձիաւրով պահապան զիշերոյն և յառաւոսուն պահու զայր ոմն ի զորաց այլազգեացն Ռ (1000) ձիաւրով: Եւ մինչ այգն զառաւոսն մերկանայր հարան ընդ միմեամբք Կարմրակելն և այլազգին և սակաւ մի ցող եկեալ էր յառաջազոյն և յայնժամ պայծառացաւ լոյս լուսնին և փայլէին լերինքն ամենայն ի տեսիլ այլազգեացն, զոր տեսեալ անօրինացն կարծեցին թէ այն ամենայն զօրքն քրիստոնէից է և ահաբեկեալ ի փախուստ դարձան, և

Կարմրակելն երթայր զկնի և կոտորէք: Եւ կալավ զկինն Մամլանայ և ազդ առնէր Դաւթի Կարմրակելն և որոյ հասեալ փութանակի զօրօն սաստիկ կոտորածս արար, և Մամլանն մազապուրծ եղեալ զնաց ամօթով:

(Սմբ. Սպար., Էջ 16-17)

Ի թուին Հայոց ՆՀ (470=1021) ելանէր Վասիլն (10) յարեւելս անթիւ զօրօք, և խնդրեաց զԱնի և զԿարս և Յովիաննէս, որդի Գագկայ, խորհեցաւ տալ վասն թուլութեան սրտի իւրոյ, իսկ Վասիլն դարձաւ յաշխարհն իւր և գրեաց առ Գորգի (11) թագաւորն Վրաց, գալ նմա ի հնազանդութիւն. զոր ոչ ընկալաւ և ոչ յանձն առ: Յայնժամ զայ Վասիլ թագաւորն պատերազմաւ ի վերայ նորա և զօրքն Վրաց զնացին ընդդէմ նորա, և Ռատն և Զոյատն արք քաջը, եղբարք Լիպարիտին, ոյժին բախսեցին զզօրսն Վասիլն մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմն և անտ սպանաւ: Եւ ապա դարձան ի փախուստ զօրք Վրացեացն, և զօրք Վասիլն զկնի երթեալ կոտորէին: Եւ կացեալ Վասիլն անդ ամիսս գ, մինչև հաւանեցոյց զնոսա և ի Տրապիզոն ձմերեաց:

(Սմբ. Սպար., Էջ 24-25)

Ի թուին Հայոց ՆՀԱ (471==1022) մեռաւ տէր Սարգիս (12) կաթողիկոսն Հայոց, և հաստատեաց յաթոռ իւր հայրապէտ զտէր Պետրոս (13): Ի սոյն ամի իշխան ոմն յաղթանդամ ի տանէն Յունաց, Նիկիֆօր անուն Ծովիզ յարեաւ ի վերայ Վասիլն, և կոչեաց ի միաբանութիւն իւր զքագաւորն Վրաց Գորգի, և զորդիսն Գագկայ: Գնաց յահէ նորայ և Դաւթի առ նա զօրօք Հայոց: Եւ եղեւ ահ մեծ ի վերայ Վասիլն և յդեաց Վասիլն առ Դաւթի աղաշանս զի հնարեսցէ զկորուստ նորա, և Ծովիզն յոյժ սիրէր զԴաւթի, և խոստացաւ նստուցանել զնա յաթոռ թագաւորութեան Հայոց: Բայց

Դաւիթ ոչ կամեցաւ լուծանել գդաշինս Վասլին: Եւ յաւոր միում զնայր Դաւիթ ի տուն իւր խռովութեան աղագավ, և յարուցեալ Նիկիֆօր միայն և զրկեաց զնա, աղաչէր դառնալ, իսկ Դաւիթ ակնարկեալ արանց և նոյն ժամայն սպանին զԾովիզն, և զօրք նորա ցրուեալ եղեն փախստական: Եւ լրւեալ զայն Վասլին, ուրախ եղս յոյժ, և տայր պարզև Դաւիթի զԿեսարիա և զԾամնդաւ և զամենայն Խաւատանեքն հանդերձ սահմանօքն: Եւ Վասիլն մեծաւ զայրացմամբ գայր ի վերայ Գորգէ Վրաց թագաւորին, բազում զօրք և արարին Զիոնից բերդին առաջի մեծ պատերազմ, և Գորգի փախստական լեալ անկաներ յամուր բերդերս և գրել զանձն իւր ծառայ Վասլին, և տայր զորդին իւր պանտանտ առ նմա:

(Սմբ. Սպար., Էջ 26-27)

Յայսմ ամի (14) մեռաներ Մենեքերիմ արքայն, և թաղեցին ի Վարագայ վանսն. և նստաւ յաթոռն Դաւիթ: Մեռաւ և թագաւորն Վրաց Գորգի, և նստաւ յաթոռ նորա Բագարատ (15) որդի նորա:

(Սմբ. Սպար., Էջ 27)

Ի սոյն ամի (16) զորաժողով արար ամիրայն Պարսից Ապուստար և եկն եմուս յաշխարհ Աղվանից ի զաւառն Անհողէ Դաւիթ (17), և մեծ կորուստ գործեաց հաւատացելոցն: Եւ Դաւիթ երկեաւ ելանել ընդ նմա ի պատերազմ, և Ապուստար առ զաւառս բազումս, և բերդս, և զտարի մի անդ դադարեաց, և զմեծ մասն յաշխարհէն հնազանդեցոյց: Եւ առաքեաց Դաւիթ առ թագաւորն Յովհաննէս յԱնի և ասէ, լեր օգնական ինձ, զի կացից ընդդէմ Ապուստարայ, ապա թէ ոչ զնամ ընդ նմա հնազանդութիւն և լինիմ առաջնորդ նմա և խաւար ածեմ զաւարիդ Շիրակայ: Եւ յորժամ լրւաւ զայս Յովհաննէս՝ ետ նմա օգնականս ձիաւորս գո (3000): Սոյն օրինակաւ առաքեաց առ թագաւորն Ապխազաց և նա ետ

նմա ձիաւորս եռ (5000). և ժողովեաց զիւրսն արս իբրեւ ժքո (12.000). կոչեաց և զկաթողիկոսն Աղուանից, գտէր Յուսէփ, ամենայն եկեղեցականօքն, և երեր ի բանակն զամենայն բնակիչս աշխարհին, կանամք և որդուվք, և ասէր թէ ամենայն ոք զէն, զիւչն Քրիստոսի և զաւետարանն առցէ ի ձեռս, և ոք ցանկացողք են մարտիրոսութեան՝ ահա ժամանակս: Եւ եղեւ բանակն ամենայն խաչ և աւետարան, զոր լրւեալ Ապուսւարայ ծիծադիր զնոքօք: Եւ Դաւիթ իռ (20.000) ձիաւորովն ճակատեցաւ ընդդէմ նոցա և միւեցան ի բանակ այլազգեացն, իսկ քահանայքն և ժողովուրդքն ամբարձին առ Աստուած զձայնս իւրեանց լալով և ասեն, արի տէր օգնեա մեզ և փրկեա զմեզ վասն անուան քո: Յայնժամ փախեան զօրք այլազգեացն, և զիետ մտեալ զօրք քրիստոնէիցն ջնշեցին զնոսա ի սպառ, իսկ Դաւիթ զամենայն երկիրն զոր յափշտակեալ էր ի նմանէ յզ օր յինքն դարձոյց. և ետ ամենեցուն պարզեւ և արձակեաց ի տունս իւրեանց և խաղաղացաւ աշխարհն Դաւիթ:

(Սմբ. Ապար., Էջ 33-35)

Իսկ Մօնոմախն (18) իբրեւ լրւաւ զչար համբաւս զայս (19), առաքեաց զզօրս յԱրեւելս և կարգեաց զօրագլուխս, զԳրիգոր Պահլաւունի մազիստրոսն, զորդին Վասակայ, և զԿամէնն և զքաջն Լիպարիտ, զեղբայր Ռատին, զի պահեսցեն զաշխարհն ի թշնամեաց...

Արդ յորժամ հասին զօրագլուխքն Յունաց յԱրեւելս, Մագիստրոսն Գրիգոր և այլքն, զոր վերոյ զրեցաք, զնացին ի Կապուտոռ (20) եւ իշին յԱրցովիտ (21) զոր լրւեալ զօրքն Թուրքացն ոք բնակեալ էին յեզր դաշտին, և զտեղի առին, և խառնեալ ի միմեանս սաստկապէս զմիմեանս բախսին: Եւ Լիպարիտն քաջապէս մղէր զզօրս այլազգեացն, զոր տեսեալ զօրք Յունաց նախանձեցան ընդ նա և թողեալ ի մէջ այլազգեացն յետս դարձան, և

ըմբռնեալ զնա այլազգեացն տարան ի Խորասան առ Տուղրիլ սուլտանն: Իսկ սուլտանն յառաջազդյն լուեալ էր զքաջութենէ առնն և յետ ք ամաց ազատեաց զնա մեծ ընծայիթք. և զնաց ի Կոստանդինուպօլիս, և Սօնոմախին ևս առաւել մեծարեաց զնա և դարձոյց ի տուն իւր: Այս Լիպարիտ եղբայր էր Տեատին և Զորատին, ազգաւ Վրացի և ցեղ քաշ:

(Սմբ. Սպար., Էջ 45-47)

...Իսկ Տիօժէնն հպարտացեալ ոչ առնոյր յանձն, այլ ևս առաւել խրոխտանայր: Եւ մատուցեալ նենզաւորացն ասեն, ով թագաւոր, ոչ ոք կարէ կալ ներհակ քեզ, և ահա օօրքս տառապին ի կերակրոյ, արդ արձակեա զրոսա գունդս գունդս զի երթեալ ապրեսցին մինչեւ ի լինել պատերազմին: Որ և լուեալ չար խորհրդոցն, արձակեաց զկտրիճ ամիրայն ի Կոստանդինուպօլիս, և զՏարխանիատն լռաւ (30.000) դարձոյց ի վերայ Խլաթայ և ժու (10.000) առաքեաց յԱպխազք. և այսպիսի նենզութեամբ զամենայն զօրսն ցրուեաց (22):

(Սմբ. Սպար., Էջ 75-76)

Ի թուին ՇՀ (570=1121) Խազի ամիրայն յաշխարհէն Գանձակայ, որ էր սահմանակից աշխարհին Վրաց, առեալ զօրս մտանէր յաշխարհն Վրաց, և մասն մի գերի վարեալ տանէր: Եւ Դափիթ (23) թագաւորն Վրաց զաղտարար անկանէր ի վերայ և սատակէր զամենեսեան արս խո (40.000) և զտուն և զորդիս և զամենայն ինչս նոցա տարաւ յաշխարհն իւր, և մնացեալքն զնացին առ սուլտանն Պարսից Մելեքն, որդի Տափարին, եւ պատմեցին նմա զչար անցս իւրեանց. և նա հրամայեաց լինել ժողով յամենայն տէրութիւնս իւր. և զԿարմիանն և զթագաւորն արաբացւոց որ կոչէր Սաղա, և ժողովեցան ձօն (150.000) և մտին յաշխարհն Վրաց ի կողմն

Տփխեաց: Եւ թագաւորն Դաւիթ, որդի Դեկայ որդույ Բագարատայ, որդույ Գորգէ, կազմեալ գումարեաց զգօրս իւր և երեր ի Խփշախաց իւր (40.000) հեծեալ, և յԱլանաց ժըռ (18.000), ի Ֆռանգաց եձ (500), ի Հայոց ժու (10.000), արք քաջ և պատերազմողը, և այսու ամենայնիւ գնաց ընդդէմ նոցա և սկսան ի պատերազմ: Եւ անդ էր տեսանել սոսկալի օր, և օգնութեամբն Աստուծոն յադթեցին քրիստոնեայքն, և սպանին իւ բիւր (400.000) և բռնեցին ծու (50.000). և սուլթանն Մելքը և Խազի մազապուրծ գնացին, և թագաւորն դարձաւ ուրախութեամբ: Եւ ի սոյն ամի էառ զՏփխիս ի Պարսից պատերազմաւ, և արար սաստիկ կոտորածու և եձ (500) սրահանգ կախեաց զփայտէ:

(Սմբ. Սպար., Էջ 149-150)

Ի սոյն ամի (24) եկեալ սուլտանն Գանձակայ մեծաւ զօրութեամբ և կապէր կամուրջ ի վերայ Կուր գետոյ և արս կո (60.000) անցուցանէր յերկիրն Ափխազաց. և թագաւորն Դաւիթ առաքեաց բազում զօրս և այրեաց զկամուրջն, և զանցեալսն յայնկոյս բնացինչ սատակեաց, և սուլտանն գնաց ամօրով: Իսկ այս Դաւիթ թագաւորս էր այր պատերազմող, և էառ բազում տեղիս ի Պարսից, զՏփխիս, զԹմանիս (25), զՇրուան, զՇաքի, զՇամքար և զայլ բազում բերդս և զգաւառս: Եւ էր անձամբ սուրբ և քաջասիրտ պատերազմող և առ սա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց: Սա շինեաց բաղաք Հայոց յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս և անուանեաց զանուն բաղաքին Գուռա (26). սա ունէր որդի մի ի հայ կնոջէ, Դեմետր (27) անուն նորա, հասակեղ յոյժ:

(Սմբ. Սպար., Էջ 153-154)

...Ի սոյն ամի (28) թագաւորն Վրաց Դաւիթ արար թագում կոտորած ի Մալմանքն, և էաո զմայրաքաղաքն Հայոց զԱնի, որ եկաց ի ձեռու այլազգեացն ամս կ (60) և հանեալ անտի զորդին Մանուչի՝ տարաւ ի Տփխիս, և զմեծ եկեղեցին զաւրբ կաթողիկէն օրինեաց կրկին, եպիսկոպոսօք և քահանայիւր, վասնզի մզկիթ էին արարեալ, և եղեւ ուրախութիւն քրիստոնէից:

(Սմբ. Սպար., Էջ 155-156)

Ի սոյն ամի (29) ժողով արար ամիրայն Պարսից Պրեհիմն, որդի Սուլքմանին արս ձռ (80.000) և զնաց յաշխարհն Վրաց, և թագաւորն Դաւիթ կոտորեաց զնոսա առաւել քան զառաջինն: Ի սոյն ամի հանգեաւ ի Քրիստոս աստուածասէր թագաւորն Դաւիթ և նստոյց յաթոռ իւր զորդին իւր զԴեմետրէ, որ եղեւ այր քաջ և պատերազմող: Սա դարձոյց զորդին Մանուչի ի քաղաքն իւր Անի և թագում երդմամբ արար զնա իւր հաւատարիմս և հնազանդա. և մեծ երդմամբ հաստատեցին զի մեծ եկեղեցին կաթուղիկէն հանապազ Հայոց լիցի:

(Սմբ. Սպար., Էջ 158)

...Զայս տեսեալ սուրբ հայրապետն Հայոց տէր Գրիգորիս (30), զի այնքան տկարացաւ զօրութիւն քրիստոնէից, և ինքեանք ոչ ունէին ամրոց ապաստանի, և ի Ծովք բերդն (31) իւրեանց երկնչին դադարել, ապա խորհեցան զնալ յարեւելս առ թագաւորն Վրաց, զի Անի ի ձեռու նորա էր, թերեւս անդ զտանիցեն անդորրութիւն և տեղի ապաստանի անկասկած ի թշնամեաց: Եւ թողեալ զեղբայրն իւր զսէր Ներսէս անդ, մինչեւ ինքն զնասցէն դարձի, է ապա ամենայն տոհմիւրն և ընչիւր զնասցէն: Իսկ ի զնալն տէր Գրիգորի՝ պատահեաց զի զնաց ի Թլպաշար, և տիկինն Ճօւնին (32) անդ էր, և հարցանէր ընդ սուրբ հայրապետն զպատճառս զնալոյ նորա յարեւելս, և նա պատմեաց նմա. և տի-

կինն այն արգել զնա ի ճանապարհէն՝ տալով նմա զանմատչելի բերդն Հռոմկլայն (33) ի բնակութիւն, ընդ որում յոյժ ուրախացաւ սուրբ հայրապետն, և դարձեալ եկն առ եղբայրն իւր տէր Ներսէս ի Ծովքն, և պատմեաց նմա զպատճառ դառնալոյն, և զիսուտումն տիկնոջն Ճօւլին վասն Հռոմկլային՝ զի տացէ աթոռ հայրապետացն Հայոց:

(Սմբ. Սպար., Էջ 168-169)

...և ի սոյն ամի (34) տէրն Խլաթայ, Մշոյ (35), Տօղուտափոյ, Մանծկերտոյ (36)՝ Միհրանն, որդի ամիր Պրեհմին, առաքեաց զորդին իւր բազում զօրօք յաշխարհն Վրաց ի Ծեծ, իսկ զօրք թագաւորին Վրաց Գորգէ (37) ժողովեալ եկն արշաւել յերկիրն Խլաթայ և ի զաւառն Ուխտեաց (38) հարան ընդ միմեանս, և յարթեցին Վրացիքն և արարին զնոսա փախստական և կոտորեցին ի Թուրքէն արս ժո (10.000) և կալան ի զիսաւրացն զՃ (300), բայց սպարապետն Վրաց սպանաւ և այլքն դարձան ուրախութեամբ յաշխարհն իւրեանց:

Ի թուին ՈԺ (610-1161) թագաւորն Վրաց Գորգէ, եկն ի վերայ քաղաքին Անևոյ և ա օր արար և էառ զնա պատերազմաւ և կոտորեաց ընդ հայ և ընդ Թուրք արս ո, և եղեալ զօրս պահապան քաղաքին արս բո (2000) և դարձաւ յաշխարհն իւր: Իսկ տէրն Խլաթայ Շահրմէնն արար ժողով հեծելոց ձո (80.000) արանց և եկեալ նոքօք յԱնի պաշարեաց զնա և լուեալ թագաւորն Գորգէ՝ եկն սրամտութեամբ ի վերայ նորա և կոտորեաց զամենեսեան ի սպառ, և ըմբռնեաց ի նոցանէ զիսաւորս արս զո (6000), և ապրեալքն եկն յայնքան բազմութենէն անձինս և դատարկս մազապուրծ զերծեալս արս ժո (10.000). և լցաւ թագաւորն Գորգէ աւարաւ նոցա և յաշխարհ իւր դարձաւ ուրախութեամբ:

(Սմբ. Սպար., Էջ 183-184)

Իսոյն ամի (39) թագաւորն Վրաց Գորգի եկն զօրօք ի Դուին, և ելին ընդդիմ նորա պատերազմաւ, և կոտորեալ զնոսա Գորգէ արար փախստական ի մուտս քաղաքին, որոյ և զորք թագաւորին հետամուտ եղեալ սուր ի վերայ եղին և կոտորեցին զամենեսեան և զքաղաքն այրեցին և միահաղոյն յաւեր դարձուցին և գնացին:

(Սմբ. Սպար., Էջ 186)

Ի թուին ՈԾ (650=1201) գնաց Ըռուգնատին սուլտանն բազում զօրօք յարեւելս և էառ զքաղաքն Թէոդուպոլիս, որ է Կարնոյ քաղաք, ոչ պատերազմաւ՝ այլ սիրով, և գնաց իրոխտալով ի վերայ Մժնկերտոյ (40), և մինչդեռ նեղեր պատերազմաւ զամրցն՝ հասին ի վերայ նոցա զօրքն Վրաց և արարին զնոսա փախստական, կալան զուէրն Եզնկային զՎահրամ շահն, եւ բազում աւարաւ դարձան յաշխարհն իւրեանց: Եւ սուլտանն կացոյց տէր քաղաքին Կարնոյ զեղբայրն իւր, զՏուղրիլ շահն, որ էր այր բարերարոյ, և զամենայն աւուրս կենաց իւրոց սիրով եկաց ընդ թագաւորն Լեւոն (41), և յոյժ սիրէր զքրիստոնեայս, և եղբայրն իւր սուլտանն դարձաւ ի տեղի իւր:

(Սմբ. Սպար., Էջ 212)

Եւ յայսմ ամի (42) մեռաւ մեծ իշխանն Զաքարի (43), որ էր տէր Անսոյ, եղբայր Եւանէի (44) և սպարապետ Վրաց թագաւորին Թամարին (45), դստէր Գորգէ թագաւորին, որ էր թագաւոր տանն Վրաց ի ժամանակս թագաւորին Լեւոնի, և էր ամաց յառաջազոյն վախճանեալ և ունէր զթագաւարութիւնն զայսու ժամանակաւ որդին իւր, որ կոչէր Լաշա (46):

(Սմբ. Սպար., Էջ 218)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայոց Գագիկ Ա Բագրատունի թագավորը գահակալել է 990-1020 թվականներին:
2. Հայոց Հովհաննես-Սմբատ Բագրատունի թագավորն է, որը գահակալել է 1020-1041 թվականներին:
3. Հայոց թագավոր Աշոտ Դ Բագրատունին է, որը գահակալել է 1020-1041 թվականներին:
4. Վասպուրականի թագավորության վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունին իշխել է 1013-1021 թվականներին:
5. Վարագ լեռը գտնվում է Վանա լճից արևելք՝ 10 կմ հեռավորությամբ: Այստեղ է գտնվում հայտնի Վարագա վանքը (կառուցվել է VII դարում):
6. Բագրատունյաց Հայաստանի Անի մայրաքաղաքն է, որը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում: Քաղաքի ավերակները ներկայումս գտնվում են Թուրքիայում:
7. Ատրպատականի ամիրա Մամլանն է, որին ձերբակալել և սպանել է քուրոյ ամիրա Արուլ-Ասվարը 1021 թվականին:
8. Դավիթ կուրապաղատը իշխել է մինչև 1000 թ.՝ դառնալով դավադրության զոհ:
9. Ապահունեաց գավառը կամ Ապահունիքը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից է, տարածվում է Վանա լճից հյուսիս և լճից բաժանվում է Բզնունիք ու Աղիովիտ գավառներով:
10. Բյուզանդիայի կայսր Վասիլ Բ Բուլղարասպանն է, որը գահակալել է 976-1025 թվականներին:
11. Վրաց թագավոր Բագրատ Գ-ի (1008-1014 թթ.) որդի Գեորգի Ա-ն է, որը գահակալել է 1014-1027 թվականներին:

12. Սարգիս Ա Սևանցի հայոց կաթողիկոսն է, որն աթոռակալել է 992-1019 թվականներին:
13. Հայոց կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձն է, որն աթոռակալել է 1019-1058 թվականներին:
14. Ըստ Սմբատ Սպարապետի «Տարեգրքի՝ 1029 թվականին:
15. Բագարատ Դ-ն է, որը զահակալել է 1027-1072 թվականներին:
16. Պատմիչը նկատի ունի 1040 թվականը:
17. Լոռու թագավոր Դավիթ Անհողինն է (989/990-1048/1050 թթ.)՝ հայոց Աշոտ Գ Ողորմած (953-977 թթ.) թագավորի թոռը:
18. Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մոնոմախն (1042-1055 թթ.) է:
19. Խոսքը դեպի Հայաստան սելջուկների արշավանքի և Արծն քաղաքի գրավման մասին է:
20. Կապուտոռն գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բասեն գավառում:
21. Արծովիտը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բասեն գավառում՝ Կարգաբազար լեռների ստորոտում:
22. Տեղի է ունեցել 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից առաջ:
23. Վրաց Բագրատունիների տոհմից թագավոր Դավիթ Դ Շինարարը զահակալել է 1089-1125 թվականներին:
24. Խոսքը 1123 թվականի մասին է:
25. Սերոբէ Վ Ազըլեանը Թմանիսը տեղադրում է Մեծ Հայքի Գուգարք նահանգում, իսկ Շրուանը համարում է Գուգարք նահանգի մայրաքաղաքը, որը հիմնադրել է Պարսից Խոսրով Անուշիրվան (531-579 թթ.) թագավորը:

26. Գուռան ներկայիս Գորի քաղաքն է, որը գտնվում է Թբիլիսիից (Տիկիսից) հյուսիս-արևմուտք:

27. Դավիթ Դ Շինարարի որդի և հաջորդ Դեմետրե Ա-ն է, որը թագավորել է 1125-1154 կամ 1155, ապա՝ 1155-1156 թվականներին:

28. Խոսքը 1124 թվականի մասին է:

29. Խոսքը 1125 թվականի մասին է:

30. Գրիգոր Գ Պահլավունի (1113-1166 թթ.) հայոց կաթողիկոսն է:

31. Ծովք բերդը գտնվում էր Մեծ Հայքի Ծոփաց նահանգի Անձիտ գավառում՝ Ծովք լճի հարավարևմտյան ափի ժայռոտ թերակղզյակի վրա:

32. Ճուլինը Եղեսչայի կոմսն էր, և նրա կոմսության տարածքում էր գտնվում Հռոմեական բերդը, որը՝ որպես բնակության վայր, նրա կինը հանձնում է հայոց հայրապետ Գրիգոր Գ Պահլավունուն:

33. Հռոմեական անառիկ բերդ էր Եփրատի աջ ափին՝ Փարզման (այժմ՝ Մերզումեն) վտակի միախառնման տեղում:

34. Խոսքը 1159 թվականի մասին է:

35. Մուշը քաղաք է Արևմտյան Հայաստանում՝ Բիթլիս նահանգի Մշոն գավառում: Գտնվում է Արևելյան Եփրատի ձախ ափից ոչ հեռու՝ Մեղրագետի ձախակողմյան վտակ Մուշ գետի ափերին:

36. Մանծկերտը Մանազկերտն է կամ Մանավազակերտը, որը եղել է Մեծ Հայքի Տուրութերան նահանգի Ապահունիք գավառի կենտրոնը, իսկ ավելի վաղ՝ Մանավազյան նախարարական տոհմի աթոռանիստը:

37. Վրաց Դեմետրե թագավորի որդի Գեորգի Գ-ն է՝ Դավիթ Դ Շինարարի թոռը, որը թագավորել է 1156-1184 թվականներին:

38. Ուխտեաց զավառը Օլթին է, որը տեղակայված է Ճորոխ գետի աջակողմյան վտակ Օլթիի ափին՝ պատմական Տայք նահանգում:

39. Խոսքը 1165 թվականի մասին է:

40. Մժնկերտը գտնվում էր Կարին-Կարս ձանապարհահատվածի միջնամասում՝ Երասխի ձախ ափին: Տեղի հայերը բռնությամբ տեղահանվել են 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ և բնակություն հաստատել Արևելյան Հայաստանում:

41. Կիլիկյան Հայաստանի իշխանավետ (1187-1198 թթ.) և ապա թագավոր (1198-1219 թթ.) Լևոն Բ-ն է, որն անվանվել է Մեծագործ, Բարեպաշտ, Մեծահաղթ, Բազմահաղթ պատվանուններով:

42. Հեղինակը նկատի ունի 1211 թվականը:

43. Զաքարե Բ. Զաքարյանն է, որը մահացել է 1212 թվականին և թաղվել է Սանահինի վանքի տոհմական դամբարանում:

44. Զաքարյան Հայաստանի ինքնակալ կառավարիչ (1212-1227 թթ.) Իվանե Ա. Զաքարյանն է, որը թաղված է Ախթալայի վանքում:

45. Վրաց թագուհի Թամարը գահակալել է 1184-1213 թվականներին:

46. Թամար թագուհու որդի և հաջորդ Գեորգի Լաշան թագավորել է 1213-1223 թվականներին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ²⁰

Եվ արդ՝ մինչև այստեղ, ըստ Սյունյաց նահապետների և իշխանների հաջորդականության ու ազգակցության՝ ասելիք չունենք նրանց անունների ու սերունդների վերաբերյալ, որովհետև առաջին պատմագիրներին էին այդ իրողությունները, և մենք թեև շատ անգամ ջանացինք, բայց միայն այնքանը գտանք, որը վերը շարադրեցինք: Այսպես էլ պետք է նկատի ունենալ առաջիկաները: Իսկ թե ինչո՞ւ՝ կասեմ պատճառը, որ դու ինձանից չպահանջես իշխանների հաջորդական շարքերը և ժամանակագրությունը: Որպես և այս Պատմության սկզբում նշեցինք, չգտանք առաջիններից [մեկին], որը այս մասին հոգ տարած լիներ և գրած ուրույն պատմություններ ու [ցույց տված] այս աշխարհի ու նրա տերերի որպիսությունը, ինչպես որ տեսնում ենք ուրիշներինը՝ Մամիկոնյաններինն ու Տարոնինը, Բագրատունիներինը, Վասպուրականցիներինը, որոնք հետո թագավորեցին, Վիրքինը, Աղվանքինը (1):

(Ստ. Օրբ., գլ. Ե)²¹

Բյուզանդիայից (2) վերադառնալուց և մեր Հայաստան աշխարհը գալուց հետո սուրբ Գրիգորը (3) չեր դադարում շրջելուց, քարոզելուց ու եկեղեցիներ կանգնեցնելուց: Գնալով Վիրք, այնտեղից՝ Աղվանք, մինչև Մասքութք (4) ու Հոնաց պահակը (5) և բոլորին հաստատելով քրիստոնեական հավատի մեջ՝ գալիս է

²⁰ Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունների աշխարհաբար տարբերակը տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., 1986:

²¹ Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունների գրաբար բնօրինակը տե՛ս Ստեփանոսի արքեպիսկոպոսի Սիլվեա Պատմութիւն..., Մոսկովա, 1858:

Փոքր Սյունիք. (6) մտնելով Ամարաս (7)` եկեղեցի է շինում ու այնտեղ բողնում կրոնավորներ:

(Ստ. Օրբ., գլ. Ե)

Ապա թագավորը (8) կարգադրում է մեծ ժողովով սահմանել եկեղեցու բոլոր կարգերը, առանց պակասի: Նշանակում են պատրիարք սուրբ Ներսէսին (9) և նրան ենթակա՝ Աղվանքի արքեպիսկոպոսին, որը կաթողիկոս է, և մետրոպոլիտներ՝ Սյունյաց, Վրաց ու Մարդպետական (10) եպիսկոպոսներին...

(Ստ. Օրբ., գլ. Է)

Այն ժամանակ շուտով արքունիքում (11) իմացվեց, որ խաղիրները (12), բազմամարդ զորքերով ելնելով Ճորա դրնով, հասան մեր երկիրը: Եվ պարսից Շապուհ արքան անթիվ զորքեր հավաքեց Ասորիքից (13), Խորասանից (14), Խորեզմից (15), ավելի շատ՝ Պարսկաստանի Ատրպատական նահանգի քաջերից, Հայաստանից, Վիրքից, Աղվանքից, Կովկաս լեռնան ցրտաշունչ բարձունքների տասներկու խուժարուժ ցեղերից և անհամար բազմությամբ ելավ-գնաց պատերազմով բախվելու նրանց հետ:

(Ստ. Օրբ., գլ. Թ)

Երանելի իշխան Բաբիկը՝ Սյունյաց տերը, սահմանել էր, որ ամբողջ Սյունիքում նախարռո լինեն Շաղատի սուրբ եկեղեցու սպասավոր քահանաներն ու հավատացյալ աշխարհիկ պաշտոնյաները՝ որպես մայր եկեղեցու և Սյունյաց ամբողջ աշխարհի մայրաքաղաքի պաշտոնյաներ: Բայց Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիկ և հոգևոր տեր Հովհաննի կողմից հիշատակվում է, որ պատարագի ժամանակ սաստիկ հակառակություն տեղի ունեցավ գյուղաքաղաքների նախարռո գերադասության ու

նախապատվության վերաբերյալ, թէ ո՞րն է լինելու [այդպիսին]: Եվ Շաղատի Խոսրովը՝ Գազանի սերնդից, շարադրված վճռագիրը ներկայացրեց աստվածապահ ու բնիկ տեր Ատրներսեսին՝ Սյունիքի տիրոջն ու հայոց իշխանին: Արտոնվեց շաղատեցիներին՝ որպես մայրաքաղաքացիների, առաջին տեղում նստել վեհագույն պատվով: Նույնպես և Սյունիքի վարդապետական առաջին աթոռը առաջարկվեց Գեորգին՝ Շաղատի վարդապետին: Դրանից խիստ զայրանում է Փանոս Ուժեցին՝ Սիննի վանականը և ակամա հեռանում, իսկ հավաքվածներից ոչ ոք դա բանի տեղ չի դնում: Այնուհետև Ուզի (16) և Աղիսիտուի (17) միջև սաստիկ հակառակություն է ծագում: Իսկ պատմությանը լավատեղյակ արիստուեցիները հաստատեցին, որ բովանդակ Սյունիքից ույժեցիները պանդուխտ և եկվոր են Վրաց աշխարհից: Շաքիին (18) ու Աղիսիտուին առաջարկվեց Շաղատից հետո ունենալ գերադասության երկրորդ և երրորդ բարձր պատիվը: Գերադասության չորրորդ աստիճանն ստացավ Մորենի (19) մեծ զյուղաքաղաքը՝ հնից ազնվատոհմ լինելու համար: Ապա ույժեցիներին առաջարկվեց ընդունել հինգերորդ տեղը: Եվ այնուհետև յուրաքանչյուրն իր քահանայական [դիրքով էր շարժվում]:

(Ստ. Օքք., գլ. ԺԲ)

Բայց թագավորը, (20) կասկածելով, որ կխաբվի, պատանդ վերցրեց Վրաց Աշուշա բղեշխին և Վասակի (21) երկու որդիներին՝ Բաբիկին և Ատրներսեսին:

(Ստ. Օքք., գլ. ԺԷ)

Իսկ երբ Միհրանը (22) բազմաթիվ զորքերով եկավ Վիրք՝ պատերազմելու վրաց թագավոր Վախթանգի (23) դեմ: Վահանը (24) հայոց զորքերով գնաց Վախթանգին օգնության, որովհետև

միմյանց դաշնակից էին: Եվ իջնելով Ճարմանի դաշտը (25)` Կուր գետի մոտ ճակատամարտեցին պարսիկների դեմ ու մեկ անգամ հաղթեցին:

Իսկ վրացիները, վախենալով պարսիկների բազմությունից, փախուստի դիմեցին: Եվ Վահանը, այս իմանալով, իր գնդով վերադարձավ այնտեղ, որտեղ և զոհվեց Վասակը՝ Վահանի կրտսեր եղբայրը: Իսկ Միհրանը, հետապնդելով զորքին, բռնեց Հրահատ Կամսարականին՝ Շիրակի (26) տեր Ներսեսի եղբորը, որովհետև ձին սաստիկ փախս տալով՝ նրան ցած զցեց: Ապա հետապնդելով բռնեցին նաև գովելի Սյունի իշխան Հազրին: Միհրանը շատ ուրախանալով ետ դարձավ: Իսկ Վահանը Սյունյաց պայազատ Բարկենին գտնում է սաստիկ վիրավորված և մի տեղ ընկած, նրան ձի է նստեցնում ու այնտեղից դուրս բերելով՝ փրկում է, որը և վիրավորված լինելու պատճառով Վահանի հետ այլևս չի շրջում, այլ անցնում, գնում է անվտանգ տեղեր:

(Ստ. Օքք., գլ. ԺՀ)

Բայց այս ժամանակ (27) Բյուզանդիայի, Վիրքի և Հայաստանի միջև եղան շատ խորվություններ, մեծամեծ հուզումներ՝ երկպառակություններ, բաժանումներ, վեճեր, պայքար ու աղմուկ, շփոթություններ, արհամարհանք՝ աստվածային օրենքների հանդեպ՝ երբեմն Քաղկեդոնի ժողովի, երբեմն եկեղեցու ինք դասերի համար. մի ժամանակ էլ վրացիները հավակնություն ունեցան ազդել Աղվանքի վրա, այդ պատճառով վերջինս երես դարձրեց Հայաստանից, Մարդպետական եպիսկոպոսն էլ գոռոզացավ ու պատվազուրկ եղավ:

(Ստ. Օքք., գլ. ԻԵ)

*Հայերի միաբանվելու, Տէր-Աբրահամի աթոռակալելու, Դվինի
մեծ ժողովի (28), եկեղեցու ինք դասերի և վրացիների բաժանման
մասին շատ ու պիտանի գրույցներ, որ հավաքեցինք իին թղթերից
և Ուխտանեսի գրքից...*

Մերոնք էլ, սրանից ընդօրինակելով, Աբրահամ կաթողիկոսին հրչակեցին հայոց պատրիարք, Աղվանքի կաթողիկոսին՝ արքեպիսկոպոս, Վրաստանի կաթողիկոսին՝ մետրոպոլիտ: Իսկ Սյունիքը, որ Պետրոսի հրամանով մի ժամանակ անջատվել էր հակառակ աթոռներից, այժմ նորից միացավ: Ապա վրացիները, մեծամտանալով աղվանցիների նկատմամբ, չեն կամենում կարգով նրանցից ցած դասվել, այլ իրենց նրանցից առաջադավան էին համարում: Վրաց առաջնորդն էր Կյուրիփոնը (29), որը ծածուկ կերպով շաղախված էր Նեստորի աղանդով ու չեր կամենում դա հայտնի դարձնել, այլ սպասում էր [հարմար] ժամանակի ու առիթի: Իր հետ էլ մի խուժաստանցի եպիսկոպոս ուներ, որին ինքն էր ձեռնադրել: Այս Կյուրիփոնը եղել էր Վաղարշապատի սուրբ կաթողիկեի փակակալ, սարկավագության ժամանակ գնացել էր Կողոնիա (30), բնակվելով մի երկարնակ քահանայի մոտ՝ վարակվել էր այդ աղանդով:

Այնուհետև, երբ վրացիները հայոց կաթողիկոս Սովսեսից (31) իրենց համար առաջնորդ խնդրեցին, նա ձեռնադրեց ների կարապետ Կյուրիփոնին ու տվեց նրանց: Երբ աղվանքցիներն իմացան վրացիների վարմունքի մասին, իրենք էլ մատնացուց արին Եղիշէ անունով մի առաքյալի, որը նախապես, առաջ եպիսկոպոս ձեռնադրված լինելով, եկել էր Աղվանք, եկեղեցի շինե՝ Հայաստանից վադ: Մի առ ժամանակ նրանք էլ Հայաստանից երես դարձրին: Վրացիները բաժանվեցին՝ պատրվակ բերելով, թե երբ Կյուրիփոնը Աբրահամից արքեպիսկոպոսության [աստիճան]

խնդրեց, սա նրան սաստեց: Եվ թեպետ Պետրոս եպիսկոպոսի միջոցով [Աքրահամը] շատ անզամ խոստացավ Կյուրոնին տալ իր խնդրածը, բայց նա չհաշտվեց ու հետո էլ բանադրվեց Աքրահամի կողմից: Կյուրոնը, կնկուլն ու փիլոնը վերադարձնելով Պետրոսին, ասաց. «Ձերը ձեզ լինի»: Իսկ հետո վախենալով՝ գաղտնի կերպով նրա ետևից [մարդիկ] ուղարկեց ու Պետրոսին երկու սարկավագների հետ սպանել տվեց Կանգրաց լեռան (32) վրա: Բայց Կյուրիինի աղանդի մասին հայտնեց Սովուեսը՝ եպիսկոպոսը Ցուրտավի, այսինքն Գալյանքի (33), որի թեմն այժմ ենթարկվում է Հաղպատին (34):

(Ստ. Օքք., գլ. ԻԶ)

Իսկ Աշոտ թագավորը (35) հինգ տարի թագավորելուց հետո վախճանվում է, և նրա թագավորությունը ժառանգում է իր որդի Սմբատը (36), որին Ափշինի (37) հրամանով հայոց թագավոր են օծում կաթողիկոս Գևորգը (38) և Սյունյաց եպիսկոպոս Հովհաննեսը, վրաց Ատրներսեն բղեշիր (39), Սյունյաց իշխան Աշոտը, Արծրունյաց իշխան Գագիկը ուրիշ իշխաններով հանդերձ:

(Ստ. Օքք., գլ. ԼԷ)

Սրա եղբայր Վասակն (40) էլ քիչ օրեք անց վախեցավ հայոց երկիրկիված թագավորությունից, որին տիրում էին երկու Աշոտները և միշտ բորբոքվում էին միմյանց դեմ պատերազմելու: Արքայորդի Աշոտից (41) կասկածի ենթարկվելով՝ նրա մոտ չգնաց. մեկ [այն պատճառով], որ մյուս Աշոտը՝ Շապուհի որդին, սիրում էր իրեն, մեկ էլ, որ փեսա էր Վրաց բղեշի Գուրգենին, իսկ Գուրգենը հակառակ էր Աշոտ [արքայորդի թագավորին]: Ապա Հովհաննես կաթողիկոսին (42) մեջ զցելով՝ հաշտության երդմնագիր է խնդրում, որպեսզի նրա հետ համարձակ ու անկասկածելի լի-

նի, որը և Աշոտ [արքայորդի] թագավորը տալիս է՝ հարգելով իր նկատմամբ նրա [արտահայտած] ցանկությունը: Վասակը, այդ երդմնագիրը վերցնելով կաթողիկոսի ձեռքից, գնում է Աշոտի մոտ և անկեղծորեն ու մտերմաբար ընդունվում նրա կողմից՝ որպես սիրելի համախոհ: Իսկ հետո Աշոտը մոլորեցվում է ոմանց կողմից, որոնք ասում էին, թե Վասակին ուղղված թուղթ է գտնվել մի սուրհանդակի մոտ՝ զրված մյուս Աշոտի ու Գուրգենի՝ Վասակի աներոց կողմից, լի քեզ վերաբերող ամենայն չար խորամանկությամբ:

(Ստ. Օքք., գլ. ԼՀ)

Իսկ երբ աղմուկ տեղի ունեցավ մեր աշխարհում, [Հայաստանի] հունական մասում ումն Հովհան հակաթոռ [կաթողիկոս] էր նստած ու [Եկեղեցու] ինը դասերի [կարգի] համաձայն հույների կողմից էր հետամուտ Հայաստանին: Վրաց կաթողիկոս Կյուրիոնն էլ իր փառամոլական ախտի պատճառով հեռացավ հայոց [Եկեղեցու դավանակցությունից] ու քաղկեդոնիկ դարձավ, ապա և Արվանքի [կաթողիկոսը] բաժանվելով հեռացավ ինչ-որ պատրվակներ մեջտեղ բերելով:

(Ստ. Օքք., գլ. ԾԲ)

Եվ հայոց թագավոր Աշոտը (43)[՝] Սմբատի որդին, Եպիսկոպոսների ու սուրբ հայրերի ժողով գումարեց թագավորանիստ Շիրակավանում, նաև Սյունիքից հրավիրեց Վահանին: Նա առաջարկեց Եպիսկոպոսներից մեկին ընտրել և նստեցնել հայոց հայրապետական աթոռին:

Ապա ամբողջ ժողովն ընտրում է Վահանին (44) առավել սուրբ և իմաստուն լինելու պատճառով: Եպիսկոպոսների բազմությունը նրան ձեռնադրում է ու օծում հայոց կաթողիկոս: Նա

մեկ տարի մնալուց հետո սկսեց Վրաստանից պատկերներ բերել ու դնել սեղանի վրա: Հրամայեց նույնն անել բոլոր եկեղեցիներում՝ ըստ հույների սովորության, սեղանները զարդարել սրբապատկերներով, պատարագ շմատուցել առանց սրբապատկերների: Այս պատճառով բոլորը կասկածեցին, թե հույների հետ դաշինք է կնքել և կամենում է նրանց աղանդը [մեր] եկեղեցին խցկել:

(Ստ. Օրբ., գլ. ԾԳ)

Ո՞վ պատվական ընթերցող, այժմ լսի՛ր ինձ, և ես քեզ կպատմեմ պանծալի բաներ, քանի որ Սիսական տոհմը, որ սերվում է Հայկից, մի ժամանակ միավորված էր Արշակունի և Պահլավիկ թագավորական ցեղին, երբեմն առնչվում էր Խազիրների թագավորության, իսկ ամենից հետո՝ Բագրատունիների հետ, երբեք չըմբռատացավ հայրենի իշխանությունների դեմ: Իսկ երկար ժամանակ անց, երբ դուռ բացեցին նախ Արծրունիները՝ թագաղիր լինելով (45) ընդդեմ հայոց թագավոր Սմբատի (46), թագաղիր եղան նաև Վրաց բղեշխ Ատրներսեհն ու Աղվանից Համամը, Ափշինը մեծարանքով [առաջարկեց] թագաղիր լինել Վասակ Սյունիին, բայց սա չկամեցավ ապստամբի անուն վաստակել:

Ապա, երբ թուլացավ Բագրատունիների իշխանությունը, և ուժեղացավ արաբական բռնությունը, տրոհվելով անջատվեցին երկրի բոլոր գլխավոր նախարարական գահերը՝ Վասպուրականինը, վրացականը, աղվանականը Կյուրիկյան կոչված ձորագետցիներինը (47), ինչպես նաև Կարս-Վանանդինը (48), որ Բայայնք է կոչվում:

(Ստ. Օրբ., գլ. ԾԵ)

Չէ՞ որ այս գյուղերը (49) երեք անգամ հաստատված էին սուրբ աթոռի վրա. առաջին անգամ՝ Հայոց Սմբատ թագավորի և

Սյունյաց մեծ իշխան Աշոտի կողմից, երբ Բերդաներիչին (50) փողով գնել էր Տեր-Դավիթը, երկրորդ անգամ՝ Սահակի որդի Սյունյաց Սմբատ թագավորի կողմից՝ Տեր-Վահան Բաղացու և նրա Վասակ որդու միջոցով, երրորդ անգամ էլ [այսպես էր եղել]. Սյունյաց գահերեց իշխան մեծ Սմբատի որդի՝ Հայաստանում և Վրաստանում իշխած իշխանաց իշխան Վասակի ազատներից Կորա Քրդի որդի ոմն իշխան Հասանը գնել էր Հարժիք գյուղն ու տվել իր հայրենի սեփականության տեղ: Նա մեծ Վասակի և նրա որդիներ Սմբատի ու Գագիկի հրամանով այս գյուղը նվիրում է Տաթևի վանքին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից: Եվ գրում են կտակագիր մեծամեծ պայմանավորվածություններով ու նրա [հիշատակի] համար հաստատում են քառասունք՝ ամեն տարի [կատարելու] հայտնության տոնին:

(Ստ. Օրբ., գլ. Կ)

Այս Ստեփանոսի (51) ժամանակներում էին Թամարը (52) և Լաշա Գեորգին (53)՝ Վրաստանի թագավորները, մեծ ամիրսպասալար Զաքարեն (54) ու իր եղբայր Իվանե աթաբեկը, որոնք մեծապես սիրում ու հարգում էին սրան: Կայեն զավառում (55) սրան հանգստյան տեղ հատկացրին Հաղարծինի գերահոչակ վանքն ու Արասաձոր գյուղը: Սա նորոգեց Տաթևի սուրբ Արաքելոց խարիսխած եկեղեցին և վրան գմբեթ դնել տվեց Հակոբ Ճահկեցի վանահոր միջոցով: Հաղպատում եպիսկոպոս ձեռնադրեց Տեր-Գրիգորիսին՝ Զաքարեի և Իվանեի քրոջորդուն...

...Իսկ Տեր-Սարգիսը Նորավանքում վեց հարյուր վաթսուն-իինգ թվականին (56) գեղատեսիլ եկեղեցու հիմք է դնում՝ հրամանով և օժանդակությամբ Ելիկոսի (57) որդի մեծ իշխանաց իշխան Լիպարիտի (58)՝ Վրաց աշխարհից եկած Օքբեյան մեծ նահատակության ցեղից:

(Ստ. Օրբ., գլ. ԿԳ)

Տեր-Սարգիսը (59), գնալով հայոց կաթողիկոս Տեր-Կոստանդինի (60) մոտ, նրանից ստանում է վիճակը հաստատուն և անխախտելի պայմանադրությամբ, և շրջաբերական գրություն այս գավառների համար, որպեսզի լինեն Նորավանքի սուրբ Եկեղեցուն հաստատուն ժառանգական վիճակ: Եվ հրացայտ անբավանեծքներով սահմանափակելով՝ ամրացնում է, որպեսզի կաթողիկոսներից, իշխաններից կամ եպիսկոպոսներից ոչ ոք չհամարձակվի հակառակվել կամ խանգարել այս սահմանված որոշումը: Նաև կոիվ է բարձրանում սուրբ խաչի համար: Եվ երկու եպիսկոպոսներն էլ Լիպարիտի ու իր Ելիկում որդու հետ գնում են Դվին, Իվանե աթաբեկի մոտ՝ դատաստանի: Իվանեն էլ, նստեցնելով իր մեծամեծներին՝ Բուպաքին ու գավառապետին, Իվան դպելին (61), Մեմնա Զաղելիխն, մեծ նախարարապետին (62), որ եկել էր [Վրաստանի] թագավորությունից, Վարձեի (63) վանահորը (64), Պղնձահանքի վանահորը, Գարշտեռի մեծ հայրապետին (65), գագեցի, մածնաբերդցի ավագներին և ուրիշ բազմաթիվ մեծամեծ մարդկանց, ինչպես նաև Տփիսաի, Անիի, Դվինի դատավորներին, Սուրմարիի (66) անվանի շեյխին (67), որանց հետ էլ՝ Անիի մեծ եպիսկոպոսին, Բջնիի ու Հաղպատի եպիսկոպոսներին, առաջարկում է քննել: Նրանք էլ, քննելով իրավունքի հարցը, դատում են այսպես. «Մեռածն ու գերվածը նույն պատկերն ունեն. որևէ մեկի կողմից վերակենդանացված մերելը այլևս իր ծնողների ծնունդը չէ, այլ՝ իրեն նորոգողինը, և եթե գերվածն ազատվում է մեկի ձեռքով, այնուհետև նրանը չէ, ում պատկանում էր, այլ ազատողինն է: Արդ ինչպես որ այս աշխարհը սրի ու ձեռքի նվաճումով համարվում է Վրաց թագավորության սեփական ժառանգությունը, այնպես էլ այն խաչը Իվանեի սեփականությունն էր, և երբ 1000 դահեկանի հասնող մեծ գումարով այն հանձնվեց Լիպարիտին ու Տեր-Սարգսին, պիտի լինի Լիպարիտի ու իր եկեղեցու հավիտե-

նական սեփականությունը»: Ապա դատական այս վճիռը խիստ հաճությամբ հավանելով՝ աթարելն ու ազատակույտ իշխանների բազմությունը առաջարկեցին խաչը անվիճելիորեն ու առանց հակառակության համարել Լիպարիտինն ու յուրայիններինը:

...Նրանց հետ էր և մեծ իշխան Բուպաքը, որը և նորակերտ սուրբ քավարանին ընծայում է իր օրինական ունեցվածքից և հայրենական սեփականությունից Աղբերիս ազարակը՝ լիակատար իրավունքով, իր սահմաններով, ջրարբի և անջրդի վայրերով, Թմածոր կոչված մեծ ձորով, Գնջաց սահմանով, մինչև Գանձակի սահմանը, որ Հայրաց տափ է կոչվում: Եվ հրամայում է գրել հիշատակի վճռագիր՝ անխախտ պայմանով, իր համար հիշատակ հաստատել, ամեն տարի տասը պատարագ անել իր մոր համար: Եվ այս ավանդում է Տեր-Սարգսին: Վճռագրի օրինակն էլ սա է.

«Թամարի որդիի Լաշայի թագավորության, Շահանշահի՝ Հայաստանի և Վրաստանի ամիրապասալարության ու նրա հորեղբայր Իվանեի աթարեկության ժամանակ ես՝ Քրիստոսի մեղավոր ծառա, իշխանաց իշխան Բուպաքս, եկա մեր երջանիկ հայրապետ Տեր-Սարգսի մոտ՝ Նորավանքի այս սուրբ եկեղեցու նավակատիքին և ընծայեցի իմ օրինական կալվածքներից բազուկներովս այլազգիներից վերցված ու արյունովս ազատագրված, իմ պարոնների մեծ հրովարտակով կ ինձ հատկացված Աղբերիս գյուղը՝ իր բոլոր սահմաններնով, այն տվեցի Նորավանքի Սուրբ Կարապետ և Սուրբ Նախավլա եկեղեցիներին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից...»:

Եվ քանի որ սրանից առաջ հափշտակել էին Ազարակի ձոր գյուղը, ուստի Լիպարիտը բազում թախանձանքներով պահանջում է ամիրապասալար Զաքարեցից և տանում, ցույց է տալիս աթարեկ Ելտկուզի մանշուրը ու գյուղն ազատում է: [Զաքարեն] առաջարկում է իր համար Նորավանքում հիշատակի արձանագ-

բություն փորագրել ու նզովքներով հաստատել, որ ոչ ոք չհամարձակվի այն հեռացնել սուրբ Եկեղեցուց: Եվ ինքն էլ իր ձեռքով գրում է այսպես.

«Ես՝ Հայաստանի և Վրաստանի սպարապետ մեծ Սարգսի որդի, Քրիստոսի մեղավոր ծառա Զաքարե ամիրսպասալարս, Ագարակի ձոր գյուղը վերադարձի Նորավանքին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից, և խնդրեցի սուրբ միաբանության առաջնորդ Տեր-Սարգսից ինձ համար տարեկան տասը օր պատարագ, որը պարտավոր են անխափան կատարել: Եվ մեզանից հետո ոչ ոք՝ մերոնցից կամ օտարներից, չհամարձակվի սուրբ Եկեղեցուց հափշտակել այս գյուղը: Իսկ եթե հանդգնեն, նզովված լինեն ամենակալ աստծուց ու բոլոր սրբերից, և նրանց մասն ու բաժինը Հուղայի, Քրիստոսին խաչ բարձրացնող վյուսների և ուրացողների հետ լինի, [նրանք] մեր մեղքերին պարտական լինեն: Հաստատ է աստծու կամքով: Հայոց վեց հարյուր վաթսուն թվականին» (68):

Մեծ և բարեպաշտ Լիպարիտը սրանից հետո էլ սուրբ ուխտի համար բազմաթիվ արդյունավետ գործեր հանդես բերեց, քանի որ Իվանե աթաքեկի կողմից հայրենագիր հրավարտակով նրան էին շնորհվել գավառն ու վանքը թագուհու (69) և Լաշա Գեորգիի հրամանով: Դա կնքված էր թագավորի անանցական մատանիով: Դրա համար էլ Տեր-Սարգսի Եպիսկոպոսի միջոցով կառուցելով պայծառակերտ քավարան՝ զարդարում է սպասքներով, հարստացնում ամեն տեսակի գույքերով ու կալվածքով: Իր հետ միասին [այդպես են վարվում] և իր որդիները, որոնց մասին ըստ կարգի հիշատակելու ենք: Սուրբ Եկեղեցու վրա իր հիշատակին այսպիսի արձանագրություն է [փորա]գրել [տալիս].

«Հայոց վեց հարյուր յոթանասուներկու թվականին (70) աստծու կամքով ես՝ Օրբելյան մեծ [Լիպարիտի] թռո և Ելիկումի

որդի Լիպարիտս..., իմ հայրը մեծ քենի պատճառով հեռացավ հայրենի աշխարհից և Ափիսազիայի թագավորից, գնաց Պարսկաստան՝ Ելտկուզ աթաբեկի մոտ: Եվ սա մեծ փառքով ու գործագութ սիրով ընդունեց և նրան պարզեց Համիան մեծ քաղաքը: Ժամանակներ անց նա ինձ որբ թողեց: Մենք անզիտությամբ խարված էինք նրանցից: Հետո ծանոթացա իմ հայրենի հավատքին և մանկական հասակում վերստին դարձա սուրբ Գրիգորի լուսավոր հավատքին ու եկա մեծ աթաբեկ Խվանեի մոտ: Եվ նա մեծ սիրով ընդունելով մեզ, իմ հայրենիքի փոխարեն տվեց Հրաշկաբերդը՝ իր եկամուտներով, և ուրիշ շատ գյուղեր Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում ու Կայենում...»:

(Ստ. Օրբ., գլ. ԿԵ)

Մեր Հայոց աշխարհի ու Վրաստանի նահապետության սկզբնավորման ժամանակ մեր սերնդի նախնի և առաջին ցեղապետ Թորգոնը ութ շատ քաջ ու հսկայակերպ որդիներ ուներ, որոնցից ավագագույնը Հայկն էր, երկրորդը՝ Քարթլոսը, երրորդը՝ Բարորսը, չորրորդը՝ Մովլանը, իինգերորդը՝ Լեկանը, վեցերորդը՝ Հերոսը, յոթերորդը՝ Կովկասը, ութերորդը՝ Եզրեսը: Ապա Թորգոնը, իր տիրույթները որդիներին բաժանելով, այս Հայատան աշխարհը՝ իր բոլոր սահմաններով տալիս է Հայկին, իսկ հյուսիսային կողմի անտառոտ աշխարհը՝ Քարթլոսին և մյուս եղբայրներին: Քարթլոսը գնաց դեպի Արմազ կոչված լեռը (71) և այնտեղ իր համար տուն շինեց, մի հարմար տեղում է՝ անառիկ ամրոց: Բերդը կոչեց Օրբեթ (72): Եվ այն աշխարհը՝ Խունանից (73) մինչև Սպերի ծովը (74), նրա անունով անվանվեց Քարթլ: Ապա երկար ժամանակների ընթացքում կատարված սերնդափոխությամբ Քարթլի նահապետությունը եկավ հասավ մինչև Պարսից Քեքավուս կոչված Խոսրով Մեծի (75) թագավորության ժա-

մանակները: Վրացիների համար ընդունված էր իրենց ղեկավարին կոչել տանուտեր, որովհետև [դեռ] թագավոր չունեին: Տանուտերը նստում էր Քարթի մեծ քաղաք Մցխիթայում, որը կառուցվել էր Քարթլոսի ավագ որդի Մցխիթայի կողմից: Վրացիները, այդ ժամանակ նեղվելով պարսից բռնակալ թագավորից, կամենում էին մահն ընտրել կյանքի փոխարեն: Իսկ հիշյալ ժամանակամիջոցում Պարսկաստանի, Վրաստանի և Աղվանքի տիրակալ Աբրիտոնի հրամանով Վրաց աշխարհին պետ էր նշանակված Արդարմոս պարսիկը: Սա այն Արդարմոսն էր, որ վերաշինեց Մցխիթան, պարսպապատեց կրաշաղախ քարերով և պարիսպ դրեց նաև Արմազ լեռից մինչև Կուր գետը: Սրա մահից հետո չորս մարդ էին իշխում Վրաստանի վրա, և այնտեղ առհասարակ խոռվություն ու խառնակ շփոթություն էր տիրում: Դա նախ Քեքավուս Խոսրովի, ապա և նրան հաջորդած Քվե Խոսրովի ժամանակում էր: Եվ վրացիները մեծ վշտի մեջ էին, բոլոր կողմերից հուսահատված:

Հենց այդ ժամանակներում կրիվ, շփոթ և մեծ խոռվություն ընկավ Ճենաստան աշխարհի (76) թագավորության մեջ, որը գտնվում է արևելյան կողմում, Խալանդրաց աշխարհից այն կողմ, Խազրաց և Հոնաց աշխարհների սահմանակցությամբ՝ երկայնակի ձգվելով մինչև Եմավոն լեռը: Ճենքակուր կոչված թագավորի մահից հետո թագավորագուններն սկսեցին պատերազմել միմյանց դեմ: Եվ երբ մի կողմն ուժեղ դուրս գալով հաղթեց, փախուստի դիմեց մյուսը, որի [գլխավորը] հաջողակ մարդ էր՝ գեղեցկակազմ, ուժեղ, մարմնեղ, հասակով երիտասարդ: Նա, վերցնելով իր ընտանիքը, թագավորական զինվորական ջոկատով ու գանձերով, օդի մեջ խաղացաղ երիվարներով սրաթոփչ կերպով անցավ թագմաթիվ երկրներ: Այդ փախստականներն այնքան ահավոր կերպարանքով էին, որ ոչ ոք չհամարձակվեց դեմ ելնել

նրանց: Եվ անցնելով Դարիալի կիրճը՝ կարծես երկնային թելադրանքով, եկան Քարթիլի աշխարհը, Մցխիթա տանուտիրոց մոտ, երկիրը տեսան պարսիկների կողմից նեղված ու մեծ վտանգի մեջ շփոթված:

Ապա տանուտիրոց ու ավագագույն մարդկանց հետ խոսելով՝ ասացին. «Մենք Ճենաց թագավորական տնից ենք, բաժանվելով մեր եղբայրներից՝ եկանք այստեղ և հավանեցինք ձեր ամուր աշխարհը: Ձեր աստվածները ձեր այդ վշտի համար մեզ բերեցին ձեզ օգնության: Արդ՝ մեր կամքն է՝ կա՛մ կարող ենք դադար առնել պարսից թագավորության մեջ, կա՛մ անցնել հունաց ինքնակալության կողմը: Եվ եթե ձեզ հաճելի ենք թվում, մեզ համար բնակության տեղ տրամադրեցեք, մնանք այստեղ ու ձեզ ազատենք նեղիներից, եթե ոչ՝ մեր ճանապարհով գնանք [այնտեղ] ուր աստված մեզ համար կհոգա»: Իսկ տեղի ավագ տանուտերերը, տեսնելով այդպիսի քաջակորու և ուժեղ մարդկանց ու լսելով նրանց հաճելի խոսքերը, մեծապես ուրախացան այդ եկվորների վրա, մեծ խրախճանք սարքեցին և բարձր փառքով ու մեծաշուր պատվով ընդունեցին նրանց և շատ-շատ սիրեցին: Անառիկ Օրբեթ ամրոցն էլ, որ կառուցվել էր Քարթլոսի ձեռքով, բնակության տուն ու պաշտպանվելու տեղ տվեցին նրանց և բազմաթիվ մեծամեծ պահաններ ու բերդեր հանձնեցին՝ որպես ժառանգություն:

Ապա նրանք այնտեղ դադար առնելով, բնակություն հաստատեցին Օրբեթում և բերդի անվան պատճառով, դրանից շատ ժամանակ անց կոչվեցին Օրբուլներ, այսինքն՝ օրբեթեցիներ, քանի որ այնտեղի ժողովրդի սովորությունն է իր իշխաններին բնակատեղի անունով կոչել, ինչպես Մեթեուլները, Մեփեուլները և Մրաջուլները, Հերեթից՝ Հերիաթավները, Զավախեթից՝ Զավախուլները, Կախեթից՝ Կախեցիները, Լեխմթից՝ Լեխմթիմանները և այսպես ուրիշ շատերը: Մինչև այսօր էլ այս պատճառով Օրբեթը

կոչվում այն տոհմը, որը առաջ կոչվում էր Ճենառութ, այսինքն՝ Ճենացիք: Եվ երբ այս այսպես եղավ, իրենք նեցուկ կանգնեցին Վրաստանին, զորք հավաքելով՝ դեմ դուրս եկան պարսիկներին, հարձակվեցին բոլոր նեղիների վրա՝ կոտորեցին ու հալածեցին նրանց: Երկրում խաղաղություն տիրեց: Դրա համար էլ նրանց կարգեցին ամբողջ Վրաստանի սպարապետ ու զորագլուխներ: Եվ Վրաստանի առաջին թագավոր Փառնավագի թագավորության ժամանակ Օրբելյանները նրա կողմից առավել պատվի արժանացան: Վրաց աշխարհում ոչ ոք, բացի միայն թագավորից, չկար նման կամ հավասար նրանց: Ահա այն, ինչ որ ազատ կերպով իմացանք «Վրաց պատմություն»-ից: Սակայն Գեորգի թագավորի նախանձի պատճառով նրա կողմից այդ տոհմն ամբողջովին վերացվեց Վրաց աշխարհից, նրանց անունները ջնջեցին իրենց պատմությունից, բոլոր գրքերից ու եկեղեցիներից: Ուստի և մենք, պրայտելով և ուսումնասիրելով, իմացանք շատից քիչը գիտակ մարդկանցից, այլևայլ տեղերում մնացած հիշատակություններից, ինչպես նաև նախնիների ավանդություններից, որոնք հայրերը որդիներին էին հատորդել մինչև մեզ: Եվ քանի որ Օրբելյանների նախնական պատմությունը, ինչպես նաև Վրաստանում կատարած նրանց բոլոր քաջություններն ու [մյուս] երևելի գործերը չեն հիշատակված «Քարթլիի կյանք» (77) կոչվող ժամանակագրության մեջ, ուստի և մենք չիմացանք իրողությունների բնույթն ու հաջորդականությունը, որ ինչպես կարգն է շարադրեինք մեր այս գրքում: Բայց ինչպիսի սակավ հիշատակություն է, որ գտել ենք հայերենով գրված գրքերում, կշարադրենք այստեղ, դրա հետ միասին՝ նաև այն, ինչ վերաբերում է այս տոհմի վախճանին, որը մեզ հավաստի կերպով տեղեկացրեց Միփթար Անեցու գեղեցիկ Պատմությունը (78):

Արդ՝ հայոց չորս հարյուր իննսունութ թվականին (79) Վրաստանի Դավիթ թագավորի, Հայաստանի Վանանդում նստող Գագիկ Շահնշահի (80) թագավորության և Բյուզանդիայի Մոնոմախի (81) կայսրության ժամանակ հագարածին իսմայելացիները, թուլացած տեսնելով քրիստոնյա ժողովուրդներին, իրենց կրոնակիցներին իմաց տվին Խորասանում, Խորեզմում, Ֆարսում, Քիրմանում, Բուխարայում, Մազանդարանում, Իրաքում՝ Բաղդադում և Բասրայում, Առանում և Ատրպատականում, հավաքվեցին պարսիկների, խազիրների, խորեզմացիների, արաբների, ինչպես և թուրքեստանցի սկյութացիների բազմություններ, եկան, անթիվ ու անհամար զորքերով բանակեցին Կարնո դաշտում (82), մտածեցին մի գաղափար, որ, [սակայն], չկարողացան իրազործել, այն է՝ Հայոց, Վրաց և Հունաց աշխարհներից վերացնել ու ջնշել քրիստոնյաների կրոնը և անունը:

Ապա այդ աշխարհակործան գործի դառնահրչակ լուրջ ամենից առաջ հասավ Բյուզանդիայի կայսերը, և սարսոալի ահուլող համակեց յուրաքանչյուր մարդու էուրիունը: Այդ պատճառով Կոմսենոս զորավարին Տրավիլոնի զորախմբով ուղարկում են այս կողմ և Հայաստանից ու Վրաստանից միասնական օգնություն խնդրում, որպեսզի թերևս կարողանան ազատվել հարավցիների ալեկոծուն ու բորբոքուն բարկությունից: Դավիթ թագավորն ու Գագիկը, այդ լսելով, չհամարձակվեցին իսմայելացիների զորքի դեմ ելնել, այլ մեծ աղաչանք-պաղատանքներով համաձայնեցրին քաջ ու անպարտելի Լիպարիտ Օրբեյանին գնալու, միանալու հունական զորքերին՝ վրա հասնող պատերազմում [թշնամուն] ընդդիմանալու համար, իսկ իրենք թաքնվելով պատսպարվեցին [իրենց] երկր[ներ]ի ամուր տեղերում: Ապա Լիպարիտը հանձն առնելով [դիմում է Դավթին ու] անվախ սրտով ասում. «Ես գնում եմ այլազգիների դեմ և կյանքս դնում եմ քրիստոնեա-

կան մեր հավատքի համար ու աստծու զորությամբ կա'մ կվերադառնամ, կա'մ կմեռնեմ Քրիստոսի համար: Բայց, ո'վ թագավոր, իմ հետնորդներին հանձնում եմ քեզ, որ վրաց չարաբարո իշխանավորների նախանձից դրդված՝ նրանց նկատմամբ նենգություն չանես և մեր պատվից ու տիրույթներից չզրկես»:

Լիպարիտը, որ տիրում էր թագավորության կեսին, այս ասելուց հետո ինքն անձամբ իր ազատների ու զորքի հանդես կազմակերպեց: Այդ հանդեսով անցան յոթ հարյուր մեծամեծ ազատներ, որոնք իր իսկ ստորադրյալներն էին, և տասնվեց հազար մարտիկներ: Արքունի զորքերից էլ վերցրեց տասը հազար մարդ: Գնաց դեպի Վանանդ (83), Կարուց դաշտը, [որտեղ] նրանց միացավ հունական զորքը՝ տասնինգ հազար մարդով: Այսպիսով բոլորը միասին քառասունմեկ հազար հեծյալներ էին: Եվ քանի որ այլազգիները մինչ այդ ավերել էին Որդորու գյուղն (84) ու ապատակել շրջակա բոլոր գավառները, բանակ էին դրել նույն դաշտում: Հակառակորդները միմյանց բախվեցին լուսաբացին՝ ճակատամարտելով եռակարգ՝ առաջապահ, միջնապահ և վերջապահ ջոկատներով: Իսմայելացիների անթիվ բազմության հանդեպ Լիպարիտի զորքը չնշին էր երևում: Նրա զինվորները նրանց մոտ թվում էին ջուր մատակարարողներ և [մարտում ընկածների] զենքերը հավաքողներ: Անպարտելի առաջամարտիկ քաջ Լիպարիտը, այդ տեսնելով, քաջալերեց իր զորքին՝ ասելով. «Մի՛ վախենաք, այլ միայն գոտեանդվեցե՛ք Քրիստոսի անվամբ և խաչակրվեցե՛ք խաչի նշանով, և մերը կիխի հաղթանակը»: Ու ինքն իշնելով ձիուց ծունք դրեց, խաչակրեց սուրբ խաչի նշանով, ապավինեց Քրիստոսին, պարանոցին կապեց փրկչական խաչի մասունքից ու այդպես [նախապատրաստվելով և] զինվելով հեծավ արագաքայլ ձին: Ուկեզարդ վահանը զցել էր թիկունքին, ձկուն նիզակը բռնել ձախ ձեռքում, պողպատե երկսայրի լայն

սուրբ՝ աջ ձեռքում, կոնքն ի վար [կախել] ահավոր վաղրը՝ դարբ-նի կռանի կամ քարհատի կտցավոր սակրի նման: Անցնելով պա-տերազմողների համախմբված տեղը՝ հպարտորեն արշավում էր այս ու այն կողմ: Նրա ոսկեկուտ զրահից ու սաղավարտից ձառա-գայթներ էին ցայտում, ինչպես արեգակից:

Առյուծի նման մոնչում ու գոռում էր. հակառակորդի կողմից մենամարտիկներ էր պահանջում՝ ասելով. «Ես ափիսազացի Լի-պարիտն եմ, պարսից և արյաց քաշեր, եկե՛ք նախ միմյանց հետ մենամարտենք»: Չնայած որ շատ անգամ պահանջեց, բայց ոչ ոք չհամարձակվեց նրա դեմ դրւու գալ: Լիպարիտը որտեղ որ սլա-նում էր, արծվի նման էր վրա հասնում: Նրանք ետ-ետ գնալով ի-րար ոտնատակ էին տալիս, տրորում: Այնուհետև Լիպարիտը տեսնելով, որ հակառակորդը սրտաբեկվեց, ուժն էլ սասանվեց, դիմեց իր զորքին, քաշալերեց ու առաջ շարժեց: Սիեղ աղաղակ բարձրացնելով՝ [կողմերը] խառնվեցին միմյանց, ձակատամարտ տեղի ունեցավ այնպիսի դրդյունով, որ թվում էր, թե ամպերի ո-րոտում է, կայծակների ճայթյուններ են: Ինքը՝ Լիպարիտն էլ որ-պես հրախառն ամպ մտնում ու ելնում էր՝ շատերին կայծակնա-հար անելով, և ինչպես որ հրդեհն է եղեգնուտով փոթորկալից անցնում, ճեղքում էր հակառակորդի զորքը, անցնում այն կողմ և աջ ու ձափի արյան գետեր էր հոսեցնում, դիմակների կույտեր էր ա-ռաջացնում. այդ այլազգիներին ջոկատ առ ջոկատ մասնատում էր և ինչպես նապաստակների խմբեր, դիմքավալ անում դաշտի մեջ: Եվ այսպես կոտորելով՝ քաջ Լիպարիտը մեր աստված Հի-սուս Քրիստոսի զորությամբ հաղթեց իսմայելացիներին, կենդա-նի մնացած սակավաթիվ մարդկանց էլ փախուստի մատնեց:

Եվ երբ կեսօր եղավ, մեծաջան տանջանքներից ու չարչա-րանքներից հետո վերադարձան՝ մեծ զոհունակությամբ ու շատ ուրախությամբ: Բայց վրաց անիծյալ ու տիրասպան ազատները,

վախենալով Լիպարիտի մեծ ազդեցությունից, նրա մեծավոր զորագլուխների հետ խորհրդակցելով, հանկարծակի կտրեցին նրա ձիռ ջիլը ու Լիպարիտին գետին զցեցին: Բազմությամբ շրջապատելով՝ տեղնուտեղը սպանեցին նրան և քրիստոնյաների համար խավար ու սուզ բերեցին: Խսմայելացիներն այս իմանալով՝ մեծ խնդրությամբ ետ դարձան և սրերը գործի դնելով՝ կոտորեցին վրաց գորքը. ումանք փախչելով ցրիվ եկան երկրում: Եվ դա Հայոց ու Վրաց երկրների համար կորստաբեր վախճան եղավ, որով հետև բոլոր գավառներին տիրեցին սելչուկ-թուրքերը: Մի փոքր ժամանակ անց, հինգ հարյուր տասներեք թվականին (85), վերցրին Անին՝ Ալվաալան սուլթանի գլխավորությամբ, գրավեցին նաև Կարսը, Շիրակի, Վանանդի, Արշարունյաց (86) բոլոր գավառները, Արարատյան և Սյունյաց աշխարհները, Բաղրը (87), ընդհանրապես բոլոր տարածքները, մինչև Տփղիսի դարպասները:

Այն օրը քրիստոնյաների մեծ կորստի և համընդհանուր կործանման այսպիսի դուռ բացեց վրաց անիծյալ և տիրասպան զորքը: Բայց ես Լիպարիտի սպանությունը չեմ համարում իր անձի կորուստ, այլ մեծ փրկության գյուտ, որովհետև իրեն նվիրաբերելով Քրիստոսի հոտին՝ նա չափազանց բարձրացավ և անմեղությամբ յուրայինների կողմից սպանվելով՝ նահատակի արյամբ պսակվեց ու գնաց թագավորների թագավոր Քրիստոսի մոտ՝ նրանից ընդունելու վարձ և պարզեներ իր ծանր չարչարանքի դիմաց: Այնուհետև հավատարիմ ստորադրյալները մեծ ողբով վերցրին այդ գեղեցիկ երիտասարդի ու անպարտելի հերոսի դիակը, տարան Կարս, դագաղ պատրաստեցին, արքայական ճոխությամբ զարդարեցին ոսկեհյուս զարդերով, տեղափոխեցին իրենց մեծ ու նշանավոր Բեթանիա վանքը (88), որը նրա նախների կողմից կառուցված էր որպես գերեզմանատուն:

Եկան նաև Դավիթ թագավորն ու իր մեծամեծները, նրա վրա լաց ու կոծ արեցին, գերեզման դրեցին իր նախնիների մոտ:

Օրբեյանների տոհմի աստիճանն ու բարձր դիրքը արքունիքում այսպիսին էր՝ լինել բոլոր գորքերի սպասալար ու ամբողջ Վրաց աշխարհի կառավարիչ, արքունի բոլոր գործակալների վրա իշխող, ունենալ սեփական տասներկու դրոշ, յուրաքանչյուր դրոշի տակ՝ հազար զինվոր: Եվ քանի որ, ըստ սահմանված կարգի, թագավորի դրոշը սպիտակ գույնի հյուսվածքից էր ու վրան կարմիր նշան էր կրում, սրանց առաջարկվեց պահել կարմիր գույնի դրոշ՝ վրան սպիտակ նշան, այլև՝ թագավորի առաջ շրջելիս թե կանգնելիս ձեռքում բռնել առյուծագլուխ գավազան, ճաշի ժամանակ նստել հրավիրյալներից առանձին, բոլոր մեծամեծ նախարարներից վեր ու ճաշել արծաթե սեղանից: Սրանք նաև թագավորի թագաղիրներն էին:

Եվ այսպես երկար ժամանակ անց, Գեորգիի (89) որդի հզոր Դավիթ (90) թագավորության շրջանում Օրբեյան Իվանե (91) մեծ սպասալարը ռազմականապես շատ ուժեղացավ ու ընդարձակեց Վրաստանի սահմանները՝ պատերազմ մրելով սելցուկ-թուրքերի դեմ: Սրանցից ետ վերցրեց Տփյալսը, Տավուշը, Գագը, Տերունականը, Լոռեն և Անին՝ հինգ հարյուր յոթանասուներկու թվականին (92): Այդ պատճառով էլ թագավորի կողմից շատ սիրվեց ու հարգվեց: Ի հավելումն իրենց տիրույթների՝ թագավորի կողմից նրանց տրվեց Լոռեն՝ իր գավառով, Ազարակը (93)՝ որպես ապարանքի տեղ, և Շամշուլդեն էլ, որ իրենց սեփականությունն էր, վերստին տրվեց՝ գավառով հանդերձ: Եվ այս ամենը արքունական կնիքով կնքված մեծ հրամանազրով հաստատվեց որպես սրանց սեփական ժառանգություն: Իսկ եթե հզոր Դավիթը մեռավ, թագավորական գահը գրավեց նրա որդի քաջ Դեմետրեն (94), որը գովելի գործերով գերազանցեց իր նախնիներին՝ թագավորելով երեսու-

ներեք տարի: Սա առավել ևս սիրեց ու հարգեց Իվանեին և նրա որդի Սմբատին: Մրա օրոք Իվանեն ու Սմբատը վերցրին Խունանը, որը շատ տարիներ գտնվում էր սեղուկ-թուրքերի ձեռքում: Այն նույնպես հաստատվեց նրանց սեփական ժառանգություն՝ իինզ հարյուր յոթանասունյոթ թվականին (95): Մրանից հետո Իվանեն վախճանվում է ծեր հասակում, նրա իշխանությունն անցնում է իր որդի Սմբատին: Իմացած եղիր, որ սրանք ինամիությամբ կապված էին Վրաստանի թագավորների և Հայատանի Կյուրիկյան թագավորների հետ, որոնք Բագրատունիներ էին: Այդ պատճառով վերջիններից վերցրին Բագրատունյան անուններ, ինչպես՝ Սմբատ և Իվանե, այսինքն՝ Հովհաննես, իսկ Լիպարիտ, Եղիկում և Բուրթել անունները ժառանգել էին իին նախնիններից, որոնք Ճենաց աշխարհից էին եկել: Մյուս անուններն էլ վրացիններից վերցրին:

Դարձյալ մյուս Իվանեն՝ Աբովյեթի որդին, վերցնում է Դմանիսը (96): Բազմաթիվ հաջողակ գործերից ու մեծամեծ սիրանքներից հետո մեռնում է Դեմետրէ թագավորը վեց հարյուր յոթ թվականին: Թագավորությունն ստանձնում է նրա որդի Դավիթը՝ հոր նման ուժեղ ու իմաստուն մի տղամարդ: Ապրելով երկու տարի՝ սա ևս մեռնում է: Մեռնելիս կանչում է կաթողիկոսին, մեծամեծ նախարարներին, իր եղբայր Գեորգիին, փոքրիկ որդի Դեմնային, դնում է իր առջև զիսավոր սրբապատկերը, փրկական խաչը, սուրբ Ավետարանն ու աստվ. «Ո՛վ Վրաստանի մեծամեծներ, դուք ինքններդ քաջ զիտեք, թե իմ հայրը ձեզ համար ինչպիսի ջանքեր թափեց և կրկին նորոգեց այս թագավորությունը ու մեռնելիս մեծամեծ պատվիրումներով և զրությամբ ինձ ավանդեց մեր թագավորությունը, բայց ես ել այժմ մահամերձ եմ: Իմ այդ Գեորգի եղբայրը ոչ մի հաշիվ ու գործ չպիտի ունենա այս աթոռի հետ: Արդ՝ ինչպես որ իմ հայրի ինձ հանձնեց իր այս ժառանգա-

կան արքայական գահը, նույնպես էլ ես իմ զավակ Դեմնային եմ հանձնում այն ձեր բոլորի ներկայությամբ: Եվ դու, Գեղրգի՛, եղբայր իմ, առաջմ մնա իմ տեղում, կատարիր մեր երկրի զորապետությունը և վայելիր միայն քո բաժին ժառանգությունը, որ մեր հայրը քեզ տվեց, մինչև որ չափահաս դառնա իմ այս մանուկը»: Ապա առաջ կանչելով Օրբելյան Սմբատի որդի Իվանեին՝ երդվեցնում է նրան՝ հետևելու մանկան համար [թողած] կտակի կատարմանը: Եվ բռնելով մանկան ձեռքը՝ դնում է Իվանեի ձեռքի մեջ ու հանձնում նրան: Մյուս մեծամեծներին էլ երդվեցնում է՝ չդավել տղային, այլ երբ չափահաս դառնա, նրան օծել թագավոր:

Այս կատարելուց հետո վախճանվում է ու թաղվում իր նախնիների մոտ՝ Գելաթում (97): Այդ օրվանից մանուկն ապրում էր Իվանեի տանը, դաստիարակվում ու աճում: Իսկ Գեղրգին սիրաշահում էր մեծամեծ իշխաններին, ինչպես և կաթողիկոսին՝ կամենալով թագավոր դառնալ: Սակայն չեր համարձակվում այդ մտադրությունը հայտնել մեծ Սմբատ Օրբելյանին ու նրա Իվանե և Լիպարիտ որդիներին: Ապա մեկ ամիս հետո Գեղրգիի մոտ հավաքեցին բոլոր մեծավորներին ու ազատներին: Նրանց հետ ներկայացավ նաև Իվանեն յուրայիններով: Այստեղ Գեղրգին հայտնեց իր մտադրության մասին, խիստ սիրաշահումով համոզեց նրան՝ ասելով, թե «Երբ իմ եղբորորդին չափահաս դառնա, նրան ես չեմ զրկի, այլ, եղբորս կտակի համաձայն, կդնեմ թագավորական այս զահին»: Այդ պատճառով բոլորն էլ համաձայնության գալով՝ Գեղրգիին օծեցին թագավոր, որը և բոլոր հաղթական գործերում հաջողակ եղավ ու չափազանց խելոք:

Նրա տիրապետության օրոք թագավորությունը շատ ընդարձակվեց: Հենց ինքն անձամբ բազում պատերազմներում դեկավարեց զորքերին: Իր քաջարի Իվանե սպասալարի միջոցով սարսափեցրեց պարսիկներին, արաբներին ու թուրքերին: Այս նույն

Գեորգին վեց հարյուր տասը թվականին (98) [մահմեղականներից] վերցրեց Անին ու Շիրակի ամբողջ զավառը և հանձնեց Վրաստանի ամիրսպասալար մեծ Իվանեին՝ Սմբատ Օրբելյանի որդուն: Դրանք դարձան նրա սեփական տիրույթը: Այս Իվանեն մի անգամ Անիի դարպասների մոտ ջարդեց Շահի Արմենին (99), որը քառասուն հազարանոց զորքով եկել էր քաղաքի վրա: Թեև Գեորգի թագավորն օգնության էր եկել [ու ներկա էր], բայց մարտը վարողը Իվանեն էր: Մի անգամ էլ սա Գագի դաշտում փախուստի մատնեց Ելտկուզ մեծ աթարեկին, որը հարյուր հազարանոց զորքով եկել էր Գեորգիի դեմ և կամենում էր կոտորել բոլոր վրացիներին, թագավորին էլ բռնել: Իվանեն նրա զորքերին մեծ հնարանքներով ու քաշագործություններով այնպէս նեղը զցեց, որ գիշերը թողնելով իրենց վրանները, զենքերը, մեծ քանակությամբ գույքը, քաշող ուժը՝ փախան ու մի կերպ ազատվեցին: Թեպետև թագավորի համար արեց այս ամենը, այլև ուրիշ շատ մեծամեծ զործեր ու երախտիքներ, սակայն թագավորը արտաքնապէս էր նրան մեծ փառքի ու պատվի արժանացնում, իսկ իր մտքում միշտ կասկածում էր՝ նրան հանձնված տղայի պատճառվ, և հարմար պահ էր որոնում զաղտնի հնարքներով դավելու, բայց չէր գտնում: Իհարկե, Իվանեն այդ բանը գիտեր:

Ապա նրա հայր Սմբատը ծեր հասակում մեռնում է ու թաղվում իր նախնիների մոտ: Նրա իշխանությունը ժառանգում են որդիները՝ Իվանեն ու Լիպարիտը: Բայց հայոց վեց հարյուր քսանվեց թվականին (100) Վրաստանի պետության մեջ կոիվ և շփոթություն ընկավ, և Օրբելյան տոհմը բնաջնջվեց: Գեորգի թագավորի տիրապետության քսանմեկերորդ տարում, երբ Դեմնան լրիվ հասուն երիտասարդ էր դարձել, մի անգամ Ազարակի իր պալատում եղբայրների ու որդիների հետ խրախճանք անելու ժամանակ Իվանեի մոտ եկան մեծամեծ ավագներից մի քանիսը,

ինչպես նաև Դեմնան ու նրան ասացին. «Իվանե՛, հիշի՛ք քո խոստումն ու երդումը, որ տվեցիր Դավիթ թագավորին, և խոստումնազանց մի՛ լինիր, արդեն հասել է այս երիտասարդ Դեմնային թագավոր դարձնելու ժամանակը: Գեռօգին սակավաթիվ մարդկանցով գտնվում է թագավորական սենյակում, և մենք բոլորս հավատարիմ ենք մնում այն երդմանը, որ տվեցինք այս Դեմնայի հորը»: Իսկ Իվանեն պատասխանում է. «Մենք բնավ ել չենք մտադրվի սպանել օծված թագավորին, այլ մեր խոստումն ու երդումը պահելու համար կրոնենք Գեռօգիին, մինչև որ թագավոր դարձնենք Դեմնային, և ապա նրանից խոստում, երդում ու ստորագրություն կվերցնենք, որ հնազանդ լինի ու մնա միայն հոր կողմից իրեն ժառանգություն տրված բաժնում:

Բոլորն ել հավանություն տվեցին այս ասածին և արագ կերպով սկսեցին զորք գումարել: Մի շատ անարգ զինվորական, իմանալով այս նախաձեռնության մասին, զիշերը գնում, տեղեկացնում է թագավորին: Իսկ սա, ձի հեծնելով, արագ կերպով փախչում, ընկնում է Տփղիս ու ամրանում այնտեղ: Իվանեն, որան անտեղյակ լինելով, շարունակում է հեծյալներ հավաքել, զորք կազմել: Վրաստանի բոլոր մեծամեծներն ու ազատները միաբանված էին Իվանեի հետ և հավաքված նրա մոտ՝ Ազարակ կալվածքում: Այստեղ էին եկել բոլորն ել՝ Քարթլիի էրիսթավները, դորդորացիները, ջավախուրները, կախացին՝ իր որդիներով, մեծ Կամրագելը, Զաղել Մեմնան, տաշրացիները, Կայենեցի Հասանը (101) և անեցի Գրիգոր Ապիրատյանը (102), որոնց զորքերը թվով կազմում էին ավելի քան երեսուն հազար [զինվոր]: Իսկ Գեռօգի թագավորը միայնակ, առանց զորքի գտնվում էր Տփղիսում: Նա կանչեց իր մոտ Խուպասար անունով մի դիշաղի ու [նրա միջոցով] ձեռք բերեց մոտավորապես հինգ հազար մարդ: Էլ ուրիշ օգնական զորք չուներ: Եթք նրանք իմացան, որ արքան մտել է

Տփղիս ու ամրացել այնտեղ, նրա դեմ չգնացին, այլ սպասում էին այնտեղից ենելուն: Եվ մինչ գործն այսպես ձգձգվում էր, մարդկային փոփոխական բնավորության համաձայն՝ մեծ Կամրագելը դուրս եկավ իշխանների այդ միաբանվածությունից ու գաղտնի կերպով գնաց Գեռրգիի մոտ: Այդ իմանալով՝ Գրիգոր Մաժիստրյանցը ևս գնաց Գեռրգիի մոտ: Նույն ձևով ուրիշներն էլ սկսեցին մեկ առ մեկ քաշվել ու գաղտագողի գնալ թագավորի մոտ: Եվ այնուհետև Գեռրգիի կողմն սկսեց ուժեղանալ, իսկ Դեմնայինը՝ թուլանալ: Չէ՝ որ Գեռրգին իր մոտ գնացողներին մեծ պատվով էր ընդունում ու անշափ պարզեներով ուրախացնում և խոստանում էր նրանց տալ Օքբեյանների ամբողջ տիրույթներն ու հարստությունը:

Գեռրգին, տեսնելով զորքերի ավելանալն ու իր կողմի ուժեղանալը և եղբորորդու ու Իվանեի կողմի թուլանալը, մեծ պատրաստությամբ գնաց նրանց դեմ: Այդ իմանալով՝ Իվանեն իր ամբողջ ունեցվածքը արագ կերպով լցրեց Շամշուլդե բերդը, որտեղ դեռ հին ժամանակներից գտնվում էր նրանց նախնիների գանձատունը՝ լի անբավ հարատությամբ: Գլխավոր մարդկանցից այնտեղ բերդապահներ նշանակեց, իսկ ինքը, վերցնելով զորքն ու իր մոտ եղած մեծ իշխաններին, Դեմնային ևս, գնաց Լոռե ու խիստ ամրացավ: Իր եղբայր Լիպարիտին էլ երկու որդիներով ուղարկեց Ելտկուզ աթաքեկի մոտ՝ նրանից զորք բերելու օգնության: Իսկ Գեռրգի թագավորը եկավ ու Շամշուլդեում նրանց չգտավ. ապա քանինգ օր պաշարելով բերդը, այն գրավեց, կոտորեց պահակազորը, կողոպտեց այնտեղի բազմաթիվ գանձերն ու ամբողջ ունեցվածքը, եկավ բանակ դրեց Լոռեի շուրջը: Եվ քանի որ Իվանեն հրոտից ամսի (103) տասներեքին մտավ Լոռե ու մնաց մինչև մեհեկի ամսի (104) հինգը, այդ պատճառով բերդում գտնվողները նեղվում էին: Եվ ազատներն սկսեցին գիշերը մեկ

առ մեկ պարաններով պարսպից իջնել ու անցնել թագավորի կողմը:

Ապա այն մեծամեծները, որոնք Իվանեի սիրելիներն ու համախոհներն էին եղել, սկսեցին ծածուկ կերպով գրել խրատագրեր ու նետերով զցել բերդը, Իվանեի մոտ՝ համոզման ու հնագանդեցման նպատակով, որովհետև երկյուղ էին կրում Ելտկուզ աթաքեկի գալրուստից:

Դրանց բովանդակությունն այս էր.

«Մեծ Իվանե Օրբեթեցի,

Քաջ և հզոր, անպարտելի,

Որ աշխարհով ես ճենացի,

Տոհմից տիրող թագավորի,

Եկած երկիրն այս գեղանի,

Գտած պատիվ անկշռելի,

Դու՝ պէտ, զլուխ արքունիքի՝

Սպասալարը Գեռզիի:

Թե պէտք է խոսք արժանիքին՝

Կյանքր ու պատիվի են ցանկալի,

Տիրույթներդ են անշափելի,

Վիրքի կեսից ել ավելի:

Թո՞ դ քո երդումն այն առաջին,

Ուխտն ու կտակն արքա Դավթի,

Ե՛կ, ենթարկվիր Գեռզիին՝

Վրաց հզոր թագավորին:

Բե՛ր ու հանձնի՛ թնձան բարի՝

Դեմնա որդուն թագավորի,

Որ եղավ քեզ պատճառ չարի

Ու շատ մարդկանց այս աշխարհի»:

Այս թուղթը տեսնելով՝ Իվանեն այսպիսի պատասխան է գրում ու կապելով նետին պարապից դուրս նետում.

«Ո՛վ ավագներ իմ սիրելի,
Մեծ իշխաններ հզոր, բարի,
Ես՝ Իվանես Օքեթեցի,
Կարդացի զիրը ձեր խրատի:
Համաձայն չեմ այդ խորհրդին,
Որ հանձնել եք դուք այս թղթին:
Մարդը եթե այդպես վարվի,
Կթողնի կարգը տերունի,
Ուխտադրուժ կզտնվի,
Կառնի բաժին ուրացողի,
Միշտ գեհենում կտոշորվի,
Դների շարքը կդասվի:
Ես՝ անցավոր մարդ աշխարհի,
Հանուն օրվա կյանքի պատվի
Չեմ կոխուտի՝ ինչ ուխտեցի,
Դրժի երդումս ահալի,
Այլ կմեռնեմ հանուն գործի,
Գնամ դեպ տերը սիրելի,
Կառնեմ բաժին անպատմելի,
Որ ոչ մեկը էլ չի խի»:
Թեև սրանք գրված էին վրացերեն, սակայն մենք թարգմանեցինք և շարադրեցինք հայերենով:

Իմանալով, որ Իվանեի կամքն անկոտրում է՝ [պաշարողները] մարտը սաստկացրին: Բայց Դեմիան, փոքրոզարար երկյուղ կրելով, զիշերը վեր կացավ, պարսպից կախվեց, իջավ-գնաց հորեղբոր մոտ և ընկնելով նրա ոտքերը՝ խնդրեց միայն իր կյանքը խնայել: Իսկ թագավորը երբ այդ տեսավ, շատ ուրախացավ,

պատվիրակներ ուղարկեց Իվանեի մոտ՝ ասելով. «Ում համար ոք դու մարտնչում էիր ու վրեժինդիր էիր լինում, նա եկել է ինձ մոտ, այժմ ինչու ես պայքարում»: Իվանեն էլ պատասխանում է. «Իրավացի է նա իր այդ առաջարկով, բայց թող ինձ երդվի, ոք չի վնասի ու ժառանգական տիրույթներից չի զրկի, ես կզամ իր մոտ»: Եվ Գեորգին երդվեց ու նրա հետ պայմանագիր կնքեց՝ մեծամեծ պայմաններով: Ուստի Իվանեն, դրանից համարձակություն ստանալով, գնաց թագավորի մոտ: Իսկ թագավորը մեծապես ուրախացած սկզբում նրան ընդունեց շատ սիրով ու փառաբանեց մեծաշուրջ պատվով, մինչև ոք նրա բոլոր որդիներին և ազգատոհմը բուռը հավաքեց և հետո դրժեց իր պայմանն ու ահազդու երդումը: Իվանեին բռնեց ու աչքերը փորեց: Նրան փեսա դարձած Դեմնային էլ բռնեց ու աչքերը հանել տվեց, ամորձատել տվեց, ոք ինչպես ինքն էր ասում, նրանից ժառանգ չսերվի: Իսկ Իվանեի կրտսեր եղբայր Քալվարին՝ Սմբատի որդուն ու եղբորորդի Ինային սպանել տվեց: Նրանց ամբողջ ազգատոհմը՝ և՛ արու մանուկներին, և՛ կանանց բնաջնջել և կորցնել տվեց՝ ոմանց խեղդամահ, ոմանց ջրասույզ, ոմանց գահավեժ անել տալով: Ու այդպիսով նրանց անունը վերացրեց Վրաստանից: Հրամայեց Օրբելյան տոհմի հիշատակը ջնջել իրենց պատմական գրականությունից, ինչպես և եկեղեցիներից: Եվ այս ապստամբության պատմությունը զրել տվեց, բայց ոչ իրական, իրապես եղած պատճառը [ցույց տալով] այլ, ըստ իր կամեցածի, շատ ու շատ զրայրտություններ կցմցելով ու վերագրելով նրանց: Եվ նզովագրով սահմանեց, ոք այլս չհիշեն նրանց անունը ու նրանցից ոչի չթողնեն Վրաց աշխարհում, և այդ չար կտակագիրն էլ դրեց իր գանձատանը: Սա կատարվեց վեց հարյուր քսանվեց թվականին:

Ահա այսպես զրկանքներով, սպանություններով ու հալածանքներով վերջ տրվեց Օրբելյաններին իրենց հայրենիքում: Ճե-

նաց աշխարհից նրանց գալու ժամանակը մինչև այս հաշվում է ավելի քան հազար տարի: Ումանք գրպարտում են նրանց, թե մտածելով անձնական փառքի համար՝ կամեցան թագավորությունը վերցնել իրենց ձեռքը, բայց բոլորովին ստում են ու շան պես հաշում: Մինչդեռ նրանք Դավիթ թագավորի կտակի ու նրան տված երդման ու նրա որդու համար իրենց կյանքը դրեցին, ինչպես վայել է ուխտապահ ու տիրասեր մարդկանց: Եվ աստված գրկողների ու զրկվածների դատը թող տեսնի իր անաշառ դատաստանի ժամանակ [համապատասխան վճռով]:

Իսկ Լիպարիտը՝ Իվանեի եղբայրը, որ իր երկու՝ Ելիկում և Իվանե որդիներով գնացել էր Ելտկուզ աթաբեկի մոտ, ոտքի էր հանել Պարսկաստանը և բազում հեծյալներով՝ թվով շուրջ վարսուն հազար, գալիս էր եղբորն օգնության: Նա, լսելով պատահածի չարագուշակ լուրը, ասում է. «Անմեղ քրիստոնյաներն ի՞նչ մեղք են գործել, որ գնամ, նրանց կորստյան մատնեմ: Մեր թափած արյան պարտքն ո՞ւմ մեջ գտնեմ, որ գնամ նրանց բուռս զցեմ»: Եվ վերադարձավ ու դադար առավ Ելտկուզի մոտ: Դառն կակիծով ու սաստիկ սգով քիչ ժամանակ ապրելով՝ մեռավ օտար աշխարհում:

Նրա Ելիկում որդին մնում է Պարսկաստանում, իսկ Իվանեն գնում է Գանձակի ամիրայի մոտ, մեծ փառքի ու պատվի արժանանալով՝ բնակվում է այնտեղ: Հետո՝ Թամարի տիրապետության օրոք, մեծ սիրաշահումներով ու երդմամբ նրան այնտեղից եւս դարձրին ու իրենց տիրույթներից իրեն վերադարձրին միայն Օրբեթը: Նրանից որդիներ սերվեցին, և այժմ նրանք են Օրբելյանների ներկայացուցիչները [Վրաստանում]: Գեղրգին երբ Օրբելյաններին բնավեր արեց, նրանց տիրույթներն ել բաժան-բաժան արեց. մի մասը տվեց թշնամիներին ու մատնիչներին, մյուս մասն էլ՝ Խուպասար կոչված դփչաղին, որի մասին վերը խոսեցինք:

Նրան հասցրեց Օրբելյանների իշխանական աթոռին՝ նշանակելով Վրաստանի սպասալար: Բայց ինքը՝ Գեորգին [ուրիշ] թագածառանց չուներ, բացի միայն Թամար անունով մի դուստրից, և վախճանվեց վեց հարյուր երեսուներեք թվականին (105): Թագավորությունն ստանձնեց այդ դուստրը: Նրա համար ամուսին բերեցին ոռուսաց թագավորի որդուն, որի անունը Գեորգի էր (106): Սա վերցրեց Դվին քաղաքը և կարձ ապրելուց հետո վախճանվեց: Եվ Թամարը մեկ ուրիշ ամուսին առավ՝ Սոսլան անունով: Նրան մի որդի ծնվեց, որին անվանեցին Գեորգի Լաշա (107): Թամարը [իր հայր] Գեորգի թագավորի մահից հետո մեծ պատվի արժանացրեց հայ-քրիստոնյա Զաքարե իշխանի որդի Սարգսի որդիներին՝ Զաքարեին և Իվանեին՝ նրանց հասցնելով բարձր աստիճանի. Զաքարեին նշանակեց Օրբելյանների տեղում՝ Վրաստանի ամիրսպասալար՝ նրան հանձնելով Օրբելյանների Լոռե տիրույթը, իսկ Իվանե եղբորը դարձրեց մեր Հայոց աշխարհի և Վրաստանի աթաբեկ: Նրանք մեծ ջանքերով մեր Հայոց աշխարհն ազատեցին պարսիկներից, գրավեցին Առանցի մինչև Ներքին Բասեն, Բարկուշատից մինչև Մժնկերտ (108): Վերցրին Կարսը, Վաղարշակերտը (109), Կաղզվանը (110) Սուլք Մարին, Անին, Ամբերդը, Բջնին, Գառնին, Դվին մայրաքաղաքը, Գարդմանը, Գանձակը, Զարեքը, Հերթը, Շամքորը, Շաքին, Պարտավը, Զարաբերդը: Վեց հարյուր վաթսուն թվականին (111) վերցրին նաև Սյունիքը, Որոտնը, Բորոտանը, Բղենը, Բարկուշատը (112): Թեպեսու դա տեղի ունեցավ տարբեր թվականների, սակայն բոլորն էլ նրանք ու իրենց որդիները գրավեցին և մեր երկիրն ազատագրեցին սել-ջուկ-թուրքերի լծից:

Իսկ Ելիկումը, որ մնացել էր Ելտկուզ աթաբեկի արքունիքում, նրա և որդիների՝ Փակավանի ու Խզիլ Ասլանի սերն ու հովանավորությունը վայելելով, հասել էր բարձրագույն աստիճանի

և փառքի, արիական ու պարսկական աշխարհի բոլոր մեծավոր իշխանավորներից էլ վեր: Աթաքեկը նրան տվեց Համիան մեծ քաղաքը (113), նրան իր որդին կոչեց, արքայական ստորագիր հրավարտակով նրա համար սեփական տիրույթներ հաստատեց, նշանակեց ամիրա ու քաղաքազուխ Պարսկաստանի նշանավոր Ռե, Սպահան և Ղազվին քաղաքներին՝ տասներկու տարի: Սուլթանը նրան ստիպում էր իրեն փեսա դառնալ, վերցնել երկրի մեծ մասն ու հրաժարվել քրիստոնեական կրոնից: Իսկ Ելիկումը թեև դեռ հասակով երիտասարդ էր, բայց լի էր խելամտությամբ և տեղի չէր տալիս այդ առաջարկներին ու չէր սասանվում իր հավատքի մեջ: Ուստի և նեղվելով պարսիկներից և երկյուղ կրելով, որ կրոնի համար բռնություն կգործադրեն, նա պատճառաբանումներով խնդրում է տեղ Նախիջևանի գավառում. «Այն երկրամասն ավելի մոտ է Վրաստանին, – ասում է նա, – ինձ համար այնտեղից հեշտ ու հարմար կլինի նախնիներիս ու եղբայրներիս արյան վրեժը լուծել»:

(Ստ. Օրբ., գլ. ԿԶ)

Դրանից խիստ ուրախանալով՝ Զաքարեն ու Իվանեն թախանձագին խնդրում են Եպիսկոպոսին (114) այնտեղից մի հնարքով դուրս բերել տղային: Եվ քանի որ Եպիսկոպոսը շատ լավ ծանոթ էր ու սիրելի աթաքեկի տանը և նրա բոլոր մեծավորներին ու առավել ևս նրանց, որոնք Նախիջևանում էին բնակվում, ուստի գնաց քաղաքին մոտ մի տեղ, գործի դրեց իր բարեկամներին և զանազան միջոցներով գողանալ տվեց Լիպարիտին (115) ու մորը: Նրանց զիշերը պարաներով կախելով իշեցրին պարսպից: [Եպիսկոպոսը, նրանց] վերցնելով ու տանելով Վայոց ձոր՝ մորը պահեց մի ամուր տեղ, իսկ տղային առաջնորդեց Իվանեի մոտ, որը, տեսնելով նրան, լցվեց անասելի խնդրությամբ ու անմիջապես

հայտնեց Թամարին ու Լաշային: Սրանք էլ շատ ուրախացան, որովհետև միշտ վախենում էին նրանց կյանքի համար:

Ապա աթաբեկ Իվանեն շքեղորեն հազցնում է նրան, շատ պատիվների է արժանացնում ու կամենում է փեսա դարձնել իրեն՝ նրան տալով իր դուստր Թամթիին: Իսկ մեծամեծներից մեկը՝ Բուլար անունով, որ աթաբեկի ամբողջ տան գործակալն էր, Լիպարիտին հրապուրիչ խոսքերով խաբելով՝ ծածուկ դարձնում է իրեն փեսա՝ նրան տալով ամենաօրինյալ և գեղեցիկ Ասկա օրիորդին: Դա աթաբեկ Իվանեին մի առ ժամանակ սաստիկ զայրացնում է: Իսկ հետո նա, ըստ թագավորի հրամանի, հաստատուն վավերագրով Լիպարիտին իր ժառանգական տիրույթների դիմաց տալիս է Հրաշկաբերդը՝ շրջակա զավառով և ուրիշ բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Կոտայքում՝ Էլառը և զանազան այլ գյուղեր, Գեղարքունիքում՝ Համասրին և ուրիշները, Կայենում՝ Աղստևը՝ իր եկամուտով: Եվ քանի որ նա էր զիյավորել Սյունյաց ու այլ բերդերի գրավումը, նրան է հանձնում նաև Սյունիք, Որոտն, Բարկուշատ և ուրիշ բերդերը:

Լաշա թագավորն ու Իվանե աթաբեկը Լիպարիտին նշանակում են հիշյալ աշխարհի կուսակալ: Նույնպես և մյուս իշխան ամենաօրինյալ Վասակ Խաչենեցուն՝ բարեպաշտ ու քրիստոսաւեր պարուն Պոռշի հորը, նշանակում են Վայոց ձոր զավառի կուսակալ:

(Ատ. Օքք., գլ. ԿԶ)

Բայց այստեղ ես ձեզ պիտի պատմեմ զարհուրելի անցքերի մասին: Նախքան այս հետապնդվելով թաթարների կողմից՝ Խորեզմի իշխան Զալալեղիինը՝ Խորազմշահի որդին, գալով Պարսկաստան ու անցնելով Ատպատականով, մտնում է մեր Հայոց աշխարհը, որտեղ հասնում է, ավերում, թալանում ու կոտորում է՝

շխնայելով ո՞չ մարդու, ո՞չ էլ անասունի: Ապա գալով Այրարատյան նահանգ, բանակ է դնում այնտեղ: Այդ պատճառով Իվանե աթաքեկը հավաքում է Հայաստանի ու Վրաստանի ռազմական բոլոր ուժերը և կամենում է բախվել նրա հետ պատերազմով: Իրենց համար պետք ու ազդարարիչ են նշանակում ոմն Շալվեի ու Գրիգոր կոչնակին, որոնք, տեսնելով Խորասանի զորքի խիստ նվազ լինելը, մեր զորքերին ազդարարում են՝ հարձակվեցե՞ք: Բայց հաղթանակները տնօրինող աստված խիստ կամենում եր ոչնչացնել անօրինացած ու ամբարտավանացած ժողովրդին, և ազդարարողների այդ ասածը սրանց ականջներում փոխվեց «փախսե՞ք»-ի: Մրանք էլ, այնտեղ թողնելով իրենց կարասիներն ու վրանները, շտապով նետվեցին դեպի ձիերը, փախան ինչպես խելացնորվածներ, առանց զենք ու զրահի, չպատերազմելով գահավիժեցին Գառնու ձորի մեջ քարափի փլվածքից: Բոլորն էլ, այդպես թափվելով կործանվեցին, միայն Իվանե աթաքեկը, տասը մարդով մի կերպ ազատվելով, ընկավ Գեղե ամրոցը:

(Ստ. Օրբ., գլ. ԿԶ)

Գրավեցին (116) նաև Ատրպատականը, Առանը, Հայաստանը, Վրաստանը, Բյուզանդիան՝ մինչև Անկյուրիա, Գանգրա և Զմյուտնիա, Կիլիկիան՝ մինչև Օվկիանոս ծովը և Պոնտոսի ծովը՝ մինչև Տրապիզոն քաղաքը:

(Ստ. Օրբ., գլ. ԿԶ)

Այն օրվանից ի վեր այս տեղերը (117) հաստատվեցին որպես Օրբելյան տոհմի սեփականություն: Իսկ մյուս զորագլուխները հպատակեցրին մնացած գավառները, Ավագին (118) էլ դուրս բերեցին Կայեն բերդից, իրենց բուռը հավաքեցին վրաց թագավորությունը և դարձան բոլորի տեր ու տնօրենը:

Ապա որոշ տարիներ անց այդ թաթարն արշավանքի գնաց՝ հետք վերցրած վրաց զորքը, Ավագին ու Շահանշահին (119), որոնց միացավ և Ելիկումը: Նրանք հարձակվեցին Մարտիրոսաց քաղաքի, այսինքն՝ Նիբրկերտի վրա: Բոլոր կողմերից շուրջը պատճեց ստեղծեցին, ամբողջ բանակներով պաշարելով՝ նստեցին մի տարի ու մի քանի ամիս, բայց չկարողացան այն զրավել:

(Ստ. Օքք., գլ. ԿԶ)

Եվ նրան (120) տվեցին ոսկե փայիզա, որը տախտակ էր՝ վրան զրված աստծու և արքայի անունները: Սա նրանց (121) մեծագույն պարզեց էր: Գրում են յառեխ, այսինքն՝ հրաման, որ մենք սիզել ենք կոչում, և նրան են տալիս Ասլանի կողմից փրով նվաճած հողերն ու Որտոնը՝ իր զավառով, որ գտնվում էր Բաշուի ու իր մեծամեծների բաժնում, Բորոտնա բերդը՝ իր եկամուտ[ներ]ով, այնտեղ սպանված նրա հայր Լիպարիտի համար՝ որպես արյան զին: Սմբատի անունը դուրս է հանում վրացական և ուրիշ հարկային բոլոր մատյաններից...

...Եվ երբ այս այսպես էր կատարվում, բարությունն ասուղ սատանան նախանձ առաջացրեց ու Ավագի ընտանիքին և Վրաստանի մեծամեծներին զրգուց [Սմբատի դեմ]: Քանի որ Ավագը վախճանվել էր վեց հարյուր իննսունինը թվականին (122), նրա ամբողջ տերությունը դեկավարում էր կինը՝ Գոնցան, որը մի դուստր ուներ՝ Խոշաք անունով: Նրանք հավաքվեցին Տփդիսում, Արդունի մոտ: Վերջինս մեծ դանի կողմից նշանակված էր այս ամբողջ աշխարհի վրա վեզիր և պասխաղ, այսինքն՝ ընդհանուր հրամանատար, տնօրինող արքունի հարկերին ու մեծ դիվանին, որը և յոթ հարյուր երեք թվականին (123) մեր ամբողջ երկրում աշխարհագիր կատարեց: [Գոնցան ու իր համախոհները], մեծ կաշառք տալով, Արդունից պահանջեցին կորսայան մատնել

Սմբատին, թույլ չտալ, որ ժառանգի երկիրը, բայց նա համաձայնություն չտվեց:

(Ստ. Օքք., գլ. ԿԶ)

Վրաց թագավորությունը Ռուսուղան անունով մի կնոջ (124) ձեռքում էր: Իսկ Գեորգի Լաշան ուներ Դավիթ անունով մի որդի, որին այս Ռուսուղանը բազում հնարքներով շանում էր կորստյան մատնել, մի անգամ դնում է արկդի մեջ ու ծովասույզ անում, մի անգամ էլ հրամայում է իշխաններին՝ սպանել, բայց նրանք պահում են գետնափոր տանը, երբեմն էլ քշում էր հեռավոր երկիր, որ կորցնեն: Բայց նա այդ բոլոր դեպքերում ազատվում է աստծու խնամակալությամբ: Փախչում-գնում է Մանգու դան մեծ արքայի մոտ: Այնտեղից վերադառնալով՝ Ռուսուղանին մեռած է գտնում ու թագավորում է իր հայրենիքում: Նա իրեն կին է առնում Խավանդ Եսուզան Նախիջևանցուն, թեև մինչ այդ ամուսնացել էր մեկ ուրիշ կնոջ՝ Գոնցայի հետ և նրանից մի զավակ ուներ՝ Դեմետրե անունով: Սմբատն ամենայն հավատարմությամբ ենթարկվում էր նրան և բազմաթիվ ու մեծամեծ երախստիքներ էր ցույց տալիս նրա նկատմամբ Հուլավու դանի ու մեծավորների առջև և առավել ևս՝ մեծ արքունիքում: Իսկ Դավիթ թագավորն էլ այնքան սիրեց նրան, որ իր գլխին հավասար էր համարում ու իր Դեմետրե փոքրիկ տղային հանձնեց նրան որպես որդի: Սմբատը նրա թագավորության թշնամիներին, [հատկապես առավել] հղիացածներին, մոնղոլական արքունիքում սպանել էր տալիս, որովհետև Հուլավուն այնքան լսում էր նրան, որ նա ում ուզում էր՝ սա նրան սպանում էր, ում ուզում էր՝ կյանքն էր բաշխում: Այդ պատճառով էլ բոլոր մարդիկ դողում էին նրանից, և բոլորի հայացքներն ուղղված էին դեպի նա:

Հետո թագավորը Սմբատին կանչեց Տփղիս՝ կամենալով մեծամեծ պարզեներով երախտահատուց լինել նրան: Ուստի հարցրեց. «Ինչպիսի՞ն է քո կամքը, որ քեզ մեծամեծ պարզեներ ընծայեմ, իմ թագավորությունից ինչ որ կամենաս և ինչ որ քեզ դուր գա, չեմ ինայի»: Եվ Սմբատը վեր կացավ, երկրպագեց նրան ու ասաց. «Ո՛վ թագավոր, այն ինչ որ ունենք, քեզանից ու քո նախնիներից է տրված, և սա բավական է մեզ, բայց ես քեզանից մի այլ խնդրանք ունեմ, եթե թույլ կտաս»: Թագավորն ասաց. «Երդվել եմ՝ ինչ որ խնդրես ինձանից, կտամ քեզ»: Սմբատն ասաց. «Վերացրո՞ւ մեզ վերաբերող դաժան հիշատակը, որով քո նախնի Գեորգին գրպարտեց իմ նախնիներին, հրամանագիր գրել տալով՝ նզովք սահմանեց, որ մեզ չթողնեն մեր հայրենիքում: Հրամանագիրն էլ պահեց իր գանձատանը, այն իմ ձեռքը տուր»: Եվ թագավորը զարմանալով նախատինք էր արտահայտում իր պապի հասցեին, թե ինչո՞ւ այսպիսի գորեղ ու հաջողակ մարդկանց հանեց իրենց երկրից: Ու հրամայեց իր սպասավորներին փնտրել ու գտնել հրամանագիրը: Նրանք էլ գնացին, գտան ու շտապով բերեցին: Թագավորը, այն ձեռք առնելով, ոստի կանգնեց ու ասաց. «Ա՛ն, Սմբա՛տ, այն գրությունը, որ դու պահանջում էիր»: Սմբատը վեր կացավ, խոնարհվեց ու ասաց. «Ո՛վ արքա, քանի որ այդքան գթասիրտ վարվեցիր, իմ հանդեպ բարերարությունդ կատարելությամբ ցույց տուր. այդ գրությունը գրված է թագավորի ձեռքով, թագավորի ձեռքով էլ պիտի ջնջվի. հրամայի՛ր քո առջև կրակ վառել և քո ձեռքով նրա մեջ նետիր այդ գրությունը»: Թագավորն անմիջապես հրամայեց, և կրակ վառեցին: Հանելով սուրբ՝ նա կտրատեց թուղթը, զցեց կրակի մեջ ու այրեց, որից Սմբատը շատ ուրախացավ ու մեծապես շնորհակալ եղավ թագավորից: Սրանից հետո ուրիշ բազմաթիվ ու մեծամեծ պարզեներով էլ նրան

պարզեցած թագավորական զգեստներով զգեստավորելով՝
Դավիթ թագավորը նրան այդպէս վերադարձեց իր տունը:

(Ստ. Օք., գլ. ԿԶ)

Սա (125) Վրաստանի թագավոր Դավիթի ուղեկցությամբ
գնաց Խաչենի գավառը, մեծ իշխան Զալափի որդի Աթաբեկի մոտ
և նրա քույր Մինա խաթունին իրեն կին առավ, դեռ իր առաջին
կնոջ կենդանության օրոք: Դա անհարիբ էր քրիստոնեական օ-
րենքին ու չարժանացավ եկեղեցու վարդապետների հավանու-
թյանը: Իր տունը բերելով կնոջ՝ նրանից ունեցավ մի գեղեցիկ
որդի, որին անվանեց Զալալ, և երկու դուստր, որոնցից ավագին
կնության տվեց Իվանե աթաբեկի քեռորդի մեծ Գրիգորի որդի
Հասանի որդի, Խաչենի մեծ ու փառաբանված իշխան Գրիգորին:
Իսկ մյուս դասերը հոր մահից հետո եղայրները հարս տվեցին
վրաց թագավորական տուն՝ որպես կին Դավիթ թագավորի եղ-
բայր Մանվելին՝ Դեմետրէ թագավորի (126) որդուն. Դեմետրէն էլ
յոթ հարյուր տասնինը թվականին մեռած Դավիթ թագավորի որ-
դին էր:

(Ստ. Օք., գլ. ԿԶ)

[Վրաց] Դավիթ թագավորի [մահից] հետո Տարսայիձը նրա
Դեմետրէ որդուն բերում է իր տուն, դաստիարակում՝ հոր պատ-
վիրանի համաձայն: Ապա մեծ ջանքերով օժանդակում է նրան, ո-
րը հոր տեղում Վրաստանի թագավոր է նստում յոթ հարյուր
քսանմեկ թվականին: Իսկ Աբաղյահց հետո, որ մեռավ յոթ հա-
րյուր երեսունմեկ թվականին (127), այս ամբողջ աշխարհի դանք
դարձավ նրա եղբորորդի Թագուտարք, որն իրեն Ահմադ կոչեց:
Նա մտածեց վերացնել քրիստոնեական կրոնը և բոլոր ժողո-
վուրդներին մուսուլման դարձնել: Իր իշխանության երրորդ տա-

բում Մուղանում սպանել տվեց իր մյուս եղբորը՝ Ղոնզրաթային, բյուզանդական կողմի սուլթան Խիաթեղինին և Յազանի երկու որդիներին: Գարնանային եղանակին անհամար զորքերով գնաց Խորասան՝ Արարած դանի որդի Արդունի դեմ, որպեսզի սպանելով վերացներ այդ թագաժառանգին: Եվ նրան գերի բռնելով՝ վերադավ:

Բայց այն զիշեր քրիստոնյաների աստվածը մեծավորների սիրտը դարձրեց Արդունի կողմը, որին նրանք ազատեցին քանտի կապանքներից, թագավոր դարձրին ու նրա բոլոր թշնամիներին սրածելով կոտորեցին: Հետապնդելով սատկեցրին Ահմադին ու իր համախոհներին՝ Հասան Մանզլի շեյխին, Սահիբ-դիվանին, Ալինախին և ուրիշ շատերի: Մեծավորների հետ էր նաև Դեմետրէ թագավորը, որին Արդունը սիրեց ու նրան տվեց ամբողջ Հայոց երկիրը՝ Ավագի, Շահանշահի, Գագեցու, ինչպես նաև Սադուն աթարեկի որդիների տիրույթները: Նա շատ էր սիրում քրիստոնյաներին ու եկեղեցիները և խիստ մեծարեց ու սիրեց նաև Տարսայի-Ճին, որը նույնպես մեծավորների հետ էր:

Ապա Դեմետրէն իր ազատներով վերադարձավ մեծ խնդրությամբ, նրանց հետ կ՝ հայոց ու վրաց մեծամեծները: Երբ հասան Շարուր, թագավորին ընդառաջ գնաց Տարսայիճը և մեծամեծ պատիվներով ու արքայական ընծաներով մեծարեց նրան: Թագավորը Տարսայիճին վերցրեց, իր հետ տարավ Ավագի երկիրը՝ Այրարատ, և բազում թախանձանքներով համոզելով ու ստիպելով՝ նրան աթարեկ նշանակեց իր ամբողջ տերության վրա՝ մինչև Տփղիս, Անի ու Կարս: Իր Դավիթ և Մանվել տղաներին էլ հանձնեց նրա ձեռքը՝ դաստիարակելու ու խնամելու:

Եվ այնուհետև Տարսայիճը Հայոց աշխարհի աթարեկությունն էր կատարում ու մեր Ճնշված ժողովրդի համար շատ ոյուրություններ ու բարեգործություններ արեց: Գնալով Տփղիս՝ [իր

առաջ] բացել տվեց արքունի հնադարանը և կարդաց բոլոր դավթարները: Չէ՞ որ Հայաստանի վանքերի անունները գրված էին դավթարում, քանի որ վանքերը հարկի տակ էին դրված: Ապա նա կանչել տվեց զիսավոր դիվանադպրության քարտուղարին, փոխեց դավթարը. հանեց ավելի քան հարյուր եկտուն վանքերի անունները. հին դավթարը այրեց կրակով ու այդպիսով բոլոր եկեղիներն ազատեց [հարկերից]: Եվ ընդհանրապես Տարասյիձը բոլորի նկատմամբ այնքան բարեգործ ու գթասիրտ գտնվեց, որ Հրազդան գետի մոտի Նետիս գյուղում խաչ կանգնեցրին ու կոչեցին նրա անունով:

(Ստ. Օքք., գլ. ԿԶ)

Այդ ժամանակ Արդուն դանի զորքերը պառակտվեցին. մեծ շփոթություն առաջացավ զիսավոր զորավարների [ու այլ պաշտոնյաների] միջև: Մեծ արյունահեղություն եղավ: Արդունը բռնեց ավագաց ավագ կամ տերանց տեր կոչված Բուղա Չինքասն զորապետին ու սպանեց՝ իր դեմ դավադրություն կազմակերպելու մտադրության պատճառով: Նրա հետ սպանեց նաև նրա բոլոր համախոհներին՝ հազարապետներ Ղազանին (128) և Թուխլուխին, Արուխին (129), Օձանին (130) ու բազմաթիվ ուրիշների: Այդ նույն առիթով Վրաստանի Դեմետրէ թագավորին ևս զրպարտեցին, վրան անհիմն մեղադրություններ բարդելով՝ մահվան դատապարտեցին և տանելով անմեր տեղն սպանեցին Սովկանա մեծ դաշտում (131): Կուր գետի եզրին, յոթ հարյուր երեսունութթվականին (132):

(Ստ. Օքք., գլ. ԿԶ)

Դվինում կրկնված մյուս ժողովը (133) Աբրահամ կաթողիկոսի (134) դեկավարությամբ, որը վերաբերում էր Վրաստանի պիդ

կաթողիկոս Կյուրոնի բաժանվելուն ու Աղվանքի գատվելուն: Ժողովին մասնակցում էր Սյունյաց մետրոպոլիտ սքանչելի Քրիստովը Հայաստանի մյուս [թեմերի] աթոռակալների հետ: Ժողովում լիովին վերացրին քաղկեդոնականների կապն ու շփումը և ահավոր նզովքներով արգելեցին մեզ հարաբերություն ունենալ և հաղորդակցվել նրանց հետ:

...Մյուսը սուրբ հայրերի ժողովն էր Անիում (135), որտեղ քննելով վրաց [Եկեղեցուն] համախոհ գտան Վահան կաթողիկոսին, որը Բաղրից էր: Եվ քանի որ նա սրբապատկեր էր մտցրել հայոց Եկեղեցիները ու պայծառ խաչը վերացրել բոլոր սեղանների վերևից և [դրանք] զարդարել սրբապատկերներով, նզովքներով նրան հեռացրին ու տեղը դրեցին ոմն Ստեփանոսի (136):

Իսկ վերջում սպասալար Զաքարիայի և վրաց արքաքեկ Իվանեի ժամանակներում դարձյալ սուրբ հայրերի՝ Եպիսկոպոսների, վարդապետների ու քահանաների ժողով [գումարվեց] Սևան կղզու մոտի Գետակնում ու միաժամանակ Անիում, որտեղ սաստիկ նզովքներով վերացրին ու հեռացրին վրացական և հունական [Եկեղեցիների] բոլոր համախոհներին:

(Ստ. Օքք., գլ. Կթ)

...Այնուհետև գույժը հասավ արքունիք (137), ուր տագնաապ ու աղաղակ բարձրացավ, այնտեղ գտնվողները զգուշությամբ նախապատրաստված չէին, այլ անտեղյակ էին: Մեծ բյուրապետ Թաշարը դրանից վախեցած գնաց-միացավ Նավոուզին: Դրա հետևանքով Բայտուի կողմնակից զինվորները սրտաբեկվեցին, բոլորն էլ նրան թողեցին ու փախան: Փախավ նաև հիմար Բայտուն ու Եկավ Դուքալի մոտ, որն իր զորքերով այդ ժամանակ նստած էր Նախիջևանի դաշտում՝ Երասխի եզրին: Երբ Դուքալը նրան տեսավ, հոգու արիությամբ ամբողջապես թուլացավ, նրա

հազարապետերն էլ երկմտանքի մեջ ընկան ու բռնելով Բայտուին ետ դարձրին, ուղարկեցին Ղազանի մոտ, իրենք էլ փախան դես ու դեն: Իսկ Դուքալը գնաց-թաքնվեց Վրաստանի ամրոցներում, որին հետո Բեքայը բռնեց ու հանձնեց Խուռումչի ձեռքը, որը և նրան չարաշար կերպով սպանեց... Ահա այսպես [Խութլուշահն ու Նավուղը] առանց պատերազմի ու ճակատամարտի գրավեցին այս ամբողջ աշխարհը և Ղազանին (138) թագավոր նստեցրին իր հայր Արդունի թագավորական տեղում:

Աստվածատյաց այդ Նավուղը երբ եկավ, հրաման արձակեց առհասարակ քանդել բոլոր եկեղեցիները, կողրպտել բոլոր քրիստոնյաներին, թլպատել քահանաներին: Այդ պատճառով քրիստոնյաներին ամենուրեք մեծ վշտեր պատճառեցին ու անտանելի աղեաների ենթարկեցին: Քանդեցին շատ եկեղեցիներ, բազմաթիվ քահանաների խողխողեցին, մեծ թվով քրիստոնյաների կոտորեցին: Իսկ ովքեր կարողացան սրից խուսափել, նրանց էլ ունեցվածքը հափշտակեցին: Գերեվարեցին բազմաթիվ կանանց ու մանուկների: Բաղդադում, Մոսուլում, Համադանում, Թավրիզում, Մարաղայում, բյուզանդական երկրներում ու Միջազգետքում անպատմելի ոճիրներ գործեցին: Իսկ մեր [նահանգի] սահմաններում կողոպտեցին Նախիջևանի եկեղեցիները, գերի վերցրին քահանաներին, բազում չարչարանքների ենթարկեցին, քանդեցին սրբարանների դռները, խորտակեցին սեղանները, բայց զորագլուխները թույլ չտվեցին եկեղեցիները քանդել՝ վախենալով Վրաստանի զորքերից...

...Սակայն, երբ Նավուղը եկավ և եկեղեցիները քանդեց, Դեմետրեի որդի վրաց մանուկ թագավոր Դավիթը իր բոլոր նախարարներով ու ազատագունդ մարդկանցով գնաց Մաթևուլեթ, մտավ այն անառիկ բերդը, որ կոչվում է Մողենախե, այսինքն՝ «ե՛կ և տե՛ս», ու իրեն օգնական դարձնելով մեթևուլներին, փխայ-

ցիներին և շրջակա [մյուս] բոլոր ժողովուրդներին՝ գրավեց Ալանաց գուոքը, որ հնում Դարիալ էր կոչվում, իսկ այժմ՝ Զասանի կիրճ. այնտեղից հեռացրեց թաթարական պահակազորը: Դանապարին է խազարների, ալանների, օսերի, դփչաղների և Բերքայի սերունդների՝ հյուսիսային աշխարհի այս մեծ թագավորության [զորքերի], որտեղ այժմ դան են Թոթամանգուն և Նուխան՝ Բաթուի և Սարթախի թոռները: Այդ խնդրով [Ղազանը] խոստման երդումով շատ պատվիրակներ ուղարկեց Դավթի մոտ, բայց նա չլսեց ու ամրոցից դուրս չեկավ: Դրանից հետո մեծ Խութլուշահը մեծարանակ գործով վեր կացավ-գնաց, մտավ Վրաստան և նստեց Մուխրանի դաշտում, որը թագավորի բերդի մոտ էր: Նա իմացավ, որ բերդն անառիկ ամրությամբ է: Պատվիրակների միջոցով Դավթին բերդից դուրս կանչեց, բայց նա չեկավ, այլ իր կյանքի [ապահովության] համար երաշխիք պահանջող պատանդներ պահանջեց՝ [խոստանալով, որ դրանից հետո] կզա: Ուստի և Խութլուշահը [որպես պատանդ] ուղարկում է իր որդի Շիպաուչիին և ուրիշ երեք մարդու մեծամեծ պատվավորներից: Թագավորը նրանց դնում է հսկողության տակ, իսկ ինքը գալիս է Խութլուշահի մոտ, որին հանդիպում է շատ ընծաներով: Նրա կողմից կլ արժանանում է պատվի, մեծամեծ պարզեների, ինչպես նաև իրեն չդավելու պայման ու խոստում է վերցնում: Այս ամենի համար միջնորդ էր իր կաթողիկոսը: Եվ այսպես Դավիթը վերադարձավ իր բերդը ու ազատ արձակեց պատանդներին: Խութլուշահն էլ խաղաղությամբ վերադարձավ Ըանի դաշտը (139)՝ այնտեղ ձմեռելու:

(Ստ. Օքք., գլ. Հ)

Մեր Հայոց աշխարհի կործանման տարիներին, մի դառն ու դաժան ժամանակ, երբ յոթ հարյուր քառասուներեք թվականն էր

(140), այսինքն տասնինգերորդ հոբելյանին, Քեղաթու դանի
(141) տիրապետության, Հայոց Տէր-Գրիգոր կաթողիկոսի (142) ա-
թոռակալության, Վրաստանի Դավիթ թագավորի (143) զահակա-
լության, այս նահանգում ամենաօրինյալ տոհմից Ելիկումի ու իր
եղբայրների իշխման օրոք, ես՝ բազում մեղքերի պարտական
Տէր-Ստեփանոսս, Սյունյաց եպիսկոպոսս, Տարսայից մեծափառ
իշխանի որդիս, Նորավանքի և Տաթևի վսեմ ու աշխարհահոչակ
տների առաջնորդս, վերին տնօրինությամբ հանդիպելով ան-
պատմելի այս պարզեցն՝ աստվածընկալ սուրբ նշանին, Վրան
տեսա Հիսուսի արյան ներկվածքի հետքը: Դա բերել էին Արցախ
գավառից: Մեջս եռաց [այն ձեռք բերելու] սաստիկ ցանկությունը,
և զնեցի բուն սեփականատերերից՝ Դլենի թռոներից, հինգ հա-
րյուր դահեկանով, միանվագ, չհաշված հավելյալ պարզեցները:

(Ստ. Օքք., գլ. ՀԱ)

Արդ՝ նյութի պատրաստվելուց հետո աշխատությունը շա-
րադրվեց Արդունի որդի մեծ և ինքնակալ արքա Ղազան դանի
աշխարհակալության ժամանակ, երբ ամենուր տիրում էր նետո-
ղաց ազգը, երբ թագավորում էին Վրաստանի Դավիթ թագավորը՝
Դեմետրեի որդին, և Հայաստանի թագավոր Հեթումը՝ Լուսնի որ-
դին (144), իսկ այս նահանգում իշխում էր Տարսայիցի որդի օրի-
նյալ և բարեպաշտ Ելիկումը իր եղբայրներով, աստվածապատիկ
ու հոգևոր տէր ինքնիշխան պատրիարք Գրիգորի և Աղվանքի
կաթողիկոս Տէր-Ստեփանոսի (145) տարիներին, քրիստոնեա-
կան թվականությամբ՝ հազար երկու հարյուր իննսունինը թվա-
կանին, իսկ մեր հայոց թվականությամբ՝ տասնչորս հոբելյանին և
քառասունվեց թվին, հարյուր ութսունվեց օլիմպիադին և երկրորդ
տարում, հիսուն ընդիքտիոնին՝ պակասած թվով, իսկ ըստ արե-
գակի քսանությակ շրջանի մեկ հինգհարյուրյակի՝ երկու հարյուր

տասնչորս թվականին, Նորավանքի այս վսեմ ու փառաբնակ ուխտում, աստվածաբնակ այս տաճարների ու աստվածակիր սուրբ նշանների հովանավորության ներքո:

(Ստ. Օքք., Հիշատ.)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Մամիկոնյանների և Տարոնի համար Ստեփանոս Օքքելյանը նկատի ունի Հովհան Մամիկոնյանի, Բագրատունիների համար՝ Հովհաննես Դրասիանակերտցու, վասպուրականցիների համար՝ Թովմա Արծրունու, Աղվանքի համար՝ Մովսես Կադանկատվացու համապատասխան աշխատությունները:

2. Բնագրի թարգմանիչ Ա. Ա. Աբրահամյանը նշում է, որ տարբեր ձեռագրերում «Բյուզանդիա» անվան փոխարեն կիրառվում են «ի Հռոմեոց», «ի Հռովմայ» տեղանունները, և «Բյուզանդիա» թարգմանությունը պատկանում է իրեն՝ թարգմանչին: Կարծում ենք՝ նման թարգմանությունը տեղին չէ, և պետք է պահպանել բնագրում հիշատակված անվանաձևները, որովհետև «Բյուզանդիա» տեղանունը բնորոշ է պատմական ավելի ուշ ժամանակաշրջանի և ոչ թե Գրիգոր Լուսավորչի գործունեության ժամանակահատվածին:

3. Խոսքը Գրիգոր Լուսավորչի (257-331 թթ.) մասին է:

4. Մասքութքը կամ Մազքութքը մասքութների երկիրն էր, որը գտնվում էր Կասպից ծովի արևմտյան ափին՝ Աղվանքից հյուսիս-արևելք:

5. Հռնաց դուռը ոսպմական կարևոր նշանակություն ունեցած այն կիրճի ամրացված տեղն էր Կասպից ծովի արևմտյան կողմում՝ Դերբենդ քաղաքի մոտակայքում, որ կոչվել է նաև Ճորա պահակ:

6. Փոքր Սյունիք ասելով երբեմն հասկացվել է Արցախը Մեծ Սյունիքին սահմանակից լինելու պատճառով:

7. Ամարասը գյուղաքաղաք էր և գտնվում էր ներկայիս Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքից 10 կմ հյուսիսարևելք: Այստեղ է գտնվում Ամարասի վանական համալիրը, որը, ըստ Փավստոս Բուզանդի, հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը IV դարի սկզբին, իսկ նրա կառուցումը կապված է նաև Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի անվան հետ, որը թաղված է Եկեղեցու արևելյան կողմում: Մեսրոպ Մաշտոցը V դարում Ամարասի վանքում հիմնել է Արցախի առաջին դպրոցը:

8. Խոսքը հայոց Արշակ Բ (350-368 թթ.) թագավորի մասին է, որի օրոք Լուսավորչի տոհմի ներկայացուցիչ Ներսեսը նշանակվեց հայոց պատրիարք:

9. Ներսես Ա Մեծը հայոց կաթողիկոսն է, որը ծնվել է մոտ 329 թվականին, իսկ կաթողիկոսական գահին նստել է 353-373 թվականներին:

10. Մարդպետունիները Արշակունյաց Հայաստանի անվանի նախարարական տոհմերից էին և տիրում էին Վասպուրական նահանգի Մարդաստան գավառին: Նրանք զբաղեցնում էին մարդպետության գործակալությունը, որը լայն իրավասություններ ուներ արքունիքում ու երկրում, և կոչվում էին «Հայր մարդպետ»:

11. Խոսքը Պարսից արքունիքի մասին է:

12. Խազարները կամ խազիրները թյուրքական լեզվախմբին պատկանող վաշկատուն ցեղեր էին և հոներից հետո ներխուժել են Արևելյան Եվրոպա, ապա բնակվել են Արևմտյան Մերձկասպյան երկրամասերում, Սուլակ գետի և ստորին Վոլգայի միջև: 560-ական թթ. ենթարկվել են Թյուրքական խաքանությանը, որի անկուսմից հետո՝ IV դարի երկրորդ կեսին, ստեղծել են Խազարա-

կան խաքանությունը և հաճախ արշավանքներ ձեռնարկել Հարավային Կովկասի ժողովուրդների դեմ:

13. Ասորիքը հնագույն պետություն էր Մերձավոր Արևելքում, որն արևմուտքում սահմանակից էր Միջերկրական ծովին, իսկ արևելքում՝ Միջազգետքին: Ավելի ուշ շրջանում Ասորիքը՝ որպես հռոմեական պրովինցիա, սահմանակից էր Սասանյան Պարսկաստանին:

14. Խորասանը գտնվում էր Սասանյան Պարսկաստանի հյուսիս-արևելքում: Մահմեդականության շրջանում այն ավելի մեծ տարածք էր ընդգրկում, քան այսօր՝ ներառելով որոշ տարածքներ նաև Աֆղանստանից, Թուրքմենստանից, Ուզբեկստանից և Տաջիկստանից:

15. Խորեզմը հնագույն պետություն էր Ամուդարյա գետի ստորին հոսանքում: Այն իր հզորության գագաթնակետին հասավ խորեզմշահերի տիրապետության շրջանում (XI-XIII դդ.):

16. Ույջ (Ոյջ) տեղանունը, ըստ Ղ. Ալիշանի, հետագայում էլ է պահպանվել Սյունիքում «Ուզ» ձևով:

17. Արխիտուն գտնվել է Ծղուկ գավառում և, ըստ Ս. Գ. Բարխուդարյանի, ձևափոխվելով դարձել է Աղուդի:

18. Շաքի անունը պահպանվել է մինչև օրս: Այն Ս. Օրբելյանի հարկացուցակում հիշատակվում է Շաք ձևով Այլախ գավառում:

19. Մորենին, որը ձեռագրերում ներկայանում է նաև Մրենի և Մրեն ձևերով, գտնվում էր Ծղուկ գավառում:

20. Խոսքը Պարսից արքայից արքա Հազկերտ Բ-ի (439-457 թթ.) մասին է, որին հայ, վրաց և աղվանից նախարարները մահվան սպառնալիքի ներքո կեղծ երդում են տալիս հավատափոխ լինելու և մազդեզաց կրոնն ընդունելու մասին:

21. Հայոց մարզպան Վասակ Սյունին (441-451 թթ.) է:

22. Միհրանը պարսից զորավար էր:
23. Վրաց թագավոր Վախրանգ Ա Գորգասալն է, որը ծնվել է մոտ 440 թվականին և մահացել 502 թվականին:
24. Վահանանց պատերազմի (481-484 թթ.) դեկավար Վահան Մամիկոնյանն է՝ Վարդան Մամիկոնյանի եղբորորդին, որը պատմության մեջ հայտնի է Գայլ Վահան անվամբ:
25. Այս դաշտը սկզբնաղբյուրներում հայտնի է նաև Ճարմանայնու անվամբ, որտեղ 482 թ. տեղի ունեցավ Ճակատամարտ պարսից զորքերի և հայ-վրացական միացյալ ուժերի միջև:
26. Շիրակը Մեծ Հայքի Այրարատ նահանգի հյուսիսային գավառներից էր, տարածվում էր Ախուրյան գետի միջին և ստորին հոսանքի ավազանում:
27. Խոսքը Աբրահամ Ա Աղքարթանեցի կաթողիկոսի (607-613 թթ.) օրոք տեղի ունեցած հայ-վրացական դավանաբանական տարածայնությունների մասին է:
28. Խոսքը Դվինի 608 թ. ժողովի մասին է:
29. Վրաց կաթողիկոս Կյուրիխոն Ա-ն է, որն աթոռոկալել է 599-614 կամ 616 թվականներին: Նրա օրոք և ջանքերով վրաց եկեղեցին անջատվեց Հայոց միաբանությունից:
30. Կողոնիան բնակավայր էր Բյուզանդիայում՝ Գայլ գետի վերին հոսանքի ավազանում գտնվող Կողոնիա երկրամասում:
31. Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսն է, որն աթոռակալել է 574-604 թվականներին:
32. Կանգրաց լեռը գտնվում էր Կանգարք գավառում, որը Մեծ Հայքի Գուգարք նահանգի գավառներից էր:
33. Ըստ Ուխտանեսի՝ Ցուրտավը վերանվանվել է Գաջենք:
34. Հաղպատը գտնվում է ՀՀ Լոռու մարզում՝ Ալավերդի քաղաքից 10 կմ հեռավորության վրա: Այստեղ էր գտնվում Հաղպատի միջնադարյան խոշոր վանական համալիրը:

35. Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունին (885-890 թթ.) է:
36. Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին (890-914 թթ.) է:
37. Ափշինն Ատրպատականի արար աստիկանն էր:
38. Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցին է, որն աթոռակալել է 877-897 թվականներին:
39. Վրաց Ատրներսէի իշխանն (888-923 թթ.) է, որին Սմբատ Ա Բագրատունին ճանաչեց որպես վրաց թագավոր:
40. Վասակը Սյունյաց իշխաններից մեկն էր՝ Սահակի եղբայրը:
41. Սմբատ Ա-ի որդի Աշոտ Բ Երկաթն է, որը թագավորել է 914-928 թվականներին:
42. Հովհաննես Ե Դրասիսանակերտցի կաթողիկոսն (898-929 թթ.) է:
43. Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածն է, որը զահակալել է 953-977 թվականներին, սակայն նա ոչ թե Սմբատի, այլ Աբաս Ա-ի (929-953 թթ.) որդին էր:
44. Հայոց կաթողիկոս Վահան Ա Սյունեցին (968-969 թթ.) է:
45. Խոսքը վերաբերում է Հայաստանի կենտրոնական թագավորությանը հակադիր Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադրմանը, որը տեղի ունեցավ 908 թվականին:
46. Հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորն է, զահակալել է 890-914 թվականներին:
47. Հայոց Սմբատ Բ թագավորի (977-990 թթ.) օրոք նրա եղբայր Գուրգենը, որն իշխում էր Լոռիում, ըմբոստացավ Անիի թագավորության դեմ, իսկ նրա որդի Դավիթը (Անհողին) հոչակվեց թագավոր: Այսպես առաջացավ Տաշիր-Զորագետի կամ Լոռու թագավորությունը (982-1113 թթ.), որը Հայաստանում ավատատիրական հարաբերությունների զարգացման արդյունք էր:

48. Կարսի կամ Վանանդի թագավորությունը (963-1065 թթ.) հիմնադրել է հայոց Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977 թթ.) եղբայր Մուշեղ Ա-ն 963 թ.՝ ճանաչելով Անիի թագավորության գերիշխանությունը:

49. Խոսքը Հարժիք, Բերդաներեշի և Ցուրա գյուղերի մասին է:

50. Բերդաներիշին կամ Բերդաներեշին հարկացուցակում նշվում է Սյունյաց Ծղուկ գավառի գյուղերի շարքում:

51. Սյունյաց Ստեփանոս Գ Եպիսկոպոսն է, ձեռնադրվել է Շնորհալու կողմից և այսոռակալել 1168-1216 թվականներին:

52. Վրաց թագավոր Գեորգի Գ-ի (1156-1184 թթ.) դուստր և հաջորդ թագուհի Թամարն է, որը գահակալել է 1184-1213 թվականներին:

53. Գեորգի Լաշան Թամարի և Սոսլանի որդին էր, գահակալել է 1213-1223 թվականներին: Ըստ Հ. Մանանյանի՝ Գեորգի Լաշան մահացել է Բագավանում 1223 թ. հունվարի 18-ին՝ չորեքշաբթի օրը:

54. Զաքարե և Իվանե եղբայրները պետական ու ռազմական նշանավոր գործիչ Սարգիս Զաքարյանի որդիներն էին, գործել են վրաց Թամար թագուհու և Գեորգի Լաշայի օրոք: Սարգիս Զաքարյանը հայոց և վրաց զորքերի ամիրապասալարն էր: Նրա մահից հետո այդ բարձր պաշտոնին նշանակվում է ավագ որդին՝ Զաքարեն (մահացել է 1212 թ.), նրա կրտսեր եղբայր Իվանեն դառնում է վրաց արքունիքի աթաքեկ (մահացել է 1227 թ.):

55. Կայեն գավառը XII-XIII դարերում վարչական միավոր էր Հայաստանում: Վաղ միջնադարում կոչվել է Զորովոր և ընդգրկել է Աղստև գետի միջին հոսանքի շրջանը: Կայենում էր գտնվում նույնանուն բերդը:

56. Այսինքն՝ 1216 թվականին:

57. Ելիկումը Ստեփանոս Օքբեյյան պատմիչի հոր՝ Տարսայիհճի պապն էր: Ապրել է XII դարում: Վրաց Օքբեյյան տոհմից էր, կինը՝ Խաթունը, հայուհի էր: Ելտկուղից տիրույթներ էր ստացել: Որդին էր Լիպարիտը: Նրանից է սերվել Օքբեյյան տոհմը Հայաստանում:

58. Լիպարիտը Ստեփանոս Օքբեյյան պատմիչի պապն էր: Իվանե Զաքարյան աթաքեկից ստացել էր բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում և այլ վայրերում: Դարձավ իշխանաց իշխան: Օքբեյյան տոհմի հիմնադիրն է Հայաստանում: Պատմության ասպարեզում սկսել է հանդես գալ XII դարի վերջին քառորդից:

59. Տեր-Մարգիսը Աղվանքի կաթողիկոսի կողմից ձեռնադրվում և Վայոց ձորի Նորավանքում եպիսկոպոս է նստում 1216 թ.՝ հիմք դնելով այստեղի եպիսկոպոսության: Ստեղծվում է առանձին թեմ:

60. Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսն է, որը կոչվել է նաև Մավրիանցի և աթոռակալել է 1221-1267 թվականներին:

61. Այս դպելը վրացերենից է, որը Ա. Մալսապյանցը բացատրում է «տապեթցի»: Վրացական պաշտոնեական մի տիտղոս էր Տքերի եպիսկոպոսի տիտղոսը:

62. Բնագրում նշված է «Ճաւանդիտէլ»: Այդպես էր կոչվում Ճղոնդիդի եպիսկոպոսը, որը, Դավիթ Շինարարից սկսած, նաև արքունի դիվանադպիրների գլուխն էր:

63. Նշանավոր Վարձիա վանքն է Վրաստանում:

64. Բնագրում նշված է «ծիրամ ծղօր», որը վրացերեն է, և բնագրի թարգմանիչ Ա. Ա. Աբրահամյանը թարգմանել է նաև այս բառը՝ գրելով «վանահայր»:

65. Բնագրում նշված է «մամթավար» (պետք է լինի՝ մամամթավարի), որը վրացերեն է, և թարգմանիչը թարգմանել է նաև այս բառի իմաստը՝ «հայրապետ»:

66. Սուրմարին նույն Սուրբ Մարին է: Սա այն բնակավայրն է, որի հիշյալ անունը, հետագայում աղավաղվելով, կոչվել է Սուրմարու, որն այժմ գտնվում է Թուրքիայի տարածքում:

67. Շեյխը իսլամական վանքի առաջնորդն է: Բառն արաբերեն է և նշանակում է «ծերունի, գիտուն, վանահայր»:

68. Այսինքն՝ 1211 թվականին:

69. Այսինքն՝ Թամար թագուհու (1184-1213 թթ.):

70. Այսինքն՝ 1223 թվականին:

71. Արմազ լեռը գտնվում է Կուր գետի մոտ՝ Վրաստանի հին մայրաքաղաք Մցիւթի դիմաց՝ Թրիլիսից ոչ շատ հեռու:

72. Նկատված է, որ Օրբեր բերդի տեղը Ս. Օրբելյանը ճիշտ չի նշել: Այն գտնվել է ոչ քե Արմազ լեռան վրա, այլ Կուր գետի աջ վտակ Քցիա գետի մոտ: Մի ժամանակ ներառվել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի մեջ:

73. Խունան ամրոցը գտնվելիս է եղել Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի սահմանագլխին: Կոչվել է նաև Մակուրիսցինե, Խանցիինե: Խունան անունով կոչվել է նաև քաղաքը, որը նույն Հունարակերտն է:

74. Ըստ բնագրի թարգմանիչ Ա. Ա. Աբրահամյանի՝ Սպերի ծով ասելով պատմիշը նկատի ունի Սև ծովը, որին հանգում էր Վրաստանի արևմտյան սահմանը:

75. Կ. Շահնազարյանը կարծում է, որ «Քերավուս» անունով պարսկական թագավոր չի եղել:

76. Զինաստանն է, թեև տարածայնություններ կան պատմագրության մեջ այս աշխարհի տեղի հարցի շուրջ:

77. «Քարթիս ցխվրեան» բովանդակում է Վրաստանի պատմությունը: Այս անվանումը բառացիորեն նշանակում է «Վրաց կյանք»:

78. XII դարի պատմիչ Մխիթար Անեցու երկը բաղկացած է եղել 3 պրակից, որոնցից պահպանվել է միայն առաջինը:

79. Այսինքն՝ 1049 թվականին:

80. Վանանդի թագավոր Գագիկն է՝ Աբասի որդին, թագավոր է դարձել 1029 թվականին, բայց Շահնշահ չի կոչվել: Ս. Օրբելյանը այստեղ նրան շփոթել է Բագրատունի Գագիկ Ա-ի հետ (990-1020 թթ.), որը կոչվել է Շահնշահ:

81. Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մոնոմախն (1042-1054 թթ.) էր:

82. Այստեղ նշվում է Կարնո դաշտ, որը գտնվում էր Կարին գավառում, մինչդեռ պետք է լինի՝ Կարուց դաշտ, քանի որ Բասենում էր: Այդ ճակատամարտն էլ տեղի է ունեցել Բասենի դաշտում:

83. Վանանդը Մեծ Հայքի Այրարատ նահանգի հյուսիսային գավառներից էր, կոչվել է նաև Վերին կամ Անփայտ Բասեն: Այստեղ էր գտնվում Կարսի սարահարթը, որով Վանանդը սահմանակից էր Այրարատի Աշոցք և Շիրակ գավառներին:

84. Որդրու գյուղը գտնվում էր Բասենում: Այս գյուղը հիշատակվում է նաև V դարի պատմիչների երկերում:

85. Այսինքն՝ 1064 թվականին:

86. Արշարունյաց գավառը նախկին Երասխաձորն է՝ Այրարատ նահանգի գավառներից մեկը, որը տարածվում էր Արաքսի երկու ափերին: Գավառը պատկանել է Արշակունիներին: Կամսարականների Հայաստան գալով՝ Արշակունիներն այն նվիրեցին Եկվորներին, և Արշավիր Կամսարականի անունով կոչվեց Արշարունիք: VIII դարում՝ արաբական տիրապետության ժամա-

նակաշրջանում, կորցնելով իրենց դերը քաղաքական կյանքում, Կամսարականները Արշարունիքը դրամով վաճառում են Բագրատունիներին:

87. Բաղրը պատմական Հայաստանի Սյունիք նահանգի գավառներից էր, X-XII դարերում ընդարձակվելով՝ ավելի մեծ տարածք է ընդգրկում: Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում Բաղրը բաժանված է երկու մասի՝ արևելյան և արևմտյան, որից արևմտյանը կոչվում էր Բաղր զավառ, իսկ արևելյանը՝ Մյուս Բաղր: Ըստ Տաթևի թեմի հին հարկացուցակի՝ Բաղրն ուներ 93 գյուղ:

88. Ըստ Սեն-Մարտենի՝ Բեթանիա վանքը գտնվում է Մանգլիսի մոտ՝ Թբիլիսիի մոտակայքում, և ծաղկում էր ապրում Թամար թագուհու (1184-1213 թթ.) օրոք:

89. Վրաց Գեղրգի Բ թագավորն է, որն իշխել է 1072-1089 թթ., Բագրատ Դ-ի (1027-1072 թթ.) որդին էր:

90. Վրաց Դավիթ Շինարար թագավորն է (1089-1125 թթ.)՝ Գեղրգի Բ-ի որդին:

91. Իվանեն քաջ Լիպարիտի թոռն էր:

92. Այսինքն՝ 1123 թվականին:

93. Ազարակը գավառակ էր Տաշիրքի տարածքում, երբեմնի Լոռե քաղաքից ոչ շատ հեռու:

94. Դավիթ Շինարարի որդի Դեմետրեն թագավորել է 1125-1154 կամ 1155 և 1155-1156 թվականներին:

95. Այսինքն՝ 1128 թվականին:

96. Դմանիսը գտնվում է ներկայիս Վրաստանի Հանքապետության հարավում՝ Քվեմո Քարթլի երկրամասում, Դմանիսի մունիցիպալիտետի վարչական կենտրոնն է:

97. Գելաթի նշանավոր վանքը գտնվում է ներկայիս Քութայիս քաղաքի մոտ:

98. Այսինքն՝ 1161 թվականին:

99. Այսինքն՝ Խլաթի և Մանազկերտի ամիրայության ամիրային: Շահի Արմենը հիշյալ ամիրայության ամիրաների տիտղոսն էր:

100. Այսինքն՝ 1177 թվականին:

101. Այս Հասանը Գեորգի թագավորի իշխաններից էր: Նա է կառուցել Կայան բերդը Զորափոր գավառում՝ Հաղպատի վանքի մոտ:

102. Անեցի Ապիրատի որդի Գրիգորն է, որը հոր հետ մտել էր վրաց թագավորության ծառայության մեջ:

103. Հրոտից ամիսը հայոց հին տոմարի 12-րդ ամիսն էր և սկսվում էր հուլիսի 7-ից: Այսինքն՝ Իվանեն Լոռե բերդում սկսել է ամրանալ հուլիսի 20-ից:

104. Մեհեկի ամիսը հայոց հին տոմարի 7-րդ ամիսն էր և սկսվում էր փետրվարի 7-ից: Հետևաբար զորքը մնացել է մինչև փետրվարի 12-ը: Ուստի Լոռե բերդում Իվանեի պատսպարվելը տևել է 208 օր:

105. Այսինքն՝ 1184 թվականին:

106. Այս Գեորգին Վլադիմիր-Սուլդայյան Ռուսիայի մեծ իշխան Անդրեյ Բոգոյուրսկու որդին էր: Թամարը նրա հետ ամուսնացած մնաց երկու տարի, որից հետո՝ 1187/1188 թթ., բաժանվեց:

107. Գեորգի Լաշան թագավորել է 1213-1223 թթ.՝ հաջորդելով մորը՝ Թամար թագուհուն:

108. Մծնկերտը բնակավայր էր Այրարատ նահանգի Աբեղյանք գավառում: Գտնվում է Մեծքաց (Սողանլու) լեռների մոտ (այժմ՝ Թուրքիայում):

109. Վաղարշակերտը գտնվել է Այրարատ նահանգի Բագրևանդ գավառում: Ներկայիս Ալաշկերտն է Թուրքիայում:

110. Կաղզվանը նշանավոր ավան էր Այրարատ նահանգի Արշարունիք կամ Երասխաձոր կոչվող գավառում՝ Կարսից մոտ 70 կմ դեպի հարավ-արևմուտք: Ներկայումս Թուրքիայում է:

111. Այսինքն՝ 1211 թվականին:

112. Հիշատակված վերջին չորս տեղանունները Սյունիքի բերդերից են:

113. Սա նույն Համադան քաղաքն է Պարսկաստանում:

114. Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսն էր:

115. Ելիկումի որդի Լիպարիտն է:

116. Խոսքը մոնղոլ-թաթարների մասին է:

117. Խոսքը Վայոց ձոր, Եղեգիք, Երերուն բնակավայրերի ու տարածքների մասին է:

118. Իվանեի որդի Ավագն է, որը փոխարինել է հորը և իշխել 23 տարի: Մահացել է 1250 թվականին:

119. Շահանշահը Զաքարեի որդին էր: Մահացել է 1261 թ. և թաղվել Քոբայրում: Նրա մասին հիշատակում են Այրիվանեցին, Գանձակեցին, Վարդանը և ուրիշներ:

120. Խոսքը Մանգու Ղանի մոտ գտնվող Սմբատ Օրբեյանի մասին է, որը Ելիկումի որդին էր:

121. Այսինքն՝ մոնղոլների:

122. Այսինքն՝ 1250 թվականին:

123. Այսինքն՝ 1254 թվականին:

124. Ուուսուլանը Թամար թագուհու դուստրն էր՝ Գեորգի Լաշայի քույրը, որը թագավորել է 1223-1245 թվականներին:

125. Խոսքը Տարսայիծի մասին է:

126. Վրաստանի Դեմետրե Բ թագավորն է՝ Գեորգի Լաշայի որդի Դավթի որդին, որը գահակալել է 1272-1289 թվականներին:

127. Այսինքն՝ 1282 թվականին:

128. Ղազանը Արուխի ավագ որդին էր:

129. Արուիսը Բաղդադի, ամբողջ Միջագետքի ու Ատրպատականի նահանգապետն էր:

130. Օճանը Ղազանի ախոռապետն էր:

131. Սովլանա դաշտը նույն Սուլանի դաշտն է:

132. Այսինքն՝ 1289 թվականին:

133. Խոսքը Դվինի 608 թվականի ժողովի մասին է:

134. Աբրահամ Ա Աղբարանեցի կաթողիկոսն է, որն աթոռակալել է 607-615 թվականներին:

135. Անիի եկեղեցական այս ժողովը տեղի է ունեցել 969 թվականին:

136. Ստեփանոս Գ Սևանցի հայոց կաթողիկոսն է, որն աթոռակալել է 969-972 թվականներին:

137. Խոսքը մոնղոլական արքունիքի մասին է:

138. Ղազան դանը իշխել է 1295-1304 թվականներին:

139. Ռանի դաշտը տվյալ դեպքում նույն Սուլանի դաշտն է:

140. Այսինքն՝ 1294 թվականը:

141. Քեղաթու դանը հաջորդել է իր եղբայր Արդունին՝ իշխելով 1291-1295 թվականներին:

142. Գրիգոր Է Անավարզեցի հայոց կաթողիկոսն է, որն աթոռակալել է 1293-1307 թվականներին:

143. Վրաստանի թագավոր Դեմետրէ Բ-ի որդի Դավիթն է, որին Քեղաթու դանը Արևելյան Վրաստանի թագավոր էր հաստատել 1293 թվականին:

144. Այսինքն՝ հայոց Լևոն Գ թագավորի (1269-1289 թթ.) որդի Հեթում Բ-ն, որը զահակալել է 1289-1307 թվականներին:

145. Աղվանքի Ստեփանոս Դ կաթողիկոսն է, որը հաջորդեց Ներսէս Բ-ին 1261 թվականից:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵՍԻ²²

Ես մահուան տեառն Անանիայի (1)` կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի տէր Վահան ի Բաղաց (2): Սա դաշնագիր եղի ընդ Վիրս, միաբան դաւանութեամբ, վասն որոյ ժողովեալ յամուրն յԱնի ի քազաւորութեանն Աշոտայ (3) որդոյ Արասայ քազում եպիսկոպոսաց և խաչակրաւն վանականաց, որք ծանուցեալ հաւաստեալ զիերձուած կորստեան մտաց նորա, զի ետ բերել պատկերս՝ վասն նորոգման աղանդրյն քաղկերնի և որոշեալ զնա նստուցանեն յաթոռ Լուսաւորչին զՍտեփանոս (4) հարազատ արեան սրբոյ առնն Աստուծոյ Մաշտոցի, որ ի Սևան:

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 11-12)

(ՌՀԲ; ՇԺԹ) (5): Բազարատ (6) զՓատլիուն (7) [հար և ձերքակալ արար Է նոյն ամի: Սուլտանն ի Քարթ եմուտ:]

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 14)

Ի ՇԼԲ թուին (8) Խողուոն էառ զԿարնոյ քաղաք առանց խոխողման սրոյ. ի նոյն ամի Քուրթն էառ զՔութաթիս և զՍամցիս:

(ՌԶԹ): Ի սուլտանն զնացին Հայոց և Վրաց քազաւորքն Կիւրիկէ և Գաւրզի (9):

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 15)

Ի ՇՀԳ թուին (10) Դաւիթ քազաւոր (11) էառ զՏերունականն: Ի սոյն ամի առնու զԱնի. և ինքն մեռանի: Դեմետր (12) քազաւորէ:

²² Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրութիւն» աշխատության տեղեկությունների գրաքար բնօրինակը տե՛ս Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբելյանի, Եր., 1942:

(ՈՃԻԲ; ՇԿԹ): [Դաւիթ թագաւոր Վրաց Էհար զԷլխազի և զՄըլքն:]

(ՈՃԻԴ; ՇՀԱ): [Դաւիթ թագաւոր Էառ զՏփխիս:]

Արքայն Դեմետր Էհար զԽարասն Գուրն Աթաբակի Նոր բերդին բազում զաւրաւք. և ի սոյն ամի Ապուլէթ և Իւանէ որդին զԴմանիս առին:

(ՈՃԼ; ՇՀԵ): Իվանէ և Սմպատ զԽունան առին:

Ի ՇԶԶ (13) թուականին կալաւ Դեմետրէ զԱպուլէթ և զԻւանէ:

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 17)

[Ի ՈԵ թին (14) մեռանի Դեմետրէ Վրաց թագաւոր. և թագաւորէ որդի նորա Դաւիթ, և յետ Բ ամի և նա վախճանի և առնու զիշխանութիւն նորա եղբայրն Գեորգ (15):]

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 18)

(ՈՃԿԶ; ՈԺԳ): [Ի յայս նշանիս Վրաց թագաւորն Գաւրգի առ զԱնի յունիսի ԺԳ-ն. և ապա յօգոստոս ամսամտին կոտորեալ զՇահի արմէն Էմբաւ զՁՈՒ-ն ի որուն Ան(1)ոյ և այսորիկ ականատես եղեալ մեք՝ ի ԳՈ գրով գերեաց, թո՛ ղ զանկեալ զդիակունսն, որ ծածկէր զանդաստանս մեր: Ապա ի միւս ամին յօգոստոս Ա (16) [Էառ] զԴւին քաղաք և ԿՈ գերեաց և քանդեաց զսուտ աղաթանց(u) նոցա: Ապա զաւրաժողով լեալ սույտանն Խորասանայ եկեալ ի դուռն քաղաքին Անոյ և զարհուրեցն՝ յց զբնակիչս նորա: Յետ Լ աւուր գնաց զաղտազողի աղուէսաբար Էհար զթագաւորն Գաւրգի և զաւար նորա Էառ.և դարձաւ ի տեղի իւր:]

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 18-19)

ՈԻԳ (17) առ Գուրգի վերստին զԱնի և ետ զնայ Իւանէի:

Ի նույն ամի երկպառակեցան զաւրքն Վրաց:

Ի ՈՒԵ (18) թուին խաւարեցաւ արեգակն ի ԺԱ ապրիելի, յառու, կիւրակէի յերկրորդ ժամու՝ մինչ աստեղը երևեցան:

Ի նույն ամի Ափխազաց թագաւորն դարձո՞յց զԱնի առ իւր տեառն]:

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 19)

Եւ հանդէա միմեանց եղեալ զիւրաքանչիւր...., որ յիւրաքանչիւր ժամանակսն իրագործեցան... սակաւուք զթերին, միայն ամբողջ պահել զիամա[ր զրո]յն և զկարգ հայրապետացն, և զվերշին թագաւորութիւն Հայոց՝ որ ի Կիլիկիա, ի ներսի գաւառսն և զՎրացն արտաքո[յ] միայն զանուանսն նաև համառոտիւք, զգործս և զբանս, որ իւրաքանչիւր ժամանակս եղեն՝ բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ:

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 21)

Ի ՈԽԵ թւին (19) Մեծ սպարապետքն Վրաց, որդիք Սարգսի՝ Զաքարէ և Իւանէ առին տաճկէն զամուրսն զԱնբերդ և զԲջնի:

(ՌՃՂԹ; ՈԽԶ): Մոլորեցան Վիրք և Հոռոմք և խանզարեցաւ զատիկն, իսկ Հայք անշփորթ մնացին:

(ՌՄ; ՈԽԷ/: Զաքարէ էառ ի տաճկէն զԱնի:

(ՌՄԳ; ՈԾ): Մեծ սպարապետքն Հայոց և Վրաց Իւանէ և Զաքարէ առին զԴւին և կոտորեցին. և թափեցին զաշխ[արհ]ս Հայոց ի տաճկէն ի Կուռ գետոյ մինչև յԵրասխ և Բարգուշատայ մինչ ի Մժնկերս:

(ՌՄԸ; ՈԾԵ): Յայսմ ամի Զաքարէ ի տաճկէն զԿարս: Եւ Աւազն Իւանէի որդի եղաւ: Ի զալ ամին մեռաւ Թամարն և որդին Լաշա Գաւրզին (20) թագաւորեաց Վրաց:

(Ժամ. Ստ. Օրբ., Էջ 22)

ՈԾԲ թուին (21) Զարա Սարա Բահատուրն եկն ի Տփխեաց տ[ու]նն, զՍախոսէ աւերեաց և դարձաւ. զարն Վրաց ի յետ գնաց և ի Կոռմանա կոտորեաց և դարձոյց:

(Ժամ. Ստ. Օք., էջ 22-23)

(ՈՄԺԸ; ՈԿԵ) Դաւիթ թագաւորս ծնաւ, որդի Լաշային:

Ի ՈԿԱ թուին (22) Մէլիք Աշրափն մեռաւ և Մէլիք Աւհաղինն նստաւ: Յայսմ ամի Զաքարէ և Իւանէ կամեցան միաբանել զՃայս և զՎիրս, և ժողովը արարին ի Գետակն:

ՈԿԹ թուին (23) ազնոր աստղն ելաւ, և թաթարն վրացին կոտորեաց ի Կոռմանա ջրին:

Ի ՈՀԳ թուին (24) Լաշա Գորգի մեռաւ և Ոուսադան թագավորեաց (25):

(Ժամ. Ստ. Օք., էջ 23)

Ել Զալալաղին սուլտանն Խորասանայ, որդի Խորազմա շահի, և եկն փախստեամբ յերեսաց նետողաց և անց ընդ Պարսիկս ի Մէջերկրայ՝ աւերելով և կոտորելով: Եվ զերկիրս Հայոց հրդեհէ սրով՝ քակեաց և աւերեաց. և հանդիպեալ զարացն մերոց՝ Հայոց և Վրաց ի գաւառն Այրարատու, արձանանայր ընդդէմ նոցին: Եւ էր մեծ զօրավարն Իւանէ ժողովեալ զօրս ԿՌ: Բայց բարկութիւն աստուծոյ զարթուցեալ էր ի վերայ սոցա վասն անօրէն և անուղղայ գնացից իւրոց: Առանց յաղթութեան և պատերազմի փախստական լինէին ընդ քաղաքագեղն Գառնոյ. և առանց ձեռին և սրոյ իբր յաներ[և]ոյթ հրեշտակէ ուժգին հողմով հարեալք զահավէծ եղեն ընդ մեծ խրամն. և առհասարակ սատակեցան. և սակաւ ի նոցանէ թէ ապրեցան. և ինքն մազապուրծ եղեալ անկանի յամուրն Քեղէ: Իսկ Խորազմիքն անտէրունչ գտեալ՝ զաշխարհս յանխնայ կոլսեաց և աւերեաց:

(Ժամ. Ստ. Օք., էջ 23-24)

(ՈՒՄԽԹ; ՈՂԶ): Ռուսադանն մեռաւ: Փոլատն ի Վրաց տունն էրեկ:

(Ժամ. Ստ. Օքք., Էջ 25)

(ՈՒՄԾ; ՈՂԷ): Դաւիթ թագաւորն (26) բազում հնարիւք զերծեալ ի ձեռաց Ռուսադանին եկն ի դանէն և նստաւ յաթոռն:

(ՈՒՄԾԱ; ՈՂՀ): Կրկին անգամ յաւարի յարութենալն պիղծ զաշխարհս մեր. և զՍամցիս աւերեցին. և Պապայն փախեաւ:

(ՈՒՄԿԱ; ՉՀ): Դաւիթ թագաւորն յԱփխազք մտաւ. և Դեմետրէ ելաւ:

(ՈՒՄԿԴ; ՉԺԱ): Խուլի և Բալախայն փախան և զԴաւիթ թագաւորն ի դուրս էրեր պարոն Ումէկն:

(ՈՒՄԿԹ; ՉԺԶ): Մեռաւ սուրբ կաթողիկոսն Կոստանդինի (27) ծառզարդար աւրն. և պարոն Ումէկն մեռաւ ի Տփխիս:

(Ժամ. Ստ. Օքք., Էջ 26)

(ՈՒՄՀԲ; ՉԺԹ): Յայս նշանիս դան Ապադայն զնաց բազում զալրաւք ի Խորասան. և կոռուեալ ընդ փարախին՝ կոստորէ. և դառնայ մեծ յաղթութեամբ: Խոյն ամի վճարեցան Բ թագաւորքն՝ Հեթում Նայոց և Դաւիթ Վրաց:

(ՈՒՄՀԴ; ՉԻԱ): Դեմետրէ (28) թագաւորէ Վրաց:

(ՈՒՄՀԵ; ՉԻԲ): Եկն Արդունն և կրկին զՎիրս և զՀայս աշխարհազիր առնէ. և Տրապիզոնա թագաւորն տայ զդուստրն ի կնութիւն զԴիտովիան:

(ՈՒՄՀԻ; ՉԻԴ): Աստանաւր Սիրամոնն յԱփխազ մտաւ և բազում աւեր էած:

(Ժամ. Ստ. Օքք., Էջ 27)

(ՌՄՁԵ; ԶԼԲ): Մեռաւ աթարակ Սադունն, կինն Թամարն, լայր թագաւորն Դեմետրէ: Յարեց ամիս մեռաւ և Ալաղին սահիպն: Վճարի Շահաբաղինն ի Տփիսիս:

(Ժամ. Ստ. Օք., Էջ 28)

Յայս թուականիս եղեն զրոյցը յոլովքն զարմանալիք, զոր ի կարձոյ յիշատակեցից: Ի ԶԼԱ (29) թուին մինչ պակասեաց Ապաղայն, եկն ժառանգ թագաւորութեան իւրոյ որդին իւր Արդունն, որ սնեալ էր ի Խորասան, աննման տեսակաւ և վայելչագեղ հասակաւ, յոյժ ծանակ և սիրող քրիստոնէից աւրինացա... և ոչ կարաց առնուլ զտախտ արքայութեան, այլ բռնացեալ ի վերայ ոմն ի նոյն ցեղէ Թագուղար անուն. յափշտակեալ յինքն զտէրութիւնն, նստի յաթոռն ի Դուռն դաշտին, որ այժմ Ալատաղ կոչեն յԱրտազ զաւարի (30). և էր ի ծածուկ Մահմետի աւրինաւքն, որ և բացահայտեաց զդենն և անուանեաց զինքն Ահմատ, և զբնիկ անուն տէրութեան, որ էր դան, եղ սուլթան և այսպէս բարձրացան զլուխը ամենայն տաճկաց. և ժողովէին առ նա ամենայն զազրատեսիլ և զարշագործ պաշտանեայքն Մահմետի, շեյխըն և ջվալախիքն. և նորա թողեալ զսահման թագաւորութեան և զինքն զաւրացն և աշխարհացն, միայն զցայգ և զցերեկ կայր և զրոսնոյր ի մէջ նոցին. և ի միում աւուր՝ դոյզն-ինչ պատճառաւ սպանանէ զեպիսկոպոսն Բերկրոյ (31), այլ ևս քահանահիք, որք կարգեցան ի դասս սրբոցն. և երկրորդ ամին սկիզբն արարեալ արքայաշէն տան բնակութեան ի դաշտին Դնա, մերձ ի սուրբ Վիրապն ի վերայ ոստոյ միոյ. և եղ հրամայատար և գործակալ զմեծ և արքայաշուք իշխանն Հայոց զՏարսայիհն, եղբայր Սմալատայ արքային. և ինքն կեցեալ ամս Գ խորհեր ի մտին բառնալ և ջնջել ամենսին զաւանդ քրիստոնէից և զամենեսեան բռնի ածել ի հաւատս իւր.և միապետել զամենայն ազգս և զայս խորհրդածութեամբ չար գործակ-

ցացն, Սահիպ դիւանին և Հասամանկլի շեխոյն. և ոչ կարէր յայտնել, զի կասկածէր յորդոյ Ապարանին, յԱրդունէն, ապա ի ձմեռնային ժամանակն ըմբռնեալ զեղբայրն իւր զմեծ գոռոզն Ղաւնդրաթէն և սպանանէ և այլ բազումս, ընդ որս և զերկու որդիքն մեծ կողմնակալին Վրաց՝ Ցագանին կորուսանեն. և զսուլտանն Հռոմաց զինիաթադինն:

(Ժամ. Ստ. Օք., Էջ 28-29)

(ՈՒԶԹ; ՉԼԶ): Զմեռն խիստ եղև, մեռաւ մեծ իշխանք ի Խաչէն՝ Արաբակ որդի Զալալին և Հասան թռոն Դափին (Դաւիթին?) և ապա մեռաւ Ճարն ի Տիխիս:

(ՈՒՂ; ՉԼԷ): Մեծ կոտորումն եղև ի Բուղայէն. և սպանին տարապարտ զթագաւորն Վրաց Դեմետր ի դաշտին Մուղանայ՝ յեզրն Կուր գետոյն:

(Ժամ. Ստ. Օք., Էջ 30)

Աստանաւր ի սոյն աւուրս եղև սուզ մեծ և անհնարին ամենայն քրիստոնէից, զի զթագաւորն Վրաց Դեմետրէ վասն խնամութեան նորին, որ տուեալ էր զդուստրն իւր ի հարսնութիւն Բուղային, կալան և եղին ի բանդի, որպէս թէ համախոն էր նորին. և յետ բազում հարձուփորձութեանց և ամենսիմբ անպարտ լինելոյն, սպանանեն զնա ի նոյն դաշտի և ջնջեն խսպառ զթագաւորութիւն [նորա] և տան զորդին նորա զԴաւիթ ի պանդանդ և զայլսն փարատեալ ցրուեն այսր և անդր: Բայց նախ քան զայս թերեալ էին ի դուրս զՎախրանգ որդի թագաւորին Սոնաց զԱւրի և փեսայցուցեալ թեռ իւրոյ, Արդունն տա թագաւորութիւն Դեմետրէի նմա և յուղարկէ ի յարքունական զահն ի Տիխիս և կացուցանէ նմա և ամենայն զաւրացն Վրաց սպասալար զորդի Սաղոնին զԽութլու Բուղայն:

(Ժամ. Ստ. Օք., Էջ 31)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անանիա Ա Սոկացի կաթողիկոսն է, որն աթոռակալել է 949-968 թվականներին:
2. Վահան Ա Սյունեցի կաթողիկոսն է, որն աթոռակալել է 968-969 թվականներին:
3. Աբաս Ա-ի (928-953 թթ.) որդի Աշոտ Ողորմածն է, որը գահակալել է 953-977 թվականներին:
4. Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսն է, որն աթոռակալել է 969-972 թվականներին:
5. Փակագծերում մեծատառերով նշված է Օքելյանի հիշատակած տարեթիվը՝ ըստ Քրիստոսի ծննդի, ապա, ըստ Հայկական թվականության, տվյալ տեղեկության առիթով:
6. Վրաց Բազարատ Դ թագավորն է, որն իշխել է 1027-1072 թվականներին:
7. Գանձակում հաստատված քրդական ծագմամբ Շաղադյան տոհմի ներկայացուցիչ Փատլուն ամիրան (985-1031 թթ.) է:
8. Այսինքն՝ 1083 թվականին:
9. Վրաց թագավոր Գեորգի Բ-ն է, որը գահակալել է 1072-1089 թվականներին:
10. Այսինքն՝ 1024 թվականին:
11. Դավիթ Դ Շինարար թագավորն է, որը գահակալել է 1089-1125 թվականներին:
12. Դավիթ Դ Շինարարի որդի և հաջորդ Դեմետրե Ա-ն է, որը գահակալել է 1125-1154/1155 և 1154/1155-1156 թվականներին:
13. Այսինքն՝ 1137 թվականին:
14. Այսինքն՝ 1156 թվականին:

15. Գեղրգի Գ-ն է՝ Դեմետրե Ա-ի որդին, որը թագավորել է 1156-1184 թվականներին:
16. Սամվել Անեցու մոտ հիշատակվում է օգոստոսի ԻԱ, այսինքն՝ 21-ին:
17. Այսինքն՝ 1174 թվականին:
18. Այսինքն՝ 1176 թվականին:
19. Այսինքն՝ 1186 թվականին:
20. Լաշա Գեղրգին թագավորել է 1213-1223 թվականներին:
21. Այսինքն՝ 1203 թվականին:
22. Այսինքն՝ 1212 թվականին:
23. Այսինքն՝ 1220 թվականին:
24. Այսինքն՝ 1224 թվականին:
25. Թամար թագուհու դուստր Ռուսուդանը զահակալել է Եղբորից՝ Լաշա Գեղրգիից հետո՝ 1223-1245 թվականներին:
26. Լաշա Գեղրգիի որդի Դավիթն է, որը թագավորել է 1247-1270 թվականներին:
27. Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաքերդցին է, որն աթոռակալել է 1221-1267 թվականներին:
28. Վրաց թագավոր Դեմետրե Բ-ն է, որը, ըստ Ս. Օրբելյանի, թագավոր հոչակվեց Հայոց ԶԻԱ, այսինքն՝ 1272 թվականին:
29. Այսինքն՝ 1282 թվականին:
30. Արտազը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից էր: Այստեղով էր անցնում Արտաշատ-Էլքրատան ճանապարհը: Արտազում են տեղի ունեցել Ավարայրի (451 թ.) և Ներսեհապատի (483 թ.) ճակատամարտերը:
31. Բերկրի քաղաքը գտնվում էր Վասպուրական նահանգի Առբերանի գավառում: Այն Գնունիների նախարարական կալվածքն էր: Այժմ գյուղաքաղաք է Թուրքիայի Վան նահանգում Մուրադին անվամբ:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

- Աբաղս – 258
Աբս – 18-19, 24, 27, 29, 80,
100, 141, 157, 158, 161, 162,
277
Աբդիշն – 153
Աբիհած – 21, 28
Աբուլ-Ասվար – 216
Աբուլեթ – 162-164, 241
Աբուտարևի ամիրա – 21
Աբրահամ – 259
Աբրահամյան – 264, 270, 271
Աբրայիմ, Սուլիմանի որդին
– 72
Աբրիսոն – 233
Աբրե – 110
Աբմի – 140
Ազմայէլ – 140
Ազուկ – 140
Աթարակ – 278, 283
Աթարեկ – 187, 195, 251, 257
Աթանաս – 173
Ալադինս – 282
Ալանք – 212
Ալինախ – 258
Ալիշան – 179, 181, 182, 183,
266
Ալիփ-Արսլան, սուլթան – 92
Ալիֆասան – 160
Ալիփասլան – 160, 166, 182
Ահարոն – 16, 60
Ահմադ – 257, 258
Ահմատ – 282
Աղբուղ – 101
Աղբուղա, Գագի տերը – 192
Աղբուղա, Վահրամի որդին –
120
Աղեքսանդր – 140
Աճառյան Հ. – 204, 205
Այլթանա խաթուն – 286
Այծեամն – 82
Այրիվանեցի – 148, 149, 150,
272
Անանիա – 19, 80, 86, 98, 133,
178, 277, 284
Անդրեաս – 110
Անդրեաս, վանական – 161
Անդրեյ – 274
Անդրեաս – 141
Անդրիկ – 140
Անդրոնիկոս – 50
Անհողին Դավիթ – 44, 64, 76,
181, 217, 268
Աշոտ Գ Ողորմած – 80, 85,
98, 133-134, 158, 161, 179,
217, 226, 268-269, 277, 284
Աշոտ Ա Բագրատունի – 38,
131, 156-157, 178, 225, 268
Աշոտ Բ Երկար – 18, 39, 89,
92, 157, 178, 225, 268
Աշոտ Բագրատունի – 14, 37
Աշոտ Դ – 158, 180, 206-207,
216

- Աշոտ, կյուրապաղատ – 156
 Աշոտ, մարզպան – 29
 Աշոտ, պատրիկ – 155, 178
 Աշոտ, Շապուհի որդին – 17,
 225, 226
 Աշոտ, Ատրներսեհի որդին –
 156
 Աշոտ, Հովհաննեսի որդին –
 161
 (Եղբայրը) – 46, 59, 61, 62, 75,
 76
 Աշոտ, Մբատի Եղբայր Շա-
 պուհի որդին – 46
 Աշոտ, Սյունյաց իշխան –
 225
 Աշոտ, Սյունյաց մեծ իշխան
 – 228
 Աշոտ, Վասակի որդին – 156
 Աշոտ, Վրաց թագավոր 155,
 156
 Աշուշա, բղեջիս – 152, 176,
 222
 Աշրափ Մելիք, Մելիք Աշ-
 րափ – 121, 280
 Աշրափ, սուլթան – 102
 Ապաղա – 201
 Ապաղայ – 281
 Ապաղան – 283
 Ապիրատ – 159, 166, 274,
 Ապլղարիփ – 181
 Ապլսուար – 81, 83, 144, 162,
 163
 Ապիսազք – 211
 Ապուլեք – 82, 144, 278
 Ապուլէք – 278
 Ապուհարպ – 33
 Ապուսահլի – 206
 Ապուսուար (Աբու-լ-Ասվար)
 ամիրա – 76
 Ապուսուար, պարսից ամի-
 րա – 64, 65
 Ապուքապ – 64
 Առաքելյան Վ. – 39, 136, 139
 Առոն – 65
 Ասար նուին – 191
 Ասլան – 254
 Ասլան շահ – 182
 Ասլան, Մահմուդի որդին –
 166,
 Ասողիկ – 4, 11-16, 18, 20-28,
 32, 34-36, 39, 57, 59, 131
 Ասպագուր – 140
 Ասուլու – 190
 Ասփա – 252
 Ասրանազ – 79, 152
 Ավագ – 104, 115, 118, 119,
 120, 123, 125, 126, 151, 173,
 196, 204, 253, 254, 258, 275
 Ատրատին – 73
 Ատրներսեհ – 17, 88, 92-93
 140, 156, 178, 222, 225, 227,
 268
 Արադամուր – 197
 Արբակ – 140, 158
 Արբոկ – 140
 Արդարմոս – 233

- Արդուխ – 69, 72
 Արիստակես – 5, 95, 132
 Արիստակես Լաստիվերցի –
 45
 Արծրունիներ – 39, 43, 227
 Արծրունյաց ազգ, տոհմ,
 տուն – 95, 131, 178, 182,
 198, 225, 268
 Արդուն – 127, 130, 146, 147,
 185, 254, 258, 259, 261, 263,
 276, 281, 282, 283
 Արշակ – 91, 265
 Արշակունի – 35, 138, 277
 Արշակունիներ – 11, 40, 137,
 272
 Արշավիր Կամսարական –
 40, 272
 Արշիլ – 140, 142
 Արտակ – 140
 Արտաշ – 12, 36
 Արտաշիսյան, արքայատոհմ
 – 36
 Արտաշիր – 12
 Արտավազդ – 11, 35
 Արուխ – 259, 275, 276
 Արքեղայոս Ավագ – 132
 Ափխազք (ափխազք) – 142,
 281
 Ափշին ամիրա – 16, 225, 227,
 268, 288
 Ափրիտոնազոն – 140
 Բաբելաս – 141
 Բաբելացիներ – 61, 155
 Բարիկ, Սյունյաց տեր – 221
 Բարիկ, Վասակի որդին –
 222
 Բարկեն – 223
 Բագրատ – 45, 57, 59, 60,
 76, 140, 143, 149, 156, 158
 159-162 180, 181, 209, 277, 284
 Բագրատ – 43, 76, 160, 180,
 216, 273
 Բագրատունիներ – 227, 241,
 264
 Բագրատունյաց, ազգ, ար-
 քայատոհմ, տոհմ – 4, 38,
 91, 98, 168, 174, 178
 Բագրատունյաց թագավոր-
 ներ – 178
 Բաթու – 120, 122-123, 127,
 138-139, 175, 262
 Բալախա – 281, 196
 Բալախայն – 281
 Բակուր, վրաց թագավոր –
 140
 Բակուրան – 28
 Բահրապ – 140
 Բաղրամ – 60
 Բայտու – 260
 Բաչու գորավար – 122, 196
 Բաշու, նոյին, նուխն – 122,
 173, 191-194
 Բառաբա – 155
 Բարդու – 232
 Բարթիկյան Հ. – 77

- Բարթուղիմէոս – 141
 Բարխուդարյան Ս. – 266
 Բարսեղ – 98, 143, 155, 161,
 166
 Բարտոն – 140
 Բդեշխ Գուգարացոց – 11
 Բել – 18
 Բենալ – 188
 Բենիամին – 152
 Բեր – 18-19
 Բերքա – 262
 Բերքե – 197
 Բերայ – 261
 Բել – 141
 Բորա, խան – 196
 Բուլղար – 54, 60
 Բուղա – 37, 118,
 Բուղա Չինքսան – 259
 – 283
 Բուպաք, իշխան – 229-230,
 252
 Բուրթել – 241
 Բրեհիմ, զորավար – 160
 Բրոսսե – 42

 Գաբրիել – 29, 33
 Գագիկ, Արասի որդի,
 Վանանդի թագավոր –
 272
 Գագիկ Բ, հայոց թագավոր
 59
 Գագիկ, թագավոր, Արծրու –
 նի - 92

 Գագիկ – 17, 25, 27, 29, 35, 39,
 42-45, 54, 57, 63, 75-76, 89,
 92, 131, 143, 158, 160, 178-
 179, 206, 216, 225, 228, 236,
 272
 Գազան – 222
 Գամեր – 79
 Գամիր – 152
 Գանձակեցի Կիրակոս – 131,
 132, 133, 138, 139, 151, 183,
 275,
 Գաւրզի – 277, 278, 279
 Գեղրգ, ափխազաց
 (ափխազաց) Բագարատ
 թագավորի որդին – 70
 Գեղրգ, Շաղատի վարդա-
 պետ – 47, 222
 Գեղրգեոս – 99
 Գեղրզի Ա – 59, 75, 149, 180,
 216
 Գեղրզի Բ, Դավիթ Դ Շինա-
 բարի հայրը – 181, 273,
 284,
 Գեղրզի Գ, Դեմետրեի որդին
 – 8, 86, 92, 94, 134, 147,
 150, 182, 218, 269, 285,
 Գեղրզի Լաշա – 94, 104, 106,
 107, 120, 123, 136, 138, 140,
 147, 150, 151, 183, 204
 Գեղրզի Ա – 147, 183, 228,
 231, 285
 Գեղրզի, Թամար թագուհու
 առաջին ամուսինը – 250

- Գևորգ – 166
 Գևորգ Բ Գառնեցի -178, 268
 Գևորգ, Դավթի եղբայրը –
 164
 Գևորգ – Դեմետրեի որդի –
 89
 Գևորգ, կաթողիկոս - 225
 Գևորգ, Հաղպատի եպիսկո-
 պոս – 89
 Գևորգյան Վ. – 59, 60
 Գէորգ – 278
 Գէորգի, վրաց թագավոր –
 144
 Գիգան – 110
 Գիորգի, Լաշա – 104, 120,
 123, 140
 Գիորգի (Գիորգի Ա) – 76
 Գիորգի, Գիորգի Լաշայի թո-
 ռը – 89, 115
 Գիուզ – 123, 127
 Գնունի – 43, 132
 Գնունիներ – 285
 Գոնցա – 254, 255
 Գոնցա, թագուհի – 129, 130
 Գոնցա, Ավագի կինը – 126
 Գոշ, տե՛ս Մխիթար Գոշ –
 112, 136, 137
 Գորամ, Բագարատի եղբայ-
 րը – 156
 Գորամ, վրաց թագավոր –
 156
 Գորգի, թագաւորն վրաց –
 208, 215
 Գորգի, ափիսազաց (ափիսա-
 զաց) թագավոր, Բագա-
 րատի որդին – 158
 Գորգի, Դավիթ Շինարարի
 որդին, Դեմետրեի եղբայ-
 րը – 163
 Գորգի, վրաց թագավոր –
 159, 208, 209,
 Գորգի, Լաշա – 280
 Գորգունե (Գեորգի Գ) – 88
 Գուշար – 79
 Գուրգ ասլան – 140, 278
 Գուրգեն – 24, 25, 29, 33, 34,
 45, 50, 57, 67, 89, 133-134,
 143, 156-158, 161, 179, 181,
 225-226, 228, 288
 Գուրգի – 140, 278
 Գուրջի Բաղրամին – 135
 Գրիգոր Ակներցի – 8, 187
 Գրիգոր Ապիրատյան – 244
 Գրիգոր Աստվածաբան – 173
 Գրիգոր Դերենիկ – 131
 Գրիգոր Լուսավորիչ – 110,
 132, 265,
 Գրիգոր Մագիստրոս – 60
 Գրիգոր Մաժիստրյանց - 245
 Գրիգոր Մամիկոնյան - 38
 Գրիգոր Նյուսացի – 173
 Գրիգոր Պահլավունի – 29
 Գրիգոր Գ, Պահլավունի –
 218
 Գրիգոր – 8, 15, 19, 29, 38, 60,
 65, 74-75, 81, 95-96, 105,

- 110, 112, 126, 131-132, 141, 155, 158-159, 161, 171, 173, 175, 187, 210, 213, 218, 220, 232, 244-245, 253, 257, 263-265, 274, 276-277
- Գրիգորիս – 83-84, 98, 136, 213, 228
- Դալասանոս – 26,
- Դաշէ – 140
- Դավիթ – 5-8, 21-22, 24-29, 33, 35, 42, 44, 50, 57, 62-65, 68, 70-72, 76-78, 86, 92-93, 99-100, 119-120, 122-125, 128-130, 134, 138, 140, 144, 147, 149-151, 155-156, 159, 161-164, 173-175, 180-182, 187, 194-195, 199, 203-205, 216-218, 228, 236, 240-241, 244, 249, 255, 257-258, 261-263, 268, 270, 273, 276, 284-285
- Դատոս – 39
- Դաւիթ – 80, 83, 140, 144, 146, 207-213, 277-278, 280-281, 283
- Դեկ – 212
- Դեմետր – 25, 87, 212, 277-278, 283
- Դեմետրէ – 5, 8-9, 71-74, 78, 86, 100, 105, 129, 134, 147, 150, 155, 163-164, 182, 218, 240-241, 255, 257-259, 263, 273, 275-276, 284-285
- Դեմետրէ – 81, 83, 140, 142-144, 147, 213, 278, 281-283
- Դեմետրիս – 99
- Դեմնա – 242-248
- Դեմնէ – 167, 168
- Դեսում – 146
- Դերենիկ – 98, 131
- Դերուկ – 140
- Դիուդ – 121
- Դիտոփալ – 281
- Դին – 263
- Դուքալ – 260, 261
- Եզրէս – 232
- Եզրիս – 140
- Ելթայ – 141
- Ելիկում – 228, 229, 231, 241, 249-251, 254, 263, 270, 275
- Ելղան – 174
- Ելոգս – 110
- Ելտկուզ – 165, 230, 232-243, 245-246, 249-250, 270
- Եղիայ – 141
- Եղիսա – 79
- Եսվաղեն, թագավոր – 136
- Երեմյան Ս. – 60, 76-77
- Երվանդ – 12
- Եւանէ Զաքարյան – 215
- Զաքարէ – 5, 89, 98-104, 109, 111-112, 115-126, 130, 135,

- 139, 151, 168-170, 174, 183-
 184, 187, 192, 219, 228,
 230-231, 250-251, 269, 275
Զաքարէ – 145-146, 279-280
Զաքարի, **Զաքարյան** – 215
Զաքարիա – 50-51, 89-100,
 110, 120, 144, 260
Զաքարյաններ – 5, 181, 202
Զոյատ – 63, 208

Էսս – 110
Էլսազի – 278
Էլլազի – 144
Էմին Մ. – 35

Ըռատ իշխան – 48
Ըռուզնատին սուլտան – 215
Ըռուսուդան – 140, 145

Թագուղար – 196, 200-201,
 282
Թաղեռս – 121
Թալիլէ – 105
Թամար – 5, 7, 9, 89-90, 93-94,
 98, 100, 102, 104, 109-110,
 134, 136, 140, 144-145, 147,
 150-151, 168-169, 182, 202,
 215, 219, 228, 230, 249-250,
 252, 269, 271, 274-275, 279,
 282, 285
Թամթա – 102, 120-121
Թամթի – 252
Թաշար – 260

Թարշիշ – 152
Թարսիս – 79
Թափեջան – 141
Թափօր – 141
Թենալ – 146, 191
Թեռդոս – 203
Թեռդորս – 13, 36, 154, 177
Թևտաս – 24, 158
Թեռդոս – 140
Թիրաս – 152
Թիրքաշ – 164
Թոբել – 152
Թոթամանգու – 262
Թոռնիկ – 21-22, 26, 28, 42
Թովմա – 37, 95, 131, 264
Թոտորէ – 71
Թորա – 127
Թորգոմ – 79, 158, 232
Թութոու – 191
Թուխլուս – 259

Ժան պատրիկ (Պոռտեզ) – 26

Իբն ալ-Աթիր – 77
Իլարիոն – 62
Իսավուր – 174
Իսմայիլ – 15
Իսրայէլ Ա Ոթմսեցի – 178
Իվան – 229
Իվանէ – 5, 55-56, 89, 99-102,
 104, 106-109, 112-113, 115,
 119, 123, 126, 138, 151,
 162-164, 166-168, 170-171,

- 173, 183, 187, 195, 204,
 219, 228-232, 240-254, 257,
 269-270, 273-275, 278
Իվանէ – 278
Իվերացիներ – 11
Իրոն – 110
Իւանէ – 82, 144-145, 278-279,
 280
Լաշա Գալրգի – 279
Լեխթիմաններ – 234
Լեկան – 232
Լևոն – 18, 39, 89, 92, 100, 134,
 140, 155, 158, 169, 178, 183,
 215, 219, 263, 276
Լիբիացիներ – 11
Լիպարիտ – 54-55, 60, 63, 65-
 67, 76-77, 159-160, 167,
 208, 210-211, 228-232, 236-
 239, 241-243, 245, 249, 251-
 252, 254, 270, 273, 275
Լիպարիտյան տոհմ – 60, 76
Լուսավորչի տոհմ – 132, 165

Խազի ամիրա – 68-70, 211-
 212
Խազիրներ – 16, 133, 227, 236,
 265
Խաթուն – 270
Խալք իրն Եզիս – 14
Խաչատուր – 109
Խաչիկ – 40, 80, 181
Խավանդ Եսուզան – 255

Խարասն Գուրն Աթարակ –
 278
Խզիլ Ասլան – 250
Խիաթաղին – 192, 204, 283
Խիաթեղդին – 258
Խողուռ – 277
Խոճազիզ – 146
Խոշաք – 125, 130, 254
Խոշիսա, նուին – 191
Խոջա, նուին – 191
Խոռ – 157
Խոսրով – 15, 36-37, 79- 80,
 87, 90-91, 105, 123, 133,
 136, 138, 143, 177, 217, 222,
 232-233
Խոսրովանուշ, թագուհի –
 133
Խորազմշահ – 252
Խորիշահ – 170
Խութեռու, նուին – 191
Խութելու Բուղայ – 283, 283
Խութելուշահ – 261, 262
Խուլ – 196-197
Խուլի – 281
Խունան – 106, 136, 144, 163,
 182, 191, 232, 271, 278
Խուպասար – 244, 249
Խուռումչի – 191, 261
Խուրթ – 164

Ծաղ – 142
Ծոնդէացիք – 142
Ծովիզ – 63, 166, 208-209

- Կալաժան – 81
 Կախեցիներ – 234
 Կաղ – 73
 Կամեն – 65
 Կամենաս – 59
 Կամէնն – 210
 Կամսարական տոհմ – 38,
 Կամսարականներ – 40,
 223,273
 Կամրագել – 244,245
 Կամրակելանք – 31
 Կայեն – 62, 145, 146, 157, 228,
 253, 269
 Կայենեցի Հասան – 244
 Կանիկլ – 34
 Կատրամիդե, թագուհի – 61
 Կարմիան – 69,211
 Կարմրակել – 207,208
 Կիս – 154
 Կիտիմ – 152
 Կիրակոս – 6, 95, 131-133,
 151, 172, 183, 204
 Կիրիկէ – 143
 Կիրիոն – 141
 Կյորիկէ Ա – 77
 Կյուռ-Ծան (Հովհան Ա
 Չմշկիկ կայսր) – 20, 22, 40
 Կյուրիկէ – 98, 100, 133-134,
 160-162
 Կյուրիկյաններ – 203
 Կյուրիոն – 12, 95-97, 131,
 147, 154, 177, 224-225, 267
 Կյուրոն – 153-154, 225, 260
- Կոկասոս – 158
 Կոմիանոս – 53
 Կոմնենոս – 236
 Կոստանդին – 17, 39, 59, 89,
 93, 121, 138, 149, 180, 211,
 217, 270, 272, 281, 285
 Կովկաս – 232
 Կորա Քուրդ – 228
 Կորյոն – 132, 176
 Կուարամ – 178
 Կուզ – 102
 Կուրամ – 178
- Հաբեթ – 152
 Հազդ – 223, 248
 Հազկերտ – 152, 166
 Հակոբ Ճահկեցի – 228
 Համադոլա – 121
 Համազասպ – 140
 Համամ – 227
 Համիդոլա – 187
 Հայկ – 11, 140, 141, 152, 227,
 232
 Հայկազուն - 170
 Հայկազուններ - 170
 Հայկական (Մակեդոնական)
 արքայատոհմ – 180
 Հայոս – 158
 Հայք, հայեր – 158
 Հասամանկլի – 283
 Հասան – 88, 126-127, 130,
 157, 170, 228, 244, 257, 258,
 174, 283

- Հավան – 152
 Հարությունյան Բ. – 181, 186,
 202-203
 Հարուն ալ-Խաչիդ – 37-38
 Հաւոքքադան – 145
 Հեթում – 175, 199, 205, 263,
 276
 Հերակլես – 11
 Հերիաթավներ - 234
 Հերոս – 140, 232
 Հիսուս – 162, 176, 263
 Հմայակ – 152, 161, 176
 Հոդքաղա խան – 185
 Հռոմ – 279
 Հռոմներ – 45, 48-49, 52, 55-
 65, 66, 129, 185, 264
 Հովակիմ – 221
 Հովհան – 40, 226, 264, 296
 Հովհաննես – 20, 33, 45, 57-
 59, 61, 64-65, 67, 92, 95, 98-
 99, 128, 131, 134, 135, 158-
 159, 161, 179, 216, 225, 241,
 264, 268, 287
 Հովսեփ – 98, 121
 Հովրամ – 51
 Հուլա – 195, 231
 Հուլավու Էլդան – 128, 130,
 173-175, 196, 199, 204, 255
 Հուլավու դան (խան) – 196-
 199, 204
 Հուստիանոս – 110
 Հուստինիանոս – 14, 37-38
 Հոհիփսիմե – 12
- Հրահատ Կամսարական –
 223
 Հրաշեայ – 141
 Ղազան, հազարապետ – 159,
 161-163, 275-276
 Ղազար Փարպեցի – 147, 176,
 179
 Ղատա – 196
 Ղարա Բուղա – 189
 Ղարասնթուր աթապէկ - 144
 Ղանդրաթէ – 283
 Ղիաթաղին – 120, 122-123
 Ղոնգրաթա – 258
- Ճար – 283
 Ճենառուլք – 235
 Ճենքակուր, թազավոր – 233
 Ճօւլին – 213-214
- Մազբութներ – 186
 Մալխասյանց Ս. – 270
 Մակար – 141
 Մահմեդ – 13, 69
 Մահմետ – 282
 Մահմուդ – 166
 Մահմուտ – 73
 Մամիկոնյան – 7, 38, 87, 90-
 91, 148, 156, 161, 167
 Մամիկոնյաններ – 220, 264,
 267
 Մամլան ամիրա – 27-29, 32,
 75, 207-208, 216

- Մանաճիր – 12
 Մանանդյան Հ. – 269
 Մանավազյան տոհմ – 180,
 218
 Մանգու, դան (խան) – 127,
 173, 255, 275
 Մանիլ, կայսր – 83-84
 Մանկու – 185, 196-199, 204
 Մանուչե – 71-72, 87, 91-92,
 162
 Մանուչէ – 81, 213
 Մանվել – 257-258
 Մաշղոց, Սևանցի – 80
 Մաշտոց – 132, 157, 205, 265,
 277
 Մավրիանցի – 270
 Մավրիկիոս – 37, 90
 Մատթեոս – 5, 61
 Մարիամ, թագուհի – 59
 Մարկոս – 126
 Մաքենացիներ – 105, 136
 Մեղա – 152
 Մեթեուլներ – 234
 Մելեր – 176
 Մելեք սուլթան – 69-70, 73,
 77
 Մելեքն – 211
 Մելիք – 77, 102, 107, 120-121,
 143-144, 149, 168
 Մելիքշահ – 183
 Մելիք-Շահ սուլթան – 161,
 170
 Մեմնա Զաղելի – 229, 244
- Մեսրոպ – 12, 95, 105, 132,
 152, 155, 199, 205, 265,
 Մեփեռվներ – 234
 Մէլիք – 144, 280
 Մըլքն – 278
 Մժեծ – 79, 96, 132
 Միհր – 142
 Միհրան – 12, 140, 141, 147,
 148, 153, 158, 214, 222-223,
 267
 Միհրանն, որդի ամիր Պրեհ-
 մին – 214
 Միհրդատ – 11, 79, 140
 Միղան – 196-197
 Մինա խաթուն – 257
 Միրան – 73-74, 76, 78
 Միրդատ – 140
 Միքայել –
 67,77,105,135,159,180
 Միքայէլ – 141
 Միմթար – 5-7, 87, 108, 136-
 137, 140, 148-150, 158, 279,
 235, 272
 Մոավիա, խալիֆա – 37
 Մոնոմախ – 66, 143, 149, 180,
 217, 272
 Մոսոք – 152
 Մովքացիներ – 51
 Մովկան – 140, 232, 259, 276
 Մովսէս – 4,12-13,35,-36, 85,
 95-96, 131-133, 138, 142,
 147, 153-154, 176, 178, 224-
 225, 264, 167

- Մուավիա – 15
 Մուլար – 188
 Մուշեղ – 21, 41, 57, 87, 90-91,
 141, 269
 Մուսե խալիֆա – 16, 38, 286
 Մրաջուներ – 234
 Մրգան – 28, 73, 140, 149
 Մրուան – 34, 142
 Մօնոմախ – 210-211
- Յակոբ, վրաց եպիսկոպոս –
 141
 Յակով – 83
 Յոբ – 141
 Յոհան – 80, 141
 Յոհաննէս – 141, 144
 Յովհաննէս – 206, 208, 209
 Յունան, վրաց եպիսկոպոս –
 141
 Յուսէփ, կաթողիկոսն
 Աղուանից – 210
 Յուսուփ – 142, 181
 Յուսուֆ – 16-18, 39
- Նարուգողնոտոր – 11
 Նավորիզ – 260-261
 Ներքովթ – 141
 Նեստոր – 224
 Ներշապուհ – 153
 Ներսէհ – 17, 88-89, 92-93,
 155-157, 223
 Ներսէս – 154, 177, 221-222,
 265, 276
- Ներսէս – 185, 213-214
 Նիկեփոր Ծովիկ – 63, 77
 Նիկիտ – 53
 Նիկիփոր – 40, 81
 Նիկիփոր Ծովիկ – 208-209
 Նուխա – 262
 Նուխաքավուն – 197
 Նունէ – 12, 141, 148, 161
- Շադայյան – 180
 Շադրայյաններ – 91
 Շաթ – 105
 Շալվէ – 101, 113, 192, 204,
 253
 Շահաբադին – 282
 Շահանշահ Զաքարյան –
 145, 151, 230, 254, 258, 275
 Շահ-Արմեն – 101
 Շահի Արմեն – 73-74, 78, 88,
 164-165, 243, 274
 Շահնազարյան Կ. – 271
 Շահնշահ – 90, 99, 104, 115,
 126, 130, 136, 139, 157, 166,
 169, 174, 236, 272
- Շահրմէնն – 214
 Շամիրամ – 115
 Շապուհ – 12, 17, 39, 95, 131,
 153, 221, 225
 Շատատ – 165
 Շարա – 79
 Շերբարոք – 109
 Շիպառչի – 262
 Շնորհավոր – 175

- Շուշանիկ – 141, 148-149
- Ոչոպնտր – 29, 33,
- Որմիզդ – 15
- Ուխտանես – 97, 131, 132-
133, 147, 224, 267
- Ումար – 155
- Ումեկ Ասիլ – 128
- Ումէկ – 281
- Ուռուզուքան – 187, 202
- Ուփլու – 140
- Չաղատա – 125, 190-191
- Չամշան Մ. – 204
- Չանկզ դան – 185, 202
- Չարմաղան – 146, 172
- Չիմագ – 141
- Չինզիզ խան – 190
- Չորթման – 183
- Չորմա խան – 191, 194, 201
- Չորտուանել – 26, 42
- Պահլավիկ – 227
- Պահլավունի – 182, 218
- Պապայն – 281
- Պապաք – 171
- Պետրոս – 59, 97, 143, 149,
153-154, 159, 180, 208, 217,
224-225
- Պլու Զաքարե – 187, 192
- Պողոս – 162
- Պոռշ – 252
- Պրեհիմն – 213
- Զարա Սարա Բահատուր –
280
- Զալալ – 126, 130, 137, 146,
183, 204, 257, 280, 283
- Զալալադին – 104, 112, 121,
145, 280
- Զալալեղդին – 252
- Զալալտայք, նուին – 147
- Զաղա – 176
- Զաղել Մեմնա – 152, 229
- Զափ – 143, 145
- Զափայ – 143, 145
- Զաֆար ալ-Մանսուր – 59
- Զեբու խաքան – 105, 133
- Զեկան – 146
- Զոջիկ – 22, 29, 59
- Զուանքեր – 140
- Զուանչեր – 140
- Ռավադյան – 69
- Ռատ – 63, 67, 208, 210-213
- Ռոմանոս – 76
- Ռովդա – 28
- Ռուզուդան – 115, 118-120
- Ռուզուքան – 187, 202
- Ռուսադան – 280-281
- Ռուսուդան – 285
- Սարադա Բահատուր – 107
- Սարայ – 142
- Սաղա – 69
- Սաղոն – 283

- Սաղուն – 109, 165, 182, 198-
 199, 258, 282
 Սալահաղնի – 102
 Սալատին – 21
 Սալրուխ – 83
 Սալթուի – 144
 Սահակ – 14-15, 132, 135,
 153, 158, 161, 228, 268
 Սահակդուխտ – 158
 Սահիբ-դիվան - 258
 Սահինյան – 137
 Սահիպ – 283
 Սաղա – 188, 211
 Սաղուն – 109
 Սաճ – 16-17
 Սամուել Անեցի – 79-81, 83-
 84
 Սամուէլ, վրաց եպիսկոպոս
 – 79, 141
 Սամվել Անեցի -5
 Սային խան - 197
 Սարգիս – 65, 100-101, 155,
 159, 165, 199, 204, 208, 217,
 228-229, 231, 269, 270
 Սարթախ – 138-139, 262
 Սարկավագ – 134-135, 191
 Սարմատացիներ – 18, 20, 20
 Սարմատը – 79
 Սափատայ – 145
 Սերենու – 4, 37, 137
 Սենեքերիմ – 59, 76, 156, 178,
 183, 209
 Սեն-Մարտեն – 273
- Սերոբե Վ. Ազըլեան – 217
 Սևորդիք – 157
 Սիկիլացիք – 79
 Սիմեոն – 141
 Սիմովն – 53
 Սիսական – 85, 227
 Սիրամուն – 201
 Մըբատ – 8,12,15-18, 21, 24-
 25, 29, 38-39, 41-42, 46, 57,
 75-76, 88-89, 92, 142, 149,
 154, 156, 164, 177, 179, 181,
 206, 216-217, 225-228, 241-
 243, 248, 254-256, 268, 275,
 287
 Մըպատ – 278, 282
 Սողոմոն – 105
 Սոնիթա – 191
 Սոսլան – 93, 104, 168-169,
 250, 269
 Սորոմատը – 79
 Սուլտան – 142,144, 277
 Սուրմակ, վրաց թագավոր –
 140
 Սուրման – 73,78,161,213,
 Ստեփանոս – 4, 8-9, 11, 35-
 80, 128, 135, 138, 140, 157,
 179, 182-183, 220, 228, 260,
 263-264, 269-270, 275-277,
 284
 Ստրաբոն – 137
 Վազգեն – 148, 161

- Վախթանգ – 7, 147, 149, 153,
 158, 170, 179, 222, 267, 283
 Վախթանկ – 140, 142
 Վահան – 7, 80-81, 98, 153,
 157, 176, 178, 179, 222-223,
 226, 228, 237, 260, 268, 277,
 284
 Վահանիկ – 80
 Վահրամ – 29, 87, 89-91, 100-
 101, 115, 119-120, 150, 168,
 170-171, 182, 187, 188, 192,
 194, 202, 203, 215, 286
 Վաղարշակ – 35, 84-85
 Վանական – 172-173, 183,
 188
 Վաչէ – 140
 Վասակ – 65, 73, 153, 156,
 159, 176, 210, 222-223, 225-
 228, 252, 266, 268
 Վասիլ – 21-23, 26, 33-34, 41-
 42, 52-53, 57-59, 62-64, 75,
 159, 180, 208-209, 216
 Վարդ – 22-24, 49, 58,
 Վարդան – 7, 148, 152-176,
 185, 267 ,275
 Վարդանանք – 176
 Վարդանյան Վ. – 35, 39
 Վարզարաքար – 140
 Վարչիլ – 140
 Վիրո – 105, 136
 Վուտանիատ – 67
 Վրաց ազգ, վրացիներ,
 վրաստանցիք – 12, 18, 20,
 27, 33, 52, 65, 68, 73-74, 95-
 97, 100, 102-103, 105-106,
 109-110, 122, 124, 126, 129,
 152, 155, 157, 160-161, 173,
 175, 179, 193, 195, 223-224,
 233, 241, 243
 Վրաց Բազրատունիներ – 42,
 77, 217
 Վրթանես Քերթող – 96, 132-
 133
 Վրոյ – 140

 Տավութ – 72
 Տարիանիատ – 211
 Տարսայիծ – 257-259, 263,
 275, 282
 Տափար – 69, 73, 211
 Տեր-Աբրահամ – 224
 Տեր-Գրիգոր – 263
 Տեր-Գրիգորիս – 228
 Տեր-Դավիթ – 228
 Տեր-Կոստանդին – 229
 Տեր-Մարգիս – 228-229, 231,
 270
 Տեր-Մտելիանոս – 263, 275
 Տեր-Վահան – 228
 Տիգրան – 11, 35
 Տիմոք – 155
 Տիօժէն – 211
 Տլփինաս – 23
 Տողուզ – 174
 Տողրուլ – 77
 Տոնդուս աղա, իշխան – 119

- Տութար – 196
 Տուղրիլ – 60, 66, 77, 160, 211,
 215
 Տուղրիլ-Բեկ – 160, 181
 Տուպայիս – 69
 Տրդատ – 12, 36, 123, 138, 140,

 Դիմայթ – 79

 Յազան – 258, 283

 Փալտուն – 25, 144
 Փահլավան – 250
 Փանոս Ուջեցի – 222
 Փառնաջում – 140
 Փառնավազ – 235
 Փառնավազյաններ – 147
 Փառնաւազ, վրաց թագավոր
 – 140-141
 Փավստոս Բուգանդ – 147,
 265
 Փատլիուն – 277
 Փարման – 142
 Փարսման – 140
 Փենեհես – 110
 Փերս 50, 59
 Փերսի – 29
 Փոլատ – 281
 Փոկաս – 22-24, 80
- Քարթամ – 140
 Քարթոս – 152, 158, 232-234
 Քեղաթու – 263, 276
 Քեքավուս Խոսրով – 232, 271
 Քիթբուլա – 129
 Քուրդ իշխան – 108-109
 Քուրթ – 277
 Քվե Խոսրով – 233
 Քրիստափոր – 260
 Քրիստոս – 79-81, 83-84, 96,
 110, 140, 143, 153-154, 158,
 168, 176, 200, 210, 213,
 230-231, 237-239, 252, 284
- Օբեթլա – 16
 Օզորա – 191
 Օձան – 259, 276
 Օմար – 13, 178
 Օրբելյան – 8-9, 60, 76, 138,
 182-183, 220, 228, 231, 242-
 243, 248-250, 253, 270-271,
 275, 277, 284
 Օրբելյաններ – 164, 167, 235-
 236, 240, 245,
 Օրբելը – 234
 Օրբուլներ – 234
- Ֆռանզը – 212
 Ֆրանզ – 186
- Քավթար – 167, 248
 Քարդոս – 140
 Քարէպարազ – 140

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ազարակ – 230, 240, 243-244, 273
Աղբբեցան – 135
Ալամանք – 146
Ալամուղ – 174
Ալայիա, կղզի – 129
Ալանացրուռ – 212
Ալաշկերտ – 43, 58, 150, 274
Ալավերդի, քաղաք – 202, 267
Ալատաղ – 282
Ալեքսանդրիա – 110
Ալիս, գետ – 149
Ալհարակ, լեռ – 100
Ախըլցիս – 185
Ախալ քաղաք, Ախալքալաք – 67, 139, 160
Ախթալա քաղաք - 138
Ախթալայի վանք - 219
Ախլաթ – 43, 92, 134
Ախուրյան, գետ – 12, 86, 267
Ածղոր, կաթողիկոսարան – 130, 139
Ականա – 126, 138
Ակսիդոմս, վանք – 20
Աղբերիս, ազարակ – 230
Աղթամար – 154, 177
Աղի, ծով – 197, 200-201, 204,
Աղիովիտ, գավառ – 11, 35,
43, 150, 216
Աղյուսուռ – 222, 266
Աղձնիք, նահանգ – 93

Աղորի, գավառ – 59
Աղուանք – 146, 210
Աղուղի – 266
Աղսուև – 35, 44, 136, 252, 268
Աղվանից աշխարհ, երկիր – 14, 95, 106, 113, 131, 133
Աղվանք – 6, 11, 13-14, 16, 24, 77, 95, 98, 105-106, 115, 127-128, 135-136, 152, 156, 172-173, 178, 181, 188, 220-221, 223-224, 226, 233, 260, 263-264, 270-271, 276
Աղրի, ձոր – 29
Ամարաս – 221, 265
Ամբերդ – 101, 182, 250
Ամիթ – 28
Ամնիկ, թերակղզի – 39
Ամուղարյա – 139, 266
Այգեձոր, գյուղ – 203,
Այլախ, գավառ – 266
Այսրկովկաս – 137
Այրարատ, գավառ, նահանգ – 15, 35, 37-38, 40, 43, 58, 84, 86, 91-92, 101, 137, 158, 177, 179, 181-183, 186, 206-207, 258, 267, 272, 274-275, 280
Այրարատյան, գավառ, նահանգ – 91, 153
Անակոք, բերդ – 142, 149
Անակոփիա, ամրոց – 149
Անահտական, գավառ – 58
Անբերդ – 168, 182, 179

- Անի, քաղաք – 5, 46, 54, 56,
 59, 63, 65, 70-74, 76, 80, 84,
 86-88, 91-92, 98, 101, 150-
 152, 158-163, 165, 166, 168-
 169, 174, 182, 206, 208-209,
 213-214, 229, 239-240, 243,
 250, 239, 240, 243, 250, 258,
 260, 268-269, 276-279
 Անկյուրիա – 253
 Անձիս բերդ, գավառ – 72,
 77, 218
 Անտալիա – 146
 Անտաք – 175
 Անտիոք – 184
 Անփայտ Բասեն – 58, 181,
 272
 Աշոցք – 84, 158, 272
 Ապահովնեաց, գավառ – 22,
 29, 207, 216
 Ապահովնիք, գավառ – 23, 41,
 42, 62, 75, 147, 159, 180,
 216, 218
 Առան – 128, 236, 250, 253,
 280
 Առաքելոց, եկեղեցի – 228
 Առբերանի, գավառ – 11, 35,
 36, 285
 Առեստ, ավան – 36
 Ասորիք – 15, 37, 42, 221, 266
 Ասպահան – 146
 Ավարայր – 285
 Ավզկան, քաղաք – 71
 Ատրպատական, նահանգ –
 4, 11, 16, 28, 38, 75, 93, 141,
 146, 202, 216, 221, 236, 253,
 268
 Արագած, լեռ – 90,
 Արագածոտն, գավառ – 182
 Արագածոտնի մարզ – 93
 Արածանի, գետ – 43, 147,
 150, 180
 Արասածոր, գյուղ – 228
 Արարատյան, դաշտ – 158
 Արարատյան, աշխարհ – 239
 Արարտակ, լեռ – 14
 Արաքս, գետ – 40-41, 91, 186,
 203, 272
 Արդվեթ – 60, 76
 Արևելյան Եվրոպա – 265
 Արևելյան Եփրատ – 218
 Արևելյան Հայաստան – 219
 Արևմտյան Եփրատ, գետ –
 204
 Արևմտյան աշխարհ – 20
 Արևմտյան Հայաստան – 218
 Արևմտյան Մերձկասպյան
 երկրամաս – 265
 Արգնկա – 204
 Արծն, քաղաք – 55, 217
 Արծրունյաց տոհմ, թագավոր-
 րություն – 95, 131, 178,
 182, 198, 225, 268
 Արճեշ, քաղաք – 32, 43, 55,
 73, 134, 150
 Արճեշ – 145

- Արմագ, լեռ – 232-233, 271
 Արշակավան, քաղաք – 91
 Արշակունյաց Հայաստան – 265
 Արշարունիք, գավառ – 40, 164, 181, 272, 273, 275
 Արշարունյաց, գավառ – 20, 40, 239, 272
 Արություն, գյուղ – 132, 177
 Արջովիտ – 65, 210, 217
 Արյացփոր, գավառ – 180
 Արվաստան – 37, 148
 Արտազ, գաւառ – 282, 285
 Արտաշատ – 41, 285
 Արտավիլ (Արդաբիլ, Արտավետ) – 90, 93, 169
 Արցախ, աշխարհ, նահանգ – 85, 126, 133, 182, 186, 203, 263, 265
 Արքաշեն գետ – 182
 Ափխազ – 53, 185
 Ափխազաց երկիր, բերդ – 5, 48, 52, 55, 212,
 Ափխազիա – 18, 24-25, 65, 90, 120, 129, 149, 159, 232
 Աֆղանստան – 266

 Բարելացիք – 61, 155
 Բարելոն – 16, 49, 89
 Բագավան – 169, 183, 269
 Բագվան, գյուղ – 153
 Բագրատունյաց Հայաստան – 216

 Բագրևանդ, գավառ – 27, 43, 58, 150, 183
 Բագկերտ – 157
 Բազունիք – 157
 Բաղաբերդ – 145, 150
 Բաղաց աշխարհ – 80, 98, 228, 277
 Բաղդադ, քաղաք – 59, 69, 204, 261, 276
 Բաղեց – 90, 93, 134
 Բաղր, գավառ – 85, 133, 157, 239, 260, 273
 Բասեն, գավառ – 11, 20, 22, 34-35, 40, 47, 49-50, 58-59, 76, 181, 217, 250, 272
 Բասրա – 236
 Բավաց ձոր – 21
 Բարգուշատ – 279
 Բարիսալ դադ – 60
 Բարկուշատ – 250, 252
 Բարձր Հայք, նահանգ – 40, 58, 60, 93, 136, 148, 177, 180, 186, 203-204
 Բեթանիա, վանք – 239, 273
 Բելուկան – 106, 136
 Բեղամեջ – 106
 Բերդ, քաղաք – 188, 203, 232
 Բերդաներիչի – 228, 269
 Բերկրի, քաղաք – 55, 134, 285
 Բերկրոյ – 282
 Բզնունիք, գավառ – 147, 216

- Բգնունյաց, ծով – 36, 101,
 120, 134
 Բիթլիս, նահանգ, քաղաք –
 93, 218
 Բղեն – 250
 Բյուզանդիա – 39, 40-42, 57
 Բյուրակն – 134
 Բոլնիսի մունիցիպալիտետ
 – 132, 177
 Բողնովոր, գավառ – 177
 Բորստան – 250
 Բորստնա, բերդ – 254
 Բուխարա – 236
 Բջնի, քաղաք – 101, 159, 168,
 229, 250, 279
 Բրգներ – 29
- Գագ, դաշտ – 25, 164, 166,
 172, 182, 187-188, 192, 199,
 202, 240, 243, 286
 Գագ, ամրոց, բերդ – 35, 42,
 144, 150, 162, 181
 Գայանք – 225
 Գայլ, գետ – 97, 153, 267
 Գայլատու, լիճ – 91
 Գանգրա – 253
 Գանձակ – 5, 25, 68-70, 73,
 77, 91, 95, 99, 105, 107,
 113-115, 135, 145, 162, 171-
 172, 191, 202, 212, 230,
 249-250, 284
 Գաջենագետ – 132, 177
 Գաջենք – 132, 154, 177, 167
- Գառնի – 114, 137-138, 164,
 250
 Գառնյ ձորն – 145, 280
 Գարգար, գետ – 203
 Գարդման – 101, 135, 171,
 188, 203, 250
 Գարդմանաձոր, գավառ –
 203
 Գարդմանք, գավառ – 203
 Գարշտեռք – 229
 Գելաթ – 130, 139, 163, 242,
 273
 Գեղամա ծով – 91, 135
 Գեղարքունիք – 232, 252, 270
 Գեղարքունյաց ծով – 101
 Գեղե, ամրոց – 253
 Գետաբակ, գետ – 135
 Գետաբակք – 168, 182
 Գետակն, գյուղ – 280
 Գետիկ, վանք – 137
 Գիրաթաղ, գետ – 150
 Գնչյաց սահման – 230
 Գողլեն, գավառ – 21, 41
 Գոռոս, քաղաք – 71
 Գորի, քաղաք – 77, 218
 Գորող – 160
 Գուգարաց երկիր – 171
 Գուգարք, նահանգ – 38, 42,
 44, 77, 84, 132, 136, 176-
 177, 182, 186, 202, 217, 267,
 Գուրա, քաղաք – 218
- Դալիարա – 141

- Դանութ, գետ – 40, 145
 Դավրեծ – 172
 Դարբանդ – 141, 181
 Դարիալ – 234, 262
 Դարիալի կիրճ – 234
 Դարույնք, ամրոց – 91
 Դարպաս-ազարակ – 182
 Դելմաստան – 21
 Դեկոր, լեռ – 70
 Դերբենդ – 40, 106-109, 120, 264
 Դերջան – 134
 Դևելու շրջկենտրոն – 76
 Դիլիջան, քաղաք – 137
 Դվիլեկ գյուղ – 24, 311
 Դմանիս – 42, 71, 144, 163, 182, 273, 278
 Դմանիք – 163, 182
 Դմանյաց քաղաք – 25, 42
 Դուալեթ – 162
 Դուին – 142, 144, 215
 Դումանիս – 117
 Դուռն, դաշտ – 282
 Դպրավանք – 154
 Դվին, քաղաք – 153-154, 165, 168, 224, 229, 250, 259, 267, 276
 Եգերք – 177
 Եգերացիների կողմերը – 15, 17, 20
 Եղիպտոս – 42, 89, 102
 Եղեսչիա – 131, 218
 Եզնկա – 215
 Եթովպիա – 69, 145
 Ելիմացիք – 146
 Ելտկուզյանների պետության – 136
 Եկեղյաց, գավառ – 47, 58, 60
 Եղանց, բերդ – 56, 60
 Եղեգիք – 275
 Եղնուտ – 56, 60, 239
 Եմավոն, լեռ – 233
 Երազավորս – 86
 Երասխ, գետ – 91, 183, 219, 260, 279
 Երասխաձոր – 40, 272, 275,
 Երգեվան – 101, 188, 203
 Երեգ – 204
 Երերուն – 275
 Երգնկա – 60, 193
 Երիզա – 55, 60, 204
 Երիզավան – 204
 Երուսաղեմ, Երուսաղէմ – 68, 102, 110, 146, 170, 187
 Երվանդի քաղաք – 12
 Եփեսոս – 36
 Եփրատ, գետ – 204, 218
 Զարավանդ, գավառ – 197, 201, 204
 Զաքարյան Հայաստան – 183, 219
 Զմյուռնիա – 253
 Զուտառիմա, գյուղ – 154
 Զրեհ – 145

- Էլառ – 252
 Էկրատան – 285
 Էրզրում, քաղաք – 40, 58, 93,
 136, 180, 203
 Էրզրումի վիլայեթ – 180
 Էրջիշ – 150

 Ըռան – 141

 Թաբորական, լեռ – 129
 Թագավորանիստ, դոյակ –
 71, 73, 188, 226
 Թավրիզ, քաղաք – 28
 Թարթառ, գետ – 183
 Թբիլիսի – 271, 273
 Թեոդոսուպոլիս – 93, 203
 Թէոդոսովոլիս – 215
 Թիֆլիս – 106
 Թլպաշար – 213,
 Թմաձոր – 230
 Թյուրքական, խաքանու-
 թյուն – 265, 312,
 Թոնդուրակ, բնակավայր –
 75
 Թոռնիլյանների իշխանու-
 թյուն – 135
 Թուրքիա – 271, 274-275, 285
 Թուրքմենստան – 266
 Թրիալեթ – 60, 76

 Ծեռավս, բերդ – 23
- Իրերիա, Իվերիա – 13
 Իմերեթիա – 139
 Իսմայել – 156
 Իսրայել – 51, 178
 Իրան – 73-74, 93, 178,
 Իրաք – 236

 Լալվար, սար – 138
 Լեխիթ – 234
 Լիմ, կղզի – 36
 ԼՂՀ – 183
 Լյուրիկիա – 152
 Լոռե, բերդ, գավառ, քաղաք
 – 273-274, 296
 Լոռի – 268
 Լոռու թագավորություն –
 133-134, 149, 181, 202, 268
 Լոռու մարզ – 39, 93, 138-
 139, 202, 267

 Խազիրների, թագավորու-
 թյուն – 227
 Խազրաց, աշխարհ – 233
 Խալանդրաց, աշխարհ – 233
 Խաղաղիք – 58, 60, 148, 159,
 177, 180
 Խաղուց, գավառ – 47, 57
 Խաղտը Առիճ, բերդ, Խաղ-
 տոհառիճ – 22, 41, 50
 Խամշի, վանք – 104, 135
 Խանցիխե – 271

- Խաչեն, գավառ – 130, 133,
 135, 138-160, 170, 204, 257,
 291
 Խաչն – 283
 Խավատանեք (Խավարտա-
 նեք) – 64, 76
 Խաւատանեք – 209
 Խլաթ, քաղաք – 14
 Խնուս – 134
 Խոզաբիր, գյուղ – 14
 Խոզաք, գավառ – 14,
 Խոշորնի – 168
 Խոչոռնի – 157
 Խոռակերտ – 157
 Խորազմ – 280
 Խորասան – 280, 281-282
 Խորեզմ – 183, 221, 236, 266
 Խորխոռունիք – 157
 Խունա – 106,
 Խունան, դաշտավայր – 136,
 144, 163, 182, 191, 232, 241,
 271, 278
 Խրամ – 38
 Խրթի անտառ – 57

 Ծալկայի շրջան – 177
 Ծաղկոտն, գավառ – 27, 43
 Ծաղկունյաց, լեռներ – 42
 Ծամնդավ – 64, 76
 Ծամնդաւ – 209
 Ծավդեք – 37
 Ծեծ – 214
 Ծիրանյաց, լեռ – 20
- Ծղուկ, գավառ – 183, 266, 269
 Ծմբ, գյուղ – 29
 Ծոբովիոր, գավառ – 182
 Ծովակ Հյուսիս – 58
 Ծովը, բերդ – 213
 Ծովը, լիճ – 77
 Ծումբ, բերդ – 75,
 Ծոփաց աշխարհ, նահանգ –
 40, 60, 77, 218
 Ծոփք – 132

 Կազբիական, ծով – 145, 314
 Կաթուղիկե, վանք – 12, 87,
 213
 Կախեթ – 143, 234
 Կածարեթ – 101
 Կաղաքը – 156
 Կաղզվան – 250, 275
 Կամախի գավառակ – 180
 Կամրջաձոր – 20
 Կայան, բերդ, գավառ – 109,
 136, 150, 158-159, 162, 274
 Կայեն – 145, 146, 157, 228,
 232, 253, 269
 Կայծոն – 157-159, 162
 Կանգարք, գավառ – 42, 84,
 267
 Կանգրաց, լեռ – 225, 267
 Կապաղովկիս – 53, 148, 180
 Կապան – 65, 130, 133, 198,
 258
 Կապույտ, բերդ – 181
 Կապուտան, ծով – 43, 204

- Կապուտոու, բերդ – 65, 76,
 217
 Կասպից, ծով – 158, 163, 181,
 186, 264
 Կարգաբազար, լեռներ – 217
 Կարին, քաղաք, գավառ –
 219, 272
 Կարկառ – 126, 139
 Կարմիան, շրջան – 69, 211
 Կարմիր Փորակ – 47, 58
 Կարնոն, դաշտ – 159, 180, 236,
 272
 Կարնոյ, քաղաք – 215, 277
 Կարուց դաշտ – 237
 Կարս, քաղաք – 21, 41, 43,
 57, 63, 87, 92, 128, 162, 166,
 168, 208, 219, 227, 239, 250,
 269, 272, 275, 279
 Կեսարիա – 64, 76, 146, 148,
 193-194, 209
 Կիլիկիա – 33, 134, 183, 253,
 279
 Կիլիկյան Հայաստան – 205,
 219,
 Կղեսուր – 22
 Կյուրիկյան, թագավորու-
 թյուն – 133-134, 241
 Կողովիտ, գավառ – 36, 43,
 87, 91
 Կոկիսոն – 141
 Կողբ – 128
 Կողբովոր, գավառ – 182
- Կողոնիա, գավառ – 153-154,
 224, 267
 Կողքիս – 39, 58, 148
 Կոռմանա – 280
 Կոստանդինոպոլիս, Կոս-
 տանդինոպոլիս – 211
 Կովկաս – 4, 5, 6, 11, 40, 55,
 79, 85, 107, 133, 137, 140,
 141, 152, 156, 158, 221, 266
 Կովկասյան, լեռ - 162
 Կովկասյան, լեռներ – 18, 24
 Կոտայք – 113, 137, 232, 252,
 270
 Կոտմայ - 145
 Կոտման, գետ - 171
 Կոտման, դաշտ – 187, 202
 Կոտուրի, լեռներ – 137
 Կորճայք, նահանգ – 178
 Կուա, ամրոց – 18
 Կուել, բերդ – 18, 39
 Կուո, գետ – 279
 Կուտյանք, գյուղ – 27
 Կուր, գետ – 259, 271, 283
 Կոռմանա, ջուր – 280
- Հաբանդ, գավառ – 85
 Հաթերք – 170, 183, 304
 Հաթերք, գյուղ – 304
 Հաղարձին – 315, 228
 Հաղբանդ – 163, 181
 Հաղպատ – 96, 98-99, 133,
 225, 228-229, 267, 274, 289-
 290, 292, 303

- Համադան - 261, 275
 Համադան, քաղաք - 275
 Համարի - 252
 Համիան, քաղաք - 232, 251
 Հայատան - 4, 6, 11, 14, 16,
 19, 28, 32, 37, 40, 75, 80, 93,
 95, 104-106, 113, 115, 122,
 127, 128, 135-139, 151, 153,
 155, 160, 163, 171-174, 177-
 178, 180, 183, 205, 215-221,
 223-224, 226, 228, 230-232,
 236, 241, 253, 259-260, 263,
 265, 268-273, 294
- Հայկական Տավրոս, լեռներ -
 60
- Հայոց աշխարհ - 13-15, 17-
 18, 20-21, 59, 72, 232, 250,
 252, 258, 262
- Հայոց Արևելից կողմանք -
 77
- Հայոց Միջագետք - 37
- Հայրաց տափ - 230
- Հայք - 35-36, 38-44, 58-60, 75-
 77, 79, 84-86, 91-93, 133-
 137, 139, 141, 147-150, 158,
 177-183, 186, 202-204, 216-
 218, 267, 271-272, 279, 285
- Հաշտեանք, Հաշտենից զա-
 վառ - 11, 36, 60
- Հառիճի վանք - 90, 93
- Հավաճիչ, ամրոց - 56
- Հարժիք, զյուղ - 228, 269
- Հարք, զաւառ - 22, 41, 141,
 147
- Հեր, զավառ - 28
- Հերապոլիս (Չմշկածազ) - 40
- Հերեթ - 234
- Հերթ - 250
- Հյունեվանք - 25
- Հյուսիսային Կովկաս - 40,
 133
- Հյուսիսային Միջագետք -
 131
- Հնդիկք - 145
- Հնդկաստան - 69
- Հոնաստան - 107
- Հոնաց աշխարհ - 233
- Հոնաց պահակ - 220
- Հռոե, բերդ - 77
- Հռոմոսի, վանք - 21
- Հռոմք - 279
- Հունաստան, Հունաց երկիր
 -13
- Հունարակերտ - 182, 271
- Հուրազդան, գետ - 87, 91
- Հռոմ - 98, 173
- Հռոմկլա, բերդ - 214, 218
- Հրազդան, գետ - 91, 259
- Հրաշկաբերդ - 252
- Զինից, բերդ - 209
- Զիրավի դաշտ - 183
- Զորագետ - 157, 160, 168, 290
- Զորափոր, զավառ - 274

- Չորոփոր, գավառ – 44, 136,
202, 269
- Չորք, գավառ – 85, 150
- Ղազվին, քաղաք – 251
Ղրիմ – 133
- Ճակատք, գավառ – 57
- Ճանեթ – 55
- Ճարմանայնու, դաշտ – 267
- Ճարմանի, դաշտ – 223
- Ճենաստան, աշխարհ – 233
- Ճղոնդիդ – 270
- Ճորա – 221, 264
- Ճորոխ, գետ – 58, 60, 219
- Ճքեթ – 162
- Մազագ, գավառ - 137
- Մազանդարան – 236
- Մազքթաց աշխարհ – 185
- Մաթևուլեթ – 261
- Մաժակ – 148
- Մալաթիա – 58
- Մածնաբերդ – 100, 134, 143,
149, 181, 188, 203, 229
- Մակեդոնիա – 26
- Մակուրիսցիլս – 271
- Մահկանաբերդ – 109, 136-
137, 162
- Մամոստ, բերդ – 135
- Մամրուան – 34
- Մանազկերտ, քաղաք – 26,
28, 55, 73, 78, 134, 180,
217-218, 274
- Մանասա գոմք – 202
- Մանավազակերտ, քաղաք –
75, 218
- Մանզլիս – 273
- Մանձկերտ – 159, 214, 218
- Մանձկերտ – 180
- Մասքութք – 220, 264
- Մարադա – 261
- Մարաստան, Մարաց աշ-
խարհ – 28, 89, 93
- Մարաց մարզ – 12
- Մարդադի – 22, 41
- Մարդաստան, գավառ – 265
- Մարդպետական – 221, 223
- Մարզպանական Հայաստան
- 37
- Մարմաշեն – 29
- Մարտակերտի շրջան – 183
- Մարտիրոսաց, քաղաք – 254
- Մարտունի, քաղաք – 265
- Մարք – 152
- Մելիտէնե - 76, 148
- Մելտին - 141
- Մեծ Հայք – 35-36, 38-44, 58-
60, 75, 77, 84-86, 91-93,
132-137, 139, 147-148, 150,
176-183, 186, 202-204, 216-
218, 267, 271-272, 285
- Մեծ Սյունիք – 265
- Մեծոփաց, լեռ – 34

- Մեծրաց (Սողանլու) լեռներ – 274
 Մեղրագետ – 218
 Մեսխուն – 31
 Մերզումեն, գետ – 218
 Մերձավոր Արևելք – 266
 Մէջերկրայս – 280
 Մժնկերտ – 215, 219, 250, 274, 179
 Միափոր, գավառ – 104
 Միջազգետք – 11, 37, 60, 131, 148, 159, 266, 176
 Միջերկրական, ծով – 266
 Մլհեղքի Ալամուդ, երկիր – 174
 Մլիուտք – 146
 Մծբին, քաղաք – 15, 37, 148
 Մշո, գավառ – 218
 Մողենախե – 261
 Մոկք, նահանգ – 178
 Մոսուլ – 261
 Մոսկարդին – 146
 Մովկանա, դաշտ – 259, 276
 Մորենի – 222, 266
 Մուխանք (Միլ Մուղան)
 դաշտ – 135
 Մուխրանի դաշտ – 262
 Մուղան – 128, 135, 136, 141,
 189, 203, 258, 276, 283
 Մուղանայ, դաշտ – 141, 281
 Մուղանի երկիր – 136, 186,
 189, 203, 276, 276
 Մուշ – 21, 73, 218
 Մուրադին – 285
 Մուրց, գետ – 40
 Մսր – 129
 Մրածուլք – 162
 Մրեն – 165, 266
 Մցխեթա – 120, 185, 271
 Մցխիթա – 233-224
 Յուշի, վանք – 90, 93
 Նախիջևան – 178, 251, 251,
 255, 260-261
 Նախճավան – 41, 69
 Նամրվան – 159
 Նետիս, գյուղ – 259
 Ներսեհապատ – 285
 Ներքին Բասեն – 250
 Ներքին Խաչեն – 170
 Նիզ, գավառ – 42
 Նիկիա – 36
 Նիկոպոլիս, գյուղ – 149
 Նոր Աֆոն, քաղաք
 Նոր Բերդ – 143, 144, 149,
 188, 203
 Նոր Սիոն – 192
 Նորավանք – 228-231, 263-
 264, 270
 Նպատ, լեռ – 183
 Նփրկերտ – 42, 254
 Շահաստան Գանձակ, քա-
 ղաք – 172, 188, 191

- Շահարմենների պետություն – 92, 134-135
 Շաղատ – 221-222, 290
 Շամիրը – 135
 Շամշուլդա - 117
 Շամշուլդե – 240, 245
 Շամշուլտ, Շամշուլտի դրյակ – 25, 35, 42
 Շամքոր – 71, 101, 106, 135, 170, 188, 202-203, 250
 Շապուրան, քաղաք – 163, 181
 Շառիան, գետ – 150
 Շատիկ – 21, 46, 57
 Շարուր – 258
 Շաք – 165
 Շաքէ – 266
 Շաքի – 212, 222, 250, 266
 Շիրակ – 17, 18, 21, 38, 42, 65, 81, 85, 86, 91-93, 166, 168, 209, 216, 223, 239, 243, 267, 272
 Շիրակավան – 226
 Շիրվան – 71
 Շղփա – 51
 Շմեղա Քար – 189, 203
 Շողակաթ, եկեղեցի – 21
 Շրուան – 212, 217

 Ողջի գետ – 150
 Որոտ – 170, 183, 252, 254
 Որոտան, գյուղ – 183
 Ոքաղէ – 139, 180
- Ուզբեկատան – 266
 Ուխթյաց բերդ, ավան, քաղաք – 34
 Ուխտեաց, զավառ – 214, 219
 Ուխտիք – 58, 130, 139, 159, 162, 180-182
 Ուծ – 222, 266
 Ուշի գյուղ – 93
 Ուռիա – 131
 Ուտի Առանձնակ, զավառ – 38
 Ուտիք, նահանգ – 38, 134-136, 186, 202-203
 Ուրիա – 131
 Ուրմիա, լիճ – 202, 204
 Ուրֆա – 131

 Զարաբերդ – 126, 138, 250
 Զարեք, բերդ – 104, 135, 182, 250
 Զին ու Մաշին, երկիր - 171
 Զինաստան – 271
 Չլդր լիճ – 58
 Չորմայրի – 22, 188, 190-191, 194, 201
 Չորրորդ Հայք, աշխարհ – 36
 Չքատան, կղզի – 36
- Պաղակացիս, ծովակ – 47, 58
 Պարթև – 132, 146, 158
 Պարխար, լեռ – 5, 55, 58, 60, 161

- Պարսից աշխարհ – 12, 89,
 212
 Պարսից կողմ – 175
 Պարսկահայք նահանգ – 43
 Պարսկաստան – 71, 73, 91,
 163, 167, 172, 221, 233, 249,
 251, 266, 275
 Պարտավ – 17, 38, 106, 136,
 250
 Պղնձահանք – 112, 115, 126,
 138, 173, 229
 Պոնտական Կապադովկիա –
 180
 Պոնտոս, ծով – 39, 58, 60,
 148, 158, 253
- Զասանի, կիրճ – 262
 Զավալիս, զավառ – 67
 Զավալսեթ – 234
 Զավախք, զավառ – 14, 42,
 77, 84, 153
 Զեհուն, զետ – 128, 139
 Զքարերդ – 133, 138
- Ուան – 161, 181
 Ուանի, դաշտ – 262, 276
 Ուուսաստան – 120
- Ս. Գրիգոր, եկեղեցի – 158,
 220, 232
 Սագամ – 188, 203
 Սալնաձոր, զավառ – 93
 Սալքորա – 50-51
- Սախատա – 167
 Սախատան – 167, 182
 Սախոտէ – 280
 Սակուրեթի, բերդ – 25
 Սահակ Սևադայի, բերդ –
 135
 Սաղամա, դաշտ – 188
 Սաղմոսավանք – 90, 93
 Սամատական երկիր – 24
 Սամարացիների աշխարհ –
 18
 Սամշոյլտոյէ – 145
 Սամշուլդէ – 160
 Սամցիւե-Զավախք, նահանգ
 – 177
 Սամցիւէ – 146, 185, 277, 281
 Սանահին, վանք – 98, 104,
 133, 169, 219
 Սասանյան Պարսկաստան –
 266
 Սատաղ – 41
 Սեբաստիա – 143, 149
 Սելջուկյան պետություն –
 181
 Սև, ծով – 58, 60, 180, 186, 271
 Սևան – 80, 91, 157, 179, 217,
 260, 277
 Սևանա լիճ (Գեղամա ծով) –
 133,
 Սևորդիք – 157
 Սևորյաց, զավառ – 160
 Սևուկ, բերդակ – 22
 Սիմ, լեռ – 60

- Սիոն – 192, 222
 Սիսականի Կոտակ, գավառ – 85, 227
 Սկուտրի, զյուղ – 153
 Սյունիք – 8, 183, 183, 220-222, 224, 226, 250, 265, 266, 273, 275
 Սյունյաց նահանգ – 24, 85, 101, 133, 153, 183, 220-221, 223, 225, 228, 239, 252, 260, 263, 268-269, 275
 Սոթք, գավառ – 135
 Սոմիւեթ, Սոմիւիք – 157, 182
 Սոնեթի, Սոնէթ – 41, 146
 Սուլակ, գետ – 265
 Սուլկավ, լեռ – 29
 Սուրբ Աստուածածին – 206
 Սուրբ Աստվածածին, զյուղ – 34
 Սուրբ Գամադիել, եկեղեցի – 27
 Սուրբ Խաչ – 21, 27, 164, 177, 206
 Սուրբ Կաթողիկե, եկեղեցի – 71-72, 153
 Սուրբ Կարապետ, եկեղեցի – 230
 Սուրբ Մարի – 250, 271
 Սուրբ Նախավկա, եկեղեցի – 230
 Սուրբ Նշան – 199
 Սուրբ Սարգիս, եկեղեցի – 199
 Սուրմալու – 271
 Սուրմարի – 229, 271
 Սպահան, քաղաք – 251
 Սպեր – 141, 148, 180
 Սպերի ծով – 232, 271,
 Սվազ, քաղաք – 149
 Սվանեթիա – 120, 122, 124, 129
 Վաղարշակերտ, քաղաք – 27, 42, 47, 50, 58, 150, 224, 250, 274
 Վաղարշապատ – 224
 Վայոց ձոր – 101, 232, 251-252, 270, 275
 Վան – 150-151
 Վանա լիճ (Բգնունյաց ծով) – 36, 43, 92-93, 134, 150, 177, 180, 216, 285
 Վանանդ, գավառ – 29, 41, 43, 47, 58, 161, 181, 227, 236-237, 239, 269, 272
 Վանի նահանգ – 150-151
 Վասպուրական – 17, 24, 29, 35, 39, 41, 43, 53, 59, 60, 76, 80, 85, 92, 134, 156, 178, 181, 206, 216, 227, 265, 268, 285
 Վարագ – 209, 216
 Վարաժնունիք – 147
 Վարդանաշատի երկիր – 171, 182
 Վարձե – 229

- Վարձիա, վանք – 154, 270
 Վենէտիկ – 95, 152, 206
 Վերին Զավախը – 176
 Վերին կամ Անփայտ Բասեն
 – 58, 181, 272
 Վերին Միջազգետք – 148
 Վիրահայք – 39
 Վիրապ – 282
 Վիրք – 7-8, 11, 39, 79, 80, 83,
 91, 105, 131, 133, 141-142,
 148, 188, 220-211, 222-223,
 246, 279
 Վլադիմիր-Սուլզբայյան Ռու-
 սիա – 274
 Վոլգա, գետ – 265
 Վոհ, գետ (Ճորոխ) – 60
 Վրաստան – 1-0-12, 14, 16-17,
 21, - 24, 27-28, 30, 32-34,
 39, 46-47, 54, 62, 68-69, 71-
 73, 95, 98, 106-107, 115,
 118, 124, 127, 130, 132, 136,
 148, 152-153, 156-157, 160-
 162, 164, 169, 171-173, 177,
 179, 224, 227-233, 235-236,
 240-241, 243-244, 248-250,
 253-254, 257, 259, 261-263,
 270-273, 275-276, 305,
 Վրաց երկիր, աշխարհ – 67,
 87, 89, 156
 Վրաց, գավառ – 53
 Վրաց դաշտ – 25, 35, 42
 Վրաց տուն – 281
 Վրկան – 146, 177,
 Տաթևի վանք – 228, 263, 273
 Տայոց աշխարհ, գաւառ -21,
 22, 24, 28, 31, 33-34, 45, 48-
 49, 185-186
 Տայք, նահանգ – 42, 44-45, 57,
 60, 113, 137, 139, 154, 177,
 181, 186, 219
 Տաշիր – 42, 84, 101, 157, 162
 Տաշիր-Չորազետ – 42, 44,
 149, 268
 Տաշիրք, գավառ – 17, 18, 25,
 35, 38, 157, 273
 Տաջիկստան – 266
 Տավուշ – 100-101, 134, 137,
 162, 188, 202-203, 240
 Տարոն, գավառ – 109, 134,
 135, 147, 220, 264
 Տարսոն, քաղաք – 33
 Տբեր – 270
 Տեղեր, վանք – 90, 93
 Տերևեն – 188, 203
 Տերունական, բերդ – 101,
 150, 162, 188, 203, 277
 Տերունական – 144
 Տիգրիս, գետ – 36, 59, 148
 Տոբոլ, գետ – 40
 Տողատափ – 72
 Տուրուբերան (Տարոն), նա-
 հանգ – 41, 43, 60, 75, 92,
 134, 147, 150, 180, 218,
 Տրապիզոն – 63, 141, 208, 236,
 253, 281
 Տվյալեաց տ[ու]ն – 212, 280

- Տփխիս – 7, 25, 70-71, 81, 87, 140, 142-144, 185-186, 212, 213, 218, 278, 281-283
- Տփղիս – 15, 17-18, 97, 114, 120, 124, 128, 136, 156, 162-163, 165, 167, 172, 175-176, 194, 194-195, 229, 239, 240, 244-245, 256, 258
- Տողուտափ – 214
- Ցուրա, գյուղ – 269
- Ցուրտազետ – 132, 177
- Ցուրտավ – 96, 132, 154, 177, 225, 267
- Փայտակարան – 13, 185-186
- Փառիսոսի թագավորություն – 134
- Փարզման, գետ – 218
- Փոքր Հայք – 76, 147, 149
- Փուլթ, քաղաք – 15
- Փոքր Սյունիք – 221, 265
- Քաղկեդոն – 13, 80, 98, 170, 223
- Քարայր – 188
- Քարթլի – 59, 148, 177, 232-235, 244, 272
- Քարհերձ – 101, 188, 202-203
- Քերսոն – 37
- Քիրման – 236
- Քոբայր – 131, 139, 175
- Քոբայրավանք – 139
- Քութաթիս – 277
- Քութայիս, քաղաք – 273
- Քուշանք – 146
- Քվեմն Քարթլի – 177, 273
- Քցիա, գետ – 271
- Օլթի – 58, 78, 139, 181, 219
- Օխթիս, գավառ – 73, 78
- Օկոմի, ավան – 47
- Օհանավանք – 90, 93
- Օձուն, գյուղ – 18, 39, 130, 139
- Օսեթիա – 120
- Օվկիանոս, ծով – 253
- Օրբելթ – 232, 234, 249, 271
- Ֆարս – 236

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ ՏԱՐՈՆԵՑԻ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	11
ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	45
ՄԱՏԹԵՈՍ ՈՒՇԱՅԵՑԻ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	61
ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, ՀԱԻԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ.....	79
ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, ՀԱՆԴԻՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՎԵՊ ՄԱՏՅԱՆ	87
ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	95
ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	152
ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑՅ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ	185
ԳՐԻԳՈՐ ԱԿԱՆԵՐՑԻ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՆԵՏԱԶԻԳՆԵՐԻ ԱԶԳԻ ՄԱՍԻՆ	187
ՍՄԲԱՏԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՏԱՐԵԳԻՐՔ	206
ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	220
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆԻ	277
ԱՆՁԱՆԱՆՈՒՆՆԵՐ	286
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	302

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Քոփի փրինք» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 24.09.2019:
Չափսը՝ 60x84 1/16:Տպ. մամուլը՝ 20:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am